

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ԵՐԱՆՈՍՅԱՆ ՆԱՐԻՆԵ ՍՏԵՓԱՆԻ

**ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԱԲԱԼԵԶՈՒ ՄԱՄՈՒԼՈՒՄ
(1870-1890-ական թթ.)**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

**Է. 00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի համար**

**Գիտական ղեկավար՝ պ. գ. դ., պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Ա. Խառատյան**

ԵՐԵՎԱՆ-2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԱԲԱԼԵԶՈՒ ՄԱՄՈՒԼԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ: ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ	16
1.1. Հասարակական-քաղաքական իրականությունը և պարբերական մամուլը Եգիպտոսում XIX դարի վերջին քառորդին (համառոտ ակնարկ)	16
1.2. Արևմտահայության դրության արտացոլումը	39
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ . ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ 1894-1896 ԹԹ. ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԵՎ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԴՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ	65
2.1. 1894-1896 թթ. կոտորածների քաղաքականության գնահատականը	65
2.2. Հայ գաղթականների հիմնախնդիրը.....	95
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ.....	104
3.1. Հայկական հարցի արժարժումները	104
3.2. Արևմտյան Հայաստանի բարենորոգումների խնդրի լուսաբանումը Հայկական հարց-Եգիպտական հարց զուգահեռներում	112
3.3. Տերությունների դիքորոշումը Հայկական հարցում.....	121
3.4. Հայկական հարցն «Ալ-Մուշիր»-ի երգիծապատկերներում.....	139
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	151
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	156
ՀԱՎԵԼՎԱԾ	

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայկական հարցը Բեռլինի 1878 թ. վեհաժողովից հետո դարձավ միջազգային խնդիր և մեծ տերությունների քաղաքական նախասիրություններն օսմանյան կառավարությանը պարտադրելու հզոր կռվան:

Օսմանյան կառավարությունն, ի դեմս սուլթան Աբդուլ Համիդ Երկրորդի, մեծ քաղաքականության մեջ խուսանավելու և կայսրությունը կործանումից փրկելու ելքը տեսնում էր հայ ազգը ֆիզիկապես վերացնելու մեջ: Դա իրականացվում էր տերությունների կողմից սուլթանական կառավարության վրա գործադրվող ճնշումների սաստկացմանը զուգահեռ: 1894-1896 թթ. հայերի զանգվածային կոտորածները նրանցից ձերբազատվելուն ուղղված արդուլիսմիդյան քայլերի գագաթնակետը դարձան:

Ժամանակակից արաբական երկրների մեծ մասը XIX դարի վերջին քառորդին գտնվում էր օսմանյան տիրապետության ներքո: Արաբ ժողովուրդը նույնպես կրում էր օսմանյան բազմադարյա ծանր լուծը: Կայսրության ազգային-ազատագրական շարժումները սկսել էին ծավալվել նաև արաբական տարածքներում: Եգիպտոսում դրա համար խթան հանդիսացան այնտեղ ֆրանս-բրիտանական մրցակցության սաստկացումը և բրիտանական ներկայության ամրապնդումը: Օսմանյան արյունոտ քաղաքականությունն ուղղված էր նաև գլխատելու արաբական ազգային-ազատագրական շարժումները:

Եգիպտոսի՝ միևնույն քաղաքական միավորի կազմում գտնվելը ենթադրում է պատմական իրադարձությունների լուսաբանման հավաստիություն և նվազ միջնորդավորվածություն:

Արաբական պարբերական մամուլի ծանրության կենտրոնը XIX դարի վերջին քառորդին Եգիպտոսն էր:

Սուլթանական ամենակուլ գրաքննության ու սրի սպառնալիքը սիրիական տարածքներից արաբ մտավորականության սերուցքն ուղղորդել էր Եգիպտոս, որտեղ բավականաչափ անկաշկանդ միջավայր էր ձևավորված խոսքի ազատության համար:

Ըստ այսմ՝ ակնհայտ է խնդրի առնչությամբ ժամանակի եգիպտական մամուլի հրապարակումների ուսումնասիրության անհրաժեշտությունը: Այդ հրապարակումներն իրենց ուրույն տեղն են գրավում համաշխարհային պարբերական մամուլում Հայկական հարցի արտացոլման խճանկարում:

Ատենախոսության թեմայի արդիականությունը միտված է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը և ցեղասպանության հետևանքների վերացմանն ու փոխհատուցմանը:

Հայոց ցեղասպանության սկիզբն արդուլիամիդյան կոտորածներով դրվեց, իսկ Հայկական հարցն առ այսօր առկախ է: Թուրք-ադրբեջանական պատմագիտության մեջ պատմությունը նենգափոխելու պարագայում ողջամիտ է հայտնի պատմական իրողությունների առնչությամբ ներկայացնել նաև մեկ այլ ականատես ժողովրդի ընկալումը՝ խնդիրը դիտելով ոչ թե արևմտյան միսիոների կամ քաղաքական գործչի, այլ միևնույն կայսրության հպատակ ժողովրդի աչքերով:

Արդի շրջանում հայ-եգիպտական միջպետական փոխհարաբերությունները թևակոխել են զարգացման որակական նոր շրջափուլ: Ժամանակի արաբական հասարակական մտքի խմորումների առանցքը հանդիսացող մամուլի գնահատականների անաչառ լուսաբանումն ու համակողմանի ուսումնասիրությունը ստանում են հիմնարար գործնական-կիրառական նշանակություն, կարևորվում նաև քաղաքական, պատմադիվանագիտական հրատապության տեսանկյունից:

Եգիպտոսն այսօր ընթանում է Հայոց ցեղասպանությունը ճանաչելու ուղեգծով: Դրա համար անհրաժեշտ պատմական հիմքն այդ երկիրը կարող է տեսնել իր իսկ մամուլի հրապարակումներում՝ ընդամենը ժամանակի սեփական լրատվամիջոցներում արձանագրված պատմական փաստերը վերընթերցելով ու մեկնաբանելով¹:

Բացի այդ, 1890-ականները Եգիպտոսի հայ համայնքի համալրման փուլերից է: Հայերը Եգիպտոսի ազգային փոքրամասնությունների շարքում մշտապես կարևոր տեղ

¹ Հայոց ցեղասպանության հիմնախնդիրն արդի փուլում նույնպես լուսաբանվում է բազմաթիվ եգիպտական լրատվամիջոցներում (տե՛ս <http://www.el-balad.com/mobile/771091>, <http://www.el-balad.com/show.aspx?id=825936>, <http://www.ahram.org.eg/UI/Front/>, <http://arabi.ahram.org.eg/ErrorPage.aspx?asperrorpath=/NewsQ/37382.aspx>, <http://www.aztagarabic.com/archives/11969>, <http://www.elwatannews.com/news/details/399089>, <http://albedaiah.com/node/56478>, <http://m.almasryalyoum.com/news/details/484666>, <https://www.youtube.com/watch?v=oCU-vKiofxg&feature=youtu.be>, <http://ancnews.info/?p=1132> և այլն):

են զբաղեցրել և, չնայած հայ համայնքի փոքրաթիվ լինելուն, այն միշտ եղել ու մնում է եգիպտական հասարակության անքակտելի մասը:

XIX դարի երկրորդ կեսին մի շարք ղեկավար պաշտոններ գտնվում էին հայերի ձեռքին: Նուբար Նուբարյանը (Եգիպտոսի առաջին վարչապետը, մի քանի անգամ ստանձնել է այդ պաշտոնը՝ 1878-1879, 1884-1888, 1894-1895), Պողոս Նուբարյանը (Երկաթուղու վարչության ազգային ներկայացուցիչ՝ 1876-1879, 1891-1898), Հակոբ Արթինը (ընդհանուր կրթության նախարարի տեղակալ 1884-1906), Տիգրան Աբրոյանը (արտաքին գործերի նախարար՝ 1891-1894) և այլք² ազդու լծակներ ունեին՝ չնայած նրանց նկատմամբ տեղացիների վերաբերմունքը միանշանակ չէր³:

Սույն ուսումնասիրության կարևորությունը հիմնավորելով՝ չմոռանանք, որ տվյալ ժամանակահատվածում Եգիպտոսում գրեթե չկային հայալեզու պարբերականներ. «Արմաւենին» սկսել էր լույս տեսնել 1865 թ. և դադարել ընդամենը 4 համար տպագրվելուց հետո: 1889 թ. նրան հաջորդելու էր «Նեղոսը»՝ հրատարակվելով միայն 18 ամիս: Եգիպտահայ մամուլի ակտիվացումը սկսվեց 1897 թ.՝ Գրիգոր Սարաֆյանի «Նոր կեանքի» և «Լրաբերի», այնուհետև՝ Հարություն Ալփիարի «Փարոսի» հիմնադրումով⁴: Հետևաբար, XIX դարի երկրորդ կեսին, Եգիպտոսի ոչ միայն արաբ, այլև հայ ընթերցողի տեղեկատվության հիմնական աղբյուրն արաբալեզու մամուլն էր:

Ատենախոսության ժամանակագրական սահմանների (1870-ականների երկրորդ կեսից մինչև 1890-ականների երկրորդ կեսը) սկիզբը համընկնում է մի կողմից՝ Հայկական հարցի միջազգայնացման, մյուս կողմից՝ Եգիպտոսում պարբերական մամուլի զարգացման մի կարևոր շրջափուլի՝ մասնավոր մամուլի սկզբնավորման հետ: 1897-ից Հայկական հարցը միջազգային ասպարեզում նվազ ուշադրության սկսեց արժանանալ: Եգիպտոսի քաղաքական պատմության մեջ նույնպես հասունացել էր նոր շրջան՝ ազգային-ազատագրական պայքարի սկզբնավորման փուլը, որը, խմորվելով

² Պէրդրան Է., Նուպար փաշա 1825-1899, նիշք եւ տպաւորութիւնք, Կ. Պոլիս, 1910, محمد رفعة الإمام للأرمن في مصر، القرن التاسع عشر، القاهرة، 1995، ص. 156-121.

³ Սա վառ արտահայտություն է գտել մեր կողմից ուսումնասիրված պարբերականներում, մի քանիսն առատ են նրան վատաբանող տողերով (տե՛ս "الأهرام", "العروة الوثقى"):

⁴ Պայրամեան Ս. Ն., Հայ մամուլը Եգիպտոսի մէջ, մատենագիտական ցուցակ, Գահիրէ, 2005, էջ 2-10, Թովուզյան Հ., Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն (1805-1952), Երևան, 1978, էջ 196-203:

1880-1890-ականներին և ամրապնդվելով գաղափարական մակարդակում, պետք է մարմին առներ 1900-ականներին:

Ատենախոսության նպատակն է վերհանել և պատմաքննական լույսի ներքո ներկայացնել Եգիպտոսի արաբալեզու մամուլի հրապարակումները Հայկական հարցի վերաբերյալ: Ինչպես հայտնի է, Բեռլինի վեհաժողովից հետո Հայկական հարցը սկսել էր արժարժվել առավելապես բարենորոգումների ճանապարհով արևմտահայության դրությունը բարելավելու պահանջներով: Դրանց պատասխանն առավել սաստկացող օսմանյան քաղաքականությունն էր, որի գագաթնակետը դարձան 1894-1896 թթ. հայերի կոտորածները: Այս պատմական իրողությունների շուրջ էր պտտվում մեծ տերությունների և Օսմանյան կայսրության քաղաքական խաղը: Նպատակ ենք ունեցել ցույց տալու, թե ինչպիսի արտացոլում են գտել պատմական տվյալ իրողությունները ուսումնասիրվող մամուլում՝ այդ հիմնավորելով Եգիպտոսին հատուկ պատմական գործոնների համատեքստում: Նկատի ունենք, որ այդ արձագանքներն, ի վերջո, հող են նախապատրաստել մամուլում հայկական խնդրի ճշմարտացի կամ աղավաղված ներկայացման համար:

Ձեռնամուխ լինելով նյութի ուսումնասիրությանը՝ հետամուտ ենք եղել հետևյալ խնդիրներին.

- Ցույց տալ XIX դարի երկրորդ կեսի Եգիպտոսի արաբալեզու մամուլի զարգացման հիմնական առանձնահատկությունները և ուղղությունները՝ հիմնավորելով դրանց ձևավորման պատմական նախադրյալները:
- Բացահայտել Եգիպտոսի արաբալեզու մամուլում արևմտահայության կացությանն առնչվող հրապարակումները և վերհանել հիմնական շեշտադրումները:
- Վերհանել ու քննական լույսի ներքո վերլուծել ուսումնասիրվող մամուլում 1894-1896 թթ. հայերի կոտորածների և դրանց իրականացման ձևերի արձագանքները, անդրադառնալ հայ գաղթականների հիմնախնդրի լուսաբանմանը:

- Ուսումնասիրել Հայկական հարցի բովանդակության, Արևմտյան Հայաստանի բարենորոգումների խնդրի, ինչպես նաև Հայկական հարցի վերաբերյալ մեծ տերությունների դիրքորոշման լուսաբանումը Եգիպտոսի արաբալեզու մամուլում:
- Վերլուծել խնդրո առարկա մամուլի հրապարակումները՝ համադրելով և համեմատելով ինչպես տարբեր ուղղվածության արաբալեզու պարբերականների, այնպես էլ ժամանակի միջազգային մամուլի, ականատեսների հուշագրությունների կամ տվյալ պատմական իրադարձություններին վերաբերող այլ աղբյուրագիտական արժեք ունեցող նյութերի հետ:
- Վերոհիշյալի միջոցով ուրվագծել Եգիպտոսի հանրության տարբեր շերտերի, դրանց հանրագումարում՝ նաև ընդհանուրի վերաբերմունքը Հայկական հարցի վերաբերյալ:
- Ցույց տալ մատուցված տեղեկատվության հակասությունները, բացահայտել դրանց պատճառները՝ պարզելու համար, թե որքանով է Եգիպտական մամուլին հաջողվել պատմական իրականությունն արտացոլելու իր առաքելությունը:

Ատենախոսությունը շարադրելիս առաջնորդվել ենք պատմաքննական և պատմահամադրական վերլուծության մեթոդներով՝ արաբալեզու մամուլի՝ մեզ զբաղեցնող հրապարակումների, հրատարակված սկզբնաղբյուրների, ուսումնասիրությունների հետազոտության և վերլուծության ճանապարհով:

Թեմայի համակողմանի և ամբողջական լուսաբանման տեսանկյունից համալիր մոտեցում ենք դրսևորել ինչպես մամուլի և այլ սկզբնաղբյուրների, այնպես էլ հրապարակի վրա եղած պատմագիտական ուսումնասիրությունների նկատմամբ: Կարևորություն ենք տվել դրանց համակցությանը, որի միջոցով պատմական իրադարձություններն առավել հավաստի և անաչառ են ներկայանում:

Ներկայացվող ատենախոսությունը Եգիպտոսի արաբալեզու մամուլում Հայկական հարցի, մասնավորաբար, Օսմանյան կայսրության կողմից արևմտահայության նկատմամբ իրականացված հայաջինջ քաղաքականության,

ինչպես նաև Հայկական հարցում միջազգային դիվանագիտության դիրքորոշման վերաբերյալ խնդրո առարկա ժամանակահատվածում լույս տեսած նյութերի գիտաքննական վերլուծության առաջին փորձն է:

Արաբական մամուլի էջերում Հայկական հարցի արտացոլումը սոսկ մասնակի ուսումնասիրության է արժանացել: Այն ուսումնասիրված է Սիրիայի արաբալեզու մամուլի շրջանակներում՝ Նորա Արիսյանի⁵ և Մյասնիկ Եսոյանի⁶ կողմից:

Ատենախոսության ատաղձը XIX դարի երկրորդ կեսին Եգիպտական հասարակական միտքն արտացոլող մասնավոր մամուլի գլխավոր պարբերականներն են: Ընտրել ենք գաղափարական դաշտը ձևավորող՝ օսմանամետ, բրիտանամետ, չափավոր ազգայնական-խլամական, երիտթուրքական-վտարանդիական հետևյալ օրաթերթերը՝ «Ալ-Ահրամ», «Ալ-Մուկատտամ», «Ալ-Մուայյադ», «Ալ-Մուշիր»⁷: Զուգահեռ օգտագործել ենք նաև դրանց հարող որոշ այլ պարբերականների հրապարակումներ⁸: Վերոնշյալներում տեղ գտած հոդվածները հիմք են հանդիսացել Եգիպտոսի հեղինակավոր գիտական պարբերականներ «Ալ-Հիլալ»-ի և «Ալ-Մուկթատաֆ»-ի՝ Հայկական հարցին վերաբերող հոդվածների համար: Փորձել ենք վերարտադրել Եգիպտական հանրության մոտեցումները և վերհանել դրանց դրդապատճառները՝ համադրելով և վերլուծելով առկա նյութը:

Հայկական հարցը՝ որպես միջազգային քաղաքական քննարկման առարկա, իր հաստատուն տեղն է գրավել Եգիպտական թերթերի առաջին էջերում: Խնդրի միջազգայնացմանը գրեթե տարեկիցը հանդիսացող «Ալ-Ահրամ»-ն ասվածի ցայտուն օրինակն է: Այն Եգիպտական կարևորագույն պարբերականներից մեկն է (եթե ոչ ամենակարևորը) ցայսօր: Իր հիմնադրման օրից ի վեր թերթը կարողացել է խուսանավել Եգիպտոսում տեղի ունեցող քաղաքական փոփոխությունների ալիքներում՝ մի կողմից պահպանելու իր գոյությունը, մյուս կողմից՝ հանդես գալով

⁵ نورا أريسيان، أصداء الإبادة الأرمنية في الصحافة السورية (1877-1930)، لبنان، بيروت، 2004، الأبداء الأرمنية في صحافة المهجر السورية، هايكازيان-مجلة الدراسات الأرمنية، بيروت، 2010.

⁶ Եսոյան Մ., Հայկական հարցը Սիրիայի արաբալեզու մամուլում 1908-1914 թվականներին, Երևան, 2015:

⁷ "الأهرام" 1878-1897, "المقطم" 1889 – 1897, "المؤيد" 1890-1897, "المشير" 1895-1898, "الهلال" 1903-1915, "المقتطف" 1915.

⁸ "العروة الوثقى" 1884, "مصر" 1896, "لسان العرب", 1896.10.20, "الرأي العام" 1896.18.09.

չեզոք, ֆրանսիական, այնուհետև՝ 1882-ից նոր ծլարձակող եգիպտական ազգային շահերի դիրքերից: Ըստ այդմ էլ թերթի լրատվության հայկական մասնաբաժինը կրում է Եգիպտոսի ազգային առաջնահերթությունների լույսի ներքո լուսաբանվելու յուրահատուկ կնիքը: «Ալ-Ահրամ»-ին հակակշիռ պետք է դառնար բրիտանական քաղաքական շահախնդրությունների խոսնակ «Ալ-Մուկատտամ»-ը: Այդ երկուսին հակոտնյա և զուտ եգիպտական՝ հատկապես իսլամական, ազգային գաղափարների քարոզիչ «Ալ-Մուայյադ»-ը Եգիպտոսի հասարակական կարծիքը ձևավորող գլխավոր լրատուների շարքում էր: XIX դարի երկրորդ կեսին առավելապես այս «երեքի» ամենօրյա լրատվությունն էր ձևավորում եգիպտական հանրային ընկալումը համաշխարհային իրականության նկատմամբ:

Կարևորել ենք նաև մեկ այլ՝ «նոր օսմանների» հիմնական հայեցակետերը զարգացնող երիտթուրքական-վտարանդիական մամուլի առկայության փաստը Եգիպտոսում, որի հրատարակություններից մեկը՝ «Ալ-Մուշիր»-ը, բավականաչափ հետաքրքիր վերաբերմունք է դրսևորել Հայկական խնդիրը մեկնաբանելիս: Ըստ այդմ, թերթը մեր կողմից մանրագնին հետազոտման առարկա է դարձել: Առանձնահատուկ ուշադրության ենք արժանացրել «Ալ-Մուշիր»-ի էջերում լույս տեսած բազմաթիվ ծաղրանկարները, որոնք անմիջական կապ ունեն Հայկական հարցի հետ և կոչված են լրացնելու ժամանակի միջազգային մամուլի սակավաթիվ օրգաններում խնդրին առնչվող ծաղրանկարների շարքը:

Ինչ վերաբերում է գիտական բնույթի պարբերականներում Հայկական հարցի քննությանը, ապա այս դեպքում ևս խնդիրն իր հաստատուն տեղն ունի ամենահեղինակավոր «Ալ-հիլալ» և «Ալ-Մուկթատաֆ» գիտական հրատարակությունների հատորներում:

Շեշտադրել ենք այն հանգամանքը, որ մամուլում լրահոսն արձարձված է եգիպտական մտքի հասարակական տարբեր հոսանքների գաղափարական հետնախորքի վրա և կրում է դրանց առաջնահերթության դրոշմը: Այս վերջինը նյութի նկատմամբ մեր հետազոտական մոտեցման հիմնական առանցքն է:

Եգիպտոսի պարբերական մամուլի պատմական զարգացման առանձնահատկությունները, հասարակական մտքի գաղափարական ուղղությունները ներկայացնելու նպատակին հետամուտ՝ ուղղորդող արժեք ունեցող աշխատությունների շարքում ներառել ենք Ֆիլիպ Դի Տարագիի «Արաբական մամուլի պատմություն» երկհատոր հիմնարար ուսումնասիրությունը⁹:

Այս բնագավառում առաջին աշխատանքը պատկանում է 1884 թ. Կահիրեում Ֆրանսիայի հյուպատոսության թարգմանիչ Հենրի Գալիարդուի գրչին, որը ֆրանսերենով «Արաբական մամուլի պատմություն» խորագիրը կրող զեկուցագրում ներկայացրել է բոլոր այն պարբերականները, որոնք տպագրվում էին Նեղոսի հովտում՝ ավելացնելով դրանց խմբագիրների կենսագրությունը, նրանց քաղաքական նախասիրությունները և գրական գործերը¹⁰:

Առաջին արաբ պատմաբանը, որն զբաղվել է արաբական մամուլի պատմությամբ, «Ալ-Հիլալ»-ի խմբագիր Զիրջի Զեյդանն է: Նա ամսագրի առաջին համարում 1892 թ. հրատարակել է արաբական մամուլի առաջին համահավաք ցուցակը¹¹, որում ընդգրկված են աշխարհում մինչ այդ լույս տեսած 147 անուն արաբալեզու պարբերականներ՝ դրանց ուղղվածության, խմբագիրների, հրատարակության վայրի վերաբերյալ հավելյալ տեղեկատվությամբ հեղինակի գրչին է պատկանում ևս մի երկհատոր ծավալուն աշխատություն, որը մեզ մեծապես օգտակար է եղել¹²: Մեզ հաջողվել է գտնել մեկ այլ մատենագիտական ցանկ՝ «Ալ-Հիլալ»-ի հետագա համարներից մեկում, որի հեղինակը՝ Ասադ էֆենդի Սալիմը, համալրել է նախկինում արվածը՝ ավելացնելով 1892-1903 թթ. լույս տեսած արաբալեզու պարբերականների, դրանց հիմնադրման թվականի, վայրի, հիմնադիրների,

⁹ الفيكنت فيليب دى طرّازي، تاريخ الصحافة العربية، الجزء الأول والثاني، بيروت، 1913.

¹⁰ Զեկուցագրի երկու ձեռագիր տարբերակները գտնվում են Փարիզում՝ Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության արխիվում, իսկ մյուսը՝ Կահիրեում: Տարագին դրանց գոյությունը գնահատում է, որպես արաբական մամուլի պատմության մեջ ֆրանսիական դերակատարության հաջորդ կարևոր քայլը՝ Նապոլեոն Բոնապարտի կողմից եգիպտական մամուլը հիմնադրելուց հետո (Նույն տեղում, էջ 21):

¹¹ "الهلال"، 1892، الجزء الأول، السنة الأولى، سبتمبر.

¹² جرجي زيدان، تراجم مشاهير الشرق في القرن التاسع عشر، ج. 1، 2.

ուղղվածության մասին ցանկը¹³: Այն լրացվել է նաև 1904 թ.՝ «Արաբական կենդանի պարբերականները» խորագրի ներքո¹⁴:

Ուշագրավ աշխատանք է արևելագետ Մարթին Հարթմանի՝ 1899 թ. անգլերենով հրատարակված «Եգիպտոսի արաբական մամուլը» ուսումնասիրությունը, որի հավելվածում ներկայացված է 168 անուն ամսագիր և թերթ՝ դրանց մանրամասն նկարագրությամբ: Հեղինակի դիպուկ բնութագրերը կարևորել ենք Եգիպտոսի արաբական մամուլի պատմության, պարբերականների ուղղվածության ոլորտում շրջանառող տեսական հիմնավորումները ձևակերպելիս¹⁵:

XIX դարի վերջին քառորդի եգիպտական մամուլի ներկայացման համար արժեքավոր աղբյուր է ծագումով թուրք, սակայն Կահիրեում մեծացած, արաբախոս և արաբական գրականության կարկառուն դեմքերից մեկի՝ Վալի ադ-Դին Յաքանի «Հայտնին և անհայտը» երկհատոր հուշագրությունը: Այն նախ և առաջ առանձնահատուկ է հայերի կոտորածների նկարագրություններով¹⁶: Հեղինակը կարևոր անդրադարձեր է կատարել Եգիպտոսի արաբական մամուլի պատմությանը, գնահատելի են հատկապես երիտթուրքական հրատարակություններին վերաբերող հատվածները¹⁷:

Ավելի ուշ շրջանի արաբալեզու ուսումնասիրություններից առանձնակի ուշադրության են արժանի Սամի Ազիզի¹⁸, Աբդ ալ-Լատիֆ Համզայի¹⁹, Իբրահիմ Աբդոյի²⁰, Ֆարուկ Աբու Զեյդի²¹ Ռամզի Միխայիլի²², Ահմադ Համրուշի²³ աշխատանքները:

¹³ أسعد افندي سليم، الجرائد العربية في العالم، "الهلال"، السنة الثانية عشر، 1913، ص. 49.

¹⁴ Նույն տեղում, թիվ 7, էջ 212:

¹⁵ **Hartmann M.**, The Arabic Press of Egypt, London, 1899:

¹⁶ Հեղինակը երիտթուրքական գաղափարախոսության կողմնակից էր և սուլթանի հրամանով արքայազն էր Սեբաստիա, որտեղ և ականատես է եղել հայերի ջարդերին: Նա իր աշխատություններում բազմիցս դատապարտել է սուլթանի բռնապետական վարչակարգը՝ լինելով հակաաբդուլհամիդական:

¹⁷ ولي الدين يكن، المعلوم والمجهول، الجزء الأول والثاني، مصر، 1909.

¹⁸ سامي عزيز، الصحافة المصرية وموقفها من الاحتلال الإنجليزي، القاهرة، 1968.

¹⁹ عبد اللطيف همزة، الصحافة العربية في مصر، دار الفكر العربية، 1985، عبد الطيف حمزة أدب، المقالة الصحافية، ج. 4، علي يوسف.

²⁰ إبراهيم عبده، تطوّر الصحافة المصرية، 1898-1951، إبراهيم عبده، جريدة الأهرام - تاريخ مصر في 75 سنة

²¹ فاروق أبو زيد، الصحافة المتخصصة، القاهرة، 1986.

²² رمزي ميخائيل، الصحافة المصرية والحركة الوطنية من الاحتلال الى الاستقلال 1882-1922، القاهرة، 1996.

²³ أحمد حمروش، قصة الصحافة في مصر، القاهرة، 1989.

Եվրոպացի ժամանակակից ուսումնասիրողներից կարևորել ենք Ա. Այալոնի ծավալուն մենագրությունը²⁴:

Եգիպտոսի քաղաքական պատմության, պարբերական մամուլի ուղղությունների, հասարակական-քաղաքական հոսանքների ներկայացման նպատակով ուղղորդվել ենք մի շարք եվրոպացի և ռուս հետազոտողների աշխատություններով, որոնք օգնել են ճիշտ բնութագրել ժամանակաշրջանը և դրան հատուկ գաղափարական դաշտը²⁵:

Ատենախոսության մեջ շոշափված հիմնահարցի շրջանակներում Օսմանյան կայսրության պատմությանը վերաբերող որոշ պատմական իրողություններ հիմնավորելիս օգտակար են եղել հատկապես Վ. Ա. Գորդլևսկու և Վ. Վ. Բարտոլդի աշխատությունները²⁶: Մասնավորապես, նոր օսմանների, երիտթուրքերի գաղափարախոսությունների հիմնական կողմերի ներկայացման խնդրում առաջնորդվել ենք Յու. Պետրոսյանի և Զ. Կիրակոսյանի աշխատություններով²⁷:

Ատենախոսության համար առանցքային հարցերից մեկը՝ Օսմանյան կայսրության տպագիր մամուլի պատմությունը, լավագույնս ներկայացված է Ա. Դ. Ժելտյակովի մենագրության մեջ²⁸, որը մեծապես նպաստել է մեր աշխատանքի իրականացմանը:

²⁴ **Ayalon A.**, The Press in the Arab Middle East, New York, Oxford, 1995.

²⁵ **Նաջարյան Ե. Հ.**, Արաբական ազգային-մշակութային զարթոնքը, Երևան, 1988, **Կարապետյան Ռ.**, Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Երևան, 2003, **Cromer**, Modern Egypt, vol. II, London, 1908, **Colvin A.**, The Making of Modern Egypt, London 1906, **Hunter R. F.**, Egypt under the Khedives, 1805-1879, from Household Government to the Modern Bureaucracy, Egypt, Gairo, 1999, **Armajani J.**, Modern Islamic movements, History, religion and politics, UK, 2012, **The Cambridge history of Egypt**, vol. 2, Modern Egypt from 1517 to the end of the twentieth century, Cambridge, 2008, **Ahmed J. M.**, The Intellectual Origins of Egyptian Nationalism, London, New York, Toronto, 1960, **Harris C.**, Nationalism and Revolution in Egypt, London, Paris, 1964, **Крачковский И.**, Мустафа - Кямиль и Жюльетта Адан, к истории национальной движения в Египте, Ленинград, 1928, **Долинина А. А.**, Очерки истории арабской литературы нового времени Египет и Сирия, просветительский роман 1870-1914 гг., Москва 1973, **Котлов Л. Н.**, Становление национально-освободительного движения на Арабском Востоке, Москва 1975, **Левин З. И.**, Развитие основных течений общественно-политической мысли в Сирии и в Египте (Новое время), Москва 1972, Ислам и национализм в странах Зарубежного Востока, Москва 1988, **Луцкий В.Б.**, Новая история арабских стран, Москва 1965,

²⁶ **Гордлевский В. А.**, Избранные сочинения III, Москва 1962, **Бартольд В. В.**, Сочинения, т. 6, Турция, ислам, христианство, Москва 1966

²⁷ **Կիրակոսյան Զ. Ս.**, Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (19-րդ դարի 80-ական թթ.), Երևան, 1980, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (19-րդ դարի 90-ական թթ.-1914 թ.), գիրք առաջին, Երևան, 1982, **Петросян Ю. А.**, Младотурецкое движение, Москва 1971, նույնի՝ Османская империя, могущество и гибель, Москва 1990, նաև՝ Новые османы и борьба за Конституцию 1876 г. в Турции, Москва 1958, **Фадеева И. Л.**, Официальные доктрины в идеологии и политике Османской империи (Османизм-пантуркизм), Москва, 1985.

²⁸ **Желтяков А.Д.**, Печать в общественно-политической и культурной жизни Турции, Москва, 1972.

Ատենախոսության հիմքը համարվող պարբերական մամուլը, ինչպես Օսմանյան կայսրության ամբողջ տպագրությունը, ենթակա էր արդուլահամիդյան գրաքննության ազդեցությանը: Այն լուսաբանելու տեսանկյունից ուշագրավ են Ա. Խառատյանի մենագրությունները, որտեղ գրաքննությունը ներկայացվում է արևմտահայ մամուլի շրջանակներում, և որի զուգահեռները տեսնում ենք Եգիպտոսի արաբալեզու մամուլում²⁹:

Ատենախոսության, թերևս, ամենակարևոր հիմնահարցը 1894-1896 թթ. հայերի կոտորածներն է, որն արաբ պատմագիտական միտքը գնահատել է որպես Հայոց ցեղասպանության սկիզբ:

Ն. Հովհաննիսյանն իր ուսումնասիրություններում մանրամասն քննության է առել այդ խնդիրը³⁰: Հեղինակն իրավացի կերպով գնահատել է արաբական պատմագիտական մտքի վերաբերմունքը XIX դարի վերջին և XX դարասկզբին իրագործված հայերի կոտորածների և Հայկական հարցի վերաբերյալ՝ ընդձեռնով հատկապես Լիբանանի և Սիրիայի պատմագետների՝ Մուսա Պրենսի³¹, Սալիհ Զահր ադ-Դինի, Մրուան ալ-Մուդաուարի, Ֆուադ-Հաֆիզի և մի շարք այլ պատմաբանների աշխատությունները³²:

Մասնավորեցնելով Եգիպտոսի սահմաններում՝ պետք է նշել, որ եգիպտական պատմագիտական միտքը Հայկական հարցին համեմատաբար ավելի քիչ է անդրադարձել՝ ի դեմս արդեն մեր կողմից հիշատակված Վալի ադ-Դին Յաքանի, ապա՝ Ֆայեզ ալ-Ղուսեյնի աղբյուրագիտական արժեք ունեցող աշխատանքների³³:

²⁹ Խառատյան Ա. Ա., Օսմանյան գրաքննությունը և արևմտահայ մամուլը 1858-1896, Երևան, 1984, նույնի՝ Արևմտահայ մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում (1857-1908), Երևան, 1989:

³⁰ Հովհաննիսյան Ն. Հ., Արաբական երկրների պատմություն հ. 2, օսմանյան տիրապետության շրջան. 1516-1918 թթ., Երևան, 2004, Հայոց ցեղասպանությունը արաբական պատմագիտության քննական լույսի ներքո, Երևան, 2004, նաև՝ Սուլթան Աբդուլ Համիդ Երկրորդի հակահայկական քաղաքականությունն արաբական ժամանակակից պատմագրության գնահատմամբ, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 1987, 1 (116), էջ 75-88:

³¹ Moussa Prince, Un genocide impuni: L'Armenocide, Beirut, 1975.

³² مروان المدوّر، الأرمن عبر التاريخ، بيروت - لبنان، 1982، القاهرة - جيزة، 1997، صالح زهر الدين، صالح زهر الدين، سياسة الحكومة العثمانية في أرمينيا الغربية وموقف القوى الدولية منها، انطلياس 2010، عطا درغام، فايز الغصين، شهادات عن مذابح الأرمن، <http://www.ahewar.org/debat/show.art.asp?aid=435014>

Առանձնահատուկ կարևորություն պետք է տալ հայտնի հայագետ Մուհամմադ Ռիֆաթ ալ-Իմամի հիմնավոր ուսումնասիրություններին³⁴:

Նշենք, որ մեր ուսումնասիրության առարկա արաբալեզու պարբերականները ժամանակակից են 1894-1896 թթ. հայերի կոտորածներին, մինչդեռ պատմագիտական վերոբերյալ ուսումնասիրությունների հիմքում առավելապես ընկած են ավելի ուշ շրջանի հրատարակություններ: Մամուլում առկա Հայկական հարցին առնչվող՝ մեզ զբաղեցնող ժամանակահատվածով թվագրվող նյութն, այսուհանդերձ, վերոհշյալ արաբ ուսումնասիրողների կողմից միայն նեղ սահմաններում է շրջանառվել, ուստի կարիք ունի ավելի լայն հետազոտության: Մուհամմադ Ռիֆաթ ալ-Իմամը հրատարակել է երկու ոչ ծավալուն սակայն չափազանց արժեքավոր ուսումնասիրություն, որոնք մեզ համար օգտակար են եղել ատենախոսությունը շարադրելու գործում³⁵:

Եգիպտոսի արաբալեզու մամուլի արդյունավետ ուսումնասիրությանն էապես նպաստել են Ա. Կիրակոսյանի՝ Հայկական հարցի վերաբերյալ բրիտանական ու ամերիկյան կարևոր պարբերականների հրապարակումների քննությանը նվիրված աշխատությունները³⁶:

Ատենախոսության մեջ քննության դրված մյուս հիմնահարցերն ուսումնասիրելու տեսանկյունից չափազանց կարևոր են եղել Մ. Ներսիսյանի, Գ. Գալոյանի, Ռ. Սաֆրաստյանի, Վ. Պողոսյանի մենագրությունները³⁷:

³⁴ **محمد رفعة الامام**, الأرمن في مصر في القرن التاسع عشر، مصر القاهرة، 1995، الأرمن في مصر 1896-1961، القاهرة 2003، القضية الارمنية في الدولة العثمانية 1878-1923، القاهرة 2002.

³⁵ **محمد رفعة الامام**، الأهرام المضرية والقضية الأرمنية، 1897-1923، القاهرة 2006، القضية الأرمنية في المصادر العربية

<http://www.ancme.net/studies/438>, **1923 – 1878**

³⁶ **Киракосян А.**, Армянский вопрос на страницах журналов Великобритании (Середина 90-х гг. 19 века), Ереван, 1980, Киракосян А. Дж., Ближневосточный кризис 1895-97 гг., Армения и политика США, “Вопросы востоковедения”, Вып. 1-2, Ереван, 1983.

³⁷ **Սաֆրաստյան Ռ.**, Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Երևան, 2009, **Պողոսյան Վ.**, Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ (XIX դարի վերջ - XX դարի սկիզբ), Երևան, 2011, **Խուդինյան Գ.**, Հայ Դաշնակցության քննական պատմություն, ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը, Երևան 2006, **Բայրությունյան Վ.**, Քրդերը, հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո, Երևան, 2008, **Եազըճեան Գ.**, Սուլթան Ապտիլ Համիտ Բ-ի Յուշերն ու մտածումները, Ապտիլ Համիտ Բ. Կարմիր սուլթանը, Պեյրոյթ, 1980:

Ատենախոսությանն առնչվող հարակից խնդիրները քննելիս օգտագործել ենք «Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ» արձանագրությունները, այլ փաստաթղթերի ժողովածուներ³⁸, Սասունի, Զեյթունի իրադարձությունները ներկայացնող և հայ ազգային-ազատագրական շարժման պատմության վերաբերյալ մի շարք այլ հիմնարար ուսումնասիրություններ, հայ և այլազգի քաղաքական գործիչների, միսիոներների հուշագրություններ³⁹:

Հայոց պատմության տվյալ ժամանակաշրջանը ներկայացնելու համար հիմք ենք ընդունել «Հայոց պատմության» ակադեմիական հրատարակության երրորդ հատորի առաջին գիրքը⁴⁰:

Ատենախոսությունը շարադրելիս թեմային առնչվող բազմաթիվ արժեքավոր նյութեր քաղել ենք համացանցային որոշ կայքերից⁴¹:

³⁸ Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, 1878-1880, Կ.Պոլիս, Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, Կ.Պոլիս, 1890-1896, **Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում** (1828-1923), պրոֆ Զ. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972, **Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում**: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմողներ՝ Մ. Գ. Ներսիսյան, Ռ. Գ. Սահակյան, Երևան, 1991, **Հայոց հարցի վավերագրերը**, Լէօ, Թիֆլիս, 1915, **Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան** (1873-1910 թթ.), գիրք Ը, կազմող և առաջաբանի հեղինակ Սանդրո Բէիբուլեան, Երեւան, 2001, **Blue Book: Turkey**. No. 3. (Correspondence Relating to the Asiatic Provinces of Turkey and Ivents in Constantinople). London, 1896, նաև՝ No. 1. (1890-1891) (Correspondence respecting the condition of the Populations in Asiatic Turkey and the prociidings in the Case of Moussa Bey). London, 1896, **Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году**, Москва, 1896, **Братская помощь пострадавшим в Турции армянам**, фаскимильное воспроизведение издания 1898 года, Ер., 2014:

³⁹ **Ա-Պօ**, Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլաէթները, Երեւան, 1912, **Ալփոյաճեան Ա.**, Պատմութիւն հայ Կեսարիոյ, Բ. Հատոր, Գահիրէ, 1937, **Սարուխան**, Հայկական խնդիրն եւ Ազգային սահմանադրութիւնը Թիւրքիայում 1860-1910, Ա. Հատոր, Թիֆլիս, 1912, **Ատոմ (Հարություն Շահիրկյան)**, Բարենորոգումներու հարցը, Կ. Պոլիս, 1914, **Աղասի**, Զեյթուն եւ իր շրջականները, Պէյրութ, 1968, **Օտեան, Ե.**, Պողոս փաշա Նուպար, Կ. Պոլիս, 1913, **Մարաշի Տէր Ղեւոնդ քահանայի Յուշերը**, կազմեց Վ. Տէր-Ղևոնդյանը, Երևան, 2013, **Սեյլան**, Սասուն, Երևան, 1990, **Argyll J. D. (Duke of Argyll)**, The Eastern question from the Treaty of Paris 1856 to the Treaty of Berlin 1878, and to the Second Afghan War, vol. 1, London, **Bliss Edwin Munsell**, Turkish cruelties upon the Armenian Christians, a reign of terror, 1896, **MacCol Malcolm**, M. A., England's responsibility towards Armenia, London and New York, 1895, նաև՝ The Sultan and The powers, London New York and Bombay, 1896, **Harris R. J. and Harris H. B.**, Letters from the Scenes of The Recent Massacres in Armenia, London, 1897, **Wintle W. J.**, Armenia and its Sorrows, London, 1896, **Sadik Shahid Bey**, Islam, Turkey, and Armenia, and how they happend, 1898, Edwin Pears, Life of Abdul Hamid, Capter XIV, Estimate of the Character of Abdul Hamid, London, 1917, Azhderian Antranig, The Turk and the Land of haig of Turkey and Armenia, New York, 1898.

⁴⁰ **Հայոց պատմություն, հ. III, գիրք առաջին** (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ), Երևան, 2010:

⁴¹ <http://zefys.staatsbibliothek-berlin.de/list/title/zdb/26687665/>, www.al-mustafa.com.pdf, <http://www.ancme.net/studies/438>, <http://dar.bibalex.org/webpages/mainpage.jsf?PID=DAF-Job:186018&q>, <http://www.vostlit.info/Texts/rus/Jabarti2/frameset6.htm>.

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԱԲԱԼԵՋՈՒ ՄԱՄՈՒԼԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ

ՔԱՌՈՐԴԻՆ: ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ

1.1. Հասարակական-քաղաքական իրականությունը և պարբերական մամուլը Եգիպտոսում XIX դարի վերջին քառորդին (համառոտ ակնարկ)

Եգիպտոսում XIX դարի ավարտը հատկանշվում է հասարակական գիտակցության ընդերքում սկիզբ առած խոր փոխակերպումների գործընթացով, ինչը երկրում ստեղծված քաղաքական իրավիճակի անմիջական արգասիքն էր:

Գտնվելով Օսմանյան կայսրության կազմում՝ Եգիպտոսը ներկայացնում էր կայսրության քաղաքական իրականության հիմնական կողմերը՝ իր աշխարհագրական դիրքի ռազմավարական կարևորությամբ և քաղաքակրթական առանձնահատկություններով պայմանավորված ներկայանալով:

Եվրոպական տերությունների զավթողական քաղաքականության արդյունքում, որն սկսվել էր դեռևս ֆրանսիական զինարշավով, ինչպես Օսմանյան կայսրությունը, այնպես էլ նրա կազմում գտնվող ռազմավարական կարևորություն ներկայացնող երկրները հայտնվել էին հարաճուն կախվածության մեջ՝ վերածվելով Արևմուտքի հումքի աղբյուրների: Անգլիական ներկայությունը Եգիպտոսում XIX դարի ավարտին բնութագրվում է երկրի ֆինանսական ինքնուրույնության սահմանափակումներով, որ 1882 թ. ամրապնդվեց նաև նրա քաղաքական գերակայությամբ:

Եգիպտական խղիվները⁴², ոգևորվելով մեծ նախագծերի հեռանկարներով (առաջին հերթին Սուեզի ջրանցքի կառուցման նպատակով), անընդմեջ մեծ դրամագլուխներ էին փոխառում եվրոպական դրամատներից, ինչը հանգեցնում էր

⁴² Եգիպտոսի կառավարչի տիտղոս, պարսկերենով նշանակում է «վեհապետ», «տեր» կամ «իշխան»: Առաջին անգամ այն Իսմայիլ փաշային է շնորհվել 1867 թ. սուլթանի ֆերմանով և գործածության մեջ մնացել մինչև 1914 թ. (տե՛ս The Encyclopaedia of Islam, vol. V., Leiden, E.J. Brill, 1986, p. 4), կարևոր է ընդգծել, որ այս տիտղոսն ի վերջո սուլթանից «կորզել» հաջողվել էր Նուբար Նուբարյանի ջանքերով (տե՛ս Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, II, Երևան, 2004, էջ 366-367, Պերդրան Է., նշվ. աշխ., էջ 15):

անխուսափելի կախվածության: Եգիպտոսը 1876 թ. սնանկ հայտարարվեց, 1878-ին ձևավորվեց Եվրոպական կաբինետը:

Ստեղծված տնտեսական ծանր կացությունն առաջացնում էր ժողովրդական լայն զանգվածների բողոքը, որոնք տիրող թշվառության և անարդարությունների գլխավոր հեղինակ էին համարում խղիվին և նրա համախոհներին՝ միևնույն ժամանակ անբարյացակամ վերաբերմունք ունենալով երկրում հաստատված և իրենց համար նախատեսված արտոնություններից օգտվող եվրոպացիների նկատմամբ: Բողոքի ալիքն ի վերջո հանգեցրեց 1882 թ. ապստամբությանը՝ Ահմադ Օրաբի փաշայի գլխավորությամբ⁴³: Նույն թվականին Մեծ Բրիտանիան հաստատվեց Եգիպտոսում, սակայն այդպես էլ չհայտարարեց Եգիպտոսի վերջնական բռնազավթման, կամ դրա նկատմամբ հովանավորություն հաստատելու մասին՝ երկնչելով Ֆրանսիայի և Ռուսաստանի, մասամբ՝ նաև Օսմանյան կայսրության հակազդեցությունից: Ֆրանսիական ճնշումների արդյունքում Մեծ Բրիտանիան համաձայնեց Եգիպտոսից դուրս գալու ժամկետները ճշգրտելու շուրջ բանակցություններ սկսել: Դրանք ընթանում էին Կ. Պոլսում, սակայն անընդհատ երկարաձգվում էին բրիտանական դիվանագիտության ջանքերով: 1887 թ. ի վերջո, մշակվեց անգլո-թուրքական համաձայնագրի նախագիծը, ըստ որի, անգլիացիները պարտավորվում էին երեք տարվա ընթացքում դուրս գալ Եգիպտոսից, եթե նշված ժամանակահատվածում Եգիպտոսի անվտանգության դեմ նոր՝ արտաքին կամ ներքին սպառնալիք ի հայտ չգար: Բացի այդ, Անգլիան պահանջել էր, որ համաձայնագիրն իրեն երկիրը վերանվաճելու իրավունք վերապահեր՝ ներքին կամ արտաքին նոր սպառնալիք առաջանալու դեպքում: Սուլթանը մերժել էր այդ պահանջը, և անգլիական զորքերը Եգիպտոսում անորոշ կարգավիճակ էին ստացել: Փաստացի, երկիրը վերածվել էր բրիտանական գաղութի, սակայն դրա միջազգային իրավական կացությունը մինչև 1914 թ. փոփոխության չենթարկվեց: Եգիպտոսը համարվում էր Օսմանյան

⁴³ Օրաբիի ապստամբության մասին մանրամասն տե՛ս Cromer, նշվ. աշխ., էջ 175-194, Лыцкий В. Г., նշվ. աշխ., էջ 186-196, The Cambridge history of Egypt, vol. 2, Modern Egypt from 1517 to the end of the twentieth century, Cambridge University Press, 2008, p. 217-238.

կայսրության մաս, իսկ Մեծ Բրիտանիան՝ «ժամանակավորապես օկուպացնող պետություն»⁴⁴:

Եգիպտոսի հասարակական-քաղաքական մտքի պատմությունը գլխավորապես կարելի է ներկայացնել որպես նոր սոցիալական հարաբերությունների ձևավորման և ազգային-ազատագրական շարժումների զարգացման պատմություն⁴⁵:

Եվրոպական տերությունների կողմից Օսմանյան կայսրության, ինչպես նաև դրա կազմում գտնվող արաբական երկրների տնտեսական և քաղաքական կախվածության ավելացումը և դրանք կիսագաղութների ու գաղութների վերածելու քաղաքականությունը խթանում էին ֆեոդալական հետամնաց կարգերը հաղթահարելու ազգային-ազատագրական պայքարի միտումները:

Նշյալ ժամանակահատվածը միաժամանակ առանձնահատուկ է որպես արաբական լուսավորականության եգիպտական շրջափուլ: Այն ուղեկցվում էր ազատական գաղափարախոսության և ազգային ինքնագիտակցության ծնունդով, համիսլամականության, իսլամական ռեֆորմացիայի, համաարաբականության ու եգիպտական ազգայնականության⁴⁶ ձևավորման գործընթացներով:

Արաբական երկրների մշակութային վերելքի շրջանը XIX - XX դդ. միջազգային գիտական գրականության մեջ անվանում են «նահդա»: Ռուս, օտար և արաբական աղբյուրները «նահդա»-ն մեկնաբանելու խնդրում տարբեր գիտական բացատրություններ ունեն⁴⁷: Այն հայտնի է որպես մշակութային կյանքի ակտիվացման, նոր արաբական գրականության կայացման, լուսավորական շարժման, իսլամական ռեֆորմացիայի ծավալման, արաբական ազգային-ազատագրական պայքարի գաղափարաբանական հիմնադրույթների ստեղծման ժամանակաշրջան: Չնայած, ընդունված է թարգմանաբար «նահդան» ներկայացնել որպես «վերածնունդ», ճիշտ չէ եվրոպական վերածնունդի հետ դրա ամբողջական նույնացումը: Պետք է շեշտել, որ թեև և՛ եվրոպական վերածնունդը և՛ արաբական նահդան ուղեկցվում էին

⁴⁴ Տե՛ս Կարապետյան Ռ., նշվ. աշխ., էջ 68-74, Лущкий В.Б., նույն տեղում, Colvin A., նշվ. աշխ., էջ 238-247:

⁴⁵ احمد زكي بدوي، تاريخ مصر الاجتماعي، ص. 260-257. <http://dar.bibalex.org/webpages/mainpage.jsf?PID=DAF:186018&q>

⁴⁶ Левин З. И., Ислам и национализм в странах зарубежного Востока, Москва 1988, с. 183-195.

⁴⁷ Այս մասին մանրամասն տե՛ս Նաջարյան Ե. Հ., նշվ. աշխ., էջ 15-29:

կապիտալիստական հարաբերությունների ձևավորման գործընթացով, այնուամենայնիվ, դրանք տարբեր էին իրենց էությամբ և ձևով: Վերջինը ազգային-մշակութային զարթոնք էր՝ օսմանյան տիրապետության հետևանքով ստեղծված դարավոր մշակութային լճացումից հետո, որը տեղի էր տալիս կապիտալիստական Եվրոպայի հոգևոր արժեքների մեծ ազդեցությանը:

Որպես համաարաբական երևույթ՝ «նահդայի» դիմագիծը տարրորշվում էր համընդհանուր լեզվական և մշակութային ժառանգությամբ, սակայն, արաբական երկրներում ունենալով տարբեր ժամանակային մեկնակետեր, այն օժտվել էր յուրահատուկ գծերով՝ կախված միջավայրի սոցիալ-քաղաքական տարբերություններից: «Նահդա»-ի զարգացումը պայմանավորված էր երկու բաղկացուցիչով. արաբները մի կողմից դեմքով շրջվել էին դեպի իրենց միջնադարյան մշակութային հարուստ անցյալը և ոգեկոչում էին այն, մյուս կողմից՝ հակվել դեպի Եվրոպայի գիտական և տեխնիկական նվաճումները:

Եգիպտոսում լուսավորականության ժամանակաշրջանը եզրագծվում է 1870-90-ականներով:

Պետք է շեշտել, որ ազգային-ազատագրական պայքարի հիմնական առաջնորդներն էլ դարձան մեծ մասամբ լուսավորականները:

Եթե «նահդա»-ի աշխարհիկ արտահայտությունը Եգիպտոսում լուսավորականության հաստատումն էր, ապա դրա կրոնական դրսևորումը դարձավ իսլամական ռեֆորմատորական շարժումը: Ավելի հաճախ այն հորջորջվում էր որպես «մուսուլմանական մոդեռնիզմ»⁴⁸, քանի որ շարժման ներկայացուցիչները փորձում էին կրոնը բարեփոխելու, նորացնելու ճանապարհով իսլամական ավանդական արժեքները հարմարեցնել ժամանակի պահանջներին: Իսլամական ռեֆորմացիան կրոնը վերանայում էր՝ այն համատեղելով լուսավորականության տարրերի հետ: «Նահդա»-ն դարձավ հասարակական գիտակցության զարգացումն արագացնող հիմնական նախադրյալ, որի շնորհիվ XIX դարի ավարտին և XX դարի սկզբում ընկած փոքր

⁴⁸ Долинина А. А., Очерки истории арабской литературы нового времени. Египет и Сирия, Москва 1968, с. 7-12, նույնի՝ Очерки истории арабской литературы нового времени Египет и Сирия, просветительский роман 1870-1914 гг., Москва 1973, с. 8.

ժամանակահատվածում ծնվեցին և ամրապնդվեցին նոր աշխարհայացքի կայացումն արտահայտող մշակութային-քաղաքական գաղափարախոսություններ ու տեսություններ, ազգային-ազատագրական շարժումները խթանող ուսմունքներ:

Թեև Մուհամմեդ Ալիի կողմից իրագործված բազմաթիվ նշանակալի բարեփոխումները⁴⁹ նպաստել էին հասարակական գիտակցության նախապատրաստմանը նոր գաղափարներ ընդունելու համար, այնուամենայնիվ, դարակեսին Եգիպտոսը դեռևս պատրաստ չէր ամբողջությամբ ընդունելու նորը: Արաբական լուսավորականության հայրենիքը մնում էր Սիրիան⁵⁰, մասնավորապես՝ Լիբանանը: Եվ միայն 70-ականների վերջին Եգիպտոսում ձևավորվեց միջավայր, որն ի զորու էր ընդունել լուսավորականության գաղափարները:

Լուսավորական շարժման ծավալումը և պարբերական մամուլի զարգացումը նպաստեցին տիրող իրավիճակից դժգոհ հասարակական տարբեր խմբերի մերձեցմանը: Աստիճանաբար ձևավորվում էր հասարակական որոշակի կարծիք, և հիմք էր դրվում մտավորականության առավել ազատամիտ շերտի ձևավորմանը:

Քանի որ եգիպտական հասարակության հիմնական խնդիրը ֆեոդալական հետամնացության հաղթահարումն ու ազգային անկախության նվաճումն էր, ինչի սկիզբը դրվեց XIX դարի 70-ականներից, համապատասխանաբար, հասարակական-քաղաքական միտքը ձևավորում էր ազգային ինքնագիտակցություն: Մտավորականության այդ շերտը դեռ նոր էր և բավական սակավաթիվ, սակայն կարող ուժ էր, ունակ՝ գլխավորելու ժողովրդի հակաֆեոդալական և ազգային-ազատագրական շարժումները:

Գաղափարական ոլորտում ծավալվում էր պայքար «հնի»՝ ի դեմս հնուց եկած արևելյան, իսլամական բարքերով կանոնավորվող ավանդույթների, և «նորի»՝ առավելապես եվրոպական մշակույթից փոխառված առաջադիմական դրույթների միջև: Անհրաժեշտ էր ժամանակի ոգուն համահունչ վերանայել իսլամական հայեցակարգերն ու վաղուց հնացած ավանդույթները՝ ծանրացնելով կարևոր

⁴⁹ Նաջարյան Ե., նշվ. աշխ., էջ 39-91:

⁵⁰ Սիրիական տարածքները XIX դ. ընդգրկում էին ժամանակակից Սիրիան, Լիբանանը, Իսրայելը և Հորդանանի մի մասը:

շեշտադրումները հատկապես քաղաքական հիմնախնդիրների վրա: Երկրում լայն տարածում էին գտել ազատության մասին եվրոպական ըմբռնումները, սահմանադրականության և պառլամենտարիզմի հայեցակարգերը: Արաբ գաղափարախոսների կողմից, որպես հայեցակարգ, մշակվում և քարոզվում էր Արևելքի ժողովուրդների զարգացումը՝ եվրոպական երկրների օրինակով:

Հասարակական կյանքի առաջնահերթ խնդիրն էր Եգիպտոսի ազգային հարցը: Սոցիալական և քաղաքական շահագործման հիմնական առանցքը համարվում էր կառավարող վերնախավը՝ բաղկացած գլխավորապես թուրքերից, չերքեզներից, ալբանացիներից, 1882-ից՝ նաև բրիտանացիներից: Այդ պարագայում սոցիալ-քաղաքական դժգոհությունը դրսևորվում էր ազգայնականության տեսքով:

Եգիպտոսում և, առհասարակ, արաբական երկրներում հասարակական գիտակցության զարգացման յուրահատկությունները քննելիս, անհնար է անտեսել իսլամի կարևոր դերակատարությունը, որը սերտաճել էր արաբ հասարակության պատմական զարգացման յուրահատկություններին:

«Հնի» և «նորի» պայքարն ուղեկցվում էր իսլամական ավանդույթների ու դոգմաների ազդեցիկ ուղղորդումներով, որոնք իրենց կնիքն էին դնում մահմեդականի աշխարհայացքի վրա:

Համիսլամականության գաղափարները որոշակիորեն խոչընդոտում էին ազգային-ազատագրական մտքի զարգացմանը՝ կրոնական միասնության գաղափարը հակադրելով ազգային միասնության գաղափարին:

Այդ պատճառով Օսմանյան կայսրության արաբական մասերում թուրքական բռնապետության դեմ պայքարը դրսևորվում էր միայն վարչակարգը քննադատելով, երբեմն՝ սուլթանի՝ «Խալիֆա» տիտղոսը վիճարկելով⁵¹: Նույնիսկ 1908 թ. երիտթուրքական հեղափոխությունից հետո այդպիսի հակադրությունը սահմանափակվում էր արաբական տարածքներին Օսմանյան կայսրության կազմում ինքնավարություն տալու կոչերով միայն: Նույն չափով Աբդուլ Համիդն օգտագործում էր իր՝ մահմեդականների հոգևոր առաջնորդ «Խալիֆա» լինելու հանգամանքը,

⁵¹ Տե՛ս Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն հ. 2, Երևան, 2004, Гордлевский В. А., Был ли турецкий султан халифом, избранные сочинения, III, Москва 1962, с. 187-196.

իսլամադավան տարածքներում իր հեղինակությունը բարձրացնելու, եվրոպական տերությունների առաջ Օսմանյան կայսրության դիրքերն ամրապնդելու համար: Սուլթանը հենվում էր համիսլամականության գաղափարախոս Ջամալ ադ-Դին ալ-Աֆղանիի (1839-1897) գաղափարների վրա⁵², որը մահմեդականներին հորդորում էր եվրոպական գաղութատիրության դեմ պայքարում միավորվել թուրք սուլթանի դրոշի ներքո⁵³:

Համիսլամականության հիմքերը Օսմանյան կայսրության տարածքում դրվել էին Նամըք Բենալի ջանքերով՝ 1870-ականների սկզբներին, երբ «Նոր օսմանները» կոչ էին անում համախմբվել՝ նպատակ հետապնդելով դրա միջոցով ամրապնդել օսմանականության հիմքերը⁵⁴:

Արաբների, որպես մեկ ժողովրդի, մասին պատկերացումները ձևավորվել են XIX դարում՝ արաբական ազգային ինքնագիտացության զարթոնքին համահունչ, իսկ արաբական ազգայնականությունը վերջնականապես ձևավորվել է 20-րդ դարի 20-30-ականներին, երբ պատմական անհրաժեշտություն էր արաբական ժողովուրդների ջանքերի միավորումը՝ հանուն ազատության և անկախության:

Արաբական հասարակական գիտակցության մեջ եվրոպական զավթումը հաճախ նույնացվում էր «քրիստոնյա Արևմուտքի» և «մահմեդական Արևելքի» հավերժական պատերազմի, երբեմն՝ խաչակիրների արշավանքի հետ: Արևելքի երկրների գաղութին վերաձվելու վտանգը սուլթանի շուրջ էր համախմբում կայսրության ոչ քրիստոնյա բնակչությանը:

Եգիպտական հասարակական մտքի զարգացումները հանգեցնում էին ազգայնական գաղափարների, երկիրն օտար տիրապետությունից ազատագրելու ձգտումների ամրապնդմանը: Այդ ամենն ուղղորդելու գործում կարևոր

⁵² Adams Ch. G., *Islam and Modernism in Egypt*, New York, Russel, 1968, էջ 4-17:

⁵³ Այս մասին տե՛ս Armajani J., նշվ. աշխ., էջ 37-41, նաև՝ جرجي زيدان, նշվ. աշխ., էջ 67-79, նաև՝ Фадеева И. Л., նշվ. աշխ., էջ 130-202:

⁵⁴ Петросян, Ю. А., *Младотурецкое движение*, Москва, 1971, с. 164 -216.

դերակատարություն էր վերապահված պարբերական մամուլին՝ որպես գաղափարական տարբեր հոսանքների ձևավորման հիմնական խառնարանի⁵⁵:

Պարբերական մամուլի սկզբնավորումը Եգիպտոսում անխզելիորեն կապվում է Նապոլեոն Բոնապարտի և Մուհամմեդ Ալիի անունների հետ⁵⁶:

Ֆրանսիական զինարշավով Եգիպտոսում պատմական նոր ժամանակաշրջանի սկիզբ դրվեց: Այստեղ ֆրանսիացիներն անհապաղ գործարկեցին իրենց տպարանական սարքերը, այդ թվում՝ Իտալիայից բերված արաբական տպատառերը: Բոնապարտի կարգադրությամբ Կահիրեում 1798 թ. օգոստոսի 29-ից սկսեց լույս տեսնել զորախմբի ֆրանսերեն պաշտոնաթերթը՝ «Լը Կուրիեր դ'Էժիպտ» (Եգիպտոսի սուրհանդակ) քաղաքական հնգօրյան, (ընդամենը 116 համար), որին հոկտեմբերի 1-ին միացավ բանակին ուղեկցող գիտնականների օրգանը՝ «Լա դեկադ Էժիպտիեն» (Եգիպտական տասնօրյակ) եռամսյա հանդեսը՝ (ընդամենը 3 պրակ): Դրանք հասցեագրված էին զինարշավի մասնակիցներին, նաև՝ Փարիզի պաշտոնատների ղեկավարներին⁵⁷:

Ֆրանսիացիների կողմից հրատարակված արաբալեզու առաջին և միակ պարբերականն ըստ երևույթին «Ալ-Թանբիհն» է եղել (Խրատ կամ Հորդոր): Դա 1800 թ. լույս աշխարհ եկած կարճակյաց մի թռուցիկ էր, որ հիմնականում ֆրանսիական հրամանատարների կոչերն ու կարգադրություններն էր հաղորդել եգիպտացիներին⁵⁸: Հրատարակիչը մահմեդականություն ընդունած և իրեն Աբդալլահ կոչած ֆրանսիացի գեներալ Ժակ Մնուն է եղել, իսկ խմբագիրը՝ Իսմայիլ Բեն Սաադ ալ-Վահիբի ալ-Խաշշաբը:

Ե. Նաջարյանը ճիշտ է նկատել, որ արաբ պատմագրությունը հիմնականում շրջանցում է տվյալ պարբերականի գոյության փաստը՝ եգիպտական պարբերական

⁵⁵ Եգիպտոսի պարբերական մամուլի պատմաբան Աբդ ալ-Լատիֆ Համզայի գնահատմամբ՝ պարբերական մամուլի դերը ազգային գաղափարախոսության կայացման հարցում անփոխարինելի էր. «Եգիպտոսի պարբերական մամուլը երկրի պատմության համար առավել կարևոր դերակատարություն ունեցավ, քան բանակը, իսկ Եգիպտոսի քաղաքական պատմության համար՝ ավելի մեծ նշանակություն, քան ցանկացած ներկայացուցչական խորհուրդ» (عبد اللطيف حمزة، أدب المقالة الصحفية، ج. 1، القاهرة، 1950، ص. 39-42):

⁵⁶ أحمد حمروش، قصة الصحافة في مصر، القاهرة، 1989، دالر المستقبل العربي.

⁵⁷ Նաջարյան Ե., նշվ. աշխ., էջ 45:

⁵⁸ Ayalon A., նշվ. աշխ. 12-13:

մամուլի հիմնադրման հարցում կարևոր շեշտադրումը վերապահելով Մուհամմեդ Ալիին⁵⁹:

Պարբերական մամուլը Եգիպտոսում սկզբնավորվեց Ֆրանսիական զինարշավի ժամանակ (1798-1801 թթ., բուն՝ եգիպտական լրագրության սկզբնավորումը սակայն, տեղի ունեցավ Մուհամմադ Ալիի (1805-1848) կառավարման ժամանակաշրջանում⁶⁰: Նրա իրականացրած բարեփոխումները կրթական-լուսավորական ոլորտում չափազանց կարևոր էին Եգիպտոսի մշակութային, նաև՝ քաղաքական մտքի զարթոնքի համար:

Պաշտոնական բնույթի և խղիվական բյուլետեններով ու ռազմական թռուցիկներով սահմանափակվող մամուլին փոխարինելու եկավ «Ալ-Ուսկաի ալ-Միսոխյա»⁶¹ (Եգիպտական իրադարձություններ) (1828-1942) արաբալեզու առաջին պաշտոնական պարբերականը:

Եգիպտոսի պարբերական մամուլի զարգացման պատմության հաջորդ որակական թռիչքը տեղի ունեցավ խղիվ Իսմայիլի (1863-1879) օրոք. ի հայտ եկան մասնավոր պարբերականները: Իսմայիլի կառավարման շրջանն առանձնանում էր մամուլին շնորհված մեծ ազատությամբ: Նա գիտակցում էր մամուլի նշանակությունը և դրա կարևոր գործառույթը հասարակությանն ուղղորդելու խնդրում: Արաբական մամուլի պատմությանը վերաբերյալ աշխատություններում շեշտադրված է այն հանգամանքը, որ նա պարբերականներն արժեվորում էր նաև որպես գովազդի միջոց:

Ինչ վերաբերում է մամուլի մասնավոր՝ ժողովրդական տեսակին, ապա ինչպես Մուհամմադ Ռիֆաաթ ալ-Իմամն է բնութագրել, այդ մամուլը ժողովրդականի անվան տակ կոչված էր կատարելու պաշտոնական մամուլի առաքելությունը՝ մասնավորապես խղիվի վարած քաղաքականությունը սատարելով ու պայքարելով Օսմանյան կայսրության և Մեծ Բրիտանիայի դեմ⁶²:

⁵⁹ Նաջարյան Ե., նշվ. աշխ., էջ 45:

⁶⁰ Տե՛ս Կարապետյան Ռ., նշվ. աշխ., էջ 22-37, Абд ар-Рахман аль-Джабарти, удивительная история прошлого в жизнеописаниях и хронике событий, 1798-1801, с. 220-221, հմմտ.՝ <http://www.vostlit.info/Texts/rus/Jabarti2/frametext6.htm>, عبد الرحمن بن حسن الجبرتي، عجائب الآثار في التراجم والأخبار، الجزء الثالث، 1998، القاهرة، دار الكتب المصري، 514 ص..

⁶¹ Այս թերթի մասին տե՛ս Նաջարյան Ե., նույն տեղում:

⁶² محمد رفعة الامام، الأهرام المصرية والقضية الأرمنية 1878-1923، القاهرة، 2006، ص. 2.

Մասնավոր պարբերականները հիմնադրվում էին առավելապես դրսից՝ հատկապես Սիրիայի տարածքներից ներգաղթած մտավորականներ կողմից⁶³:

Սիրիայում տեղի ունեցած՝ 1860 թ. կոտորածներից հետո, նաև սուլթան Աբդուլ Համիդի կողմից գրաքննության խստացման պատճառով ստեղծված ծանր կացության պայմաններում բնակչության շրջանում սկսվել էր հուզումների մեծ ալիք: Օսմանյան գրաքննության ծանր ձեռքն այս տարածքներում գրեթե բացառում էր ազատ խոսքը, այնինչ Եգիպտոսում, հասարակական-քաղաքական մտքի վերածնափորման, ազգային ինքնագիտակցության վերածննդի պայմաններում առկա էր ազատ մամուլի զարգացմանը նպաստող համեմատաբար բարենպաստ միջավայր⁶⁴: Այդ էր պատճառը, որ երկիրը ժամանակի արաբերեն, ինչպես նաև օտարալեզու որոշ առաջադիմական պարբերական հրատարակությունների կենտրոնի էր վերածվել⁶⁵:

Խդիվ Իսմայիլը քաջալերում էր սիրիացիներին՝ հաստատվելու Եգիպտոսում և նպաստելու երկրի գիտական առաջընթացին: Այդ ներգաղթը կարելի է բնութագրել որպես մտավորականների գաղթ, որի հիմնական մշակութային ուղղությունները դարձան թատրոնն ու մամուլը:

Պետք է շեշտել, սակայն, որ հետագայում, երբ Մեծ Բրիտանիան հաստատվել էր երկրում, եգիպտական ազգայնականները թշնամաբար էին տրամադրված թուրքական բռնապետության դեմ արաբական ազգայնականության կարգախոսներով հանդես եկող սիրիացի վտարանդիների նկատմամբ, քանի որ, ի տարբերություն նրանց, անգլիական գաղութարարների դեմ պայքարում, հույսեր էին կապում թուրքական սուլթանի հետ:

Այդուհանդերձ, Եգիպտոսում պարբերական մամուլի աննախադեպ զարգացումն անվիճելիորեն պայմանավորվում է Սիրիայից եկած մտավորականության սերուցքով, որի հիմնական ներկայացուցիչներից էին նաև հայերը⁶⁶:

⁶³ فاروق ابو زيد، الصحافة المتخصصة، القاهرة، 1986، ص. 25-30.

⁶⁴ عبد العليم القباني، نشأة الصحافة في الإسكندرية، 1873-1882، مصر، 1933، ص. 14-20.

⁶⁵ Ayalon A., նշվ. աշխ., էջ 51-62:

⁶⁶ Նույն տեղում:

Այդ են վկայում նաև հետևյալ վիճակագրական տվյալները. եթե 1852-1880 թթ., Բեյրութում 25 պաշտոնական պարբերականներ են հրատարակվել, Կահիրեում¹³, Ալեքսանդրիայում¹⁰, ապա 1880-1902թթ. ընթացքում Բեյրութում լույս է ընծայվել 42 մասնավոր պարբերական (նախորդ շրջանի հետ համեմատած 60 տոկոսով ավելի), իսկ Կահիրեն և Ալեքսանդրիան միասին տվել են անհամեմատ մեծ քանակություն՝ 627 թերթ և ամսագիր (համապատասխանաբար՝ 514 և 113)⁶⁷:

Սկզբնական շրջանում լույս տեսնող ոչ պաշտոնական պարբերականները գիտական ամսագրեր էին և շաբաթաթերթեր, որոնք հիմնականում լուսավորական-կրթական բովանդակություն ունեին: Ժամանակի պահանջին համընթաց աստիճանաբար դրանք իրենց տեղը սկսեցին զիջել լրատվական բնույթի պարբերականներին:

Այսպես. 1884 թ. Կահիրեում սկսեց վերահրատարակվել «Ալ-Մուկթատաֆ» (Հատընտիր) միամսյա գիտական հանդեսը, որ հիմնադրվել էր Բեյրութում՝ 1876թ., Յակուբ Սարուֆի, Ֆարիս Նիմրի և նրանց երրորդ գործընկերոջ՝ Շահին Մակարիուսի կողմից⁶⁸: Նրանք կրթություն էին ստացել Բեյրութում և հայտնի էին իրենց արևմտամետ հայացքներով: 1884-ին, երբ այնտեղ գրական գործունեության ասպարեզը չափազանց նեղացել էր, նրանք տեղափոխվեցին Կահիրե և ամսագիրը վերահրատարակեցին այստեղ: Մի քանի տարի «գիտության, արհեստների և գյուղատնտեսական» ուղղվածության այդ ամսագիրը շարունակում էր մնալ իր տեսակի մեջ եզակի: Այն մատուցում էր բազմակողմանի գիտելիքներ՝ ներառյալ նաև մեծաքանակ թարգմանություններ եվրոպական գրականությունից: «Ալ-Մուկթատաֆ»-ը բնութագրվել է որպես ժամանակի արաբական լավագույն պարբերականը՝ ամսագրի հիմնավոր, ճիշտ ընտրված թեմատիկայի, ինչպես նաև տեխնիկական բարձր որակի շնորհիվ⁶⁹: «Ալ-Մուկթատաֆ»-ը Եգիպտոս տեղափոխվելուց հետո ավելի կատարելագործվեց: Յակուբ Սարուֆը մեծ բաժին ուներ այդ հարցում, քանի որ հասուն տարիքում նա դարձել էր հաջողված վիպասան: Նա գրում էր արաբական

⁶⁷ Նույն տեղում:

⁶⁸ الفيكنت فيليب دى طرازي، تاريخ الصحافة العربية، الجزء الأول والثاني، بيروت، 1913، ص. 140-124.

⁶⁹ Ayalon A., նշվ. աշխ., էջ 53:

աշխարհը հուզող սոցիալական խնդիրների մասին: Եգիպտոս տեղափոխվելուց հետո «Ալ-Մուկթատաֆ»-ի բաժանորդների քանակը կտրուկ աճել էր. Եթե Բեյրութում ամսագիրն ուներ 500 բաժանորդ, Եգիպտոսում՝ 8 տարի անց, նրանց թիվը հասնում էր 3000-ի⁷⁰:

«Ալ-Մուկթատաֆ»-ի ընթերցողները, ինչպես և թղթակիցները, ծագումով առավելապես սիրիացիներ էին, որոնցից շատերն են շեշտել ամսագրի կարևոր դերը իրենց գրական ճաշակի ձևավորման ճանապարհին:

Հաջորդ կարևոր գիտական պարբերականը՝ «Ալ-Հիլալ» (Կիսալուսին) միամսյան, 1892 թ. հիմնադրել է արաբ գրող, հրապարակախոս Զիրջի Զեյդանը (1861-1914): Արմատներով Զեյդանը բեյրութցի էր և տեղափոխվել էր Եգիպտոս՝ 1886-ին: Նա իր գրական գործունեության սկզբում փորձել էր տպագրվել «Ալ-Մուկթատաֆ»-ում, սակայն մերժվելով, հիմնել էր սեփական ամսագիրը, «Ալ-Հիլալ»-ը, որն էլ դարձավ «Ալ-Մուկթատաֆ»-ի հզոր մրցակիցը:

Ամսագիրն, ի տարբերություն նախորդի, առավելապես հումանիտար ուղղվածություն ուներ, ինչն արտացոլված է արաբերեն լեզվին, արաբական մշակույթին, պատմագրությանը վերաբերվող հոդվածների մեծ ծավալով: «Ալ-Հիլալ»-ն անփոխարինելի աղբյուր է արաբական լրագրության պատմության համար, քանի որ ինչպես արդեն նշել ենք, դրա էջերում է տպագրվել աշխարհում լույս տեսնող արաբալեզու պարբերական հրատարակությունների առաջին համապարփակ արաբերեն ցանկը:

Զեյդան անհատի գաղափարները մեծապես ազդել են «Ալ-Հիլալ»-ի բովանդակության վրա: Նա նպատակ ուներ ժողովրդականացնել իսլամական-արաբական հոգևոր ժառանգությունը, չնայած ինքը ծագումով քրիստոնյա էր: Զեյդանը համաարաբականության ջատագով էր, իսկ իսլամական արժեքների և մոդեռնիզմի զուգորդումը համարում էր մշակութային զարգացման ճիշտ ուղեգիծ: Հավանաբար դա էր պատճառը, որ նրա հրապարակախոսական ժառանգությունը գնահատվել է «չեզոք»

⁷⁰ Նույն տեղում:

էպիտետով⁷¹: Զեյդանի անձը և արաբական ու իսլամական խնդիրներին արձագանքող թեմատիկան դարձան ամսագրի երկարակեցության գրավականը, որի մեկդարյա հոբելյանը լրացավ 1992 թ.:

«Ալ-Հիլալ»-ը նախ լույս էր տեսնում ամիսը երկու անգամ, 12-րդ հրատարակությունից սկսած՝ մեկ անգամ: Այն ուներ հետևյալ բաժինները՝ հայտնի իրադարձություններ և հոչակավոր անձինք, քաղաքական, սոցիալական, բարոյափիլիսոփայական, նշանավոր օրեր, լրատվություն և գրախոսություններ: Ապա ավելացան նոր բաժինները՝ հարց ու պատասխան, նոր հայտնագործությունների մասին գիտական հոդվածներ, ընտանիքի առողջություն, զարմանալի բարքեր և այլն:

Ուշագրավ է հետևյալ փաստը, որը վկայում է Եգիպտոսի մտավորական շրջաններում պարբերականի հանդեպ եղած մեծ հետաքրքրության մասին: Իր հրատարակման երրորդ տարում «Ալ-Հիլալ»-ն առաջարկ էր ներկայացրել բաժանորդներին՝ հետ գնելու իր առաջին տարվա համարները՝ դրանք վերավաճառելու նպատակով:

1890-ականներին արդեն տեղեկատվական թերթերը մղվել էին առաջին բնագիծ՝ երկրորդական դեր վերապահելով պարբերականների մյուս տեսակներին:

Ժամանակի հասարակական միտքն առաջնորդող մասնավոր մամուլի լրատվուների եռանկյունին⁷² «Ալ-Ահրամ» (Բուրգեր) օրաթերթն էր գլխավորում՝ բրիտանական «Ալ-Մուկատտամ»-ի (Կահիրեում գտնվող բլրաշարքի անվանում) և իսլամական «Ալ-Մուայյադ»-ի (աստծո աջակցությունը վայելող)⁷³ կողքին⁷⁴: Վերջին երկուսը նրա մրցակիցներն էին և ավելի ուշ էին հայտնվել ասպարեզում, ընդ որում, եթե «Ալ-Մուքաթթամ»-ը և «Ալ-Ահրամ»-ը հակառակորդներ էին, ապա «Ալ-Մուայյադ»-ը հավասարապես նրանցից յուրաքանչյուրին էր հակոտնյա:

⁷¹ Долинина А. А., նշվ. աշխ., էջ 15:

⁷² عبد اللطيف همزة، الصحافة العربية في مصر منذ نشأتها إلى منتصف القرن التاسع عشر، دار الفكر العربية، 1985، ص. 31-41، إبراهيم عبده، جريدة الأهرام - تاريخ مصر في 75 سنة، 1951 القاهرة، دار المعارف، ص. 15-16، نفسه تطوّر الصحافة المصرية 1828-1951، ص. 74-78.

⁷³ Այսպես է թարգմանում թերթի անվանումը Ա. Ա. Դոլինինան, նշվ. աշխ. էջ 24, մենք կողմ ենք նաև այն որպես «Հաղթական» թարգմանելու:

⁷⁴ سامي عزيز، նշվ. աշխ., էջ 159-161:

Հոչակավոր «Ալ-Ահրամ»-ը Եգիպտոսի ամենաերկարակյաց թերթերից է, որն այսօր էլ երկրի հասարակական կյանքի անբաժան մասն է: Ի թիվս այլ պարբերականների՝ այն նույնպես պատկանում էր սիրիական տարածքներից⁷⁵ ներգաղթած մտավորականների: Թերթը հիմնադրել են ծագումով բեյրութցի Սալիմ և Բշարա Թակլա եղբայրները՝ Ալեքսանդրիայում, 1876թ.: Պարբերականը սկսեց լույս տեսնել որպես շաբաթաթերթ, սակայն հետագայում վերածվեց օրաթերթի և տեղափոխվեց Կահիրե (1899 թ.)⁷⁶:

«Ալ-Ահրամ»-ի առաջին համարը լույս տեսավ 1876 թվականի օգոստոսի հինգին: Այն միջին չափի թերթ էր՝ բաղկացած չորս էջից: Տպագրում էր հիմնականում տեղական և արտասահմանյան նորություններ, գրական նյութեր: Սալիմ Թակլան թերթի նպատակը համարում էր տեղական, գյուղատնտեսական, գիտական, առևտրական նյութերի և հեռագրերի հրատարակումը, ինչպես նաև որոշ գրական ստեղծագործությունների կամ քերականական, լեզվաբանական, բժշկական, մաթեմատիկական, պատմական ոլորտների նյութերի տպագրությունը: Չնայած Թակլանների վրա եգիպտական իշխանությունները ճնշումներ էին գործադրում, որպեսզի կանխեին թերթի՝ քաղաքական խնդիրների մեջ մխրճվելը, այնուամենայնիվ, 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը, Արևելյան հարցի բարձրացումը միջազգային մամուլում, նոր էջ են բացում նաև «Ալ-Ահրամ»-ի համար:

Խդիվական իշխանությունը քաղաքական խնդիրներ շոշափելու ազատություն էր ընձեռել մամուլին՝ դրանով իսկ այն տեղափոխելով զարգացման մի նոր փուլ և դրան վերագրելով հանրության տեսակետի արտահայտման գործառույթը:

Շուտով «Ալ-Ահրամ»-ը սկսեց դուրս գալ ընձեռված ազատության սահմաններից՝ քննադատելով հենց այդ ազատությունը պարզևողին՝ խդիվ Իսմայիլին ու ներկայացնելով Եգիպտոսում ֆրանսիական շահերն ընդդեմ խդիվի:

Թերթի սեփականատերերի քաղաքական ճկուն, հարմարվող կեցվածքն ապահովում էր Ֆրանսիայի աջակցությունը, սակայն, որոշ ժամանակ անց, այդ նույն

⁷⁵ سامي عزيز , նշվ. աշխ., էջ 14 -16:

⁷⁶ جرجي زيدان، تراجم مشاهير الشرق في القرن 19، ج. 2، مطبعة الهلال، 1922، ص. 89-94.

ճկունությունը նրանց պետք է առերեսեր մի հակասական իրավիճակի հետ: Կարծելով, թե Եգիպտոսում բրիտանական իշխանության ստեղծած համեմատաբար ազատամիտ մթնոլորտը վտանգի չէր ենթարկի իրենց թերթը, Թակլա եղբայրները հանդգնեցին հակադրվել Մեծ Բրիտանիային՝ իր զորքերի արագ դուրսբերման խոստումը չպահելու պատճառով: 1890-ական թթ. սկզբներին արդեն թերթի սյունակները բաց էին բոլոր նրանց առաջ, ովքեր կցանկանային դեմ արտահայտվել բրիտանական քաղաքականությանը:

Բեռլինի համալսարանի դասախոս Մարթին Հարթմանը 1899 թ. Լոնդոնում հրատարակած իր «Եգիպտոսի արաբերեն մամուլը» ուսումնասիրության մեջ «Ալ-Ահրամ»-ը դասել է քաղաքական-պահպանողական ուղղվածության պարբերականների շարքը, որ «լողում էր Ֆրանսիական ջրերում, ծառայում ազգայնական գաղափարներին՝ արժանանալով Բրիտանիայի հակակրանքին և ամեն կերպ քծնելով սուլթանին»⁷⁷:

1884 թ. օգոստոսին բրիտանական կառավարությունը մեկ ամսով դադարեցրեց թերթի հրատարակությունը (ի դեպ, այդ ժամանակ վարչապետ էր Նուբար փաշան). ինչը Ֆրանսիական կողմից դժգոհությամբ ընդունվեց: Ֆրանսիական հյուպատոսի ջանքերով այն ի վերջո վերականգնվեց, և թերթը կրկին հակվեց դեպի Ֆրանսիական շահերի պաշտպանությունը:

Բրիտանական տիրապետության վաղ տարիներին «Ալ-Ահրամ»-ը համարվում էր եգիպտական ազգայնականների հենարան: Չնայած սեփականատերերի ֆինանսական շահագրգռվածությունը մեծ դեր ուներ պարբերականի գաղափարական ուղղվածությունը որոշելու հարցում, պետք է փաստել, որ այն լայնախոհ կեցվածք է դրսևորել՝ քաղաքական իրականության նկատմամբ իր վերաբերմունքը ընթերցողին առավել բազմակողմ մեկնաբանությամբ մատուցելով ու եզրակացություններ կատարելու իրավունքը նրան վերապահելով: Հարկ է շեշտել մի հանգամանք ևս. «Ալ-Ահրամ»-ը հնարավորինս փորձել է պաշտպանել Եգիպտոսի ազգային շահերը՝ իր ընտրած ճկուն կեցվածքով հանդերձ: Հատկապես 1890-ականներին օրաթերթը

⁷⁷ Hartmann M., նշվ. աշխ., էջ 10, նաև՝ <http://www.ancme.net/studies/407>:

հանդես էր գալիս բացահայտ հակաբրիտանական դիրքերից՝ օսմանամետ հողվածներ տպագրելով:

Բրիտանական կառավարությունը, որն ուշիուշով հետևում էր Եգիպտոսում կատարվող իրադարձություններին, իհարկե, ժամանակին գիտակցեց այնտեղ սեփական քաղաքական շահերի խոսափողն ունենալու անհրաժեշտությունը: Դա այն զենքն էր լինելու, որի միջոցով հնարավոր էր ազդել հանրային մտածողության վրա, ցանկացած մտահղացում ներշնչել հասարակությանը՝ արագորեն սովորացնելով համակիրների շարքերը:

Կարճ ժամանակում հիմնադրվեցին բրիտանական կողմնորոշման պարբերականներ, որոնք կոչված էին եգիպտական ազգայնական գաղափարներն արծարծող, ֆրանսամետ կամ օսմանյան իշխանություններին հարող մամուլին հակադարձելու իրենց իսկ զենքով և սեփական առաջնայնությունները հանրությանը մատուցելու Մեծ Բրիտանիային հարմար գունդերանգով (մինչ այդ բրիտանական կառավարությունը Եգիպտոսի ընդդիմադիր մամուլի դեմ պայքարում ահաբեկման ու պատժելու տարբերակով էր առաջնորդվում՝ գերադասելով գրաքննության օսմանյան տարբերակը)⁷⁸:

«Ալ-Ահրամ»-ին հակակշռելու նպատակով հիմնադրվեց «Ալ-Մուկատտամ»-ը (Կահիրեի բլրաշարք, որի քարերով, ըստ ավանդության, կառուցված են երեք հայտնի ամենամեծ բուրգերը)⁷⁹ բրիտանական կառավարության հանձնարարականով և ֆինանսավորմամբ:

«Ալ-Մուկատտամ»-ի հիմնադրումը հանձնարարվեց Ֆարիս Նիմրին, Յակուբ Սարուֆին և Շահեն Մակարիուսին: Հիմնադիրների ընտրությունը պատահական չէր. հաշվի էր առնվել նրանց փորձը գիտական ու գրական պարբերականների հրատարակման գործում: «Ալ-Մուկատտամ»-ը որպես շաբաթաթերթ սկսեց լույս տեսնել 1889 թ., փետրվարի 14-ին, սակայն վեց շաբաթ անց այն վերածվեց օրաթերթի: Սկզբում թերթը հագեցած էր քաղաքական, տնտեսական, ռազմական և առևտրական

⁷⁸ Այս մասին մանրամասն տե՛ս سامي عزيز, նույն տեղում:

⁷⁹ Պարբերականի հիմնադիրներն հետագայում գրել են, թե իրենց Եգիպտոս են հրավիրել և առաջարկել հրատարակել ևս մեկ թերթ: Այն առաջարկել են կոչել Ալ-Իսլահ (Բարեփոխում), սակայն դա մերժվել է և որոշվել է այն անվանել Ալ-Մուկատտամ:

լրատվությամբ: Երբեմն ուղղակիորեն սնվում էր «Ռոյթեր» և «Հավաս» լրատվական գործակալություններից, ինչպես նաև օգտագործում էր երկրի տարբեր մարզերից սեփական թղթակիցների ուղարկած հեռագրերը, Օսմանյան կայսրության տարածքում հրատարակվող ու միջազգային մամուլը: Այն ուներ հավելված, որը բավական տրամաբանված, հետևողական էր վերնագրերի, ենթավերնագրերի և բաժինների համակցվածության խնդրում: Թերթի առաջին համարներում մասնավոր և պաշտոնական գովազդներն ամբողջական սյունակներ էին զբաղեցնում: 1892 թ. Եգիպտոս այցելած մի անգլիացի ճանապարհորդի վկայությամբ, այդ թերթը նա տեսել էր Ալեքսանդրիայից մինչև Սուդան իր այցելած բոլոր սրճարաններում⁸⁰: «Ալ-Մուկատտամ»-ը շուտով Եգիպտոսի հանրային կարծիքի շուրջ ստեղծված շղթայի ամրապնդող օղակը դարձավ: Փաստորեն, Եգիպտոսի երկու առաջատար թերթերը քրիստոնյա ներգաղթյալներին էին պատկանում, որոնց հետևում օտար ուժերն էին կանգնած: Այդպիսի իրավիճակն անընդունելի էր եգիպտացիների համար ճիշտ այնպես, ինչպես երկրում բրիտանական ներկայությունը:

Կահիրում 1889թ. վերջերին ասպարեզ է գալիս մի նոր թերթ՝ «Ալ-Մուայյադ»-ը, որպես հակաբրիտանական բողոքի առաջին հզոր ձայն: Թերթի տեղման նախաձեռնողն Ալի Յուսուֆն էր՝ մի ճգնակյաց մահմեդական՝ Վերին Եգիպտոսից: Նա որոշակի փորձ ուներ լրագրության ասպարեզում ու անխախտ հավատ երկրի ազգային խնդրի լուծման՝ իսլամական ուղու վերաբերյալ: Ի տարբերություն իր քրիստոնյա գործընկերների՝ նա լրագրությամբ էր զբաղվում ոչ այնքան ֆինանսական, որքան գաղափարական նկատառումներով:

Իսլամական և հակաբրիտանական ուղղվածությունը, որին Ալի Յուսուֆը մեծ ոգևորությամբ էր հետևում՝ իր թղթակիցներ Մուստաֆա Քամիլի, Մուհամմադ Ֆարիդի, Ահմադ Լուտֆի ա-Սայիդի, Սաադ Զադլուլի աջակցությամբ, որոնք բոլորն էլ հայտնի ազգային գործիչներ էին դառնալու, շուտով թերթը դարձնում է երկրի ամենալայն շրջանառվող պարբերականը: Իր քրիստոնյա մրցակիցների նման այն

⁸⁰ Ayalon A., նշվ. աշխ., էջ 57:

ապահովում էր մանրամասն լրատվություն և մեկնաբանություններ՝ կենտրոնում, այնուամենայնիվ, պահելով իսլամական թեմատիկան:

Սիրիացի քրիստոնյաների և եգիպտացի մահմեդականների միջև անջրպետը մեծանում էր բրիտանական կողմի ստեղծած փակուղային իրավիճակի արդյունքում. բրիտանական ներկայությունը, որը, միևնույն ժամանակ, սադրանքների աղբյուր էր, որոշակի ավանդական յուրահատկություններ դրել էր հարցականի տակ և այլ արժեքներ էր առաջադրել: Լինելով անջրպետի տարբեր կողմերում՝ նրանք ազգային խնդիրներին նայում էին հակադիր բևեռներից. եգիպտացիները բրիտանական իշխանությունների դեմ պայքարում էին նվաճողների կողմից իրենց թողնված միակ զենքի՝ մամուլի միջոցով:

Քսաներորդ դարասկզբին «Ալ-Ահրամ»-ը, «Ալ-Մուայյադ»-ը, «Ալ-Մուկատտամ»-ը վաճառվում էին օրական հազարավոր օրինակներով: «Ալ-Մուայյադ»-ը, որն ամենատարածվածն էր, վաճառվում էր 6000 օրինակով: Այս թերթերը և մյուսները Եգիպտոսում ձևավորել էին մոտավորապես 200000 - անոց ընթերցողների լսարան: Սա մեծ առաջընթաց էր այդ երկրի համար: Չէր սխալվում Ալի Յուսուֆը՝ համաձայնելով լորդ Կրոմերի կարծիքին, թե մամուլն էր այն միակ զենքը, որը կարող էր բացարձակ անվնաս լինել, սակայն, եթե առաջին հայացքից թերթերի խոսքը փափուկ և անվնաս էր թվում, իրականում այն քաղաքական առաքելություն էր իրականացնում և ընթերցող լայն շրջանակներում ակտիվ քաղաքական տրամադրություններ սերմանում: Այն հանրության մեջ տարածում էր պայթուցիկ նյութի մի տպավորիչ զանգված⁸¹: Դրանով իսկ մամուլը հող էր նախապատրաստում մի քաղաքական գործողության իրականացման համար, որը ի վերջո պետք է քանդեր երկրում բրիտանական տիրապետության հիմքերը:

«Ալ-Մուայյադ»-ն առաջինն էր Եգիպտոսում, որը լրջորեն մտահոգվում էր մահմեդական աշխարհի խնդիրներով: Նրան հետագայում հետևելու էր Մուսատաֆա Քամիլի կողմից հիմնադրված «Ալ-Լիուա»-ն (Դրոշը) 1900թ.: Սամի Ազիզի ներկայացմամբ՝ բրիտանացիներն «Ալ-Մուայյադ»-ի ազդեցությունը հասարակության

⁸¹ Cromer, նույն տեղում:

մեջ չեզոքացնելու նպատակով Կ.Պոլսից հրավիրել էին Հասան Հուսնա փաշային, հանձնարարելով ստեղծել նրան համազոր իսլամական մի պարբերական. «չնայած, Հասան Հուսնան եկավ Եգիպտոս և հիմնադրեց «Ալ-Նիլ» (Նեղոս) թերթը, մարդիկ այն մերժեցին, և «Ալ-Մուայյադ»-ը մնաց Եգիպտոսում լույս տեսնող միակ իսլամական-ազգայնական պարբերականը»⁸², - իրավացի կերպով շեշտադրել է հեղինակը: Նշենք, որ հիշյալ Հասանը եղել է նաև հայազգի Ալեքսան Սարաֆյանի հիմնադրած «Ալ-Զաման» (Ժամանակ) թերթի խմբագիրը: Վերջինն, ըստ ամենայնի, բրիտանամետ է եղել, քանի որ Ա. Սարաֆյանի մասին այսպես է հիշատակվում. «Իհթիլալը՝ (բրիտանական օկուպացիան) հարստացրեց մի հայի՝ Ալեքսան Սարաֆյանին, որը սկսեց հրատարակել «Ալ-Զաման» թերթը և նրա էջերում գովերգել իհթիլալի առավելությունները»⁸³:

«Ալ-Մուայյադ»-ի առաջնային նպատակը եգիպտական հասարակության իսլամական ազգայնական շերտերի գաղափարական պայքարն էր բրիտանական գաղութարարության դեմ և արաբական-իսլամական արժեքների վերահաստատումը, ինչը մինչ այդ իրականացնում էր Փարիզում լույս տեսնող «Ալ-Ուրուա Ալ-Ուսկա» (Սերտագույն կապ) իսլամական պարբերականը: «Ալ-Մուայյադ»-ն առաքվում էր նաև արաբական արևելքի ուրիշ երկրներ:

Շեյխ Ալի Յուսուֆը եգիպտական հասարակությանը ներկայացնում էր հեռագրեր, որտեղ հիմնականում նկարագրվում էին Սուդանը նվաճելու ռազմական գործողությունները, դրանք առաջացնում էին քաղաքական քննարկումների փոթորիկ ոչ միայն եգիպտացիների, այլև նրանց ու անգլիացիների միջև: Տպագրվում էին գիտական քննարկումներ, որոնք եգիպտացուն ժամանակավորապես հեռացնում էին քաղաքական վեճերից և հաղորդակից դարձնում ժամանակակից գիտական նվաճումներին:

Գաղափարական-քաղաքական պայքարում իսլամամետ շերտն առաջնորդող այդ պարբերականը իսլամական միասնության կոչով էր հանդես գալիս, սակայն երբեք ի նկատի չունեւ միասնությունը սուլթան-խալիֆի իշխանության ներքո: Յուսուֆն

⁸² سامي عزيز, նույն տեղում:

⁸³ Նույն տեղում:

ընդունում էր համիսլամականության միայն կրոնական ասպեկտը: Թերթը դեմ էր Օսմանյան կայսրության մասնատմանը, առաջին հերթին ուշադրություն էր դարձնում այն հանգամանքին, որ այն անկարող է դիմակայել եվրոպական նկրտումներին, քննադատում էր Աբդուլ Համիդի բռնակալ ռեժիմը՝ չընդունելով, որ Եգիպտոսը պատկանում է Օսմանյան կայսրությանը: Դրա, ինչպես և սուլթանի՝ մահմեդականների խալիֆի գործառույթի նկատմամբ թերթի բացասական կեցվածքի պատճառով էր, որ սուլթանն արգելել էր դրա տարածումը արաբական վիլայեթներում: Ալի Յուսուֆն արտահայտում էր ավանդական մահմեդական մտավորականության, հոգևորականության, մանր և միջին պաշտոնյաների, քաղաքային մանր բուրժուազիայի տրամադրությունները, որոնք ասում էին իսլամով սրբագործված իրենց կենսակերպը պղծող անգլիական ներկայությունը: Պարբերականի ինչ-որ չափով հակաթուրքական բնույթն ընդհանուր գծերով համընկնում էր այնտեղ բրիտանական գաղութարարական շահերին: Անգլիացիները քաջալերում էին «Եգիպտոսը՝ եգիպտացիներին» կոչը՝ դրանով առավել մոտեցնելով օսմանական պետության անկումը: Նրանք ջանալով Օսմանյան կայսրությունը պառակտել ներսից՝ այդպիսի մի շարք կարգախոսներ ևս դրել էին շրջանառության մեջ, ինչպես՝ «Հայաստանը՝ հայերին», «Իսրայելը՝ իսրայելցիներին» և այլն⁸⁴:

Ձգտելով իր դիրքերն ամրապնդել Եգիպտոսում՝ Մեծ Բրիտանիան աջակցում էր հակաթուրքական տարրերին, ինչն արաբ մտավորականներին և ազգայնական գաղափարներին հետամուտ գործիչների մի որոշակի շերտի հնարավորություն էր ընձեռում քննադատելու թուրքական բռնատիրությունն ու հետամնացությունը: Անգլիական հյուպատոսներն ամեն կերպ խրախուսում էին բարենորոգչական նախաձեռնությունները՝ գերադասելով եգիպտական մտավորականությանն ու երիտասարդությանը զբաղված տեսնել մշակութային, կրոնական, սոցիալական բարենորոգումների խնդիրներով՝ բրիտանական գաղութարարության դեմ պայքարելու փոխարեն: Բացի այդ, երկրի իրական իշխանությունը գաղութարարներից վերցնելու

⁸⁴ Кошелев В. С., Модернизации традиционного общества и политизации ислама в Египте (вторая половина XIX - начало XX в.), с. 344.

եգիպտական խղիվի փորձերը պայմաններ էին ստեղծել քննադատելու նաև բրիտանացիների ներկայությունը:

Օսմանյան կայսրության տարածքում հասարակական շարժումների ընդհանուր ակտիվացմանը և երիտթուրքական կազմակերպությունների վերաճավորմանը զուգընթաց՝ արաբ վտարանդի ընդդիմադիրների հրատարակչական գործունեությունը եգիպտոսում ևս նկատելիորեն աշխուժանում էր⁸⁵: Ժնևի, Լոնդոնի, Փարիզի կողքին Կահիրեն ևս դառնում է ընդդիմադիր երիտթուրքերի ազատ պարբերական հրատարակությունների հերթական հանգրվան⁸⁶:

Հայտնի է, որ արաբ մտավորականները մեծ ներդրում ունեն երիտթուրքական պարբերականների հրատարակման, ինչպես նաև դրանց գլխավոր կազմակերպության՝ «Իթթիհադ վե Թերաքքը»-ի մամուլի հիմնադրման գործում: «Երիտասարդ Թուրքիայի» հայտնի գաղափարախոս Ահմադ Ռիզայի հետևորդներից էր Խալիլ Ղանեմը (բարենորոգումների ակտիվ ջատագով, Բեյրութի վիլայեթի ներկայացուցիչն օսմանյան խորհրդարանում և դրա առաջին նախագահը): Նրանց ջանքերով 1895 թ. Փարիզում սկսեց հրատարակվել երիտթուրքական շարժման առաջին պաշտոնական պարբերականը՝ «Մեշվերեթը» (խորհրդակցություն)⁸⁷, իսկ 1896 թ. Կահիրեում է սկսում վերստին լույս տեսնել շարժման ամենակարևոր հրատարակություններից մեկը՝ «Միզանը» (Կշեռք)՝ Միզանջի Մուրադի խմբագրությամբ⁸⁸:

⁸⁵ Օսմանյան խորհրդարանի լուծարումից հետո ընդդիմադիրների գործունեությունը սահմանափակվում էր միայն վտարանդի մամուլի միջոցով իրականացվող քարոզչությամբ: Փարիզում, Ժնևում, Նեապոլում դեռևս Աբդուլ Համիդի գահակալության առաջին տարիներից հրատարակվում էին ընդդիմադիր թերթեր, որոնց շարքում մեծ տեղ էին գրավում նաև արաբալեզու պարբերականները (տե՛ս Котлов Л. Н., նշվ. աշխ., էջ 256-274):

⁸⁶ Տե՛ս Петросян, Ю. А., Младотурецкое движение, Москва, 1971, с. 164 -216, նաև՝ Котлов Л. Н., նույն տեղում:

⁸⁷ Ահմադ Ռիզան պարբերականի էջերում սուր ելույթներով հանդես է գալիս հայկական կոտորածների դեմ, միաժամանակ նա և Խալիլ Ղանեմը վերստին կյանքի են կոչում օսմանյան միասնական հայրենիքի հայեցակարգը՝ դեմ արտահայտվելով կայսրության տարածքում հայերին հատուկ կարգավիճակ շնորհելու գաղափարին, ինչպես նաև մեծ տերությունների կողմից կայսրության ներքին գործերին միջամտելուն, նրանք դեմ էին նաև ազգային-ազատագրական շարժումներին (տե՛ս Желтяков А. Д., նշվ. աշխ., էջ 249-254), նաև՝ Կիրակոսյան Զ., Երիտթուրքերը Պատմության դատաստանի առաջ, 19-րդ դարի 90-ական թ. Երևան, 1982, էջ 131-135:

⁸⁸ ولي الدين يكن، أعلام والمجهول الجزء الاول، مصر، 1909، 64-78.

Երիտթուրքական «Ալ-Մուշիր» (Խորհրդական) երկլեզվյա (արաբերեն և անգլերեն) քաղաքական, գրական, քննադատական շաբաթաթերթը սկսում է լույս տեսնել 1894 թ., Ալեքսանդրիայում, հետագայում տեղափոխվում է Կահիրե: Հիմնադիր-խմբագիրն էր բեյրութցի վտարանդի Սելիմ Սարգիսը⁸⁹: Վերջինս երկար դեգերումներից հետո, խուսափելով Կ. Պոլիս մեկնելուց, որն անվանում է «մտքերի դամբարան, ուղեղների գերեզման, որտեղ ոչ մեկն ականջալուր չէ իրեն»⁹⁰, ի վերջո հաստատվել էր Եգիպտոսում:

«Ալ-Մուշիր»-ի ուղղվածությունը և հրատարակչի դիրքորոշումը, 1890-ականներին Կահիրեում լույս տեսնող աբդուլհամիդյան վարչակարգի դեմ կտրուկ արտահայտվող մյուս պարբերականների նման, կարելի է բնորոշել իշխող վարչակարգի նկատմամբ ծայրահեղ թշնամական: Պարբերականը դրականապես էր արձագանքում երիտթուրքերի քարոզչությանը և գաղափարախոսության հիմնական հայեցակետերին:

Օսմանյան ուղղվածությունը, որը նոր օսմանների անմիջական ժառանգորդը հանդիսացող երիտթուրքերի գաղափարախոսության հիմնաքարերից էր և բնորոշ էր երիտթուրքական պարբերականների մեծ մասին, որոշ դրսևորումներ է ունեցել նաև «Ալ-Մուշիրում»՝ ի դեմս թերթի խմբագիր Սելիմ Սարգիսի հոդվածների (թերթում շարունակաբար հրատարակված է նաև նրա «Սիր ուլ-Մամլաքա» (Կայսրության գաղտնիքը) վեպը), Խալիլ Ղանեմի, Ամին Արսլանի բողոք-նամակների, որոնք, լինելով օսմանականներ, դեմ էին ազգային-ազատագրական շարժումներին⁹¹: Նրանք, միևնույն ժամանակ, հանդես էին գալիս կայսրության տարածքում արաբների և իսլամի դերն ընդգծող նամակներով՝ սուլթանին հիշեցնելով նրա ոչ բարեհաճ վերաբերմունքը

⁸⁹ فيليب دى طرازي ، ص.29.

⁹⁰ Այսպես է արտահայտվում հեղինակը թերթում հրատարակած իր ինքնակենսագրական հոդվածում, որը վերնագրված է «1894-ի հուլիսի 10-ից մինչև 1895-ի հուլիսի նույն օրը» (տե՛ս المشير, 1895, 08.10):

⁹¹ Ընդհուպ երիտթուրքական հեղափոխությունը, արաբական ազգայնական շարժումն Օսմանյան կայսրության սահմաններում ինքնավարությունից ավելի չէր պահանջում: Կրոնական միասնության գաղափարը հակադրվում էր ազգային միասնության գաղափարին և լրջորեն թուլացնում էր արաբների ազգային-ազատագրական պայքարի սրությունը: Այդ իսկ պատճառով Օսմանյան կայսրության ասիական մասերում թուրքական բռնակալության դեմ պայքարը սահմանափակվում էր վարչակարգը քննադատելով, երբեմն՝ թուրքական սուլթանի՝ խալիֆի տիտղոսը կրելու իրավունքը վիճարկելով: Իսկ Եգիպտոսում հավատակիցների համախմբման պանիսլամիստական գաղափարը, անկախ դավանական կամ ցեղային պատկանելությունից, համարվում էր գաղութարարների դեմ պայքարում ինքնապաշտպանական հզոր միջոց (տե՛ս Котлов Л. Н., նշվ. աշխ., էջ 104-105):

կայսրության մահմեդական հպատակների, հատկապես մեծամասնություն ներկայացնող արաբների նկատմամբ:

Հիշենք, որ եգիպտական ազգայնական շարժումն իր ձևավորման սկզբնական շրջանում զարգանում էր օսմանցիության և իսլամականության շրջանակներում, որը հնարավորություն էր ընձեռում պայքարել գաղութարարների դեմ ու պահանջել նրանցից՝ կատարելու տրված խոստումը՝ քել եգիպտոսը: Սակայն շուտով եգիպտական ազգայնականությունը, որպես տեղական հայեցակարգ, սկսում է մերժել նշված տեսությունները՝ ձգտելով դեպի աշխարհականացում, որի արդյունքում եգիպտացիների ազգային ընդհանրության գաղափարը սկսում է գերիշխող դառնալ նրանց կրոնական միասնության գաղափարի նկատմամբ: Եգիպտական հասարակական մտքի այդ բազմաշերտ համատեքստում լիովին բացատրելի էր «Ալ-Մուշիր»-ի հնգամյա գոյության փաստը (1894-1899 թթ.) Եգիպտոսում (հետագայում այն վերահրատարկվել է նաև ԱՄՆ-ում մինչև 1902 թ.):

Հիմնականում, ահա այսպիսի խճանկարի տեսքով էր ներկայանում Եգիպտոսի արաբալեզու մամուլը XIX դարի վերջին քառորդին, որը ձևավորում էր եգիպտական հանրային կարծիքը, և որի կիզակետում էր իրականանում յուրաքանչյուր իրադարձության լուսաբանում, այդ թվում նաև՝ Հայկական հարցը:

Եզրափակելով՝ նշենք նաև, որ Հայկական հարցն արտացոլված է եգիպտական մամուլի արտահայտչական յուրահատկությունները ձևավորող ժանրային բազմազանության գրեթե բոլոր տեսակների մեջ՝ սահմանագծվելով հայտարարությունների, հեռագրերի, ազդերի, թղթակցության և, որ ամենակարևորն է, հրապարակախոսության շրջանակում: Առանձնահատուկ ուշադրության ենք արժանացրել երգիծանքը, մասնավորապես ծաղրանկարներն «Ալ-Մուշիր»⁹² պարբերականում, որոնցում հիմնավոր կերպով արտացոլված է Հայկական հարցը:

Արաբական պարբերական մամուլի զարգացման այս ժամանակաշրջանը թելադրում էր նաև իր լեզվական պահանջները: Արդեն հաստատուն տեղ գրաված

⁹² Հիշենք, որ երիտթուրքերի վտարանդիական մամուլն ուներ երգիծական հրատարակություններ ժնկում և Ֆոլքսթոնում (տե՛ս Петросян Ю. А., Османская империя Могущество и гибель, Москва, 1990, с. 225):

հրապարակախոսական ժանրն իր նախատիպն ունեւ արաբական գրական ավանդույթի մեջ: Սակայն դրան բնութագրական սաջը՝ արաբական հանգավորված արծակը (որի վառ օրինակը Ղուրանի լեզուն է) ի զորու չէր ավելի արագ հասանելիություն պահանջող տեղեկատվությունը պարզ հասցնել ընթերցողի ունկին: Ըստ այդմ էլ փոխվում էր մամուլի լեզուն՝ առավել տրամաբանված, հստակ, զուսպ խոսքի վերածվելով⁹³: Խոսակցական արաբերենը նույնպես սկսեց կիրառվել գրականության մեջ՝ առաջին հերթին մամուլում՝ հատկապես երգիծական թերթերում:

1.2. Արևմտահայության դրության արտացոլումը

Օսմանյան կայսրությունն իր գոյության ողջ ընթացքում կենսական կարևորություն է ունեցել եվրոպական մեծ տերությունների շահերի համար: Նրանց աշխարհակալական հեռանկարում միշտ երևացել են կայսրության ախորժաբեր տարածքները խլելու և դրանց շնորհիվ ավելի մեծ քաղաքական կշիռ ձեռք բերելու նկրտումները:

Երբեմնի հզոր կայսրությունը, որն աշխարհը վերաբաժանելու եվրոպական ձգտումների հիմնական թիրախն էր, շատ արագ հասավ իր անկման շրջափուլին⁹⁴: Այն խոչընդոտ էր հանդիսանում իր կազմում գտնվող տարբեր քաղաքակրթական մակարդակ ունեցող ժողովուրդների զարգացման համար, ինչը հանգեցնում էր խոր հակասությունների՝ իշխող վարչակարգի և հպատակ ազգերի միջև: Սուլթանական կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունը անօգուտ դուրս եկավ կայսրության ամբողջականությունը պահպանելու տեսանկյունից: Անհրաժեշտ էին արմատական բարեփոխումներ, որոնք սակայն դեմ էին թուրքական հետամնաց վարչակարգի սկզբունքներին:

⁹³ Долинина А. А., նշվ. աշխ., էջ 16-17:

⁹⁴ Петросян Ю. А., նշվ. աշխ., էջ 72-149:

Օսմանյան կայսրության անկման գործընթացը XIX դարի վերջին առավել որոշակի ուրվագիծ էր ձեռք բերել: Այդ պետության պարանոցը սեղմող օղակը շատ էր նեղացել՝ այն առավել կառավարելի դարձնելով: Տերությունների անընդհատ աճող տնտեսական գաղութացման քաղաքականությունը մի կողմից, օսմանյան բռնապետությանը հակադրվող ազգային ինքնագիտակցության զարթոնքը մյուս՝ օսմանահպատակ ժողովուրդների շրջանում ահագնացնում էին կայսրության կործանման վտանգը⁹⁵: Սակայն օսմանյան վարչակարգը չէր հրաժարվել կայսրության ոչ թուրք ազգությունների նկատմամբ բռնաճնշումների ու կեղեքումների քաղաքականությունը գործադրելուց: Կատարելագործվում էր ոչ մուսուլմանների՝ հատկապես հայերի նկատմամբ կիրառվող բռնությունների համակարգը:

Օսմանյան կայսրությունն օտար միջամտություններից ձերբազատելու և երկրի ամբողջականությունը պահպանելու համար իրականացվեցին Թանզիմաթի գործադրման անհաջող փուլերը:

Թանզիմաթի ամբողջ շրջանը սկսվեց 1839 թ. Հաթթը շերիֆով և շարունակվեց մինչև Ղրիմի պատերազմն ու դրան հետևող տասնամյակները՝ եզրափակվելով Օսմանյան առաջին սահմանադրության հռչակումով՝ իբրև Թուրքիայում քաղաքական բարենորոգումների բարձրակետ⁹⁶: Սահմանադրության ձախողումը, սակայն, ապացուցեց այն իրողությունը, որ կայսրությունը պատրաստ չէր քաղաքական ու պետական զարգացման եվրոպական ուղին ընդօրինակելուն, ինչը ենթադրվում էր իրականացնել: Ընդհակառակը, եվրոպականացմանը կայսրությունը հակադրվեց հպատակ ազգերի ճնշումները սաստկացնելով, կրոնական հակամարտությունները խորացնելով, պահպանողական ուժերի համախմբումով և բարենորոգչական գաղափարախոսության դեմ թշնամական դիրքորոշմամբ:

Սուկ անվանապես ընդունված Թանզիմաթը շոշափելի արդյունքների չէր հանգեցրել բարեփոխումների խիստ անհրաժեշտությունը զգացող ոչ մահմեդական բնակչության համար. Վերջինս մնացել էր նույն ստորադասված, իրավազուրկ ու

⁹⁵ Фадеева И. Л., Османская империя и англо-турецкие отношения в середине XIX в, Москва 1982, с. 82-120.

⁹⁶ Петросян Ю. А., Новые Османы и Борьба за Конституцию 1876 г. в Турции, Москва 1958, с. 113-149.

թշվառ վիճակում: Սահմանադրական շարժումը ևս ձախողվել էր իր առաքելության մեջ:

Եթե նախնական շրջանում կայսրության փլուզումը կանխելու մտայնությամբ բարեփոխումների կարիքը զգում էր նաև թուրքական կառավարող վերնախավը, ապա Աբդուլ Համիդը, որը, փաստորեն, միանձնյա էր իրականացնում երկրի կառավարումը, բարեփոխումներին վերաբերում էր որպես «արտաքին միջամտություն» կայսրության գործերին, ինչը ժխտում էր իրեն հատուկ մեթոդներով՝ ի վերջո հանգեցնել «բարեփոխելու» արյունոտ ճանապարհին ընտրելու գործելակերպին:

Ավելացվում էին ճնշումներն ու կեղեքումները բարեփոխումների կարիքը զգացող ժողովուրդների, մասնավորապես հայերի նկատմամբ՝ փորձելով ուժի միջոցով կասեցնել կառավարության իսկ կողմից գործարկվող բռնության արդյունքում առաջացած պահանջները: Ստեղծված քաղաքական, տնտեսական անասելի ծանր պայմաններին հպատակ ազգերը հակադարձեցին ազատագրական պայքարի պոռթկումներով:

Այդ ամենը մարմնավորվեց արյունոտ սուլթանի ավելի քան երեսուն տարի տևած բռնապետության՝ «զուլումի» ժամանակաշրջանով:

Այդ շրջանի սկիզբը համընկնում էր Հայկական հարցի՝ միջազգային քաղաքական հարաբերությունների ասպարեզ դուրս գալուն: Մինչ այդ լինելով լոկ Արևելյան հարցի⁹⁷ բաղկացուցիչը, 1878-ին արդեն այն վերածվեց միջազգային դիվանագիտության ծանրության կենտրոններից մեկի, որի շուրջ էին ծավալվելու Եվրոպա-Ռուսաստան հակասությունները օսմանյան խարխլվող պետության տարածքում:

Արևմտյան Հայաստանը և արևմտահայությունը միջազգային, նաև՝ Եգիպտոսի արաբական մամուլը մտահոգող խնդիրներից էին: Եգիպտական հրատարակություններում հատկապես շատ են անդրադարձները Հայկական հարցին, հայերի կոտորածներին, այդ ամենի նկատմամբ մեծ տերությունների քաղաքականությանը: Մի շարք հոդվածներ, որոնք ստվարաթիվ չեն և առավելապես

⁹⁷ Duke of Argyll, The Eastern question from the Treaty of Paris 1856 to the Treaty of Berlin 1878, and to the Second Afghan War, vol. 1, London.

նկարագրական բնույթ ունեն, մեր կողմից կարևորվել են այն տեսանկյունից, որ թույլ են տալիս վերհանել Եգիպտոսի արաբալեզու մամուլի էջերում արևմտահայերին և Արևմտյան Հայաստանի կացությանը տրված գնահատականները:

Ուսումնասիրության առարկա ժամանակաշրջանի հրապարակումներում եգիպտական պարբերականները շեշտադրել են հատկապես հայ ժողովրդի քաղաքակրթական դերը: Լուսաբանել են արևմտահայությանն առնչվող այն հիմնախնդիրները, որոնք արտացոլում էին օսմանյան կառավարության վարած հայահալած քաղաքականությունը՝ հող նախապատրաստելով հայերի նկատմամբ օսմանյան ցեղասպանական ծրագրի իրագործման համար:

Այդ ժամանակահատվածում առավելապես չեզոք համարվող «Ալ-Ահրամ»-ը, որի ծնունդը գրեթե համընկնում է Հայկական հարցի միջազգայնացմանը, Օսմանյան կայսրության բազմազգ կառուցվածքում մեկ անգամ չէ, որ առանձնացրել է հայերին՝ ընդգծելով նրանց քաղաքակրթական բարձր մակարդակը: Տակավին 1878 թ. թերթը, լրացնելով «Նյու Յորք թայմս»-ին⁹⁸, գրում էր. «Հայը քաղաքակիրթ և խելացի ժողովուրդ է, որն առաջընթաց է պահանջում և ձգտում դեպի այն, սակայն նրան դրա համար պակասում են հնարավորությունները»⁹⁹:

Պարբերականը, հնարավորություններ ասելով, իհարկե, նկատի ուներ Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի համար մի քանի դար շարունակ ձևավորված և ավելի ծանրացող պայմանները:

«Ալ-Ահրամ»-ն անդրադառնում է ոմն Շարմ Գաբրիելի հողվածին, որտեղ հեղինակը, խոսելով հայերի հանդեպ օսմանյան կառավարության ստանձնած պարտավորությունների մասին, ժխտում է Բ.Դռան՝ հայերին կայսրության մնացած ազգությունների հետ քաղաքակրթական մակարդակով, ինչպես և թվաքանակով հավասարեցնելու հավաստիացումները: Նրա կարծիքով, հայերն իրենց

⁹⁸ «Ով այդ ազգին ավելի լավ է ճանաչում, առավել բարձր է նրանց գնահատում» հողվածում Ա. Ս. Բլեքուելը համատեղել է հայերին տրված բազմաթիվ գնահատականներ (տե՛ս «Armenians at the twilight of the Ottoman Era, News Reports From The International Press, V. I, The New York Times, 1890-1914, compiled and edited by Vosgan Mekhitarian, rev. Vahan Ohanian, Published By Genocide Documentation and Research Center, 2011, էջ 1371-1372):

⁹⁹ ”الأهرام” 1878, 12.09

գիտակցությամբ, կրթվածությամբ և դաստիարակվածությամբ առավել բարձր են մյուս համայնքներից, ավելի հմուտ՝ իրենց կառավարման ձևերում¹⁰⁰:

Ապա հավելում է, որ նրանք հնազանդ էին օսմանյան կառավարությանը և մյուսների նման խռովություններ չեն բարձրացնում: Այդ պատճառով թուրքերը եզրակացրել են, թե հայերը երկյուղում են և ի զորու չեն իրենք իրենց ղեկավարելու, այնինչ, հայը մի ազգ է, որը փառավոր անցյալ ունի և զուրկ չէ ռազմական և կառավարման կարողություններից: Հայերին վերագրելով այնպիսի կարևոր հատկանիշներ, ինչպիսիք են դիվանագիտության ասպարեզում պահանջվող խելամտությունը և խորաթափանցությունը՝ թերթն ընդգծում է. «...այն դերակատարությունը, որ հայերն ունեն Օսմանյան կայսրության մեջ, ունեն նաև Ռուսաստանում. այդ երկու տերություններում էլ հայերը դիրք և հեղինակություն են վայելում»¹⁰¹:

Հայ ժողովրդին տրված բնութագրերը եգիպտոսի արաբալեզու մամուլում, իհարկե, արձանագրել են պատմական ճշմարտությունը, որն այդ նույն ժամանակահատվածում շեշտադրել են բազմաթիվ այլ օտարներ, և այդ իմաստով, խնդրո առարկա թերթերը համալրել են հնչած գնահատականները:

Արևմտյան Հայաստանը աշխարհագրական առումով եգիպտական պարբերականների կողմից բազմաթիվ հրապարակումներում համաժամանակյա կամ հետադարձ հայացքով բնութագրվել է որպես Օսմանյան կայսրության տարածքներից բնակլիմայական պայմաններով լավագույնը:

«Թուրքիայի ճակատագիրն Ասիայում և Եվրոպայում» հոդվածում իսլամական «Ալ-Մուայյադ»-ը, որն ի տարբերություն մնացած պարբերականների, հիմնականում կրոնական պրիզմայի միջով էր արծարծում խնդիրները, համաձայնում է այն իրողությանը, որ «Որոշ քաղաքագետներ Բ. Դուան և նրա տիրույթների ապագան կապում են մեծ տերությունների՝ Արմինիայի հետ կապված ձգտումներին, ելնելով նրա

¹⁰⁰ «الأهرام» 1878, 12.09

¹⁰¹ «الأهرام» 80.10.07, 18

աշխարհագրական դիրքի առավելություններից. հայտնի է, որ այն հարուստ է ու բերրի և համարվում է «դրախտ երկրի վրա»¹⁰²:

Այդ ոգով էր առաջնորդվել պարբերականը նաև իր նախորդ համարներից մեկում տպագրված ««Հայաստան» անվանվող երկրի վիճակի մասին» վերտառությամբ հոդվածում, երբ, Հայաստանը դնելով Ռուսաստանի կենսական շահերի կիզակետում, նշել էր, որ «այն մի լեռնային կղզյակ է, որը Բոսֆորը նվաճելու ճանապարհին է գտնվում և, Հայաստանը ձեռք բերելով, Ռուսաստանը կստանա Կ. Պոլիսը նվաճելու բանալին»¹⁰³: Այդ երկրի կարևորությունը ոչ միայն նրա ռազմավարական նշանակությունը, այլև ամենաբերրի գյուղատնտեսական տարածքը լինելն է»¹⁰⁴:

Նույն հոդվածում հեղինակը հանդես է եկել կարևոր մի շեշտադրումով. Նա Օսմանյան կայսրության ամենաթույլ կողմերից մեկը օսմաներենի պետական լեզու լինելն է համարում: Ըստ նրա՝ այն չափազանց թույլ լեզու էր՝ կայսրության ազգությունները միավորելու գործառույթ իրականացնելու տեսակետից: Դրա փոխարեն նա առաջարկում է պետական լեզու դարձնել արաբերենը: Անդրադառնալով կայսրության կազմում գտնվող հայերին՝ հեղինակը նշում է, որ լեզվի և դավանանքի շնորհիվ են հայերը կարողացել մնալ ինքնուրույն, ինչպես և հրեաները, քանի որ նրանց լեզուն ևս հարուստ է թուրքերենից: Թերթը, թեև այս ամենն արժարժել է արաբերենը կայսրության պաշտոնական լեզու դարձնելու մտայնությամբ, սակայն նա վերստին բարձրաձայնել է մի հայտնի ճշմարտություն, որ «թուրքերենը թույլ էր և ի զորու չէր ճնշելու իրենից ավելի հզոր լեզուների, ինչպիսիք էին հայերենը, արաբերենը և այլ լեզուներ...»¹⁰⁵:

Պետք է ասել, որ այս մասին պարբերականը գրում էր եգիպտական ազգայնական գաղափարների ազդեցությամբ, որի շրջանակում արաբերենը պետք է դառնար արաբական ինքնության ապահովման կարևոր միջոցներից մեկը:

¹⁰² «المؤيد» 1896. 22. 06

¹⁰³ Ռուսաստանի համար Կ. Պոլսի ռազմավարական կարևորության մասին տե՛ս նաև՝ Политическое значение Константинополя, «Вестник Европы», 1878, т. 5, кн. 5-10.

¹⁰⁴ «الأهرام» 1895.14.11.

¹⁰⁵ Նույն տեղում:

1890-ականներին Արևմտյան Հայաստանը և հայերին կայսրության հպատակների շարքում առանձնացնում էր նաև երիտթուրքական վտարանդիական պարբերական «Ալ-Մուշիր»-ը, որտեղ տպագրվում էր «Հայկական ճգնաժամ» հոդվածաշարը: Դրա հերթական հատվածում հեղինակն արդուկհամիդյան կոտորածների մասին խոսելիս փաստում է. «Մինչ գրվում են այս տողերը, Օսմանյան կայսրության լավագույն մասը՝ Սև ծովից մինչև Միջագետք և բիբլիական Արարատի ստորոտից մինչև Փոքր Ասիայի արևմտյան մասերը, որը բնակեցված է պատմությամբ, սեփական լեզու և հարուստ գրականությամբ ունեցող մի ժողովրդով, ամայանում է և ավերվում...»¹⁰⁶:

Շարունակելով նկարագրել արևմտահայության ծանրագույն դրությունը՝ նա ավելացնում է, որ եկեղեցիներն ու պաշտամունքի վայրերը հողին են հավասարեցվել, կրոնը ոտնակոխ է արվում, ամենուրեք գերիշխում են բռնությունը և ճնշումները, ջարդերին նորանոր ջարդեր են հաջորդում¹⁰⁷:

Հոդվածագիրն Արևմտյան Հայաստանի ծանր դրության մեղավորն է համարում Եվրոպային՝ հատկապես Մեծ Բրիտանիային: Նա նշում է. «...սակայն մեծ ուժերը (նկատի ունի եվրոպական մեծ տերությունները – Ն. Ե.) ի տարբերություն Հունաստանի, Սերբիայի, Բուլղարիայի, Հերցեգովինայի, հայերի դեպքում՝ 1878-ին, իրենց վարած անբարոյական քաղաքականությամբ խաղից մի կողմ քաշվեցին...»¹⁰⁸:

Հայերի այդպիսի օրհասական վիճակի պատճառն, ըստ հեղինակի, Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածն էր, որը նա անվանում է նրանց դրությունն օրըստօրե վատթարացնող մի դեղահաբ: Նա կարծում է, որ թուրք պաշտոնյաները սուլթանի կնքած ու ստորագրած պայմանագիրը խախտելով, ավելի են սաստկացրել բռնությունները, հարկահանությունն ու ճնշումները: Անհամար են հայերի ձերբակալություններն ու բանտարկությունները՝ առանց դատավարության, ռազմական ուժերի կատարած փնտրտուքը հայկական եկեղեցիներում և այլ վայրերում, որոնք վերածվում են նոր ջարդերի առիթների¹⁰⁹:

¹⁰⁶ ”المشير” 05. 08, 1895,

¹⁰⁷ Նույն տեղում:

¹⁰⁸ Նույն տեղում:

¹⁰⁹ Այս նույնն էր գրում Մ. Մաքքուլը՝ ծանրանալով հարկերի վրա: Նա իրավացիորեն շեշտադրում էր, որ հարկը չվճարելով՝ քրիստոնյա հպատակը կորցնում էր ոչ միայն իր սեփականությունը, այլև իր ապրելու

«Ալ-Մուշիր»-ը չէր սխալվում, ավելին՝ պարբերականի վերաբերմունքը համահունչ էր ժամանակին ուրիշ ականատեսների կողմից տրված գնահատականներին: Մասնավորապես, Էմիլ Դիլոնը Արևմտյան Հայաստանում Օսմանյան կայսրության վարած քաղաքականությունը բնութագրում էր որպես «կազմակերպված հանցագործությունների, օրինականացված սպանությունների և պարզևատրվող անբարոյականության մի ամբողջ շղթա»¹¹⁰ համաձայնելով որոշ քաղաքական գործիչների կարծիքին:

Արևմտյան Հայաստանում տիրող իրավիճակով մտահոգված «Ալ-Ահրամ»-ը, արևմտահայերի դրությանն անդրադառնալիս, ընդգծում է հատկապես այնտեղ տիրող սովը. «Հայտնի է, թե ինչ ծանր է վիճակն այդ երկրում (Արևմտյան Հայաստանում-Ն. Ե.), գաղտնիք չեն այնտեղ տիրող սովն ու թշվառությունը»¹¹¹: Խմբագրի կարծիքով դա պետք է դրդեր Եվրոպային՝ Օսմանյան կայսրության հետ բանակցելու և պահանջելու հավատարիմ մնալ իր խոստմանը:

1880-ականներին, հատկապես Ռուսաստանին սահմանամերձ Արևմտյան Հայաստանի նահանգներում (առանձնապես Վանի և Էրզրումի շրջաններում) մոլեգնում էր սովը: Թուրքական պաշտոնյաները ոչինչ չէին անում սովյալներին օգնելու համար: Սովյալների խնդիրներով զբաղվում էր Կ. Պոլսում ստեղծված հանձնաժողովը, որը ղեկավարում էր Մ. Խրիմյանը¹¹²: Արևմտահայերին սատարում էին աշխարհի գրեթե բոլոր հայկական գաղթօջախների հայերը:

Թերթի հաջորդող համարներից մեկում տպագրված է «Սովը Հայաստանում» վերտառությամբ ևս մեկ հոդված, որտեղ բարձր է գնահատվում բարեգործների կողմից հայերին ցուցաբերվող օգնությունը: Հատկանշական է, որ գրելով Արևմտյան Հայաստանում տիրող սովի ու թշվառության մասին, ինչի պատճառով մարդիկ

իրավունքը: Կոտորածների պատճառներից մեկը մասամբ հայերի կողմից ցուցադրված դիմադրությունն էր՝ քրդերից իրենց գույքը և իրենց անձը պաշտպանելու համար, ինչի գինը նրանց կյանքն արժեցավ: Ի վիճակի չլինելով հարկերը վճարել, նրանք գրկվեցին իրենց ապրելու իրավունքից (տե՛ս MacCol Malcolm, M. A., England's Responsibility towards Armenia, London and New York, 1895, p. 8-9):

¹¹⁰ Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, Диллонь Эмиль, Положение дель вь турецкой Армении, Москва 1896, ст. 333.

¹¹¹ ”الأهرام” 1880, 10.07

¹¹² Հայոց պատմություն, հ. III, գիրք I (XVII դարի երկրորդ կես-XIX դարի վերջ), Երևան, 2010, էջ 456-457:

նույնիսկ ինքնասպանության էին դիմում, թերթը Եգիպտոսի բնակչությանը նույնպես գրության կոչ է անում՝ ի նպաստ տառապյալների:

Փաստորեն, թերթի տեղեկատվության վրա հիմնվելով, կարելի է հավաստիացնել, որ Եգիպտոսում ականջալուր էին արևմտահայության ծանր դրությանը: Թերթի հետագա համարներում չենք հանդիպել այդ կոչին արձագանքելու վերաբերյալ հրապարակումների, սակայն, ըստ ամենայնի, այն պետք է, որ իր արձագանքը գտներ Եգիպտոսում: Ամեն պարագայում, 1890-ականներին արդեն, առնվազն եգիպտահայերի կողմից այդպիսի ֆինանսական օգնություն ցուցաբերելու վերաբերյալ տեղեկություններ տեղ են գտել եգիպտական մամուլում, մասնավորապես՝ «Ալ-Մուկատտամ»-ում:

Քրդերին հայերի դեմ հանելու, նրանց և հայերի միջև թշնամանք սերմանելու օսմանյան քաղաքականությունը, որը պաշտոնապես շոշափվել էր Բեռլինի պայմանագրում¹¹³ (փաստաթղթում նախատեսվում էր պաշտպանել հայերին քրդերից, ինչպես նաև չերքեզներից, ինչն ինքնըստինքյան վկայում էր այդ ազգերի միջև առկա հակադրության մասին, որն ուղղված էր հայերի ստրկացմանը) և հետագայում դրսևորվեց «համիդիե» կոչվող գնդերի ձևավորումով, վառ արտահայտված է եգիպտական մամուլի էջերում: Հիմնականում քրդերը համեմատվում են հայերի հետ և հակադրվում նրանց, չի անտեսվում նաև օսմանյան կառավարության կողմից հայերին ոչնչացնելու նպատակով քրդերին գործիք դարձնելու հանգամանքը:

Այս տեսանկյունից առանձնակի ուշադրության է արժանի «Ալ-Մուկատտամ» գիտական ամսագրի գնահատականը: Այդտեղ լույս տեսած «Օսմանյան պետության ապագան»¹¹⁴ հոդվածաշարում հանգամանորեն ներկայացված են Օսմանյան կայսրությունը, նրա քաղաքական պատմությունը և բնակչությունը: Հայերին վերաբերող հատվածում հեղինակը գրում է, որ թեև նրանց տարբեր դարաշրջաններում նվաճել են հռոմեացիները, արաբները, թուրքերը, ինչի հետևանքով ցրված են աշխարհի տարբեր մասերում, այնուամենայնիվ նրանք դեռ համախումբ են

¹¹³ Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Երևան, 1972, էջ 128:

¹¹⁴ «المقتطف» 1913, ص. 573.

Վանի, Սվազի, Էրզրումի, Խարբերդի, Բիթլիսի, Դիարբեքիի նահանգներում, Հալեպի նահանգի մի մասում (Մարաշ, Ջեյթուն):

Նրա կարծիքով, օսմանյան կառավարությունը պետք է չանտեսի այն փաստը, որ հայերն առանձնանում են իրենց յուրահատուկ ազգային նկարագրով: Քրդերին անդրադառնալով՝ հեղինակը ընդգծում է այն ճշմարտությունը, որը սկսած 16-րդ դարից կիրառում էին օսմանյան տարբեր սուլթանները. քրդերին բնակեցնում էին այն վայրերում, որտեղ կարիք ունեին փոխելու ժողովրդագրական կազմը: Ղչլաղության իրավունքը նրանց շնորհելով, ընտրված տարածքներում իշխանությունը թվացյալ իմաստով նրանց ձեռքին թողնելով, իրականում թուրք սուլթանները քրդերին օգտագործում էին որպես գործիք օսմանյան պետության համար կենսական նշանակություն ունեցող խնդիրների լուծման ժամանակ¹¹⁵:

«Ինչ վերաբերում է քրդերին՝ նրանց մեծամասնությունը քոչվոր է: Նրանք բոլորը կովում են և իրենց հոգսերը հոգում ասպատակության և թալանի միջոցով: Աբդուլ Համիդը նրանց բնակեցրեց և օգտագործեց իր նպատակների համար՝ հայերի կոտորածների ժամանակ»,- շեշտադրում է հոդվածագիրը¹¹⁶:

Մի քանի տասնամյակ առաջ դա արդեն իսկ փաստել էր նաև «Ալ-Ահրամ»-ը , որն «Արմենիա» խորագրի տակ տեղադրել էր՝ Կ. Պոլսի թղթակցի տեղեկատվությունը՝ հաստատելով, որ «Հայաստանը երբեք իր ներկա վիճակից ավելի վատ վիճակում չի եղել, այդ երկիրը վերածվել է քրդերի բռնությունների ու ասպատակությունների թատերաբեմի»¹¹⁷:

«Ալ-Մուշիր»-ը ևս հայերին հակադրում էր քրդերին՝ նշելով, որ հայերի դեմ կառավարության կիրառած ամենաստոր մեթոդը քրդերի միջոցով նրանց ճնշելն է: Գրելով, որ քրդերը մինչ այժմ չեն կարողացել համախմբվել «ժողովուրդ» կոչվելու համար, հեղինակն ընդգծում է, որ նրանց մեծ մասը քոչվորական կենսակերպ է

¹¹⁵ Այս մասին առավել մանրամասն տե՛ս Բայբուրդյան Վ., Քրդերը, հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո, Երևան, 2008, էջ 25-20, Սասունի Կ., Քյուրտ ազգային շարժումները և հայ-քրտական յարաբերությունները (ԺԵ դարեն մինչև մեր օրերը), Պեյրուպ, 1969, էջ 63:

¹¹⁶ المقطف, նույն տեղում:

¹¹⁷ "الأهرام", 1880.24.06.

վարում, գրականություն և կրթություն չունի: Իսկ երբ քրդերը ցանկանում են գրավոր մտքեր արտահայտել, դիմում են հայկական կամ պարսկական այբուբեններին¹¹⁸:

Նշված հոդվածն առանձնանում է նաև հեղինակի կողմից Արևմտյան Հայաստանին տրված բնութագրով. «Սկզբնական շրջանում քրդերը բնակվում էին Հեքյարում, իսկ հետագայում՝ հատկապես Ղրիմի պատերազմից հետո, տարածվեցին *հինավուրց, խաղաղ, աշխատասեր և գյուղատնտեսական Հայաստանում* (ընդգծումը՝ Ն. Ե.)»¹¹⁹:

Տարբեր առիթներով թերթը կրկին անդրադարձել է քրդերին, ընդգծել թուրքական կառավարության կողմից նրանց հայերի դեմ հրահրելու փաստը, անպատիժ թալանելու և սպանելու թողտվությունը՝ նշելով, որ քրդերը սանձարձակ և արտոնյալ են, անում են՝ ինչ ուզեն. այնինչ հայերի ցուցմունքները դատարանում հաշվի չեն առնվում, հարկահանների կողմից նրանց հարստահարությունները շարունակվում են: Ըստ «Ալ-Մուշիր»-ի՝ քրդերը լավ զինվորներ չեն, բայց գիտեն գողանալ և թալանել: Էրզրումից Բիթլիս և Վանից Սալմաստ ընկած տարածքների բոլոր գյուղերը ենթարկվել են քրդերի ասպատակությանը: «Ալ-Մուշիր»-ը քրդերին ներկայացնում է թե՛ որպես հայկական հողերը զավթողների՝ թուրք իշխանավորների լուռ համաձայնությամբ, թե՛ իբրև թալանողների, ավազակների և մարդասպանների՝ զինված լավագույն զենքերով, որոնց թույլ է տրված անպաշտպան բնակչության դեմ իրականացնելու ամեն բռնություն: Թերթը հավելում է, որ նրանց սուլթանը երբեք չի պատժում, եթե նույնիսկ մարդասպանություն կամ գողություն կատարելու պահին են բռնվում. մինչդեռ, հայերից որևէ մեկի մոտ զենք հայտնաբերելիս, նրան անմիջապես ձերբակալում են որպես հեղափոխականի¹²⁰:

Մեկ այլ հոդվածում անդրադառնալով քրդերին հայերի դեմ հրահրելու թուրքական քաղաքականությանը «Ալ-Մուշիր»-ում շեշտադրված է, որ հայերը դրանից դրդված ընտրում են ծայրագույն ելքը՝ դիմելով իրենց հայրենիքը լքելու քայլին: Թերթը Խնուսաբերդի հայերին է հիշատակում՝ նշելով, թե նրանց դրությունն աստիճանաբար

¹¹⁸ Նույն տեղում:

¹¹⁹ «المشیر», 1895, 15. 05

¹²⁰ Նույն տեղում:

ծանրանում է, մահմեդականներին սադրում են քրիստոնյաների դեմ, որոնք հույսը կտրել են իրենց կյանքից ու ունեցվածքից, նրանց կանանց անպատվում են հրապարակայնորեն, հայհոյում նրանց կրոնը¹²¹:

Ըստ թերթի՝ այնտեղի հայերը հակված են լքելու իրենց հայրենիքը, եթե հզոր հովանավորություն չգտնեն: Հայերին քրդերը խորհուրդ են տալիս փախչել: Երբ Խնուսի բնակիչները հրաժարվել են ստորագրել կառավարությանն ուղղված հերթական շնորհակալագիրը, կառավարիչ Ռիզա բեկը սպառնացել է՝ ասելով, որ նրանք ապստամբներ են և արժանի են պատժի, որին ենթարկվելուց հետո ստիպված կլինեն օտարներից խնդրել օգնություն: Ապա մի թափառաշրջիկի ուղարկել է հայերի կրոնը հայհոյելու և նրանց նվաստացնելու: Հոդվածագիրը շեշտադրել է, որ այդ կերպ *պեյրությունը նպատակ ունի ապստամբություն արթնացնել (ընդգծումը՝ Ն. Ե.)*: Իսկ մի թրքուհու զինվորները ստիպել են իր երեխային նետել հայ կառապանի ճանապարհին, և եթե նա չկարողանար ճիշտ ժամանակին սանձել իր ձիուն, թուրքերի ձեռքից չէր պրծնի: Ամբողջացնելով՝ հոդվածագիրը եզրակացնում է՝ «թուրքերը ցանկանում են հայերին վտարել Հայաստանից՝ մինչ Հայկական հարցի լուծվելը: «Կարաքիլիսայի Արևելյան Լաջվարդի շրջանի հինգ գյուղերի, 400 տների բնակիչները մի քանի ամիս առաջ միայն հայեր էին: Եկան քուրդ համիդիե խմբերի զինվորները՝ Այուբ փաշա Ռիզա, Խալիդ բեկերի գլխավորությամբ, ավերեցին տները, թալանեցին բնակիչների ունեցվածքը՝ նրանց գաղթեցնելով դեպի Ռուսաստան: Իր հարստություններով հայտնի այդ ամբողջ տարածքում, որը սեփականացրեցին քրդերը, այժմ միայն մեկ հայ է մնացել, Ռիզա բեկն էլ ապրում է նրա տանը»¹²², - նշում է հոդվածի հեղինակը:

«Ալ-Մուշիր»-ը Հայաստանի վատթար դրությունը Եվրոպայի խարանն է համարում, որի պաշտպանությանն է ապավինել կայսրության քրիստոնյա բնակչությունը: Ըստ հոդվածագրի՝ Եվրոպան պարտավոր էր քայլ կատարել և հիշեցնել սուլթանին, որ նա, ըստ պայմանագրի, պարտավորվել է բարեփոխումներ

¹²¹ «المشیر» 1895, 22, 04

¹²² Նույն տեղում:

իրականացնել հայկական նահանգներում, դրանից անցել է արդեն տաս տարի, նա ժամանակ և հնարավորություն ունենալով, ոչինչ չի կատարել¹²³:

Արևմտահայերի ծանր կացությունն ավելի ուշ գնահատել է «Ալ-Հիլալ»-ը՝ հետադարձ հայացք ձգելով իրադարձություններին: Ուշագրավ են պարբերականի կողմից «Հայաստանը և Հայկական հարցը» հոդվածում հայության ծանր վիճակի պատճառները: Պարբերականը նախ կարևորում է հայկական պետականության բացակայությունը, ինչն ավելի դյուրին էր դարձնում թուրքական բռնությունների սաստկացումը:

Հայերին կայսրության մյուս քրիստոնյա ազգությունների հետ համեմատելով՝ հոդվածագիրը նշում է, որ, ի տարբերություն նրանց, բուլղարացիները կարող էին իրենց հայացքը հառել դեպի Սոֆիա, հույները՝ Աթենք, սերբերը՝ Բելգրադ, սակայն հայերը չունեին մի պետություն, դեպի ուր կնայեին և կապավիսեին:

Միաժամանակ հեղինակը նմանություն է տեսնում հայերի և արևմտացիների միջև՝ այն տարբերությամբ, սակայն, որ արևմտացիները ավելի թերահավատ էին թուրքական խոստումների նկատմամբ, երբ իրենց զենքերը չէին հանձնում թուրքերին, այնինչ, հայերը ստիպված էին հնազանդվելու զենքերը հանձնելու պահանջին՝ վախենալով, թե հակառակ դեպքում հարկերն ավելի կավելացվեն: Նրա կարծիքով «այդ ամենի պատճառով՝ հայերը 1878-ին դիմեցին Բեռլինի վեհաժողովին՝ բռնություններին վերջ դնելու, վարչական ինքնավարություն ձեռք բերելու, քրիստոնյա կառավարչի կողմից ղեկավարվելու պահանջագրով»¹²⁴:

Պարբերականը, փաստորեն, արձանագրում էր, որ թուրքական հալածանքներն էին հայերին դրդում դիմելու որոշակի քայլերի՝ իրենց ծանր դրությունը բարելավելու համար, և, որ չարիքի սկիզբը օսմանյան քաղաքական գծի մեջ էր, ոչ թե հայերի խռովարարության, ինչպես ձևակերպվում էր օսմանամետ լրատվամիջոցներում (ընդգծումը՝ Ն. Ե.):

Շեշտադրելով, որ օսմանյան կառավարության վարած քաղաքականությունն էր նաև առիթ տալիս, որ տերությունները սկսեին ճնշումներ գործադրել կայսրության վրա՝

¹²³ «المشير» , 1895, 15. 05.

¹²⁴ «الهلل» , 1915, 01. 12, ص 180-188

հանդես գալով քրիստոնյաների, մասնավորապես՝ հայերի բարեփոխումների իրականացման պահանջներով, պարբերականն ավելացրել էր մի հանգամանք ևս: Դա հայերի հարանվանությունների բաժանված լինելն էր, որպես նրանց նկատմամբ ճնշումները հեշտացնող պատճառ, և այն, որ նրանք բազմաքանակ էին նաև Ռուսաստանում և Պարսկաստանում, իսկ վերջիններից և ոչ մեկի շահերից չէր բխում օժանդակել Օսմանյան կայսրության հայերին՝ հասնելու ինքնուրույնության:

«Ալ-Հիլալ»-ը ևս չի մոռանում քրդերին և փաստում է. «Բազմաթիվ հայեր բնակվում էին քրդերի հարևանությամբ, իսկ թուրքական պետությունը նրանց հետ հաշվեհարդար տեսնելու համար ամեն անգամ քրդերին էր օգտագործում՝ շատ դեպքերում զինելով քրդական ցեղերը և հրահրելով հայերի հետ նրանց ընդհարումները»¹²⁵:

Պարբերականի նյութերում ակնառու է այն իրողությունը, որ թուրքական կառավարության քաղաքականության հետևանքով Հյուսիսային Կովկասից և Բալկաններից բազմաթիվ մահմեդականների բնակեցումը հայկական նահանգներում, ինչպես նաև սովն ու անապահովությունը հաճախ ստիպում էին հայերին զանգվածային չափերով դավանափոխության դիմելու: Սեբաստիայի և Խարբերդի նահանգների հայկական բազմաթիվ գյուղերի ներկայացուցիչներ դիմում էին տեղի ռուսական հյուպատոսություններին՝ ռուսական հովանավորության տակ անցնելու և Արևելյան Հայաստան գաղթելու խնդրանքով:

«Ալ-Մուայյադ»-ը փոխանցել է «Դեյլի Նյուզի» թղթակցի հայտնած տեղեկությունն այն մասին, որ հայկական գյուղերից մեկի բնակիչները խնդրել են ռուսական իշխանություններին՝ ուղարկել մի քահանա, քանի որ ցանկանում են հետևել ռուսական ուղղափառությանը՝ թողնելով կաթոլիկությունը: Իսկ ռուսական կառավարությունը չի հապաղել նրանց խնդրանքն իրականացնելու հարցում:

Թերթը նաև տեղեկացրել է, որ 9000 չերքեզ ցանկանում են գաղթել Օսմանյան կայսրություն, և դա հեշտացնելու համար ձեռնարկված են բոլոր միջոցառումները,

¹²⁵ Նույն տեղում:

սուլթանն էլ իր հերթին հայտնել է իր կամքը՝ նրանց աջակցելու և իր հողում՝ մասնավորապես Սվազում՝ Սեբաստիայում,, նրանց տարածք հատկացնելու խնդրում¹²⁶:

Ավելի վաղ դրան անդրադարձել էր «Ալ-Մուքաթթամ»-ը: «Հայերը»¹²⁷ խորագրի տակ տպագրված մի ակնարկում նշվում էր, որ Արծափ գյուղի 72 հայ ընտանիք՝ 575 հոգի, դիմում են գրել ռուսական եպիսկոպոսին՝ խնդրելով թույլ տալ ուղղափառություն ընդունել: Էջմիածնի կաթողիկոսը փորձել է նրանց հետ պահել այդ մտադրությունից, սակայն ապարդյուն: Ըստ թերթի, այդ ձգտումը հայերի մեջ ընդհանուր տարածում է գտնում՝ Էրզրումի իրադարձությունից¹²⁸ հետո:

Կ. Պոլսում կեղծ ահազանգ էր ստացվել, թե հայերը, իբր, Կարինում զիանապահեստներ ունեն և պատրաստվում են ապստամբության: Տեղական իշխանությունները խուզարկել էին Սանասարյան վարժարանը, Ս. Աստվածածին եկեղեցին, առաջնորդարանը և նրա շրջակայքը: Խուզարկությունն անարդյունք անցավ, սակայն արյունոտ ավարտ ունեցավ: Հայերը, որպես բողոքի նշան, փակեցին խանութները և հեռագիր ուղարկեցին սուլթանին: Իսկ հունիսի 18-ին եկեղեցու բակը խուժած ոստիկանները հանդիպեցին պատարագի ելած բազմության դիմադրությանը: «Պաշտպան հայրենյացի» ղեկավարներ Խ. Կերեքցյանի, Գ. Չիլինկիրյանի, ինչպես նաև՝ Հ. Իշագուլյանի և Հ. Նշկյանի գլխավորությամբ երիտասարդները փորձեցին դիմադրություն կազմակերպել, ինչը վերածվեց զինված ընդհարման, ոստիկանները սպանեցին կամ վիրավորեցին երկու տասնյակից ավել հայերի: Երկու օր անց իշխանությունների հրահանգով հրազենով, փայտերով ու քարերով զինված մահմեդական ամբոխը հարձակվեց հայկական թաղամասերի վրա՝ սպանելով 10-12 և սպանելով 200-300 հայերի: Տերությունների դեսպանների միջնորդությունից հետո միայն իշխանություններն ազատ արձակեցին ձերբակալված 28 հայերի, իսկ գլխավոր դատախազը հեռացվեց պաշտոնից՝ անմեղ մարդկանց ձերբակալելու համար:

Այդ իրադարձությունը ժամանակին նույնպես իր արձագանքն է գտել եգիպտական մամուլում. «Էրզրումում վերջին կոտորածները հրահրվել են այնտեղի

, 1890. 08.09. ”المؤيد”¹²⁶

, 1890.01. 08. ”المقطم”¹²⁷

¹²⁸ Տե՛ս Հայոց պատմություն, էջ 512:

հայկական եկեղեցում զենքերի անարդյունք փնտրտուքից հետո», - գրում էլ «Ալ-Մուշիր»-ի թղթակիցը «Հայկական ճգնաժամ» հոդվածաշարի հերթական հատվածում¹²⁹:

Ռուսաստանին հղած հայերի դիմումի՝ ռուսական եկեղեցու հետևորդ դառնալու խնդրանքին դրական պատասխան էր տրվել, իսկ ինչ վերաբերում է Ռուսաստանի հովանավորության տակ մտնելուն, «Ալ-Մուկատտամ»-ը ճիշտ է նկատում, որ «դա այլ քաղաքական խնդիր է, և առայժմ Ռուսաստանը չի կանչում հայերին, ոչ էլ հայ գործիչներն են կողմ՝ ռուսական հովանավորության տակ անցնելուն»¹³⁰:

«Ալ-Ահրամ»-ը շատ ավելի վաղ էր նկատել Արևմտյան Հայաստանը հայաթափելու օսմանյան քաղաքական ձգտումը: Նա հայոց պատրիարքի նամակը հղելով՝ գրում էր. «Օսմանյան կայսրությունը հայկական մասերում սկզբնական վիճակից ոչինչ չի փոխել, և ոչ էլ հետաքրքրվել է բարեփոխումների իրագործմամբ: Գրեթե 50000 հայեր գաղթեցրել է Ռուսաստան՝ անտեսելով նրանց հայրենասիրությունը և կտրելով ծննդավայրից»¹³¹:

Իսկ «Ալ-Մուկատտամ»-ը, նկարագրելով քրդերի ոտնձգությունները հայերի նկատմամբ, կրկին նշել էր, որ հայերի շրջանում հուզումներ են առաջացել, նրանք բողոք են ներկայացրել Բ. Դռանը՝ հայտնելով, որ պատրաստվում են միանալ Ռուսաստանին, եթե կառավարությունը իրենց չի պաշտպանելու քրդերից¹³²:

Թերթը մղում է այն եզրահանգման, որ դա ի կատար էր ածվում՝ համապատասխան թուրքական սցենարի, քանի որ այդ նույն կառավարությունն ավելի էր շահագրգռված հայերի արտագաղթի խնդրում՝ այն ընդունելով որպես նրանցից ձերբազատվելու լավագույն տարբերակ:

Սաստկացնելով հայերի ազգային ու սոցիալական ճնշումները՝ Բ. Դուռը գաղտնի հրահանգներ էր ուղարկում հայաբնակ վիլայեթների տեղական պաշտոնյաներին՝ հայկական ազգային ժողովների գործունեությունը խոչընդոտելու, նրանց դպրոցներում Հայաստանի պատմության դասավանդումը վերացնելու, «Հայաստան» անվանումը

¹²⁹ "المشير" 1895.15.05.

¹³⁰ "المقطم" 1890.01.08.

¹³¹ "الأهرام" 1879, 14.02.

¹³² "المقطم" 1889, 15.05.

գործածությունից հանելու վերաբերյալ: Հրահանգներ էր տրվել նաև՝ խիստ գրաքննություն սահմանելու հայկական մամուլի և գրականության վրա:

Բ. Դուռն իր ազդեցությունը տարածել էր նաև որոշ արտասահմանյան լրատվամիջոցների վրա¹³³: Այս մասին հետաքրքրական տեղեկություն կա «Ալ-Մուկատտամ»-ում:

«Բ. Դուռն և արտասահմանյան թերթերը» հոդվածում հղելով «Թայմսին»՝ նշվում է, որ տպագրության վարչության պետին՝ Մյունիր բեյին, Բ. Դուռն գործուղել է Լոնդոն և Փարիզ՝ տեղի թուրքական դեսպաններին հրահանգելու «օտար լրատվամիջոցների «բերանը փակել»¹³⁴ հույս ունենալով, որ այդ թերթերը կդադարեն տպագրել խոռվություններ և ապստամբություններ հրահրող, անհնազանդություն սերմանող նյութեր¹³⁵:

«Ալ-Հիլալ»-ն իր հերթին շեշտադրումներ է կատարել օսմանյան քաղաքականության վերոհիշյալ դրսևորումների վրա՝ մասնավորապես անդրադառնալով օսմանյան գրաքննությանը:

Առանձնակի ուշադրության է արժանի «Տպագիր հրատարակությունների վերահսկողությունը»¹³⁶ հոդվածը, որտեղ պարբերականն անդրադարձել է Օսմանյան կայսրության տպագրության պատմությանը՝ նշելով, թե լրագրությունը համեմատական ազատություն էր վայելում, մինչև Աբդուլ Համիդի իշխանության գալը: Ազատականների մամուլը ևս անկաշկանդ էր:

Ըստ «Ալ-Հիլալ»-ի, «երբ կառավարության մարդկանց և նոր օսմանների միջև հակասությունները սրվեցին, սուլթանը հրամայեց «նոր օսմաններին» սահմանափակել՝

¹³³ Օսմանյան գրաքննությունը պայքարի որոշակի ձև էր մշակել, որտեղ կաշառքը և պետական գումարների հատկացումները քիչ տեղ չէին զբաղեցնում: Պետք է ասել, որ ինչպես Օսմանյան կայսրության տարածքում, այնպես էլ բուն Եվրոպայում լույս տեսնող եվրոպական լեզուներով հրատարակվող պարբերականները ևս գնվում և վաճառվում էին համիդյան գործելակերպին: Թուրքասեր պարբերականների մի ամբողջ ցանց էր ստեղծված Եվրոպայում: Դեպի արտասահման առատորեն հոսում էին նվերներն ու պարգևները, որոնք բավական արդյունավետ էին (տե՛ս Խառատյան Ա., Արևմտահայ պարբերական մամուլը և գրաքննությունն Օսմանյան Թուրքիայում (1857-1908), Երևան, 1989, էջ 8):

¹³⁴ Նույն տեղում, էջ 264:

¹³⁵ ”المقطم” 1890, 17 . 09
¹³⁶ ”الهلال” 1916, السنة الثانية، ص. 330.

նրանց մամուլը ճնշելով, և սկսեցին խափանվել բազմաթիվ թերթեր»¹³⁷: «Թվում է՝ սուլթանը մտադիր է կայսրության ողջ մամուլը վերացնել», - գրում էր ամսագիրը¹³⁸:

Ասվաձն առավել դիպուկ արձանագրել է նաև արաբական լրագրության պատմության թերևս ամենանշանավոր հեղինակը՝ Ֆիլիպ Դի Տարազին՝ Աբդուլ Համիդի նկարը վերնագրելով այսպես. «Օսմանյան սուլթան Աբդուլ Համիդ Երկրորդը՝ լրագրության և լրագրողների մեծագույն թշնամին»¹³⁹:

Հետաքրքրական են թերթում տեղ գտած հետևյալ մանրամասները գրաքննական արգելքների վերաբերյալ.

Գրաքննության կապանքների մեջ մամուլին հրահանգված էր տպագրելու լուրեր, որոնք առնչվում էին սուլթանի առողջությանը, պետական գանձարանի ֆինանսական վիճակին, ինչպես և կայսրության տնտեսությանն ու արտադրությանը:

Արգելվում էր բառերի և տողերի արանքում շատ տեղ բաց թողնել, քանի որ դա մտածելու տեղիք կտար ընթերցողին՝ նրա միտքը պղտորելով:

Արգելվում էր «Հայաստան» անվանումը պարունակող պատմական կամ աշխարհագրական բնույթի տեղեկատվություն տպագրելը¹⁴⁰:

Ամսագիրը հավաստում է, որ հակառակ այն լուրերի, թե այդ կանոնները կառավարությունը պաշտոնապես չի հրապարակել, անկասկած է, որ դրանք ուժի մեջ են եղել, քանի որ ամսագրի նկատմամբ նույնպես դրանք կիրառվել են՝ Սիրիա կամ կայսրության այլ մասեր այն առաքելու ընթացքում:

Պարբերականն ընդգծում է նաև այն հանգամանքը, որ մաքթուֆիների (տպագրական վերահսկիչների) դեմ գործելը կամ նրանց հետ համագործակցելու ուղիներ փնտրելն անիմաստ էր: Անհնար էր նաև կողմնորոշվել արգելվող բառերի հարցում, քանի որ արգելքն ընդգրկում էր ամենատարբեր ոլորտի բառեր, ինչպես թագավորների կամ սուլթանների անուններ ու նկարներ տպագրելը, այնպիսի գործիքների կամ հասկացությունների անվանումներ, որոնք կարող էին

¹³⁷ Նույն տեղում:

¹³⁸ Նույն տեղում:

¹³⁹ دي طرازي، الجزء الثاني، ص. 2.

¹⁴⁰ 1879 թ. տպագրական տեսչությունը օսմանյան կառավարության հրամանով արդեն օգտագործվում էր «Քուրդիստան» անվանումը՝ «Հայաստանի» փոխարեն՝ անգլիական կառավարության լիակատար համամտության պայմաններում (Խառատյան Ա., նշվ. աշխ., էջ 211):

հեղափոխական մտքեր ներշնչել (վառող, հրացան, ազատություն, անկախություն...և այլն): Արգելված բառերի ցանկը որոշակի չէր և մաքթուբջիի կողմից կարող էր ջնջվել սև թանաքով կամ կտրվել մի այնպիսի բառ կամ պատկեր, որի գործածումը միևնույն թերթի նախորդ համարում թույլ էր տրվել: Սա վկայում էր գրատպության վերահսկողության սահմանման տարերային, և, որ կարևոր է՝ կամայական բնույթի մասին:

Չնայած այդ ամենին, «նոր օսմանները» կարողանում էին իրենց գաղափարները հրապարակել Փարիզում, Եգիպտոսում և այլ հեռավոր վայրերում՝ արաբերեն, թուրքերեն կամ ֆրանսերեն լեզուներով իրենց մամուլում և դրանք ուղարկում էին օսմանյան Թուրքիայում իրենց համախոհներին՝ արտասահմանյան փոստի կամ իրենց գաղտնի ներկայացուցիչների միջոցով¹⁴¹:

1890-ականներին «Ալ-Մուկատտամ»-ի էջերում կարդում ենք, որ «սուլթանը հրամայել է մարդկանց միտքը չպղտորելու և չհուզելու համար հայերին արգելել աղոթքի ժամանակ այն սրբերի անունները հիշատակել, որոնք առնչություն ունեն քաղաքականության հետ, ինչպիսիք են նրանց որոշ արքաներն և զորավարները»¹⁴²: Այս միջոցներով էր նաև ճնշվում հայ ազգային գիտակցության վերելքը¹⁴³:

Մարդու մտավոր կյանքի բոլոր ասպարեզներն իր մեջ խեղդող աբդուլհամիդյան բռնապետական վարչակարգի վառ դրսևորումներից էր երկրում մեծ տարածում գտած լրտեսական համակարգը¹⁴⁴: Լրտեսների մի ողջ բանակ էր պատրաստել կասկածամիտ սուլթանը, որոնք նույնիսկ իրար էին լրտեսում: Պետք է հիշենք նաև, որ լրտեսների շարքում, ցավոք, բազմաթիվ հայեր են եղել, ինչը արձանագրել է նաև արաբական մամուլը: «Արմենիայի» հայտնած տեղեկությանը, թե «Գաղտնի լրեսները շատ շատացել են, թե հայ, թե թուրք», լրացնելու է գալիս «Ալ-Հիլալը», որը անդրադառնալով

¹⁴¹ “الهلال”, նույն տեղում:

¹⁴² “المقطم”, 1890, 13. 08:

¹⁴³ Այս մասին տե՛ս նաև՝ Գասպարյան Ռ., Կիլիկիահայության կոտորածները և ինքնապաշտպանական մարտերը 1894-1896 թթ., Հոդվածների և հրապարակումների ժողովածու, Երևան, 2013, էջ 213-237:

¹⁴⁴ Տե՛ս նաև՝ Բայբուրդյան Վ., Օսմանյան կայսրության պատմություն, Երևան, 2011, էջ 559-563:

կայսրության լրտեսական համակարգին՝ նշում է, որ նրացից շատերը նաև հայեր էին¹⁴⁵:

Հայ հոգևորականությունը վերածվել էր օսմանյան կառավարության նշանակետի: Հոգևորականների նկատմամբ հալածանքը դարձել էր օսմանյան կառավարության կողմից արևմտահայությանը սաստող լծակներից մեկը: Իրար էին հաջորդում այս կամ այն հոգևորականին զբաղեցրած պաշտոնից ազատելու, կամ աքսորելու վերաբերյալ հրամանները: Շատ դեպքերում նրանք ենթակա էին ձերբակալության¹⁴⁶:

1880 թ. մի հրապարակման մեջ, «Փոքր Ասիա» խորագրի տակ «Ալ-Ահրամ»-ը ներկայացնում է Կ. Պոլսի Հայոց պատրիարքի՝ «Թայմսում» տպագրված նամակի արաբերեն թարգմանությունը: Դիմելով Բ.Դռանը իր ժողովրդի նկատմամբ իրականացվող բռնությունները դադարեցնելու, նրանց կրած վնասները փոխհատուցելու խնդրանքով՝ նա հայտնել էր, որ հակառակ պարագայում պատրաստ է հրաժարվել իր աթոռից»¹⁴⁷:

Պատրիարքի կարծիքով Եվրոպան սխալվել էր՝ հաստատելով Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածը և այն համարելով հայ ժողովրդին բժշկելու սպեղանի: Իրականում հայ ժողովրդի վիճակը չի փոխվել, և բռնությունը շարունակում է սփռված մնալ Հայաստանում, իսկ կառավարական պաշտոնյաները անտարբեր են քրիստոնյաների դեմ իրականացվող բռնությունների նկատմամբ:

Նամակում նա Ձեյթունի իրադարձությունների օրինակով¹⁴⁸ մատնանշում էր հայերի հանդեպ կիրառվող հարկային դաժան քաղաքականությունը, որի պատճառով նրանք անգամ սպանվել էին, այն դեպքում, երբ սոսկ դժգոհություն էին արտահայտել ուժերից վեր հարկերից: Ապա ավելացնում է, որ ինքը խնդիրը մանրամասն ներկայացրել է մեծ տերությունների ներկայացուցիչներին՝ հույս ունենալով, թե

¹⁴⁵ ”الجلال“ , նույն տեղում, «Արմենիա», Մարսել, 1889, թիվ 22:

¹⁴⁶ Տե՛ս Արևմտյան Հայաստանում հալածուած հոգևորականների ցուցակը, Վաւերագրեր հայ եկեղեցու պատմության (1873-1910 թթ.), գիրք Ը, կազմող՝ Ս. Ա. Բէիբուղեան, Եր., 2001, էջ 115:

¹⁴⁷ Թերթն ակնհայտորեն ի նկատի ուներ պատրիարքի հրաժարականներին ցուցաբերված վերաբերմունքն Ազգային ժողովի նիստերի ընթացքում, քանի որ պատրիարքն ինքը, որպես հրաժարվելու պատճառ, նշում էր վատառողջությունը, սա երևում է մասնավորապես Խառն ժողովոյ պատգամաւորութեան 1879 թ. Հունվարի 18-ի տեղեկագրում տե՛ս Ատենագրութիւնը Ազգային ժողովոյ, Կ.Պոլիս, 1878-1879, էջ 344-347:

¹⁴⁸ Այս մասին տե՛ս Աղասի, Ձեյթուն եւ իր շրջականները, Պէյրութ, 1968, էջ 89-109:

կսեղմեն մեկնված ձեռքը և կօգնեն պայմանագրի 61-րդ հոդվածը իրականացնելու խնդրում, սակայն արդյունքի չի հասել: «Իսկ հայ ժողովուրդը անհամբերությամբ սպասում է իր կառավարության և անգլիական կառավարության խոստացած բարեփոխումների իրականացմանը»¹⁴⁹, - նշել էր պատրիարքը:

«Հայերը» հոդվածում կարդում ենք. Կ.Պոլսի թերթերը հայտնում են, որ մայրաքաղաքի հայերը նիստ են գումարել պատրիարքի գլխավորությամբ: Պատրիարքը դրվատել է ռուսներին՝ ասելով, որ նրանք մտահոգված են հայերի վիճակի բարելավմամբ, իսկ անգլիացիները շատ խոսեցին և խոստացան, սակայն ոչինչ չարեցին:

Իսկ «Հայաստան» հոդվածում թերթն արտատպել է «Թան» թերթի լոնդոնյան թղթակցի ուղարկած տեղեկատվությունն անգլիական թերթերից, այն մասին, որ ռուսական զորքեր են կուտակվել Ղարսում և Արդահանում: Այդ զորքերից վախենալու կարիք չկա, դրանք ռուսական կառավարության կողմից արտակարգ իրավիճակներին նախապատրաստվելու համար են, քանի որ այդպիսի իրավիճակ կարող է այժմ լինել Հայաստանում: Դրանց պատճառով անգլիական կառավարությունը զգաստացել է և որոշել ավելացնել ճնշումները, 1878 թ. հուլիսի 4-ի պայմանագրի համաձայն, բարենորոգումներն իրականացնելու համար՝ գիտակցելով հայ ազգի նկատմամբ իր վրա վերցրած պատասխանատվությունը¹⁵⁰:

Այս տեղեկությունները, ինչպես և թերթի եզրակացությունները հիմնականում համապատասխանում են իրականությանը: 1880-ականներին հայության հայացքը սկսել էր ուղղվել դեպի Ռուսաստան: 1880 թ. Մ. Խրիմյանն առաջին նամակն է ուղարկել ռուսական ցարին, որտեղ նշում էր, որ արևմտահայության կյանքում ոչ մի բարեփոխում չէր կատարվել: Այդ ժամանակ էր, որ սկսել էին լուրեր տարածվել, թե ռուսական զորքերն առաջխաղացման են դիմել և պատրաստվում են անցնել սահմանը:

Այս լուրերին միանգամայն հասկանալի պատճառով արձագանքել է «Ալ-Մուկատտամ»-ը: Փոխանցելով «Դեյլի նյուզի» տեղեկությունը՝ թերթը գրում է.

, 1879.14.08. ”الأهرام”¹⁴⁹

.1880.07 ”الأهرام”¹⁵⁰

«Ռուսական ռազմական նախարարությունը մտահոգված է նոր խնդրով՝ նոր զորքի ստեղծմամբ: Այն պետք է լինի Ասիայում, անկախ Եվրոպայում եղած զորքից, զինվորների քանակը կովկասյան ժողովուրդների հաշվին է շատանալու: Ասիայում ստեղծված բանակը կուղարկվի Ռուսաստանի հարավային սահմաններ»¹⁵¹:

Արևմտյան Հայաստանի տարբեր նահանգներում հայրենասեր հոգևորականներին և մտավորականներին հրահանգներ էին տրվում գործերն արգելելու վերաբերյալ՝ շատ դեպքերում անհեթեթ պատրվակներով: Այդպես. «Ալ-Մուկատտամ»-ի 1889 թ. Վանի դեպքերի մասին պատմող մի հոդվածում նշվում է. «Ջնդեթ փաշան՝ արդարադատության նախարարը, պահանջել է հայերի պատրիարք Աշըգյանից, որ Վանի հոգևոր առաջնորդին հեռացնի պաշտոնից՝ համայնքի նկատմամբ իր պարտականությունները իրականացնելու անկարողության պատրվակով»¹⁵²:

Ն. Վարժապետյանի հրաժարականներին արձագանքել էր «Ալ-Ահրամ»-ը: «Փոքր Ասիա»¹⁵³ հոդվածում մեջբերված Հայոց պատրարքի նամակը հղելով՝ հոդվածագիրն ավելացնում է, որ իրեն հասել են նաև հայ եպիսկոպոսների և հոգևորականների բազմաթիվ այլ նամակներ՝ Հայաստանի տարբեր մասերից և Կիլիկիայից, որոնք նկարագրում են հայ ժողովրդի նկատմամբ գործադրվող բռնությունների մասին՝ հատկապես քրդերի կողմից կատարվող անօրինականությունները շեշտադրելով:

1890 թ. նմանատիպ բովանդակությամբ լրատվություն ենք կարդում «Ալ-Մուկատտամ»-ի էջերում: Թերթը «Լուրեր եվրոպական փոստից»¹⁵⁴ բաժնում «Թանի» թղթակցին հղելով հայտնում է, թե հայերի պատրիարքը նոր դիմում է ներկայացրել կառավարությանը, որում պահանջում է իր հպատակներին պաշտպանել ոտնձգություններից, այլապես ստիպված կլինի հրաժարվել պատրիարքական աթոռից¹⁵⁵: Նույն հոդվածում նշվում էր նաև, որ պետության նախարարները ծանր նիստեր են անցկացնում՝ բանակցությունների սեղանի շուրջ մնալով մինչ առավոտ,

¹⁵¹ ”المقطم” 1890. 27. 08.

¹⁵² ”المقطم” 1889, 15. 03.

¹⁵³ ”الأهرام” 1879, 14. 02.

¹⁵⁴ ”المقطم” 1890, 03. 08.

¹⁵⁵ Տե՛ս Ատենագրությունը Ազգային ժողովոյ, Կ. Պոլիս, 1890, նիստ Գ, էջ 30, նաև՝ նիստ Դ, էջ 43-57:

քանի որ քննարկում են երկրի ամենակարևոր խնդիրները, ինչպիսիք են Կրետեի խնդիրը, Հայկական հարցը և Էրզրումի իրադարձությունը:

Դրան նախորդող համարում ևս անդրադարձ է կատարված այդ խնդիրներին, արտացոլված են նաև 1890-ականներին արևմտահայերի հանդեպ գործադրվող ճնշումների սաստկացումներն ու դրանց զուգահեռ՝ հայերի աճող հակաօսմանյան ընդվզումները՝ արժանանալով որոշակի վերլուծության և գնահատականի:

«Բ. Դուռը և հայերը» հոդվածում, հիշատակելով *հայերի երկրում՝ Էրզրումում*, տեղի ունեցած իրադարձությունները, և ցավով նշելով դրա հետևանքով սպանվածների և վիրավորների առատության մասին, «Ալ-Մուկատտամ»-ը հարկ է համարել մեջբերելու Սայիդ փաշայի կողմից Պետերբուրգում, Բեռլինում, Վիեննայում, Փարիզում և Լոնդոնում Կ. Պոլսի դեսպաններին առաքված բացատրագրի թարգմանությունը, որը հրապարակվել էր նաև «Թան» թերթում: Սայիդ փաշան դեսպաններին պարզաբանում էր, որ արտաքին միջամտությունների ակնկալիքով Էրզրումում տեղի ունեցածը չափազանցված է ներկայացվում:

Ըստ նրա՝ իրականում Էրզրումի տեղական իշխանությունները տեղեկացել էին, որ հայերը զինամթերք են արտադրում իրենց պատկանող եկեղեցում ու դպրոցում և խուզարկություն են նախաձեռնել՝ պատրիարքի տեղակալ Գևորգ Ունուրջյանի և նշված դպրոցի տնօրենի օգնությամբ: Նրանք ոչնչ չեն գտել, իսկ տարածված լուրերը ժխտվել են: Սակայն հայերը հաջորդ օրը իրենց խանութները փակել են և խմբեր կազմելով հարձակումներ են գործել իրենց եղբայր մահմեդականների խանութների վրա և դրանք թալանել: Կառավարությունը ուղարկել է ոստիկանների խումբ՝ թշնամանքի սաստկացումը կանխելու և անվտանգությունն ու խաղաղությունը վերականգնելու նպատակով: Նրանց հասնելուն պես հայերը սկսել են կրակել, ինչի հետևանքով զոհեր և վիրավորներ են եղել¹⁵⁶:

Տեղեկատվությունն ակնհայտորեն սադրիչ բնույթ ուներ, իրականում թուրքական իշխանությունները, որևէ ապացույց չունենալով հանդերձ, նպատակադրվել էին ուժեղ

¹⁵⁶ «المقطم» . 07 . 1890,

հարված հասցնել Կարինում գործող դիմադրական ուժերին, որը և իրականացրեցին՝ զենք փնտրելը պատրվակ դարձնելով¹⁵⁷:

Մեկ այլ հոդվածում, ներկայացված է Գում Գափուի ցույցը: Խոսելով Կ. Պոլսի մայր եկեղեցու բակում տեղի ունեցած հավաքի մասին, «Ալ-Մուկատտամ»-ի թղթակիցը պատմում էր, թե ինչպես էին հիմնականում Մուշից, Վանից, Էրզրումից եկած հայերը հավաքվել եկեղեցու բակում, կարդում էին իրենց պահանջագիրը, բողոքում Մուսա բեյի արարքներից ու պատրիարքից պահանջում այդ մասին հայտնել Բ. Դռանը: Դա չկատարելու դեպքում՝ հրաժարական տալ: «Այդ ամենն ավարտվել էր ոստիկանության միջամտությամբ, արյունահեղությամբ, ձերբակալվել էին 600 հայ, իսկ պատրիարքի հրաժարականի մասին լուրերը դեռ ճշգրիտ չեն» - գրում էր թերթը¹⁵⁸:

Հաջորդող համարում թերթը պարզաբանում է, որ վեճը հայերի և նրանց պատրիարքի միջև առաջացել էր այն պատճառով, որ պատրիարքը չէր համաձայնել փոխանցել հայերի ընթերցած պահանջագիրը սուլթանին: «Այն ամենը, ինչ նրանք պատմում էին իրենց պահանջագրում քրդերի հարստահարությունների, իրենց զենքերը վերցնելու մասին, չափազանցություն էր», - հայտնում էր թերթը: Ըստ թերթի՝ նրանց նպատակն էր եկեղեցուց դուրս հանել պատրիարքին և նրան տանել դեպի Յըլդզ: Երբ այդ ամենը հանգեցրեց բախման, այդ մասին իմացավ նաև սուլթանը և հրամայեց Ջալալ ադ-Դին փաշայի, Ահմադ փաշայի ու ռազմական նախարարի զորքերին ցրել այդ ցույցն ու վերականգնել խաղաղությունը: Սպաներից մեկի տեղակալը, որը տեղյակ էր հայերի ցույց կազմակերպելու մտադրության մասին և չէր ասել, զրկվեց իր պաշտոնից:

Թղթակիցը հավելում է, որ ըստ եվրոպական թերթերի, Կ. Պոլսում արգելվել է այս մասին լուրեր տպագրելը:

Հայկական խնդրի կարևորությունը Օսմանյան կայսրության համար եվրոպական միջամտություն թույլ տալու տեսանկյունից ամենամեծ պատճառներից մեկն է համարվել, որի շահագրգիռ կողմերն Անգլիան և Ռուսաստանն էին: Առաջինն այն

¹⁵⁷ Այս մասին տե՛ս Կոստանդյան Է., Գում Գափուի ցույցը (100-ամյակի առթիվ, Լրաբեր հասարակական գիտությունների 1990, թիվ 8, էջ 67-68, նաև՝ Կիրակոսյան Զ. Ս., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք առաջին, էջ 33-35:

¹⁵⁸ «المقطم» . 1890, 06. 08 .

պատրվակ էր դարձրել՝ միջամտելու երկրի ներքին գործերին՝ պատճառաբանելով, որ ինքը դա պարտավորվել է կատարել ըստ Բեռլինի պայմանագրի, իսկ երկրորդը դեռ զգուշանում էր՝ սահմանափակվելով միմիայն խոսքերով¹⁵⁹:

Տարբեր սադրանքների միջոցով հայ հոգևորականությունից ձերբազատվելու քաղաքականությանը 1890-ականներին արձագանքել է նաև իսլամական «Ալ-Մուայյադ»-ը: Թերթը կրկնում էր օսմանյան տեսակետն այդ հարցում՝ հավաստիացնելով, թե չեն դադարում հայերի դավադիր խորհրդակցությունները «խռովություններ ու խառնաշփոթ հրահրելու համար»¹⁶⁰: Ըստ թերթի՝ կար դավադիր հայերի մի խումբ, որը Կ. Պոլսում է դա կատարում, սակայն ոստիկանությունը նրանց պահում է իր հսկողության տակ: Ոստիկանությունը նույնիսկ շրջապատել է եկեղեցին, որտեղ նրանք Ազգային ժողովի նիստ էին պատրաստվում գումարել և արգելել է այն՝ հայտնելով, որ Բ. Դուռը դժգոհ է հայերի գործունեությունից:

Ինչ վերաբերում է մինչ այժմ ձերբակալվածներին, ապա «նրանց թիվը հասնում է 65-ի՝ բոլորը հոգևորականներ են: Հայտնաբերվել է 30 ռումբ՝ շուկայի մոտ ավերված խանայում, որը տեղադրել էին հայազգի Պատրիկովը¹⁶¹, և նրա համախոհները»:

Թերթում իրադարձությունները բավական խտացրած գույներով են ներկայացված:

Այս մասին գրում էր նաև «Ալ-Մուկատտամ»-ը՝ հենվելով գերմանական թերթերի վրա: Ըստ նրա՝ Կ. Պոլսի հայկական եկեղեցում առաջինը կրակ է բացել ռուսահպատակ մի հայ, որը հավանաբար այնտեղ խռովություն ստեղծելու համար էր ուղարկված: Այս թերթն իր հերթին իրադարձությունները գնահատում էր ելնելով գերմանական դիրքերից և եզրակացնելով, որ դա հեռու է ճշմարիտ լինելուց և հրահրվում է ռուս-գերմանական հակասությունների հետնախորքի վրա: Նաև ավելացնելով, որ ըստ ուրիշ թերթերի, հիշյալ հայը պահանջում էր Մուսա բեյին պատժել, քանի որ վերջինը սպանել էր իր բազմաթիվ հարազատներին: Թերթը խոսքն ավարտում է այն համոզմունքով, որ այդ տեղեկությունները, ինչպես նաև հայերի՝

¹⁵⁹ المقطّم ” 08. 07. 1890,

¹⁶⁰ المؤيد ” 11.18.1890.

¹⁶¹ Վարդ-Պատրիկյան Հակոբ, Վարդո, Իսաք Արվախ (Տե՛ս Խուդինյան Գ., Հայ Դաշնակցության քննական պատմություն, ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը, Երևան, 2006, էջ 200, 324, 347):

Ռուսաստանին միանալու կոչերի մասին լուրերը չեն համապատասխանում իրականությանը, քանի որ սուլթանը հայերի համար ի վիճակի է իրականացնել բարփոխումներ: Իսկ սուլթանին գրություն հանձնելու հայերի ցանկությունը ապացույցն է նրանց վստահության և հավատարմության¹⁶²:

Արևմտյան Հայաստանի դրության և արևմտահայերի վերաբերյալ Եգիպտոսի արաբալեզու պարբերականներում այսպիսի հրապարակումների առկայությունը բացատրվում է նրանով, որ ինչպես նշված ժամանակահատվածի միջազգային մամուլը, այնպես էլ Եգիպտոսի արաբալեզու պարբերականները լրջորեն հետևել են Արևմտյան Հայաստանում կատարվող իրադարձություններին և ըստ այդմ դրսևորել սեփական վերաբերմունքը: Այդ հարցում խնդրո առարկա պարբերականները հիմնականում հենվել են համաշխարհային մամուլի էջերում տեղ գտած կամ սեփական թղթակիցների հաղորդած տեղեկատվության վրա:

Մեր կողմից քննության առարկա դարձած Եգիպտոսի արաբալեզու պարբերականների հրապարակումների բովանդակությունը համադրելով հայ և օտարալեզու պարբերականներում լույս տեսած, ինչպես նաև ժամանակի եվրոպացի, ամերիկացի միսիոներների, քաղաքական գործիչների վկայությունների հետ, կարելի է փաստել հետևյալը.

Եգիպտոսի արաբալեզու մամուլում բարձր է գնահատվել հայ ժողովուրդը: Հատկապես ընդգծվել է Օսմանյան կայսրության մյուս ժողովուրդների կողքին նրա քաղաքակրթական բարձր մակարդակը: Արտացոլված են օսմանյան կառավարության հայաջինջ քաղաքականությունը բնորոշող քայլերը: Մասնավորապես՝ դաժան հարկահանությունը, հալածանքները հայ մտավորականների և հոգևորականների նկատմամբ, օսմանահպատակ քրդերի ու հայերի միջև թշնամանք սերմանելու, հայ ժողովրդի թվաքանակը տարբեր մեթոդներով նվազեցնելու միտումները:

Օսմանյան կայսրության կողմից Արևմտյան Հայաստանում և կայսրության հայաբնակ տարածքներում ստեղծված իրավիճակը ընկալվել և ներկայացվել է առավելապես իրականությանը համահունչ հրապարակումներով: Լրատվական

¹⁶² “المؤيد”, նույն տեղում:

պարբերականներից բացառություն է կազմում, թերևս, իսլամական ուղղվածության «Ալ-Մուայյադ»-ը, որն իր գաղափարական ուղղվածությանը հավատարիմ, որոշ կանխակալ վերաբերմունքով է մոտեցել կայսրության քրիստոնյա բնակչությանը, այդ թվում՝ նաև հայերին առնչվող խնդիրներին:

Արևմտահայությունը և Արևմտյան Հայաստանի դրությունը ոչ միայն ամենօրյա լրահոսի նյութ են հանդիսացել, այլ ներկայացվել ծանրակշիռ գիտական պարբերականների՝ ժամանակի առաջնային հիմնախնդիրներին նվիրված հոդվածների շարքում:

Վերոնշյալը նպաստել է, որ եգիպտական հասարակության ընթերցող շրջանակներն իրազեկվեն և համապատասխան հասարակական կարծիք ձևավորվի Արևմտահայաստանի դրության և արևմտահայության խնդիրների վերաբերյալ:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ.

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ 1894-1896 ԹԹ. ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԵՎ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԴՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ

2.1. 1894-1896 թթ. կոտորածների քաղաքականության գնահատականը

Տերությունների թողտվության պայմաններում օսմանյան կառավարությունը հանգեց 1894-1896 թթ. հայերի կոտորածների իրականացմանն Արևմտյան Հայաստանում, Կ. Պոլսում և կայսրության այլ հայաբնակ վայրերում: Դրանք լայնորեն լուսաբանվել են համաշխարհային մամուլում: Այս մասին պատկառելի քանակության նյութ կա նաև ժամանակի եգիպտական մամուլում: Հայկական իրադարձությունները մեր ուսումնասիրության առարկա պարբերականների էջերում արտացոլված են թղթակցությունների, օտար և արաբ հայտնի քաղաքական գործիչների ելույթների, միսիոներների նամակների և վերհուշների, ֆրանսիական, ռուսական, գերմանական, ամերիկյան մամուլից արտատպված լուրերի, նաև՝ Բ. Դռան հաղորդած պաշտոնական լրատվության տեսքով:

Հատկանշական է, որ «Արտաքին իրադարձությունների ամփոփում» խորագրի տակ դեռևս 1889 թ. «Ալ-Մուկատտամ»-ը Վանի շրջակա գյուղերում հայերի նկատմամբ իրականացված ոտնձգությունները համարում է Օսմանյան կայսրության ասիական մասի¹⁶³ կարևորագույն իրադարձություն:

Նշված հոդվածում նկարագրվում է ջարդերի ընթացքը, որոնք ուղեկցվել էին գյուղերի հրկիզմամբ և անմարդկային վայրագություններով. «Այրվել են մի քանի հայկական գյուղեր, պատվազրկել են հայ աղջիկներին»¹⁶⁴: Հաջորդ տողերն արդեն խոսում են քրդերի՝ հայերի դեմ սադրելու և նրանց ոչնչացնելու միջոցներից մեկը

¹⁶³ Նկատենք, որ «المقطم»-ը նշված տարածքներն այդպես է կոչում, չնայած, համիդյան ժամանակաշրջանում համաթուրքականության քարոզչության ազդեցությամբ ձևավորվող պետականության գաղափարախոսության հիմքերից մեկի համաձայն, արդեն շրջանառվում էր «թուրքական Անատոլիայի» հայեցակարգը: Ըստ դրա՝ ընդունված «Փոքր Ասիա» եզրույթը փոխարինվում էր «Անատոլիա» բառով և ներկայացվում որպես բացառապես օսմանյան թուրքերին պատկանող թուրքական հայրենիքի մի կարևորագույն տարածաշրջան: Մի շարք այլ արաբերեն ազդեցիկ պարբերականներ, գիտակցաբար կամ անգիտանալով, կրկնում էին շրջանառվող թուրքական տեսակետը:

¹⁶⁴ «المقطم» 15. 05. 1890.

դարձնելու սուլթանական մտահղացման մասին. կատարվածի պատճառն, ըստ պարբերականի, քրդերի թշնամական վերաբերմունքն է եղել հայերի նկատմամբ: Դրանից հետո հայերի շրջանում հուզումներ են առաջացել, նրանք բողոք են ներկայացրել Բ.Դռանը՝ հայտնելով, թե կմիանան Ռուսաստանին, եթե չապահովվի իրենց պաշտպանությունը քրդերից: Արդյունքում կառավարությունը նրանց նախազգուշացրել է, ձերբակալել խռովարարներին և ոստիկաններ ուղարկել՝ խուզարկելու Վանի շրջակայքում գտնվող բնակավայրերն ու եկեղեցիները: Լուրեր են պտտվել նաև այն մասին, որ, իբր, քրդերը հատուցել են իրենց կողմից հայերին պատճառած նյութական վնասը¹⁶⁵:

Մեկ այլ հոդվածում ևս պարբերականն Օսմանյան կայսրության գլխավոր ներքին հիմնախնդիրները քննելով, Կրետեի ապստամբություններին զուգահեռ կարևորում է քրդերի հարձակումները հայերի դեմ Վանի շրջակայքում, հայերին սպանելը, թալանելն ու այրելը, հայերի ներկայացրած բողոքն այդ մասին ու հարցը տերությունների խորհրդարաններում բարձրացնելը¹⁶⁶:

Հիմնվելով եվրոպական տեղեկատվական աղբյուրների հաղորդումների վրա՝ պարբերականը հայտնում է, որ Ռուսաստանը սկսել է պաշտոնապես միջամտել հիմնախնդրին և Բ. Դռանը հիշեցրել է Բեռլինի վեհաժողովի համապատասխան վճռի մասին: Իսկ Մեծ Բրիտանիայի դեսպանատունը Կ. Պոլսում սկսել է հավաքել քրդերի և հայերի միջև տեղի ունեցած բախումներին վերաբերող բոլոր հնարավոր նյութերը, այն դեպքում, երբ բրիտանական խորհրդարանը մերժել էր միջամտել Հայկական խնդրին՝ ընդունելով, որ Բ. Դռուն արդարացի է և իր հպատակների նկատմամբ միանգամայն հոգատար վերաբերմունք է որդեգրել¹⁶⁷:

«Ալ-Հիլալ»-ը հետագայում, ամբողջացնելով այդ իրադարձությունները, ամփոփիչ գնահատական է տվել՝ փաստելով. «1889-ին երևացին հայկական կոտորածների նախանշանները, որոնց մասին լուրերը հասան անգլիացի ժողովրդին՝ առաջացնելով մեծ բողոքի ալիք: Անգլիան պահանջեց Թուրքիայից վերջ տալ բռնություններին, իսկ

¹⁶⁵ Նույն տեղում:

¹⁶⁶ Նույն տեղում:

¹⁶⁷ Նույն տեղում:

Աբդուլ Համիդը մեղքը բարդեց քրդերի վրա: Հետո սկսեց մտահոգված ձևանալ և հրամայեց ձերբակալել Մուսա Բեկին՝ իրականացնելով նրա դատավարությունը: Անգլիային և մյուս երկրներին թվաց, թե հարցը սկսել է լուծվել»¹⁶⁸:

Հայերի կոտորածների մասին «Ալ-Ահրամ»-ի հրապարակումները հիմնականում աչքի են ընկնում օսմանյան պաշտոնական տեղեկատվությանը չհակասելու միտումով: Այդ է վկայում մասնավորապես թերթում հայերի կոտորածներին առնչվող հիշատակումների սակավությունը՝ ակներևաբար դրանք «չափազանցված» բնորոշելու օսմանյան քարոզչությանը համաքայլ:

Թեև «Հայկական հարց» խորագրի տակ օրաթերթը հայտարարում է, որ հայկական կոտորածներին անդրադառնում է «ճշմարտությանը ծառայելու և հայրենակիցների պատկերացումներն այդ խնդրում հստակեցնելու նպատակով»¹⁶⁹, այնուամենայնիվ, եզրահանգում է. «այն, որ հայկական դեպքերը չափազանցված և ուռճացված են ներկայացվում, կասկած չի հարուցում: Անգլիացիները լուր ուղտ են սարքել՝ ցանկանալով եղելությունն այդպես ներկայացնել իրենց իշխանություններին»¹⁷⁰:

Սա օսմանյան պաշտոնական լրատվության գրեթե բառացի կրկնությունն է, որը հնչեցնում էր «Ալ-Ահրամ»-ը:

Աբդուլհամիդյան սրի առաջին հարվածն ուղղվել էր դեպի Սասուն¹⁷¹:

Բիթլիսի վիլայեթի մեջ մտող Սասուն լեռնագավառում XIX դարի վերջին կար ավելի քան 400 բնակավայր, որոնցից 250-ը հայաբնակ էր՝ շուրջ 50000 բնակչությամբ¹⁷²: Օսմանյան զանգվածային վերաբնակեցման քաղաքականության ընթացքում Սասունի տարածքում անընդհատ ավելանում էր քուրդ տարրը՝ ստեղծելով թալանի, կողոպուտի, թշնամանքի մթնոլորտ, որը սերմանում էր կառավարությունը: Բախումները քրդերի ու հայերի միջև սաստկանում են հատկապես 1878 թ. և դրանից

¹⁶⁸ Նույն տեղում:

¹⁶⁹ Նույն տեղում, 26 դեկտեմբերի 1894:

¹⁷⁰ Նույն տեղում:

¹⁷¹ Սասունի աշխարհագրական, վիճակագրական, իրավական, տնտեսական դրության մասին տե՛ս Ա-Դօ, Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայեթները, Երեւան, 1912, էջ 119- 143:

¹⁷² Հայոց պատմություն, էջ 515:

հետո: 1891 թ. սկսած թուրքական կառավարությունը բացահայտորեն սադրում էր հայ-քրդական ընդհարումները:

Սասունի յուրահատկությունը՝ տարածքային և ժողովրդի բարոյական նկարագրի առումով շեշտադրել են մեծ դժվարություններով այնտեղ հայտնված օտարազգի լրագրողներն ու զբոսաշրջիկները: «Ալ-Ահրամ»-ն իր ընթերցողին Սասունը ներկայացնում է՝ համաձայնելով իսպանացի զբոսաշրջիկ Քսիմինիսի «Հայաստան» հոդվածաշարում Սասունին և նրա բնակիչներին տրված բնորոշմանը: «Սասունի տարածքը, Հայաստանի առավել ըդդիմադիր մասերից է: Այն խիստ խառն է բնակեցված հայերով և քրդերով: Բիթլիսի և Վանի հայերի համեմատությամբ, Սասունի հայերն ավելի են կաղում գրագիտության հարցում և հետամնաց են», -գրում էր հեղինակը¹⁷³:

Սա թեև կոշտ բնութագիր է, սակայն բովանդակային իմաստով այնքան էլ չի հակասում հայ պատմագիտության կողմից տրվող գնահատականին: Լինելով առավել դժվարամատչելի տարածք՝ Սասունը յուրահատուկ բարոյական նկարագիր էր տալիս իր սրտում ապրող հային. «Այս ահավոր սարերի մեջ ապրող ժողովուրդը խիստ առողջ, կարճահասակ, թխադեմ, ճարպիկ, անվախ, չարքաշ լինելով՝ հային տալիս է յուր պարծանքը, առյուծասիրտ սասնիկը, անհամամետ տարբերություն կա սրանց և դաշտեցոց մեջ...ազատ լեռնականը ապրում է և ազատ և պարկեշտ, բայց և՛ տգետ, մի խոսքով, սասունցին բոլորովին տարբերվում է ամեն տեսակով համարյուն հայերից»¹⁷⁴:

Քրդերի հարևանը լինելու բախտին արժանացած լեռնեցի ժողովուրդը վեճերի և բախումների մեջ էր գտնվում քրդական ցեղերի հետ, որոնց պատճառներն առավել հաճախ կառավարության մտադրություններն էին: Գլխավորապես անասնապահությամբ իր գոյությունը պահպանող ժողովուրդն առաջին հերթին զինվոր էր, որ դիմագրավելու էր մի քանի ճակատով իր դեմ կռվող թշնամիներին՝ իր տարածքը պահելու համար: Անընդհատ պայքարում հաղթանակած դուրս գալով՝ սասունցիները աստիճանաբար տարածվել և հիմնել են այն գյուղերը (Սեմալ, Շենիկ, Գելիեգուզան), որոնք էլ դարձել էին հայ ազգային-ազատագրական պայքարի ուժեղ կենտրոնները:

¹⁷³ "الأهرام", 1895, 19.01.

¹⁷⁴ Սեյլան, Սասուն, Երևան, 1990, էջ 31-32:

«Հայաստան» հոդվածաշարի մեկ այլ հատվածում, մեջբերելով «Պալ մալ Գազեթից», բրիտանական հայտնի պարբերականում սուլթանի և դրա խմբագրի միջև տեղի ունեցած հարցազրույցից՝ «Ալ-Ահրամը» կրկին խոսում է Սասունի մասին: Խմբագիրը սուլթանից Հայաստան մեկնելու թույլտվություն էր ստացել՝ անձնական քննություն կատարելու պատճառաբանությամբ: Նրանց զրույցից թերթն ընդգծում է հետևյալը. «...դա (Սասունը-Ն.Ե.) վայրի ու դժվարամատչելի մի տարածք է՝ բնակեցված գրեթե քոչվորական կյանքով ապրող բնակիչներով»¹⁷⁵:

Օսմանյան կայսրության հետադիմական քաղաքականության արդյունքում ոչ միայն Սասունը, այլ կայսրության՝ մեծ քաղաքներից քիչ թե շատ հեռու գտնվող բնակավայրերը կտրուկ տարբերվում էին իրենց կենսամակարդակով: Բնակչությունը հարկ եղածին չափ կրթված չէր:

Այնուամենայնիվ, 1880-ականներին սկսում են դեպի Սասուն գործուղվել մշակութային գործիչներ՝ այնտեղ դպրոցներ հիմնելու և լուսավորություն տարածելու առաքելությամբ: 1886-ին, մասնավորապես, Խրիմյան Հայրիկի և Գր. Նիկողոսյանի խորհրդով Սասունի Գեղեգուզան գյուղում է հաստատվում Սեյլանը (Արշակ Մատոյան): Նրան այնտեղ հաստատվելու հարցում կառավարությունից ծածուկ օգնում են Մշո, Կարինի, Տրապիզոնի առաջնորդները: Նրա հետ այնտեղ են մեկնում նաև մի շարք այլ լուսավորիչներ: Նշելով, որ իրենց միակ նպատակը կրթական է եղել, Սեյլանը գրում է, որ կրթական գործը արագորեն նվաճում է լեռնական սասունցիների սերն ու հարգանքը: Շուտով այնտեղ հայտնվում են նաև լրագրեր: Նոր տիպի ուսումնարաններ են բացվում Սասունի մի շարք այլ գյուղերում¹⁷⁶:

«Արմինիա» հոդվածում օրաթերթը հրապարակել է հայերի կոտորածների վերաբերյալ նույն Քսիմինիսի հայտնած կարծիքը: 1894 թ. մարտից մինչև նոյեմբեր ամիսները Հայաստանում գտնվելու ընթացքում զբոսաշրջիկը հանդիպել է «Ռոյթեր» գործակալության թղթակիցներից մեկին ու պատմել, որ ինքը հայկական կոտորածների ականատես է, իր տեսած իրականությունը տարբեր է բրիտանական թերթերում արտացոլվածից, և բացահայտ սուտ է օսմանյան զինվորներին վերագրել

¹⁷⁵ الأهرام، 27.05، 1895.

¹⁷⁶ Սեյլան, նշվ. աշխ., էջ 15-116;

բոնությունների կատարումը: Պարզապես, հայերի և քրդերի միջև ծագած վեճը սովորական դարձած վիճաբանության սահմաններից դուրս է եկել: Հայ Հեղափոխական կուսակցությունը (Հնչակյաններ-Ն.Ե.) փորձել է այն առիթ դարձնել՝ իր նպատակներին հասնելու համար, իսկ կանոնավոր զորքը միջամտել է՝ վերահաստատելու խաղաղությունն ու անվտանգությունը:

Զբոսաշրջիկը նաև առավել մանրամասն տեղեկություններ է հաղորդել. ըստ նրա՝ բոնությունները տեղի են ունեցել օգոստոսի կեսերին, երբ երեք հայկական գյուղերի բնակիչներ միավորվել են՝ քրդերի վրա հարձակվելու և իրենցից գողացված անասունները հետ վերցնելու համար: Այդ ընթացքում երկու կողմերից սպանվել են 23 հոգի, մի քանի օր անց քրդերը կրկնել են հարձակումը՝ հայերից 50 հոգի սպանելով: Այնուհետև քաղաքական շարժման անդամները լուրեր են տարածել, թե քրդերը պատրաստվում են իրականացնել մեծ կոտորած, իսկ հայերի մի մեծ բազմություն բոլոր մոտիկ գյուղերից հավաքվել է Սասունին մոտ գտնվող Տավրոսիկի դաշտում: Այդ մասին տեղեկացել է Բիթլիսի վալին ու Կ. Պոլիս գրություն ուղարկել՝ պահանջելով միջոցներ ձեռնարկել: Զեքի փաշան, 12000 զինվոր է տեղափոխել այնտեղ՝ զսպելու քրդերի վրա հարձակման պատրաստված 3000 հայերին, երկու անգամ փոխհրաձգություն է տեղի ունեցել, երկու կողմերից ամեն անգամ սպանվել են 300 հոգի: Որոշ հայեր գերի են ընկել, հետո ազատ արձակվել, այդ թվում՝ Պոյաճյան ազգանունով մի հայ՝ հայտնի որպես Մուրադ: Հոդվածագիրը նշում է նաև, որ նա հայերին դրդել է հեղափոխության՝ համոզելով, թե Անգլիան նախապատրաստում է զորքը՝ նրանց օգնության հասնելու նպատակով¹⁷⁷:

«Ալ-Մուշիր»-ի էջերում, սակայն, ի տարբերություն 1894-1896 թթ. հայկական կոտորածների վերաբերյալ օսմանյան մամուլում գրաքննության ճնշման տակ տպագրվող ապատեղեկատվության¹⁷⁸, միևնույն իրադարձություններն ավելի ճշգրիտ են ներկայացված:

Հայերի կոտորածները հաստատող առաջին վստահելի աղբյուրը թերթը համարում է բրիտանական «Դեյլի թելեգրաֆ» պարբերականին Մուշի թղթակցի

¹⁷⁷ «الأهرام» 19. 01. 1879,

¹⁷⁸ Խառատյան Ա., Օսմանյան գրաքննությունը և արևմտահայ մամուլը, Երևան, 1984, էջ 5-15:

ուղարկած «Հավաստի տեղեկություններ Հայաստանի մասին» զեկուցագիրը, որը նա մեծ դժվարությամբ էր կարողացել ուղարկել Կարսի հեռագրային միջոցներով:

Հեղինակը հայտնում է, որ դա իր առաջին զեկուցագիրն է հայկական իրադարձությունների վերաբերյալ, որը մեծ դժվարությամբ է կարողացել ուղարկել, հաշվի առնելով թուրքական կողմի արգելքները, քանի որ ամեն ինչ արվում էր՝ խոչընդոտելու իրականացվող քննությանը և թաքցնելու ճշմարտությունը՝ նախքան եվրոպական ներկայացուցիչների հանձնաժողովը կժամաներ Սասուն:

Էրզրումի կոտորածները քննելու հանձնաժողովն, ըստ նախնական պայմանավորվածության, պետք է կազմվեր հյուպատոսների մակարդակով, սակայն հետաքննության հետ կապված խնդիրները Բրիտանիայի դեսպանի նստավայրում քննարկելու ընթացքում (13-ը դեկտեմբերի) Ռուսաստանի և ֆրանսիայի դեսպանները պնդում էին, որպեսզի հյուպատոսներն անձամբ չմասնակցեն հանձնաժողովի աշխատանքներին, այլ գործուղեն իրենց ներկայացուցիչներին: Սուլթանական կառավարության հետ համաձայնություն էր ձեռք բերվել, որով տերությունների ներկայացուցիչները իրավունք էին ստանում մասնակցել հանձնաժողովի բոլոր միջոցառումներին, ծանոթանալ անհրաժեշտ նյութերին, նախագահի թույլտվությամբ հարցաքննել ականատեսներին:

Մեծ Բրիտանիայի ջանքերն ուղղված էին Սասունի դեպքերի անկողմնակալ հետաքննության կազմակերպմանը, ինչը բխում էր ինչպես թուրքական կառավարության, այնպես էլ կայսրության մահմեդական և քրիստոնյա հպատակների շահերից: Հանձնաժողովի մոտալուտ ժամանման առթիվ իշխանությունները սկսեցին արագորեն վերացնել Սասունի ջարդի հետևանքները, ինչպես նաև հապճեպորեն բնակեցնել Արևմտյան Հայաստանի շրջանները թուրքերով և քրդերով՝ հայ բնակչությունն ամենուրեք որպես փոքրամասնություն ներկայացնելու և տերությունների հնարավոր պահանջը բարենորոգումների իրագործման կամ էլ ինքնավարության վերաբերյալ կանխելու նպատակով: Բացի այդ իշխանություններն ամենուրեք ստեղծում էին «թուրքական գաղտնի պաշտպանության կոմիտեներ»՝ կազմված հիմնականում կառավարական պաշտոնյաներից, որոնց խնդիրն էր հրահրել

հայ բնակչությունն իշխանությունների դեմ և առաջացնել հուզումներ՝ ամբողջ պատասխանատվությունը հայերի վրա բարդելու նպատակով: Արդյունքում թուրք բնակչությունը սկսել էր հավատալ հայերի կողմից նախապատրաստվող շարժման գոյությանը և արդեն պատրաստ էր դրան դիմագրավելուն¹⁷⁹:

«Կառավարության անդամները և հատկապես Զեքի փաշան ջանքեր էին գործադրում թաքցնելու նրա կողմից ժխտվող կոտորածի հետքերը: Հայերին հարկադրում էին վերադառնալ իրենց ավերված բնակավայրերը, որպեսզի դրանք վերականգնեն: Թուրք զինվորներին նույնիսկ հրամայվեց նրանց օգնել Գելիեգուզան, Սեմալ և Շենիկ գյուղերը վերանորոգելու հարցում, այդ ժամանակ, զինվորները փորձեցին դատարկել գյուղապետի տան հետևի փոսը, որը լի էր դիակներով և մարմնի կտրատված մասերով...»¹⁸⁰, - նշում է հոդվածագիրը:

Հեղինակը գրում է, որ հանձնաժողովը գիշերում է Քարաքույրու¹⁸¹ գյուղում: Այնտեղ Գրգոյի¹⁸² մեծ գերդաստանից, որն ուներ 61 անդամ, մնացել էին միայն 9 հոգի¹⁸³, մնացածը սպանվել էին Գելիեգուզանում: Գրգոյի հարազատների պատմածի համաձայն, երբ հրաման է արձակվել հայերին սրի քաշել, նրանք փախել են դեպի Գելիեգուզանի մոտ գտնվող Անդոկ լեռը, թաքնվել այնտեղի քարանձավներում և պաշտպանվել իրեն հրացաններով, հետո եկել են զինվորներն ու հայտնել, որ սուլթանական կառավարությունը կպաշտպանի զենքերն ինքնակամ վայր դնողներին ու թուրքական բանակին ապավինողներին: «Համաձայնեց հայ քահանան՝ 360 հայերի հետ: Թուրք սպան հրամայեց նրանց հաց և ջուր տալ, սակայն գիշերը նրանց

¹⁷⁹ Տե՛ս Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 446-452:

¹⁸⁰ ”المشير” 1895, 22, 04

¹⁸¹ Ալներևաբար, խոսքը Սասունի Քորախոյ գյուղի մասին է, որի մասին հիշատակված է նաև «Մուրճ» պարբերականում տպագրված «Ցուցակ Սասունի աւերած գիւղերի 1894 թ. (արժանահաւատ աղբիւրից)» հոդվածում (տե՛ս «Մուրճ», 1895, թիվ 8, էջ 1554-1555):

¹⁸² Շենիկի տանուտեր Գրգո (Գրիգոր Մոսեսյան):

¹⁸³ Հեղինակը գրեթե նույնությամբ վերարտադրել է Էրզրումի գլխավոր հյուպատոսի կողմից 1895 թ. մարտին դեսպան Նելիդովին ուղարկած զեկուցագրերում պարունակվող Շենիկ գյուղի բնակիչ Խեչոյի և նրա ազգականուհի Աննայի պատմածները՝ Սասունի դեպքերի մասին (Տե՛ս Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, Երևան, 1991, էջ 57-67):

հեռացրին բանակատեղիից, բոլորին սպանեցին, դիակներն ու մարմնի կտրատված մասերը նետեցին փոսը...»¹⁸⁴:

Ողջ մնացած հայերից մի քանիսը մեծ դժվարություններով են կարողանում մտնել ներկայացուցիչների մոտ: Նրանց նստավայրը շրջափակված էր զինվորների շղթայով, որը փակել էր հանձնաժողովին մոտենալու բոլոր հնարավոր ուղիները: Փրկված սասունցիների հետ որպես հանցագործների էին վերաբերվում, իսկ նրանց ապաստան տվող հայերին սպառնում էր բանտը:

Ականատես փրկվածները պատմել են սարսափազդու մանրամասներ՝ Գեղիեգուզան, Սեմալ և Շենիկ գյուղերի կոտորածների մասին: Նրանք իրենց բողոքագրում հաստատում էին, որ ոչ պակաս, քան 263 ընտանիք, կամ 2500 մարդ Խնուսից փախել են Կովկաս՝ խուսափելով բռնություններից¹⁸⁵: Այնուհետև զեկուցագրի հեղինակը ներկայացնում է մի քանի հայերի վկայություններ, որոնք լսելուց հետո «...հանձնախմբի անդամները թեև գրի էին առնում դրանք, սակայն ոչինչ լիազորված չէին կատարելու»¹⁸⁶:

Անդրադառնալով այն փաստին, որ Թուրքիայի հայկական վիլայեթներում քննություն է իրականացնում եվրոպական ներկայացուցիչների հանձնաժողովը¹⁸⁷, պարբերականը խորհուրդ չի տալիս հավատ ընծայել սպասվելիք արդյունքներին, քանի որ «...կենտրոնները թուրքերի հսկողության տակ են, նրանց թույլ են տալիս տեսնել ու խոսել միայն այն բաների մասին, որոնց հետ համամիտ է Թուրքիան»¹⁸⁸:

Հիշենք, որ 1890-ականներին Անգլիան շարունակում էր սպառնալ Աբդուլ Համիդին, թե թույլ կտա Ռուսաստանին գրավելու Արևմտյան Հայաստանը: Սակայն անգլիական կառավարության ձևական բողոքները, սպառնալիքներն ու հանրային

¹⁸⁴ "المشير", 1895, 14. 03.

¹⁸⁵ Բազմաթիվ հոդվածներ լի են ջարդերի և անմարդկային խոշտանգումների ամենավայրագ տե՛սարանների նկարագրություններով: Լրագրողները երբեմն նույնիսկ հրաժարվում են շարադրել դրանք՝ վկայակոչելով լրագրողական էթիկայի պահանջները ("المشير", 1895, 17-ը հունվարի, 25-ը հունվարի, 14-ը փետրվարի, 14-ը մարտի, 17-ը ապրիլի):

¹⁸⁶ Նույն տեղում:

¹⁸⁷ Չնայած, երբ նախնական հետաքննությունների տվյալները լույս տեսան, դրանք սարսափելի էին: Հյուպատոս լորդ Գրեյվիսի 1894 թ. դեկտեմբերի 27-ի հուշագրում նշված էր, որ Սասունի մոտ «32 գյուղեր ավերվել են և 23 օրերի ընթացքում սպանվել են 3000-4000 անձինք» (Տե՛ս Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 449):

¹⁸⁸ "المشير", 1895, 07. 02.

կարծիքի ընդվզումը ի զորու չեղան կանխել հայ բնակչության կոտորածները: Դրանք հասարակայնության շրջանում մեծ բողոք առաջացրեցին, նույնիսկ մեղադրանք Անգլիայի կառավարությանը՝ հայերի ողբերգության նկատմամբ անտարբերության և մեղսակցության մեջ: Ա. Ռոզբերիի լիբերալ կառավարությունը ստիպված էր միանալ եվրոպական տերությունների համատեղ գործողություններին՝ ի պաշտպանություն հայերի՝ Բ. Դոնից պահանջելով ստեղծել հատուկ հանձնաժողով Սասունի կոտորածները հետաքննելու համար: Անգլիական կողմը հրաժարվել էր հանձնաժողով ուղարկելու մտքից՝ Սասունի վալիի և անգլիական ներկայացուցչի առանձնազրույցից հետո: Լոնդոնում բնակվող հայերը դրանով մտահոգված՝ հավաքվել էին Լոնդոնի իրենց ակումբում՝ խնդիրը քննարկելու: Այդտեղ ելույթ էր ունեցել նաև բրիտանական խորհրդարանի անդամ, Լոնդոնի հայերի Միության առաջին նախագահ Ֆ. Սթիվենսոնը, որն իր ցավակցությունն էր հայտնել կատարվածի կապակցությամբ¹⁸⁹:

Սթիվենսոնը դատապարտել է անգլիական արտաքին գերատեսչության համաձայնելը հանձնաժողովում միայն թուրքեր ընդգրկելուն: Նա շեշտել է, որ չնայած այդ ողբերգական իրադարձությունների մասին ապացույցները քիչ են և կցկտուր, սակայն դրանք Եվրոպայի, ընդհանրապես քաղաքակիրթ աշխարհի հանցավոր լուրջության արդյունքն են:

Հավաքվածներին նա ներկայացրել է օսմանահպատակ իր մի ընկերոջ նամակը, որը վստահեցնում էր. «Հայաստանում վերջերս կատարված դեպքերի պատասխանատուն Օսմանյան կառավարությունն է, ես դա ասում եմ, որպես դեպքերին քաջատեղյակ: Հայաստանում այժմ կատարվող իրադարձությունների պատճառը Բ. Դոան նախաձեռնությամբ իր զորքի մեջ բազմաքանակ քրդերի ընդգրկելն ու նրանց զինելն է, այդ գործընթացը դեռևս 4 տարի առաջ էր սկսվել: Դրա ակնհայտ նպատակը հայերի վրա հարձակվելն էր, նրանց վախի մթնոլորտում պահելը և նրանց քանակը նվազեցնելը»¹⁹⁰:

¹⁸⁹ ”المقطم“ 6. 12. 1894,

¹⁹⁰ Նույն տեղում:

Նամակի հեղինակը միանգամայն իրավացի էր, և նրա հետ, ինչպես երևում է, համաձայնել է նաև թերթի խմբագիրը:

Համաշխարհային մամուլում 1895 թ. Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ կատարվող վայրագությունների մասին շրջանառվող տեղեկությունները կցկտուր էին, շատերը կասկածամտորեն էին վերաբերում ոչ միայն զոհերի թվաքանակին, այլև թուրքական կառավարության մասնակցությանն այդ իրադարձություններին: Սակայն, ի վերջո, հրապարակվում է հավաստի պաշտոնական փաստաթուղթը: Դա Կ. Պոլսում վեց տերությունների ներկայացուցիչների կողմից կազմված և 1896 թ. սուլթանական կառավարությանը ներկայացրած պաշտոնական աղյուսակն էր, որը լույս էր տեսել ֆրանսերեն, բրոշյուրի տեսքով, Փարիզում՝ «Martirologe Armenien par Charmetant. Paris. Au bureau des oeuvres d'Orient» վերնագրով: Սպաների և զինվորների ուղղակի մասնակցությունը սպանողներին ու թալանին այստեղ բնորոշվում էր «հյուպատոսների կողմից անառարկելիորեն հաստատված»¹⁹¹: Այս աշխատանքը թարգմանած որպես «Պատմութիւն մարտիրոսութեան Հայոց», Մատթեոս եպ. Իզմիրլեանը 1896 թ. հունիսի 21-ին ուղարկել էր Մկրտիչ Ա կաթողիկոսին՝ տեղեկացնելով նաև որ Հայր Շարմեթանը 5000 ֆրանկ գումար էր ուղարկել հայերին ի նպաստ¹⁹²:

«Ալ-Մուշիր»-ը բացասաբար է ներկայացնում սուլթանի կողմից օտարերկրյա լրագրողների և զբոսաշրջիկների մուտքը երկրի խորքերը՝ հատկապես հայկական վիլայեթներ արգելելը՝ մեջբերելով «Թայմսի» թղթակցի դժգոհությունը. «Ցավոք, մեր լրագրողների բոլոր ջանքերը՝ մտնելու Հայաստան, ձախողվեցին...»¹⁹³:

Այս առիթով թերթը գրում էր, որ եվրոպական դիվանագետների զեկուցագրերը ի վերջո հրապարակվել են ու հաստատում են Արևմտյան Հայաստանում կատարվող ոճրագործությունները, ինչպես նաև համապատասխանում են «Ռոյթեր» լրատվական գործակալության և «Դեյլի նյուզ» պարբերականի տպագրած նյութերին:

¹⁹¹ Братская помощь пострадавшим в Турции армянам, факсимильное воспроизведение издания 1898 года, Ер., 2014, с. XXI.

¹⁹² Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, էջ 108:

¹⁹³ Նույն տեղում:

Նշվում է Սասունի կոտորածներին զոհ գնացածների թիվը (1720) և վկայակոչվում Ջեքի փաշայի զեկուցագիրը՝ հաստատված ռազմական նախարարության կողմից:

Հիշենք, որ այդ նույնն էր նշել նաև «Մշակը», սակայն խոսքն, ակներևաբար, թերթի հիշատակած «վերջին ժամանակին» զոհերի մի փոքր թվին է վերաբերում, քանի որ իրական թիվն այլ աղբյուրներում 10000-ից պակաս չի հիշատակվում¹⁹⁴:

Սասունի կոտորածներին արձագանքում էր նաև «Ալ-Մուկատտամ»-ը: ««Թայմսը» և հայկական դեպքերը»¹⁹⁵ հոդվածում թերթը փաստում է, որ *Հայերի հայրենիքում* թուրքերի ոտնձգությունների մասին տարածված լուրերը ճշմարիտ են, կան բազմաթիվ փաստեր և վկայություններ, որոնք ապացուցում են դրանց իրական լինելը: Հայոց Ազգային ժողովը նույնպես այդ մասին դիմում է ներկայացրել Բ. Դռանը:

Մինչ Կ. Պոլսում հրապարակված կառավարական պաշտոնական զեկուցագրում մեղքը բարդվում էր հայերի վրա և մերժվում կառավարության մասնակցությունն այդ դեպքերին, «Ալ-Մուկատտամ»-ը չէր վարանում շեշտադրելու, որ «տեղեկությունները չափազանցություններ և սուտ չեն: Իրականում Սասունում տեղի են ունեցել բռնություններ, և Բ. Դուռը ինքն է եղել դրանք թելադրողը»¹⁹⁶:

Ըստ հոդվածագրի՝ ոչ պաշտոնական զինյալների մի խումբ գնացել է այդ տարածքի բնակիչներից հարկեր վերցնելու, հետո արդեն Ջեքի փաշայի գլխավորությամբ հասած զորքը խաբեությամբ *պատժել է* հայերին¹⁹⁷:

Ավելորդ չէ հիշել, որ Ջեքի փաշան սուլթանի կողմից պարգևատրվել էր շքանշանով¹⁹⁸: «Ալ-Մուշիր»-ի հավաստիացմամբ, չնայած թուրքական կառավարության հաստատումներին, թե դա հուլիսին էր՝ Սասունի կոտորածներից առաջ, իրականում այն շնորհվել էր հոկտեմբերին. «...և թող ընթերցողն ինքը դատի, թե ինչի դիմաց էր դա տրվել...»¹⁹⁹, - հուշում է թերթը:

Հայերին կոտորելու թուրքական պարտքը լավ իրականացնելու դիմաց օսմանյան կառավարության շնորհած պարգևների մասին է. Բլիսը գրել էր. «Սասունի

¹⁹⁴ St' u Sadik Shahid Bey, p. 13:

¹⁹⁵ ”المقطم” 1894. 13.12.

¹⁹⁶ Նույն տեղում:

¹⁹⁷ Նույն տեղում:

¹⁹⁸ Այս մասին տե՛ս նաև՝ Կիրակոսյան Զ., նշվ. աշխ., էջ 52:

¹⁹⁹ ”المشير” 1895, 17. 01.

կոտորածները բացարձակապես պրովոկացիոն չէին, թուրքական կառավարության կողմից նրանց մասին ներկայացրած տվյալները բացարձակապես անհիմն էին, այն անձինք, որոնք պատասխանատու էին Սասունի կոտորածների խնդրում, սուլթանի կողմից պարգևների և մեծարանքի էին արժանացել»²⁰⁰:

Ջեյթունի 1895 թ. ինքնապաշտպանական մարտերը նույնպես իրենց արձագանքն են գտել եգիպտական մամուլի էջերում²⁰¹: Ջեյթունցիները բացի ինքնապաշտպանական մարտերի դիմելուց, այլ ելք չունեին: Թուրքական իշխանությունները, կանոնավոր զորքերը կրակի աքցանի մեջ էին վերցրել Ջեյթունը, նրա շրջակա գյուղերը: Ապստամբությունը ղեկավարում էին ստեղծված ժամանակավոր կառավարությունը և զինվորական խորհուրդը: 1896 թ. հունվարի 28-ին Ռուսաստանի, Անգլիայի, Ավստրիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի՝ Հալեպում հավատարմագրված հյուպատոսների միջամտությամբ կնքվեց պայմանագիր Ջեյթուն ժամանած փոխհյուպատոսների, թուրքական բանակի և Ջեյթունի ներկայացուցիչների միջև²⁰²: Դրանով ըստ էության ճանաչվում էր զեյթունցիների հաղթանակը և երաշխավորվում նրանց ներքին ինքնավարությունը:

Ջեյթունը մշտապես եղել է հայ ազատագրական ոգու կարևոր խորհրդանիշ, որ ոգևորել է հայ ազգային կուսակցություններին, և պատահական չէր, որ հետագայում՝ 1898 թ., ՀՅԴ 2-րդ ընդհանուր ժողովը, ընտրելով հայ ուժերի կեմտրոնացման և ապստամբության շրջաններ, Կիլիկիան է ընտրում (Լեռնավայր) Տարոն –Սասունի (Բարձրավանդակ) հետ:

«Ջեյթունի հայերը նորացնում են իրենց թշնամանքը»²⁰³ հոդվածում «Ալ-Մուայյադ»-ը, փաստորեն, վերապատմում է իրադարձության օսմանյան մեկնաբանությունը, ըստ որի, Ջեյթուն լեռան հայերը վերադարձել էին իրենց նախկին անհնազանդությանը²⁰⁴: Ջեյթունի հայերը հարձակվել են տեղի զորագնդի վրա, մարտի բռնվել: Զոհերի թիվը չի նշվում, սակայն իրադարձության ապացույց է համարվում

²⁰⁰ Bliss Edwin Munsell, նշվ. աշխ., էջ 479:

²⁰¹ Մանրամասն տե՛ս Աղասի, նշվ. աշխ., էջ 153-187

²⁰² ՀԱԱ, ֆ. 56, ց. 17, գ. 59, թ. 15:

²⁰⁴ Աղասի, նշվ. աշխ., էջ 191-204:

²⁰³ ”المؤيد” , 1896. 16. 07.

կառավարական հրամանը՝ հավաքելու պահեստային զորքերը: Վկայակոչելով հավաստի աղբյուրներ՝ թերթը գրում է. «Ալի փաշային տեղեկացրել են, որ այդ կողմ զենք են տանում: Տեղեկությունը ստուգելու նպատակով կառավարական զինվորների հետ նա գնացել է այնտեղ, արգելել է զենք մտցնել, իսկ հայերը դիմել են զինված դիմադրության: Տեղի բնակիչները հաստատել են, որ հայերն ակնթարթ իսկ չեն տատանվում՝ խռովություն բարձրացնելու հարցում, արագորեն կարողանում են ձեռք բերել կռվելու միջոցներ ու պատրաստվել, նրանք կարողանում են զենքեր ձեռք բերել նույնիսկ ձմռանը»²⁰⁵:

Իր հերթին, «Ալ-Մուշիր»-ն «Ադանայի վիլայեթ» հոդվածում հայտնում էր, որ Ադանայի նահանգում տեղի ունեցած ապստամբության վերաբերյալ լուրերը ճշմարիտ են, մեծ ապստամբություն է տեղի ունեցել Ադանայի վիլայեթի Զեյթուն գավառակում, Հալեպի վիլայեթի Մարաշ վայրում, հավաքվել են 20000-ից ավելի հայեր և տեղի է ունեցել մեծ ընդհարում, որ տևել է գրեթե 6 ժամ, երկու կողմից զոհվել է ավելի քան հազար մարդ: Հայերը գրավել են բերդը և սպանել բեկբաշին, վիրավորվել է Աղասին: Այս հուզումները սկսվել էին Բայասում՝ Իսկանդերունի և Ադանայի միջև գտնվող մի գյուղում: Վալին շտապել է այնտեղ, դրությունը վիլայեթում դարձել է վտանգավոր:

Թերթը շեշտում է, որ Հալեպից նույնպես գրել են, թե Զեյթունում մեծ հուզումներ են սկսվել, վախն է թևածում ամենուր, կառավարությունը զորք է ուղարկել Զեյթուն և Մարաշ²⁰⁶, որտեղ այս շաբաթ մեծ մարտ է տեղի ունեցել, և հայտնաբերվել է 20 արկղ զենք: Այն Սիրիայից ուղարկվել էր Մարաշի հայերին: Կատորած է տեղի ունեցել Իսքենդերունից 3 ժամվա հեռավորության վրա գտնվող Բեյլան քաղաքում:

Հեռագիրն ուղարկողը բողոքում է հյուպատոսներից, որոնք միմիայն անգործության են մատնված, իսկ կառավարական զորքերն ուղարկվել են Զեյթուն, նրանց պահեստազորն է փոխարինում²⁰⁷:

²⁰⁵ Հայերի՝ Կիլիկիա զենք փոխադրելու մասին առավել մանրամասն տե՛ս Վարանդեան Մ., Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Երևան, 1992, էջ 458, Տասնապետեան Հ., Պատմութիւն Հայ Յեղափոխական Շարժման և Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Լիբանան, 2009, էջ 233:

²⁰⁶ Մարաշի, Կեսարիայի, Ադանայի իրադարձությունների վերաբերյալ մանրամասներ տես ՀԱԱ, ֆ. 56, ց.17, գ. 55, թ. 36:

²⁰⁷ «Ֆերիք Մըլթաֆա փաշային Աքքիայէն բերած 40 հազար զինուորները քանի մը մասերու բաժնելով քաղաքին ամէն կողմերը խումբ խումբ ցրուած էին: Մարաշի բնակիչ ամբողջ թուրք ժողովուրդը շրջակայ

«Ալ-Մուշիր»-ի էջերում արձագանքներ է գտել նաև Ուրֆայի կոտորածը²⁰⁸: «Նամակ Հայաստանից» հոդվածում Ուրֆայի մի խումբ հոգևորականների և զինվորների կողմից ուղարկված նամակն է ամփոփված, որը նրանք գրել էին ջարդի նախօրյակին և գաղտնի ուղարկել Այնթապ:

Նրանք տեղեկացնում էին, որ իրենց անխուսափելի մահվան ժամը մոտ է, հայերն ընտրության առջև են՝ սուր կամ իսլամ, ու ելք չունենալով՝ սպասում են իրենց մորթվելուն: Սուլթանը հավանաբար համոզված է, թե հայերն անհնազանդ, ապստամբ ազգ են՝ արժանի շուտափույթ ոչնչացման, սակայն հայը միայն ցանկանում էր հետևել զարգացման ուղուն, նրա միակ մեղքը քաղաքակրթական արժեքներին հետևելն էր, ինչը նաև Աստծո կամքն է: Նամակի հեղինակներն իրենց երախտագիտությունն էին հայտնում մուսուլման հայրենակիցներից շատերին, որոնք կարողացել էին հաղթահարել կրոնական ծայրահեղական մերժելի զգացմունքները և օգնության ձեռք էին մեկնել հայերին՝ տեղի տալով մարդկային զգացմունքներին:

Նրանք չէին մեղադրում նաև իրենց դահիճներին, քանի որ դրանով նրանք սուլթանի հրամանն էին ի կատար ածում՝ որպես զինվոր: Նրանք վստահեցնում էին նաև, որ իրենք ապստամբություն չէին քարոզում, Անգլիան էր, որ սուլթանին սադրում էր, իսկ այժմ հեռվից դիտում է, թե ինչպես են սպանում հայերին, որովհետև քաղաքական շահախնդրությունն այնքան կարևոր, իսկ մի ողջ ժողովրդի բնաջնջելը չնչին մի գործ էր²⁰⁹:

Անգլիացի լորդ Կինրոսի վկայությունը գալիս է լրացնելու նամակի բովանդակությունը: Նա նշում էր, որ թուրք սպան հայերին խոստացել էր պաշտպանել, սակայն ոչ միայն Մայր եկեղեցին էին շրջապատել, այլ կազմակերպես էին սարսափելի մի կոտորած:

Գ. Գալոյանն այս նամակը գնահատել է որպես օրինակ՝ շեշտադրելով, թե այդ ժամանակ դեռ շատ հայեր այն սին կարծիքն ունեին, թե երկրում տեղի ունեցող

զիւղ և նահանգներէն կառավարութեան հրաւիրմամբ եւ դրդմամբ եկած-խոնուած քիւրտ, ապտալ, չէրքէզ մահմետականներ ամէն տե՛սակ զէնքերով զինեալ, սկսած էին հայերուն տունը մտնել» (Մարաշի Տէր Ղեւոնդ քահանայի Յուշերը, Երևան, 2013, էջ 192, տե՛ս նաև՝ Աղասի, նշվ. աշխ., էջ 220:

²⁰⁸ Ուրֆայի կոտորածների մասին մանրամասն տե՛ս Կիրակոսյան Զ., նշվ. աշխ., էջ 58-59, նաև՝ Edwin Pears, Life of Abdul Hamid, Chapter XIV, Estimate of the Character of Abdul Hamid, N.Y., 1917, p. 331-350.

²⁰⁹ ”المشیر” 1896, 18. 02.

սարսափելի անցքերին սուլթանն անտեղյակ էր և փորձում էին հայցել նրա օգնությունը²¹⁰:

Օսմանյան վայրագությունների գնահատականն ամբողջանում է «Ալ-Մուշիր»-ի «Սիրելի հայ ազգ»²¹¹ հոդվածում: Հեղինակը պատմում է, որ սուլթանը կազմել է մի հանձնաժողով, որի մեջ երկուական մուսուլման, կաթոլիկ, առաքելական և ուղղափառ հայեր են ընդգրկված, որպեսզի «...մեկնեն այնտեղ, որտեղ վերջին իրադարձություններն են կատարվել, կոտորածներ են տեղի ունեցել, քարը քարին չի մնացել, կենդանի չի մնացել նույնիսկ մեկը. այսինքն՝ դժոխք, այսինքն՝ Թուրքիա... իսկ ինչո՞վ պետք է զբաղվի հանձնաժողովը.... սուլթանի հրամանով այն պետք է Ֆինանսական հաշվարկներ կատարի, որպեսզի վերակառուցի դպրոցները (սակայն որտե՞ղ են աշակերտները), և հասարակական վայրերը (սակայն կա՞րողյոք մեկը, որ հաճախի այդ վայրերը), որոնք ավերվել են պատերազմի ընթացքում (պատերազմի՝ կանանց, երեխաների և... զինված բանակի միջև)»²¹²:

Պարբերականը բազմաթիվ հոդվածներում է ընդգծել, որ հայերն ապստամբներ չեն, որ հայերին «իբր թե պատժում են» նրանց չգործած հանցանքների համար, և հույս է հայտնում, որ բրիտանական հյուպատոսների զեկուցագրերի հրապարակումից հետո ամեն ինչ պարզ կդառնա և մեծ հարված կհասցվի Թուրքիայի՝ առանց այդ էլ թուլացած քաղաքականությանը. «բրիտանական հեռագրերից հայտնում են, որ շուտով հրապարակվելու են բրիտանական հյուպատոսների զեկուցագրերը հայկական, կոտորածների մասին: Հայտնի է, որ հյուպատոսներն իրենց պաշտոնական զեկուցագրերում չեն ստում, այդ պատճառով էլ Անգլիայի ժողովուրդը և քաղաքական գործիչները պահանջում են դրանց հրապարակումը»²¹³:

Այդ զեկուցագրերն, ըստ թերթի, իրական ապացույց էին դառնալու այն դառը իրողության, «...որ հայկական իրադարձությունները տեղական ապստամբություններ

²¹⁰ Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 472:

²¹² Նույն տեղում:

²¹³ Նույն տեղում, 1896, 29 օգոստոսի:

²¹¹ «المشير» , 1897, 10. 02.

չէին, այլ նախապես ծրագրված կոտորածներ, որոնք մտահոգել, ծնվել էին Յլդըզում, և իրականացվել սուլթանի հավանությամբ ու կամքով» (ընդգծումը՝ Ն.Ե.)²¹⁴:

Հայերի կողմից Օսմանյան բանկի վրա կատարած հարձակումը, ինչպես և դրան հաջորդած Կ. Պոլսի կոտորածները ևս արժանացել են եգիպտական մամուլի ուշադրությանը:

«Ալ-Մուշիր»-ը մեղադրում է եգիպտական որոշ թերթերի, որոնք ժխտում են Կ. Պոլսի հայերի կոտորածներին թուրք զինվորների մասնակցությունը՝ մեջբերելով ամերիկացի մի միսիոների պատմությունը, որն ականատես է եղել թուրք զինվորի կողմից հայի սպանությանը Կ. Պոլսի ջարդերի օրերին²¹⁵: Նա մի հայի գցել էր փողոցում և անընդհատ կրակում էր՝ նրա մեջքին գնդակներով խաչ նկարելով: Միսիոների հարցին թե ինչու է այդպես վարվում, նա պատասխանել է, թե հրացանի գնդակներով խաչ է նկարել այդ գյավուրի մեջքին, որ երբ Քրիստոսը ցանկանա փնտրել նրան, հեշտությամբ գտնի²¹⁶:

Օսմանյան կանոնավոր բանակի մասնակցությունն կոտորածներին ընդգծել է «Ալ-Մուայյադ»-ը՝ թեև նվազ վստահությամբ: 1894-1896 թթ. կոտորածները բնութագրելով որպես «չտեսնված և չլսված իրադարձություններ, որ տեղի ունեցան անցած երկու տարիներին», թերթը գրում էր. «Կայսրության հայաբնակ վայրերում գտնվող օսմանյան բարձրաստիճան սպաները գաղտնի հրամաններ էին տվել զորքին՝ մասնակցել բնակչության կոտորածներին: Սակայն նրանք այդ ժխտում էին, պնդելով, որ իրենք առաջնորդվում են միայն բացահայտ հրամաններով»²¹⁷: Այդ սպաների վկայություններում մասնավորապես շրջանառվում է կառավարական զորքերի հրամանատար Զեքի փաշայի անունը, որը սպանել էր, թաքցրել հայերի դիակները, որպեսզի քննող հանձնաժողովը ջարդերի հետքերը չհայտնաբերեր:

Հոդվածագիրը չի անտեսել նաև անգլիացի գործիչների կողմից թուրքական կողմի վրա տեղացող մեղադրանքներն այն մասին, որ իրենք Բ. Դռան հրամանով

²¹⁴ Նույն տեղում:

²¹⁵ Այս ջարդին զոհ գնացածների թվաքանակը Տեր Ղեւոնդ քահանան 12000 է նշում (տե՛ս Մարաշի Տեր Ղեւոնդ քահանայի յուշերը, կազմ. Վ. Տեր-Ղևոնդյան, Երևան, 2013, էջ 236):

²¹⁶ المشير □, նույն տեղում:

²¹⁷ ”المؤيد“ 1896. 15. 10.

կոտորածների իրականացումն ապացուցող փաստաթղթեր ունեն, որոնք մտադիր են հրապարակել ըստ հարկին²¹⁸:

«Հայերի պատրիարքը պաշտոնաթող է եղել»²¹⁹ վերտառության տակ թերթը անդրադառնում է Իզմիրյան պատրիարքի հրաժարականին: Պարբերականի ներկայացմամբ՝ նա մեծ մասնակցություն է ցուցաբերել *հայկական հեղափոխական* դեպքերին: «Հայերի պատրիարքը պաշտոնաթող է եղել»²²⁰ վերտառության տակ թերթը անդրադառնում է Իզմիրյան պատրիարքի հրաժարականին: Պարբերականի ներկայացմամբ՝ նա մեծ մասնակցություն է ցուցաբերել *հայկական հեղափոխական* դեպքերին և Կ. Պոլսի արյունալի ջարդերին:

Իզմիրյանի հրաժարականի իրական պատճառը պարբերականը համարում է հայերի բողոքագիրը նրա դեմ, որտեղ նրանք դիմելով պատրիարքին՝ իբր թե գրել էին.

«Հարգարժան հայր, ձեզ համար գաղտնիք չէ, որ հայ ազգը հայտնվել է թշվառ վիճակում և իրավիճակը ողջամտորեն քննելով, ցավոք, տեսնում ենք, որ այն ոչնչանալու և հուսահատության եզրին է հայտնվել: Եթե դուք չկարողանաք Բ. Դոան հետ համաձայնության գալ որոշ դեպքերի և հարցերի շուրջ, ապա հայ ազգին ավելի մեծ փորձանքներ կարող եք բերել: Հետևաբար՝ ձեզանից խնդրում ենք, որ գթաք Ձեր ազգին, և միջոցներ ձեռնարկեք՝ հասնելու անհրաժեշտ լուծումների: Խնդրում ենք՝ Բ. դոան հետ համաձայնության գալ մեր շահին համապատասխան տարբերակով, այլապես՝ հրաժարվեք պաշտոնից՝ ճանապարհ տալու նրան, ով կկարողանա ձեռնարկել միջոցներ՝ մեզ փորձանքից հանելու համար»:

Հայտնի է, որ Մատթեոս Իզմիրյանը (1845-1910), որը Կ. Պոլսի Հայոց պատրիարք է ընտրվել 1894 թ. դեկտեմբերին, իր գործունեությունը ծավալել է՝ իր գլխավոր խնդիրը համարելով Արևմտահայաստանում բարենորոգումների իրականացմանը ծառայելը: Նա բազմիցս դիմել է Կ. Պոլսում ՄԵԾ Բրիտանիայի դեսպանին և մտավախություն է հայտնել հայկական կոտորածների վերաբերյալ հետաքննություն իրականացնող հանձնաժողովի աշխատանքների արդյունքների

²¹⁸ Նույն տեղում:

²¹⁹ "المؤيد", 1896.11.08

²²⁰ "المؤيد", 1896.11.08.

շուրջ, փաստարկելով, որ մարզերից ուղարկվող բոլոր նամակներն ու հեռագրերը կանգնեցվում են և չեն հասնում պատրիարքարան: Պատրիարքը նաև դիմել է դեսպանին՝ հայերին օգնելու խնդրանքով, նման խնդրանքով նա դիմել էր նաև ռուսական դեսպանին: Այնինչ անգլիացի դիվանագետը նրան զգուշավոր խորհուրդ էր տվել՝ առժամանակ հրաժարվելու նման պատասխանատու հայտարարություններից²²¹:

Պատրիարքի փոխհարաբերությունները թուրքական իշխանությունների հետ առավել լավ պատկերացնելու համար՝ հիշենք, որ նա սուլթանի ծննդյան օրվա առթիվ հանդիպել էր նրա հետ: Հանդիպման ժամանակ սուլթանը նրան մեղադրել էր, որ նա, լինելով կրոնական մարմնի ղեկավար, պարտավոր է հանդես գալ իշխողների կողմից: պատրիարքն առանց պատասխանելու դուրս է եկել սրահից, իսկ սուլթանը արգելել է նրան սուրճ հյուրասիրել սպասասրահում: դրանից հետո պատրիարքը ծավալուն հուշագիր էր ներկայացրել կառավարությանը՝ հայերի նկատմամբ թուրքական իշխանությունների դաժան վերաբերմունքի մասին ծավալուն փաստերով: Սակայն դրան արդարատության նախարարը պատասխանել էր, որ պատրարքն իրավասու չէ խառնվելու քաղաքական հարցերին:

Իրականությունն այն էր, որ Իզմիրլյանի՝ հրապարակավ ներկայացվող բողոքները կանխելու նպատակով սուլթանը 1895 թ. փորձեց նրան սիրաշահել՝ շքանշանով պարգևատրելով: Սակայն պատրիարքը հրաժարվեց այն ընդունել: Ձախողվեցին նաև սուլթանի կողմից նրան կաշառելու փորձերը: Իսկ 1896 թ. նա հարկադրաբար հրաժարական տվեց՝ արտաքսվելով Երուսաղեմ²²², և, ակնհայտորեն դա ի նկատի ունենալով բրիտանական «Ալ- մուքաթթամ» թերթը, երբ գրում էր. «հայերի նախկին պատրիարք Նորին վեհություն Իզմիրլյանը մերժել է գնալ Երուսաղեմ, այլ մեկնել է Յաֆա՝ շոգենավերից մեկով»²²³: Ինչ վերաբերվում է հայերի կողմից ուղարկված բողոքագրին, ապա հավանաբար դա ուղարկվել էր կառավարության հետ լավ

²²¹ Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 453-455:

²²² Հայ եկեղեցու պատմություն, Բ, Մատթեոս եպս. Իզմիրլեան, Հայրապետություն Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցույ եւ Սիս ու Աղթամար, Ս. Էջմիածին, 2008, էջ 10: Երբ այդ մասին Մեծ Բրիտանիայի հյուպատոսն էր հայտնում Երուսաղեմից, շեշտադրում էր, որ դա կատարվել է ոստիկանների ուղեկցությամբ (Turkey, No. 3, 1897, p. 31):

²²³ «المَقْطَم» 11, սեպտեմբերի, 1896:

փոխհարաբերությունները պահպանելու ջատագովների կողմից՝ ըստ ընդունված սովորության սուլթանի բարեհաճությունը շահելու նպատակով:

Այս նամակի տպագրությունը թերթի կողմից ևս մեկ անգամ ակնհայտ ցույց է տալիս դրա դիրքորոշումը հայկական խնդրի նկատմամբ նյութեր տպագրելիս, քանի որ այսպիսի նամակներ սուլթանին ժամանակին, իբրև թե գրել էին մի քանի հայ թափթփուկներ: «Մուրճը», ըստ ամենայնի, միևնույն գրության մասին խոսելով՝ մասնավորապես, նրանցից հշատակում է «Երևելի հայեր» Նուրյան և Գարակեօզեան Գրիգորին²²⁴:

Առանձնակի քննարկման են արժանի արևմտահայերի կոտորածների մասին «Ալ-Մուայյադ»-ի հրապարակումները: Դրանք պետք է առանձնացնել՝ թերթի կրոնական ուղղվածությունը հաշվի առնելով և այն ակնկալիքով որ օգտակար կլինեն պարզաբանելու իսլամի դերակատարությունը հայերի նկատմամբ տարվող քաղաքականության մեջ: Կայսրության քրիստոնյա հպատակների, մասնավորապես՝ հայերի դրությունը բարելավելու խնդիրն էր վերածվել առանցքային պատճառաբանության՝ քրիստոնյաների հանդեպ ցուցաբերվող քաղաքականության հարցում, որն ընդհուպ բռնի կրոնափոխության հարկադրանքի էր վերածվել:

Տեղին կլինի համաձայնել Վ. Վ. Բարտոլդի տեսակետին, որը քննելով Օսմանյան կառավարության վերաբերմունքն իր կազմում գտնվող այլադավան ժողովուրդների հանդեպ²²⁵, և դրա դրդապատճառները մեկնաբանելով, հանգել է այն եզրակացության, որ «թուրքի բնույթն ինքնին ռազմատենչ էր: Պատերազմելն իրականացվում էր բուն՝

²²⁴«Մուրճ», 1896, թիվ 7-8, էջ 1026, պատրիարք Իզմիրլյանին «Հայկական ակումբի ասպետաց միության» կողմից ևս գրություն է ուղարկվել, որտեղ նրանք բողոքում էին ազգային հեղափոխական կուսակցությունների գործունեությունից, քննադատում հեղափոխական ցույցերը, Իզմիրլյանին պատասխանատու և մասնակից համարում դրանց և մահվան սպառնալիքով պահանջում հրաժարական տալ, Տե՛ս Անձնական դիվան կաթողիկոս Իզմիրյեանի, 1835-1910 թթ., թղթ. 34, վավ. 10-14:

²²⁵ Օսմանյան կառավարության քաղաքականությունը՝ միտված հպատակ ոչ մահմեդական ժողովուրդների մոտ ստրկամտությունը արմատավորելուն՝ հոգեբանական բազմաթիվ գործոնների կիրառությամբ սկիզբ էր առել կայսրության գոյության սկզբից ևեթ: Դրա դրսևորումներից էին որոշ զգեստների, գլխարկի, ոտնամանների, գույների օգտագործման սահմանափակումները, մորուք թողնելու պարտադրանքը, ձի, ուղտ, շքեղ տուն, մեծ հողատարածք ունենալու, խնջույքներ կազմակերպելու, զենք կրելու արգելքները: Նույնիսկ հային թաղելու թույլտվությունը մեծ զիջում էր, ինչը, սակայն, թույլ էր տրվում ի կատար ածել՝ մուսուլմանի շնչած օդը չաղտոտելու նպատակով միայն (տե՛ս Լեոն Վարդան, Խտրականությունը Օսմանեան կայսրութեան մէջ, Հայկազեան Հայագիտական հանդէս, Պեյրուֆ, 1970, էջ 9-46, Ա-Դօ, նշվ. աշխ., էջ 257-324):

կովելու, սպանելու գաղափարն իրագործելու նպատակով, ոչ թե կրոնական մղումներից ելնելով: Թուրքերի նախնիների մեջ ընդունված չափանիշ էր դեռահասներին տղամարդկանց շարքը դասելու համար մինչ այդ «ինչ-որ մեկի գլուխը կտրած կամ արյուն հեղած» լինելը²²⁶: Հետևաբար, իսլամը միայն հարմար գործիք էր, որ առիթ էր ընձեռում արյունահեղության մոլուցքը բավարարելու: Այդպես նաև՝ արդուլիամիդյան զուլումի տարիներին. իսլամի զգացական բաղադրիչները գործադրվում էին քաղաքական նպատակներով՝ թուրքական սպանելու ցանկությանը հագուրդ տալու ճանապարհին:

Բարտոլդն իսլամի պահպանողականությունը ևս, իրավամբ, մոլորություն է համարում, ինչի մեջ արևմտյան շատ քաղաքագետներ և ուսումնասիրողներ տեսնում էին Օսմանյան կայսրության քրիստոնյա բնակչության ծանր դրության պատճառները՝ կարծելով, թե այդ պետությունն ի վիճակի չէ փոխելու կրոնում ամրագրված հինը: Իրականում այն փոփոխվում էր, հարմարեցվում ժամանակի պահանջներին՝ ի վերջո հասցնելով համիսլամականության քարոզչությանը:

Ռ. Ա. Սաֆրաստյանը նշում է, որ համիսլամականության արդուլիամիդյան մեկնաբանության արմատները հասնում են դեռևս XIX դ. կեսերից կայսրության թուրք ազգաբնակչության և իշխող վերնախավի մի հատվածի շրջանում, որպես քաղաքական հոսանք ձևավորված հակաքրիստոնեություն, որը ծնունդն էր թանգիմաթի արևմտամետ բարենորոգումների դեմ ծայր առած կատաղի հակազդեցության: Համիսլամականությունը փորձելով միախառնել հակաքրիստոնեության հետ օսմանյան հետադիմությունն այն օգտագործում էր որպես գաղափարական միջոց՝ պահպանելու կայսրության ամբողջականությունը²²⁷:

Համիսլամականության քարոզչությունն օգտագործվում էր ինչպես հրապարակային, այնպես էլ գաղտնի՝ մոլլաների, շեյխերի միջոցով, որոնք շրջում էին երկրում և թուրքերին ու քրդերին լարում հայերի դեմ: Հայ ազգաբնակչությունը սկսում էր դիտարկվել որպես Օսմանյան կայսրությանը թշնամի քրիստոնյա աշխարհի

²²⁶ Бартольд В. В., Сочинения, т. 6, Турция, ислам, христианство, Москва., 1966, ст. 403-413:

²²⁷ Տե՛ս Սաֆրաստյան Ռ. Ա., Օսմանյան կայսրություն, ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը, Երևան, 2009, էջ 117-137:

ներկայացուցիչ, որը ոչնչացման էր արժանի²²⁸: Հայերի կոտորածների ժամանակ դա մուսուլմանական մոլեռանդությունը վերածել էր ամբոխներին հայերի դեմ հրահրելու կարևոր միջոցներից մեկին: 1915-ին, այդ քարոզչությունն օրենքի ուժ էր ստանալու «Միություն և առաջադիմություն» կոմիտեի «10 պատվիրաններ» անունը կրող փաստաթղթում, որտեղ, ի թիվս մնացած «պատվիրանների», նշվում էր. «համապատասխան և հատուկ միջոցներով գրգռել մահմեդականների կարծիքը հայերի դեմ, այնպիսի վայրերում, ինչպիսիք են Վանը, Էրզրումը, Ադանան...»: Ինչպես նաև «իրականացնել միջոցառումներ՝ մինչև 50 տարեկան բոլոր տղամարդկանց, հոգևորականներին և ուսուցիչներին ոչնչացնելու, թողնելով աղջիկներին և երեխաներին՝ մահմեդականացնելու նպատակով»²²⁹:

Այս առիթով հարկ է ընդգծել, որ հայկական կոտորածների վերաբերյալ եվրոպական մամուլի կարծիքից վախեցած թուրքական կառավարությունը «Հերքումներ» էր ուղարկում ամեն կողմ՝ հայերին ներկայացնելով իբրև դրսից ստացված զենքերով զինված ապստամբներ, որոնք մահմեդականների գյուղերն են ավերում՝ միացած ապստամբ քրդերի հետ, վերջիններին կրկին վերագրելով քավության նոխազի դերակատարումը: Նման լուրեր տպագրել է նաև «Մուրճ»-ը²³⁰, որը դրանք ժխտել է՝ վկայակոչելով «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստիի» կարծիքը, թե «Թուրքաց կառավարության բոլոր հավաստիացումները ոչ մի ուշադրության արժանի չեն և եվրոպական դիպլոմատիան պետք է, որ միջամտի ի պաշտպանություն խաղաղ բնակիչների, որոնք զոհ են դարձած թուրքաց բաշիբոզուկների գազանություններին և բարբարոսություններին»²³¹:

²²⁸ Իսլամի ստեղծման ակունքներում նոր կրոնի բռնի տարածումը բնավ չէր քարոզվում, այդ մասին Մուհամմեդ մարգարեն սկսեց խոսել իր կյանքի վերջին տարիներին միայն, ինչը և պայմանավորել է հետագայում մուսուլմանների վերաբերմունքը բոլոր «անհավատների»՝ նաև՝ «գիրք» ստացածների՝ ընտրյալ ժողովուրդներ համարվող և մյուսների հանդեպ առավելություն ունեցող հայերի և հրեաների(նկատմամբ: Միաժամանակ ամրապնդվեց նաև նրանց դեմ հանուն հավատի սրբազան պատերազմ մղելու՝ «ջիհադի» գաղափարը:

²²⁹ Սաֆրաստյան Ռ. Ա., Հայոց ցեղասպանության պետական ծրագրերը թուրքական երեք փաստաթղթերի համեմատական վերլուծություն, «Վէմ» համահայկական հանդես, Երևան., 2009, թիվ 1(26), հմմտ՝ Սաֆրաստյան Ռ., նշվ. աշխ., էջ 167-172:

²³⁰ «Մուրճ», 1893, թիվ 11, էջ 1617-1678, Գևորգյան Լ., «Մուրճ» ամսագիրը, 1982, էջ 104:

²³¹ «Մուրճ», 1894, թիվ 11-12, էջ 476:

Ի տարբերություն «Մուրճի», սակայն, եգիպտական «Ալ-Մուայյադ»-ը լուռ համաձայնել է իր տպագրած տեղեկություններին՝ չփորձելով պարզել իրերի իսկական դրությունը:

«Ալ-Մուայյադ»-ի հրապարակումները հայկական իրադարձությունների կտրվածքով, առանձնահատուկ են նաև այն տեսանկյունից, որ թերթը կրոնական խնդիրը գնահատում է որպես Եվրոպայի և Օսմանյան կայսրության քաղաքական փոխհարաբերությունների հիմնասյուններից մեկը՝ անտեսելով, որ դա ընդամենը քող էր՝ կոչված սքողելու օսմանյան պետության և եվրոպական տերությունների քաղաքականության իրական հիմքերը՝ մասնավորապես Հայկական հարցում:

Լինելով իսլամական ամբիոն՝ «Ալ-Մուայյադ»-ը մեծ տուրք է տվել հայերի մասին օսմանյան պաշտոնական քարոզչությամբ տարածված սադրանքներին՝ հայերի կողմից մահմեդականների նկատմամբ իբրև թե ահաբեկչական տրամադրվածությունները բացահայտող հերյուրանքներին: Պարբերականի էջերում ժամանակ առ ժամանակ տպագրվել են Կ. Պոլսից ստացված լրատվության միջոցով փոխանցված սադրիչ բնույթի պատմություններ: «Հայերի բռնությունները Կ. Պոլսում» խորագրի տակ շարադրված են մի քանիսն այդ շարքից, ինչպես հետևյալը. «Հայերից մեկը մտել է մզկիթ՝ մահմեդականի հագուստներով և սկսել է լվացվել նախքան աղոթքն սկսելը: Ներկա մահմեդականներից մեկը նկատել է, որ նա ճիշտ չի լվացվում ու իր տարակուսանքն է հայտնել այդ առիթով՝ լվացվողին հարցնելով, թե արդյոք նոր է ընդունել իսլամը...նա պատասխանել է «Հա»: Հոգվածագիրը բացատրում է, որ, այդ բառը հայերի մոտ շատ է տարածված, դրանից պարզ է դարձել, որ նա հայ է: Հարցնողը կանչել է իր ընկերներին, որոնք արագ բռնել են հային ու նրան խուզարկել՝ գրպանում գտնելով վեց ռումբ, որից հետո նրան հանձնել են ոստիկաններին:

Շարունակելով՝ հեղինակը փաստում է, որ դա տարածված սովորական երևույթ է դարձել, այսպիսի հայեր շատ կան: Նրանք ծաղկելով մահմեդականի հագուստներով վատ արարքներ են գործում, որպեսզի նվազեցնեն մահմեդականների հեղինակությունը Եվրոպայի աչքին: Երբեմն հայերը նույնիսկ ոստիկանի

հագուստներով են ծալվում: Լուրեր են պատվում մի հայ վարսավիրի մասին, որը փորձել էր ածելիով իր թուրք հաճախորդին սպանել²³²:

Հեղինակը տեղեկացնում է նաև, թե, իբր, հայերը պատուհաններից ռումբեր են նետել փողոց՝ զինվորների վրա, նրանցից շատերին սպանելով: Իսկ զինվորները հարձակվել են այն տների վրա, որտեղից նետում էին ռումբերը՝ հայերին կենդանի կամ մահացած դուրս բերելով: Ռումբերը նետել են 3 բնակարանից: Առաջինից ինը, երկրորդից չորս, իսկ երրորդից երեք հայի են հանել²³³:

Նման տեղեկությունները և դրանք տարածող թերթը նպաստում էին հակաքրիստոնեական տրամադրությունների տարածմանը կայսրությունում՝ տվյալ դեպքում ձայնակցելով սուլթանի հակահայկական քարոզչությանը:

1894-1896 թթ. և մինչ այդ պարբերաբար իրականացվող կոտորածներն ու բռնությունները հայերի նկատմամբ կանխամտածված, դիտավորյալ կերպով իրականացվել են օսմանյան կառավարության կողմից: Այդ առնչությամբ «Ալ-Մուկատտամ»-ը հստակ դրսևորել է իր վերաբերմունքը՝ շեշտելով. «Օսմանյան կառավարությունը մասնակցել է հայկական կոտորածների դավադրությանը՝ հայերի դեմ կատարվող բռնություններին վերջ տալու և ջարդերն արգելելու փոխարեն»²³⁴: Թերթը, սակայն բավականաչափ հիմքեր չի գտել՝ Օսմանյան կառավարության նման պահվածքն արդարացնելու համար և փաստել է. «Անկախ այն պարագայից, Թուրքիան այդպես վարվել է իր քաղաքական քմահաճույքից, թե թուլությունից դրդված, դա մի պետություն է, որը խոստմնազանց է եվրոպական տերությունների, հատկապես՝ Անգլիայի նկատմամբ»²³⁵:

Մի ուրիշ հոդվածում նույն թերթը շեշտում է. «Բ. Դռան խոստումները Բեռլինի պայմանագրում ոչ այլ ինչ են, քան միայն թանաք թղթի վրա. ոչ Բ. Դուռն իրականացրեց բարեփոխումներ, և ոչ էլ տերությունները հետևեցին դրանց իրականացմանը: Իհարկե, Անգլիան Կիպրոսի պայմանագրով պարտավորված է պաշտպանելու սուլթանական կողմի իրավունքները Հայաստանում և Ասիայի այլ

²³² ”المؤيد“ 1896. 10. 09.

²³³ Նույն տեղում:

²³⁴ ”المقطم“ 1896, 22. 10.

²³⁵ Նույն տեղում:

կողմերում, եթե Ռուսաստանն իր ձեռքը երկարացնի դեպի այդ մասերը, սակայն այդ նույն պայմանագրում պայման կա նաև բարենորոգումների կատարման մասին կայսրության տարածքում՝ քրիստոնյաների վիճակը բարելավելու համար»:

«Բռնություններ հայերի երկրում»²³⁶ վերտառության տակ Ֆրանսիական «Ֆիգարո» թերթի հոդվածն է արտատպված, որտեղ լուսաբանված են բռնություններն ու կոտորածները Բիթլիսի և Մուշի տարածքում, Վանա լճին մոտ, Էրզրումի մոտակայքում, Սև ծովի և Միջագետքի միջև ձգվող լեռներում: Նշվում է, որ անպատվելուց և տանջահար անելուց հետո սպանել են 6000 կանանց: Իսկ մի գյուղի եկեղեցում, հավաքել են կանանց և այրել՝ կրակից փախչողներին հրացանի սպառնալիքով կրկին հետ քշելով դեպի զինվորները: Ավերել են մոտ 20-30 գյուղ և սպանել բոլորին՝ կին, տղամարդ, թե երեխա: Հոդվածագիրն այդ ամենը թվարկելուց հետո կարծում է, որ դրանք կատարողները միմիայն կանոնավոր բանակի զինվորները կարող էին լինել:

Հղվում է նաև «Թան»-ի հոդվածը, որի թղթակիցը Փարիզում Կ. Պոլսի դեսպանության հայտարարությունը հիմք ընդունելով նշել էր Սասուն և Տավրիկ ֆիդայիներին պատժելու և հայերին հանդարտեցնելու նպատակով կանոնավոր զորք ուղարկելու, ինչպես նաև այդ վայրեր թուրքական քննող հանձնաժողով ուղարկելու Բ. Դռան որոշման մասին:

Բոստոնում լույս տեսնող «Քոնգրեգեյշնալիստ» պարբերականում տպագրված ամերիկացի միսիոներ Սայրուս Համլինի հայտնի հոդվածն²³⁷ արձագանք է գտել «Ալ-Ահրամ»-ում: Նա խոսել է հայկական իրադարձությունների ու դրանց պատճառների մասին: Հեղինակը ներկայացրել է իր զրույցը մի հայի հետ՝ նրան բնութագրելով որպես «շատ խելացի մի հայ, որը խոսում է անգլերեն և հայերեն, բացի այդ, հեղափոխության կոչ անող կարևոր գործիչներից մեկն է»²³⁸: Վերջինս հավաստիացրել է նրան, թե իր հայրենակիցները մեծ հույս են կապում օտար տեղություններից մեկի՝ Փոքր Ասիա մուտք

, 1894, 01. 12. ”المقطم”²³⁶

²³⁷ Այս հոդվածը քննարկման է արժանացել բազմաթիվ աշխատություններում՝ հակասական մեկնաբանությունների տեղիք տալով, տպագրվել էր նաև՝ «The New York Times»-ում (տե՛ս Armenians at the Twilight of The Ottoman Era, էջ 223-226):

²³⁸ «Ալ-Ահրամ», նույն տեղում:

գործելու և այնտեղ իշխանություն հաստատելու հետ: Հայերը դիմում են հրահրիչ գործողությունների՝ ստիպելու Եվրոպային միջամտել: Նրա կարծիքով, եթե Եվրոպան հետաքրքրվեց Բուլղարիայի խնդրով ու ազատագրեց այն օսմանյան լծից, պետք է, որ հայերին ևս ականջալուր լինի և օգնության ձեռք մեկնի:

Տեղին է նշել, որ «Նյու Յորք հերալդի» 1894 թ. դեկտեմբերի 20-ի համարում լույս է տեսել Ս. Համլինի բացատրությունը վերոհիշյալ հոդվածի վերաբերյալ²³⁹: Հեղինակը պարզաբանում է, որ ցանկացել է ընդգծել հայերի շրջանում ազատագրական շարժումների աննշան լինելը միայն, քանի որ հայերը, լինելով ազնիվ և աշխատասեր ժողովուրդ, այնուամենայնիվ, չափազանց սակավաթիվ են, որպեսզի ապստամբություն կազմակերպել կարողանան:

Իսլամական «Ալ-Մուայյադ»-ը ևս հիշել է Համլինի այդ նույն հոդվածն ու դրան անդրադարձել իր դեկտեմբերի 22-ի համարում՝ գրեթե նույնությամբ վերապատմելով այն: Կարևոր է, որ դրանից թերթը եզրահանգել է բռնությունների պատճառները հայերի և եվրոպական երկրների կողմից կազմակերպած քաղաքական դավադրությունների մեջ փնտրելու սխալ տեսակետին²⁴⁰: «Ալ-Մուայյադ»-ը որպես տեղեկության աղբյուր նշում էր Ֆրանսիական «Դեբա» օսմանամետ լրագիրը:

1896 թ. ընթացքում մեծ տերությունները այլևս բողոքի հայտագրեր չէին ներկայացնում Բ. Դոանը, այնուամենայնիվ, կառավարությունը շուտով գտնում է նոր առիթ՝ ջարդերը վերսկսելու համար: Այդ ժամանակ Հնչակյան կուսակցությունը պառակտման եզրին էր, իսկ ՀՅ Դաշնակցությունը որդեգրել էր «զուգակցված հարվածների» մարտավարությունը՝ Արևմտյան Հայաստանում կամ Կ. Պոլսում միաժամանակ կամ իրար հաջորդող խոշոր գործողությունների գործելաոճը: ՀՅԴ գործիչների կարծիքով դա հանգեցնելու էր արտաքին միջամտություն ապահովելուն: Այդ ծրագրի գործնական իրագործման փուլը դարձավ 1896 թ. օգոստոսի 14 (26)-ի առավոտյան Բաբկեն Սյունիի գլխավորությամբ 26 հոգուց բաղկացած հայ զինյալների մի խմբի կողմից (հիմնականում ՀՅԴ անդամներ) «Օտոմանյան բանկի» գրավումը: Նրանք սպառնում էին պայթեցնել շենքը, եթե սուլթանը միջոցներ չձեռնարկեր

²³⁹ Տե՛ս Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, Москва, 1896, с. 322-323.

²⁴⁰ “المؤيد” 1894, 22, 12.

Արևմտյան Հայաստանում կոտորածները դադարեցնելու և բարենորոգումներ իրագործելու ուղղությամբ:

Այս իրադարձությունը, ինչպես և դրան հաջորդած ՀՅԴ կողմից տերությունների դեսպանություններին և օսմանյան իշխանություններին ներկայացրած շրջաբերականը բազմակողմ և շարունակական արծարծման առարկա է դարձել «Ալ-Մուկատտամ»-ի ու «Ալ-Ահրամ»-ի էջերում: Տարբեր հրապարակումներում լայնորեն լուսաբանվել է բանկի գրավումը ամենայն մանրամասնությամբ: Անդրադառնալով ՀՅԴ ընտրած գործելաոճին՝ պարբերականը հայտնում է, որ ՀՅԴ-ն Կ. Պոլսում ունի հինգ խումբ, որոնց անդամները չեն ճանաչում մյուս խմբերի անդամներին, և ոչ էլ կենտրոնական խմբավորման անդամներին, որի կողմից հիմնական հրահանգներն են ստանում: Այդ խմբերի թվում հիշատակելով «Խուճապ», «Դրոշակ», «Կայծակ», անունները, պարբերականն ամենանորը վերջին երկուսն է համարում, որոնց կազմում կան 200 հոգի: Խմբերում յուրաքանչյուր անդամ գիտի և կողմ է այն կարծիքին, որ եվրոպական երկրներից լավ բան հարկավոր չէ ակնկալել, և հույսը պետք է դնել սեփական ուժերի վրա և երդվեցին ավերել Օսմանյան կայսրությունը կամ ստիպել Եվրոպային, հակառակ նրա ցանկության, միջամտելու իրենց խնդրին և բարելավել իրենց ազգի վիճակը, և չնահանջել իրենց վճռից եթե նույնիսկ ոչնչացնեն բոլորին մինչև վերջին մարդը²⁴¹: Պարբերականն անդրադառնում է նաև ՀՅԴ –ի կողմից տերությունների դեսպաններին ներկայացրած պահանջներին՝ մասնավորապես նշելով. «Հայ Հեղափոխական Դաշնակցությունը շրջաբերական է ուղարկել դեսպանություններին, այն մասին, որ եթե չիրականացվեն իրենց պահանջած բարեփոխումները, ապա նրանք ավելի հզոր ելույթներ կունենան, քան այդ օրերին տեղի ունենացածն է»²⁴²:

Օտոմանյան բանկի վրա կատարած հարձակումը դարձավ այն առիթը, որն օգտագործվեց կոտորածների ու թալանի մի նոր ալիքի սանձազերծման համար:

«Մեղավորների դատավարությունը Կոստանդնուպոլսում» խորագրի տակ զետեղված է տեղեկություն բոլոր թուրքական դիվանագիտական կառույցներին հասցեագրված օսմանյան կառավարության որոշման մասին, որ Կ. Պոլսի դեպքերին

²⁴¹ Նույն տեղում, 1896, 2 հոկտեմբերի:

²⁴² Նույն տեղում, 1896, 13 սեպտեմբերի:

առնչություն ունեցող ապստամբներն, առանց բացառության, պետք է կրեն իրենց պատիժը: Հրապարակումն ավարտվում է հետաքրքիր մի փաստի շեշտադրմամբ. «Պատժվելու են նաև այն ոստիկանները, որոնք անփութություն են դրսևորել իրենց աշխատանքում և ոչինչ չեն կատարել դեպքերը կանխելու նպատակով»²⁴³:

Այս տողերը գալիս են ևս մեկ անգամ հաստատելու այն²⁴⁴, որ թուրքական իշխանությունները նախապես տեղեկացված լինելով կազմակերպվող հարձակման մասին, չեն միջամտել՝ հակահայկական տրամադրությունները սրելու նպատակով: Ոստիկանների մի մասը, նախապես այդպիսի հրահանգ ստացած լինելով, չի խոչընդոտել հայերին, իսկ իշխանությունն ուղղակիորեն հրամայել էր չմիջամտել անկարգություններին՝ այնուհետև քաղության նոխազ դարձնելով իր իսկ հանցակիցներին:

Կ. Պոլսում իրականացրած ջարդերից հետո տերությունների դեսպանները, ի նշան բողոքի, հրաժարվել էին զարդարել իրենց դեսպանատները Գահակալման տոնի կապակցությամբ՝ հակառակ ընդունված սովորության²⁴⁵: Տերությունների՝ մշտապես ցավակցողի քաղաքական կեցվածքը այդ դեպքում ևս, ինչպես ակնհայտ է, փոփոխության չէր ենթարկվել:

«Ալ-Մուկատտամ»-ը նշված փաստի մասին դրական շեշտադրությամբ է հիշատակում՝ հավելելով, որ դրանից զայրացած սուլթանը Թեվֆիկ փաշայի միջոցով դեսպաններին զգուշացրել է այդ մերժման հնարավոր հետևանքների մասին:

«Լուրեր Եվրոպայի փոստից» հոդվածում, Կ. Պոլսի դեպքերի մասին խոսելով, պարբերականը նշում է, որ օսմանյան կառավարությունը որոշում է կայացրել՝ արգելելու հայերի մուտքը վիլայեթներից մայրաքաղաք: Ինչպես նաև

²⁴³ Նույն տեղում:

²⁴⁴ Ֆրանսիացի պատմաբան Ա. Վանդալի կարծիքով 1896 թ. Օսմանյան բանկի վրա մի խումբ դաշնակցականների կատարելիք հարձակման մասին սուլթանը տեղեկացված լինելով հանդերձ՝ սպասել է, որպեսզի այդ օգտագործի որպես պատրվակ՝ կոտորած կազմակերպելու համար: Հեղինակը սուլթանի այդ քայլը գնահատել է որպես միապետի՝ իր իսկ հպատակների մի սովոր զանգվածի դեմ հյուսած դավադրություն (Տե՛ս Պողոսյան Վ., նշվ. աշխ., էջ 68):

²⁴⁵ Այս իրադարձությունը Ա. Կիրակոսյանը հիշատակում է որպես Աբդուլ Համիդի ծննդյան օր, սակայն «المَقَطَم» և մեր ձեռքի տակ եղած մյուս արաբերեն պարբերականներն այն միաձայն անվանում են Աբդուլ Համիդի «գահակալության տոն» (عيد الجولس Տե՛ս Կիրակոսյան Ա., Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը, Երևան, 1999, էջ 357):

համապատասխան միջոցներ են ձեռնարկվել՝ արգելելու Բուլղարիայում և այլ վայրերում գտնվող դաշնակցական հայերի մուտքը կայսրություն տարածք²⁴⁶:

Հետաքրքիր է, որ պարբերականն անդրադարձել է Հռոմի պապին ուղղված՝ հայ կաթոլիկների պատրիարք Ազարյանի զեկուցագրին առ այն, որ կաթոլիկ հայերը խաղաղ են մնացել, նրանք չեն մասնակցել դիմակայությանը անցյալում և մտադրված չեն դիմակայելու նաև ապագայում, սակայն, չնայած դրան, նրանց ևս թալանել և կոտորել են՝ միմիայն իրենց հայ լինելու պատճառով: Պապը, այդ զեկուցումը կարդալուց հետո կաթոլիկ հայերին օգնություն է ուղարկել, իսկ Ազարյանին հայտնել է իր գոհունակությունը և մաղթել մշտապես հետևել ընտրած ճիշտ ուղուն²⁴⁷:

Հռոմեական եկեղեցու բարեհաճ վերաբերմունքը հայ կաթոլիկ եկեղեցու նկատմամբ չէր քաջալերվում Պոլսո պատրիարքարանի կողմից: Այդպիսի աջակցությունները մասնավորապես Մատթեոս Իզմիրլյանի կողմից բնորոշվել են որպես հայերին պառակտելուն միտված գործողություններ²⁴⁸, որ, ի դեպ, քաղաքական սրացումների այդ պայմաններում փակուղի տանող երակացություն էր:

«Տերությունները և Կ. Պոլսի իրադարձությունները» վերնագրի տակ, պարբերականն իրավացիորեն տարակուսանք է հայտնում այն առնչությամբ, որ տերությունները չխոչընդոտեցին հայկական կոտորածների իրականացմանը: Սակայն, լինելով բրիտանական քաղաքականության ջատագով, այդ փաստը հեղինակը պատճառաբանում է նրանով, որ տերությունները դեմ են Մեծ Բրիտանիայի՝ Արևելքի քրիստոնյաներին աջակցելուն, ինչը, բխելով բրիտանական շահերից, վնասում է եվրոպական այլ տերությունների քաղաքական հաջողություններին: Միաժամանակ նա զարմանքով է նշում, որ Եվրոպան թույլ է տալիս Բրիտանիային իր ձեռքում պահել գլխավոր կռվանը և բոլոր հնարավոր էժան և թանկ ջանքերը գործադրել իր նպատակին հասնելու համար, ինչպես կատարել էր Կրետեի դեպքում²⁴⁹:

Եգիպտոսի արաբալեզու պարբերականների էջերում արևմտահայերի կոտորածներին առնչվող տեղեկատվությունը ուսումնասիրելով՝ պարզ է դառնում, որ

²⁴⁶ Նույն տեղում, 18 սեպտ., 1896:

²⁴⁷ Նույն տեղում, 29 սեպտ., 1896:

²⁴⁸ Առավել մանրամասն տե՛ս Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, էջ 108:

²⁴⁹ Նույն տեղում 24 սեպտ., 1896:

այն լայնորեն լուսաբանվել է մեր ուսումնասիրության առարկա պարբերականներում: Օտարերկրյա դիվանագետների, միսիոներների, սեփական թղթակիցների տեղեկատվությունը, նամակները ներկայացնելուն ու դրանց մեկանաբնությանը զուգահեռ՝ ուրվագծվում է եգիպտական հանրության վերաբերմունքը խնդրի նկատմամբ, որն ամփոփելով, կարելի է շեշտել, որ եգիպտական մամուլի ընթերցողն իրազեկ է դարձել հայերի նկատմամբ կատարվող թուրքական վայրագություններին՝ դրանց մասին լուրերին հասու դառնալով ճշմարիտ կամ օսմանյան պաշտոնական վարկածի՝ «չափազանցված» տարբերակներով: Ընդ որում, ավելի ուշ, երբ խնդիրը քննության է ենթարկվել գիտական ամսագրերի կողմից, իրադարձությունների «չափազանցության» մասին որևէ խոսք անգամ չկա, ավելին, ողջամիտ եզրահանգումներ են կատարվել հայերի կոտորածների իրականացման դրդապատճառների մասին:

Մեր ուսումնասիրած պարբերականները, ի հավելումն ժամանակի այլ պարբերականների, գալիս են լրացնելու արաբ պատմագրության մեջ արմատավորված տեսակետը, որ Հայկական հարցի արդուլիամիդյան լուծումը հայերին իսպառ ոչնչացնելն էր:

Արևմտահայերի զանգվածային կոտորածները վերոհիշյալների կողմից որակվել են որպես «Ջարդեր», «Կոտորածներ», «Վայրագություններ», «Գազանություններ»²⁵⁰: Ընդգծված է դրանց իրականացման դիտավորյալ ու կանխամտածված լինելու հանգամանքը, հայերին օսմանյան բանակի և քրդական ջոկատների ձեռքով բնաջնջելու սուլթանական մտահղացումը: Լույս տեսած հոդվածների մեծ մասում հատկապես կարևոր է կոտորածների իրականացման հարցում թուրքական կառավարության ու բանակի մասնակցության ընդգծումը: Դա հետագայում դրվելու էր կոտորածների բնույթը որպես ցեղասպանության սկիզբ տարբերակելու հիմքում:

²⁵⁰ Պետք է շեշտադրել լիբանանցի պատմաբան-իրավաբան Մուսա Պրենսի կողմից շրջանառության մեջ դրված եզրույթը՝ «արմենոցիդ»՝ հայասպանություն, որը հեղինակը կիրառել էր 1894-1896 թթ. կոտորածները բնութագրելով: Արդուլ Համիդին նա անվանել է «Մեծ ոճրագործ»՝ լրացնելով նրա վաստակած «Կարմիր սուլթան» տիտղոսը (տե՛ս Moussa Prince, Un genocide impuni: l'Armenocide, 1917, 97-103):

Եգիպտական հանրությանը ներկայացվել է հայերի կոտորածների, դրանց ընթացքի, պատճառների ու հետևանքների՝ տվյալ ժամանակահատվածում հնարավոր ամբողջական վերապատկերումը:

2.2. Հայ գաղթականների հիմնախնդիրը

Ուսումնասիրված պարբերականների էջերում արծարծված կարևորագույն խնդիրներից մեկն է հայ գաղթականության խնդիրը:

Հայտնի է, որ հայերի նկատմամբ օսմանյան իշխանությունների իրականացրած զանգվածային կոտորածների հետևանքով Արևմտյան Հայաստանից, Կ. Պոլսից և այլ թուրքական քաղաքներից հայերը հոծ խմբերով գաղթեցին աշխարհի տարբեր երկրներ: Հայության արտագաղթն իրականացնելը համիդյան քաղաքականության երկրորդ անկյունաքարերից էր՝ կոտորածների հետ: Այս երկուսը կազմում էին հայերի ցեղասպանության և հայրենագրկման օսմանյան քաղաքականության հիմքը: Արտագաղթին հնարավոր ծավալներ տալու ճիգը միտված էր փոխելու Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական պատկերը:

1894-96 թթ. կոտորածների ընթացքում հայերը գաղթել են հիմնականում Բուլղարիա, Ալեքսանդրիա, Աթենք և Մարսել: Թշվառ և անօգնական վիճակում հայտնված հայրենագուրկ հայերին օժանդակել են բազմաթիվ բարեգործական ընկերություններ, որոնցից հատկապես մեծ աշխատանք է կատարել Կովկասի հայոց Բարեգործական ընկերությունը: Մեծ թվով հայեր գաղթել են Եգիպտոս. Ալեքսանդրիայում շուրջ 1000 հայ է ապաստան գտել: Հայ գաղթականության կարիքները հոգալու նպատակով հանգանակություններ են կազմակերպվել նաև Եգիպտոսում²⁵¹:

²⁵¹ Արդուլհամիդյան կոտորածների հետևանքով գաղթական դարձած հայերին առնչվող արձագանքները, թվական տվյալները, ինչպես և նրանց օգնելու մասին օտարերկրյա ներակայացուցիչների կոչերը մանրամասն տե՛ս Բրատская помощь пострадавшим в Турции армянам, фаскимильное воспроизведение издания 1898 года, Ер., 2014, նաև՝

Մանուկեան Ա., Հայրենիքի ազատագրութեան բանակին համոզուած զինուորները, Ժընև, 2014, էջ 59-63:

Եգիպտոսը Բուլղարիայից հետո հայ գաղթականների գլխավոր կայանը կարելի է համարել²⁵²:

Չնայած XIX դարի վերջին քառորդին դեպի Եգիպտոս հայերի գաղթի գլխավոր պատճառը համարվում է օսմանյան կառավարության իրագործած կոտորածները (1894-1896 թթ.), անհրաժեշտ է արձանագրել, որ հայերի հոսքը դեպի Եգիպտոս ակտիվացել էր տակավին 1882 թ.՝ այդտեղ բրիտանացիների հաստատվելուց հետո, երբ կայսրության տարբեր մասերից հայերը սկսել են գաղթել դեպի հեռու և մոտ երկրներ՝ հարկերից, բռնություններից ու սովից ազատվելու նպատակով²⁵³:

Մինչ 1890-ական թթ. համիդյան ջարդերը հայերը Եգիպտոս էին տեղափոխվում հիմնականում ընտանիքներով, իսկ կոտորածների ընթացքում գալիս էին միմիայն հոծ խմբերով: Եթե մինչև 1880-ականների ավարտը նրանք գալիս էին սեփական ցանկությամբ (այնտեղ բարենպաստ պայմաններ կային աշխատանք ձեռք բերելու համար), ապա 90-ականներին նրանց տեղափոխությունը բացառապես կրում էր հարկադրված բնույթ: Հիմնվելով Եգիպտոսի հայ կաթոլիկների 1885-1897 թթ. մարդահամարների տվյալների վրա՝ կարելի է պնդել, որ, ի տարբերություն նախկինում Իզմիրից, Պոլսից, Սեբաստիայից և Հաճնից արտագաղթող հայերի, 1880-1890-ականներին Եգիպտոս ներգաղթածների ճնշող մեծամասնությունը եկել է կայսրության այն վայրերից (Պոլիս, Եվրոկիա, Մարզվան, Արաբկիր, Կեսարիա, Տրապիզոն, Ադանա, Բրուսա, Սասուն, Դիարբեքիր, Այնթապ, Թոխատ, Մարաշ և այլն), որտեղ իրականացվել են հայերի զանգվածային կոտորածներ²⁵⁴:

Կ. Պոլսի հայոց պատրիարք Խորեն Աջըգյանը (1888-1894) դժգոհությամբ էր վերաբերվում հայերի արտագաղթին, և եկեղեցու ղեկավարներին մամուլի միջոցով հորդորում էր լուսավորել հայությանը և բացատրել գաղթի բացասական հետևանքները:

²⁵² «Տաճկահայոց կոտորածներեն ետք՝ 1896-1897 թուին, Եգիպտահայ գաղութը շատ ընդարձակուեցաւ, Եգիպտոսը Պոլսկարիայեն ետք գլխաւոր կայանն եղաւ գաղթականներու: Հայ փաշաներու պէյերը, մեծ ընդունելութիւն ցուցանելով, թէ մոռցած չեն հայ ըլլալին, և ասկէ տեղաց նոր գաղթականները, որոնք մեծագոյն մասամբ Պոլսեն էին, եռանդ ու աշխոյժ մտցուցին ազգային կեանքին մէջ, բացին տպարաններ, ընկերութիւններ, թերթեր, դասախոսութիւններ և թատրոն» (տե՛ս Աճառյան Հ., Հայ գաղթականության պատմություն, Երևան, 2002, էջ 460):

²⁵³ Տե՛ս Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ Կեսարիոյ, Բ. Հատոր, Գահիրէ, 1937, էջ 0961-1965:

²⁵⁴ حمد رفعة الامام، الأرمن في مصر في القرن التاسع عشر، مصر القاهرة، 1995، ص. 49-65.

Եգիպտոս ժամանող հայերի մասին պարբերաբար տվյալներ էր հաղորդում «Ալ-Մուկատտամ»-ը: Նրա էջերում այդ առնչությամբ կարդում ենք. «Խեղճ հայերը շարունակում են մեր երկիր ժամանել մեծ խմբերով: Այս երկու օրերի ընթացքում 400 հոգուց ավելի են ժամանել: Նրանք գտնվում են ողբալի և թշվառ վիճակում, չնայած այստեղ հանդիպում են օտարների հոգաճությանը, որոնց անուններն արժանի են երախտագիտությամբ հիշատակվելու»²⁵⁵:

Նշելով, որ Ալեքսանդրիա գաղթած հայերը հիմնականում բարեգործական կազմակերպությունների խնամակալությանն են հանձնվում, պարբերականը հայտնում է Ալեքսանդրիայում հայտնի բարեգործ ոմն Ռուդոլֆի մասին, որն օրական 150 հոգուց ավելի աղքատ հայերի էր կերակրում²⁵⁶:

Խոսքը վերաբերում էր Պիտեր Ռուդոլֆին, որը հայերին օգնելու նպատակով հիմնադրել էր հասարակական կազմակերպություններ, ինչպիսին էր Ռուդոլֆի ապաստարանը, Ալեքսանդրիայում²⁵⁷: Այստեղ նրա կազմակերպությունը մեծ աջակցություն է ցուցաբերել Հայ կանանց միությանը և օգնել է նրանց մետաքսից կարված հագուստներ և այլ կտորե ապրանքներ կարելու, դրանք շուկա դուրս բերելու և վաճառքը կազմակերպելու խնդրում: Դրանից առաջացած գումարները տրվում էին հայերին: Ալեքսանդրիայում գաղթական հայերին աջակցելու նպատակով նաև բարեգործական մշակութային միջոցառումներ էին կազմակերպվում: Չնայած այս ամենին, Ալեքսանդրիան չէր կարող հոգալ ամեն օր այնտեղ ժամանաող հարյուրավոր հայերի կարիքները, և նրանք սկսեցին տեղափոխվել Կահիրե: 1896-ի սեպտեմբերին Կահիրեում էին արդեն 800 հայեր, որոնք սկզբում ապաստանել էին Նեղոսի մոտ գտնվող Մաթոսյան եղբայրների գործարանում: Այնուհետև, ինչպես Ալեքսանդրիայում, այստեղ ևս նրանց խնամակալությունն իր ուսերին վերցրեց եկեղեցին:

Պարբերականը թվական տվյալներ է հաղորդում նաև Կ. Պոլսից դեպի այլ երկրներ մեկնող հայերի մասին. «Ֆրանսիական երկու շոգենավ են ծով դուրս եկել՝

²⁵⁵ «المقطم» , 1896, 23. 09.

²⁵⁶ Նույն տեղում:

²⁵⁷ Այս մասին գրում էր «مصر» թերթը, القاهرة 2003, ص. 124. 'u' n' s' t' m' h' a' m' d' r' e' f' e' a' l' a' r' m' e' n' f' i' m' i' s' r' 1896-1961, مصر 2003, ص. 124. «مصر» 22.11.1896.

մոտավորապես 100 հայ փախստականների տեղափոխելով Մարսել: Նրանցից շատերը Կ.Պոլիսը լքել են նաև անգլիական և ռուսական նավերով: Օսմանյան կառավարությունը *գոհունակությամբ* աջակցում է հայերին՝ քաղաքից հեռանալու հարցում, և ձգտում է նրանց հեռացնել կայսրության սահմաններից»²⁵⁸:

«Ալ-Մուկատտամ»-ը հետաքրքրված էր այն հայերի վիճակով, ովքեր կասկածելի էին թվում իշխանություններին: «Նյու Յորք հերալդից» մեջբերված հաղորդումից պարզվում է, որ Կ. Պոլսում Բրիտանիայի հյուպատոսն օսմանյան բանկի 15 հայ աշխատակիցների փորձել է աջակցել Ալեքսանդրիա մեկնելու հարցում, սակայն օսմանյան կառավարությունը մերժել է նրանց անձնագրեր հատկացնել՝ պատճառաբանելով, որ հնարավոր է՝ նրանք էլ են վերջին խռովությունների կազմակերպիչներից»²⁵⁹:

Հղելով անգլիական «Դեյլի մեսինջեր»-ում տպված մի հոդված՝ պարբերականը տեղեկացնում է, որ Հայերի օգնության միությունը պնդել է, որպեսզի կազմվի երեք անձից բաղկացած հանձնաժողով՝ Բուլղարիայում ապաստանած հայերի համար հավաքված ֆինանսական և նյութական միջոցները (125000 ֆրանկ արժողությամբ) բաժանելու նպատակով: Ապա ավելացնում է, որ հիշյալ գումարից տասնապատիկ ավելին է անհրաժեշտ՝ այնտեղ գտնվող 50000 հայերին օգնելու համար²⁶⁰:

Հայ գաղթականներին վերաբերող մեկ այլ տեղեկություն կարդում ենք թերթի հաջորդ համարում. «Երեկ Տիգրան փաշայի²⁶¹ տանը հավաքվել էին մայրաքաղաքի հեղինակավոր մի շարք անձինք՝ քննարկելու Եգիպտոսում ապաստանած հայերին օգնություն ցույց տալու հարցը: Որոշվեց կազմել հանձնաժողով, որը զբաղվելու է նպաստները հավաքելու կազմակերպմամբ և այն աղքատ հայերին բաժանելու խնդիրներով»²⁶²:

, 1896, 11. 09. ”المقطم”²⁵⁸

²⁵⁹ Նույն տեղում, 1896, 18 սեպտեմբերի:

²⁶⁰ Նույն տեղում, 1896, 22 հոկտեմբերի:

²⁶¹ Մանրամասն տե՛ս Ե. Օտեան, նշվ. աշխ., էջ 12-15:

, 1896, 24. 10. ”المقطم”²⁶²

Հայ գաղթականներից շատերը Եգիպտոսում կարողանում էին աշխատանք գտնել՝ հատկապես լեզուների իմացության շնորհիվ: Նրանք նույնիսկ տարբեր պետական պաշտոններ են զբաղեցրել և զբաղվել արհեստներով:

Տեղին է այս առիթով շեշտել մի փաստ ևս. Թերթերի մի շարք համարներում պարբերաբար լույս էր ընծայվում հայ ձեռնարկատերերի մասին գովազդներ, ընդ որում, բավական ուշագրավ պատկերներով ու տեղեկատվությամբ հագեցած²⁶³: Օսմանյան բանկի Կահիրեի և Ալեքսանդրիայի եգիպտոսյան մասնաճյուղերում 11 հայ է աշխատել: Շատ հայեր աշխատանք են ստացել դատարաններում (խմբագիրներ ու գրագիրներ), երկաթգծում և այլ ոլորտներում՝ հատկապես Նուբար Փաշայի, Հակոբ Արթինի, Տիգրան փաշա Աբրոյանի աջակցության շնորհիվ²⁶⁴: Պողոս փաշա Նուբարի գլխավորությամբ ստեղծված Նպաստամատույց հանձնաժողովն ամիսներով իր ուսերին էր վերցրել հազարավոր հայ փախստականների խնամակալությունը²⁶⁵:

Ալեքսանդրիայի գաղթականների հանձնաժողովի գործունեության մասին «Արմենիան» գրում էր, որ Եգիպտոսում ապաստանած հայերը Ալեքսանդրիայից հայտնել են, թե հանձնաժողովի կողմից «Հոս ապաստանած հայ գաղթականաց 24 ժամը մեկ անգամ կը տրուի մէկ պնակ ապուր և 100 գրամի չափ ալ հաց, որով միայն ապրիլն անկարելի է, մանավանդ բեռնակրաց համար»²⁶⁶: Հանձնախմբին լրացնում էին հատկապես կարևոր անհատների նվիրատվությունները «Գաղթականաց հանձնախմբէն զատ մի քանի խնամակալուի տիկիներ եւս կան, որոնք կայցելեն և խնամ կը տանին խեղճ գաղթականներուն»²⁶⁷:

Կարևոր է նկատել նաև, որ այդպիսի անհատների գործունեությունը ինչպես հայ գաղթականների, այնպես էլ մամուլի կողմից երբեմն ավելի կարևոր է համարվել, քան հանձնախմբի աշխատանքը:

²⁶³ Այս մասին տե՛ս «المَقَطَم»-ի 1896 թ. գրեթե բոլոր համարները, հմմտ՝ նաև Թոփուզյան Հ. Խ., Եգիպտոսի հայակական գաղութի պատմություն (1805-1952), Երևան, 1978, էջ , 99-107:

²⁶⁴ Մանրամասն տե՛ս 1961-1896 *الأرمن في مصر*, էջ 123

²⁶⁵ Մանրամասն տե՛ս Օտեան Ե., նշվ. աշխ., էջ 12, *الأرمن في مصر*, նույն տեղում:

²⁶⁶ «Արմենիա», 1897, թիվ 56:

²⁶⁷ Նույն տեղում:

Հետաքրքրական է, որ պարբերականը հրապարակել է հայ գաղթականներին օգնություն ցուցաբերելու կոչ անող հայտարարություններ. «Հայտնի է, որ մեր մայրաքաղաք ժամանած խեղճ հայերը շատ են, և նրանք հանապազօրյա սննդի, ապաստարանի կարիք ունեն: Նրանց միայն բարեգործներն են օգնում, ինչպես գիտենք: Այդ պատճառով Հայերի օգնության միությունը խնդրում է բոլոր բարի մարդկանց և բարեգործներին՝ օգնել այդ թշվառներին՝ ֆինանսապես, հագուստ և սնունդ տրամադրելով: Ցանկացողներն այդ հարցով կարող են դիմել Հայոց առաջնորդարան»²⁶⁸:

Կան նաև հակառակ ուղղությամբ՝ Եգիպտոսից դեպի Կ. Պոլիս ուղարկվող դրամական աջակցությունների մասին տվյալներ. Ինչպես հետևյալը. Եգիպտոսի հայերի ընկերությունից հայտնել են, որ այս շաբաթ մեծ գումար է ուղարկվել Կ. Պոլսի Հայոց ազգային ժողովին²⁶⁹, որպեսզի օգնի իրականացնելու հայապահպան գործունեություն; Այս ամսվա ընթացքում, 20 հայ է մեկնել այդ կազմակերպությունից իրենց եղբայրների մոտ՝ Սալոնիկի միջոցով²⁷⁰:

Թերթերում հայ գաղթականներին ապաստարան տալու և նրանց համար հանգանակություններ կատարելու մասին հայտարարությունների առկայությանը հակառակ՝ պետք է փաստել, որ Եգիպտոսի իշխանությունները զգուշավոր դիրքորոշում էին բռնել, ինչը պայմանավորված էր Բ. Դռան հետ հարաբերությունները չսրելու՝ Եգիպտոսի ընտրած քաղաքական կողմնորոշմամբ: Հայերի մուտքը Եգիպտոս թույլ էր տրվում՝ առանց որևէ պարտավորություններ ստանձնելու: Իսկ հայերն ընտրում էին այս երկիրը՝ այն համարելով համեմատաբար անվտանգ մի վայր²⁷¹: Նրանց կողմնորոշելու հարցում որոշակի նշանակություն ուներ նաև արևմտահայերի *պաշտպան Մեծ Բրիտանիայի ներկայությունն* այդ երկրում:

²⁶⁸ Նույն տեղում, 8 դեկտ., 1896:

²⁶⁹ Այդ ժամանակ բազմաթիվ վայրերից էին նման օգնություն ուղարկվում, կարելի է հիշել օրինակ Մ. Իզմիրլյանի ներկայացրած տվյալները Մ. Ա. Կաթողիկոսին՝ Ռուսաստանից, Ռումինիայից, Բուլղարիայից և այլ երկրներից առաքված օգնությունը գալառ հասցնելու վերաբերեալ գրությունը (Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Ը, էջ 104):

, 1896, 11. 09. ”المقطم“²⁷⁰

”الرأي العام“ 18.09..1896²⁷¹

Իշխանությունների այդպիսի անտարբեր դիրքորոշումը հայ գաղթականների նկատմամբ պատճառաբանվում է Եգիպտոսի ծանր տնտեսական վիճակով, աշխատատեղերի պակասով, շեշտադրվում է նաև կրոնական գործոնը: Իրականությունը, սակայն այլ բան էր ասում. Եգիպտոսը չէր ցանկանում լինել սուլթանական իշխանության համար վտանգավոր համարվող ժողովրդի հովանավորը և դրանով իսկ ստվեր գցել իր և Բ. Դուան հարաբերությունների վրա²⁷²:

Եգիպտոսի ներքին գործերի նախարարությունը աշխատանք չգտած հայերին երկրից կրկին դեպի Կ.Պոլիս արտաքսելու հրաման էր հրապարակել: Ինչպես նաև որոշվել էր՝ կրճատել վերադարձող հայերի ճանապարհաձախսը կիսով չափ՝ պայմանով, որ երկրորդ անգամ չվերադառնան Եգիպտոս: Ռուսական շոգենավերի ընկերությունը պարտավորություն էր ստանձնել նրանց կես գնով տեղափոխել իրենց բնակավայրերը: 1897թ. կեսերին, երբ խաղաղությունը համեմատաբար վերահաստատվել էր Կ. Պոլսում և կայսրության հայկական վիլայեթներում, հայերի որոշ մասը սկսեց վերադառնալ, իսկ մյուս մասը մնաց Եգիպտոսում:

«Լիսան ալ-Արաբ» թերթը դատապարտում էր եգիպտական իշխանությունների կեցվածքը հայ գաղթականների նկատմամբ: Թերթը մատնանշում էր Բուլղարիայի օրինակը: Այնտեղ ժամանակ, ըստ թերթի տվյալների, ապաստանել էր գրեթե 14000 հայ, որոնց պետությունը հնարավորինս աջակցում էր: «Այնինչ Եգիպտոսը, որից Բուլղարիան ոչ հարստությամբ, ոչ էլ հնարավորություններով առավել չէ, չի նպաստում այդ ազգին ոչ ֆինանսապես, ոչ էլ աշխատանք գտնելու արցը դյուրացնելով», - նախատինքով նշում էր թերթը²⁷³:

Այն, որ օսմանյան կառավարությունը հայերի ունեցվածքն ու գույքն արագորեն բռնագրավում էր նրանց հեռանալուց հետո²⁷⁴, նույնպես արտացոլված է պարբերականում. «Հայերը» վերնագրված հեռագրերի շարքում ընթերցողը տեղեկացվում է. «Օդեսայից հայտնել են, որ ունևոր հայ ընտանիքներից շատերը,

272

²⁷³ "لسان العرب"، 665، 1896. 20. 10، محمد رفعة الامام، «نویسن تهلون»، 2003، ص. 120.

²⁷⁴ Հայերի գույքը բռնագրավվում էր՝ համապատասխան կայսրության ընդունած օրենքի՝ «մահլուլ» անժառանգություն համարվող գույքի և տարածքների մասին, որը չնայած կիրառելի էր բոլոր հպատակների նկատմամբ, առանձնակի ջանասիրությամբ գործադրվում էր հատկապես հայերի դեպքում, հայերից գրավված կալվածքների և գույքի մասին տե՛ս Ա-ԴՕ, նշվ. աշխ., էջ 376-399:

որոնք Թուրքիայից եկել էին այդ քաղաք, ստիպված են այս օրերին վերադառնալ Կ.Պոլիս, որպեսզի կառավարությունը չքոնագրավի իրենց ունեցվածքը»²⁷⁵:

Իսկ Ամերիկայից ուղարկված նամակով պարզվում է, որ հայերի աջակիցների կազմակերպությունը արդեն հավաքել է 3883500 ֆրանկ՝ հայ աղքատներին օգնելու նպատակով և ԱՄՆ կառավարությունից պահանջում է առավել կոշտ միջոցներ գործադրել Հայկական խնդրում արդյունքների հասնելու համար²⁷⁶:

Եգիպտոս գաղթող հայերը եղել են նաև իսլամական «Ալ-Մուալլադ»-ի ուշադրության կենտրոնում: «Այսօր Պոլսից 71 հայ է ժամանել»²⁷⁷, -հայտնում է թերթը: Մեկ այլ համարի «Տեղական լուրեր» բաժնում ասված է. «Հայերը շարունակում են գաղթել այս երկիր՝ տասնյակներով և հարյուրներով: Սպասվում է, որ այսօր մի մեծ խումբ է ժամանելու Ալեքսանդրիա»²⁷⁸: Նույնի՝ հատուկ հեռագրերի սյունակում կարդում ենք. «Բազմաթիվ հայ գաղթականներ են եկել՝ ռուսական և խդիվական շոգենավերով»²⁷⁹:

Հետաքրքիր, որ գրեթե նույն է մեզ հաղորդում Ա. Ալպոյաճեանը: Մասնավորեցնելով Կեսարիայից Եգիպտոս տեղափոխված հայերի վրա՝ նա նշում է, որ եթե 1895-ին, պատրիարքարանի ցույցից հետո հազիվ 25-30 հայ էին եկել Եգիպտոս, ապա, 1896 թ. Օգոստոսի Պանքայի ցույցէն յետոյ իւրաքանչիւր շոգենաւ Կ. Պոլիսէն հարիւրներով գաղթական կը բերեր Ալեքսանդրիա²⁸⁰:

Թերթը, փաստորեն, հայտարարությունների տեսքով հետևել է հիմնախնդրին՝ հայտնելով թվական տվյալներ, նաև՝ թե որտեղից և ինչպես էին հայերը տեղափոխվում Եգիպտոս²⁸¹:

²⁷⁵ Նույն տեղում, 1896, 30 նոյեմբերի, (այս առիթով ճիշտ կլինի շեշտադրել, որ Օդեսայի հայերը մտահոգված էին արևմտյան հայաստանի ծանր կացությամբ և դիմել էին Խրիմյան Հայրիկին՝ խնդրելով նեցուկ լինել հայ ժողովրդին (ՀԱԱ, ֆ. 56, ց.17, գ.55, թ. 30-31):

²⁷⁶ Նույն տեղում, 1896, 18 նոյեմբերի:

²⁷⁷ Նույն տեղում, 1896, 12 հոկտեմբերի:

²⁷⁸ Նույն տեղում, 1896, 4 հոկտեմբերի:

²⁷⁹ Նույն տեղում:

²⁸⁰ Ալպոյաճեան Ա. Նշվ. աշխ. էջ 1961:

²⁸¹ Տեղին կլինի հիշելը, որ Դամասկոսում լույս տեսնող «Աշ-Շամ» օսմանամետ թերթը 1896 թ. սեպտեմբերի 9-ին հայտնում էր, որ դեպի Ալեքսանդրիա հայերի հոսքն աճել էր, նրանց թիվը 360 էր և դեռ ավելանում էր: Թերթը կանխատեսում էր նաև , որ դա իր ազդեցությունը կունենար երկրի տնտեսական դրության վրա, քանի որ ներգաղթող հայերի մեծ մասն աղքատ էին (տե՛ս نورا أريسيان, նշվ. աշխ., էջ 35):

Հայ գաղթականության հոսքը դեպի Եգիպտոս մամուլում միանշանակ գնահատականի չի արժանացել: Մի կողմից՝ կարդում ենք նրանց կարեկցելու, հնարավորինս աջակցություն ցույց տալու մասին, մյուս կողմից՝ օսմանյան լրատվությանը հարող հրապարակումներում, նրանց ներգաղթը մերժող, բացասական վերաբերմունք արտահայտող տողեր:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ

3.1. Հայկական հարցի արծարծումները

Եգիպտական մամուլում առանձնահատուկ քննության է արժանացել Հայկական հարցի բովանդակությունը: Դրան վերաբերող հոդվածներում ակնհայտ է ընթերցողին խնդրի էությանը հասու դարձնելու մտայնությունը: Լույս են տեսել բազմաթիվ հոդվածներ՝ «Արևելյան հարց», «Հայկական հարց», «Հայկական հարցի էությունը», «Հայկական հարցը և տերությունները» վերտառություններով: Խնդիրը կարևորվել է միջազգային ասպարեզում հայտնվելուց հետո՝ տեղ գրավելով հիմնականում պարբերականների առաջին էջերում:

«Հայկական հարցի» բովանդակային մեկնաբանությունների շարքում նախ պետք է առանձնացնել այն որպես բարեփոխումների խնդիր ընկալելու միտումը: Դա համապատասխանում է իրականությանը. 1878-ից հետո մինչև 1890-ականների կոտորածները գրեթե միշտ Հայկական հարցն արծարծվում էր բարեփոխումներ իրականացնելու պահանջի տեսքով²⁸²:

«Հայկական հարց» խորագրի ներքո «Ալ-Ահրամ»-ը 1880 թ. մայիսի համարներից մեկում այն Եվրոպայի համար ամենածանր խնդիրն է համարում և իր ընթերցողին այն մեկնաբանում է որպես «Բեռլինի պայմանագրի 61-րդ կետով նշված բարենորոգումների խնդիր»²⁸³:

Նշելով, որ պայմանագրում բարենորոգումների հարցը երկու մաս է ամփոփում, որոնցից առաջինը վերաբերում է հայերին, իսկ երկրորդն Օսմանյան կայսրության եվրոպական մասի բնակիչներին, թերթը հայերին վերաբերող մասը մեջբերում է գրեթե բառացի. «Բ. Դուռը պարտավորվում է անհապաղ իրականացնել երկրի

²⁸² Արդուլ Համիդի կարծիքով. «Այն, ինչ անվանում են Բարենորոգումներ, վստահորեն կարելի է ասել՝ մեր կործանումն է: Ինչու են ցանկանում մեզ հետ ժառանգական թշնամության մեջ գտնուող երկրները Բարենորոգումները մեր գլխին փաթաթել, որովհետև նրանք լաւ գիտեն, որ այդ Բարենորոգումները պարունակում են իրենց մէջ մեր պետութեան կործանման պացիլները» (Եազըճեան Գ., նշվ. աշխ., էջ ---, հմմտ՝ «Հորիզոն», Թիֆլիս, թիւ 41, 42, 43):

²⁸³ "الأهرام", 1880, 12. 05.

հայաբնակ մասերի պահանջներից բխող բարեփոխումներ և բարենորոգումներ, ինչպես նաև պաշտպանել նրանց քրդերից ու չերքեզներից, իսկ մեծ տերությունները պետք է հետևեն դրա իրականացմանը»²⁸⁴:

Հուլիսին թերթը տեղեկացնում է, որ օսմանյան կառավարությունը քննարկել է Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու կետերը: Վերապահումով նշելով, որ լուրեր կան, թե կառավարությունը հավանության է արժանացրել այդ ծրագիրը և վավերացրել, «Ալ-Ահրամ»-ը գրում է, թե եվրոպական թերթերից մեկի տեղեկացմամբ՝ սուլթանը հրաժարվել է իրականացնել Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածը՝ պատճառաբանելով, որ «պայմանագրում մատնանշվող վայրերում, որոնք *նախկինում կոչվել են «Հայաստան»*, հայերը 17 տոկոսից ավելի չեն. այսինքն՝ այդ տարածքները կարելի է համարել *անուն՝ առանց անվանյալի*»²⁸⁵:

Թերթը չի համաձայնում նշվածին և արդարացիորեն ժխտում է Բ. Դռան կողմից նշվող 17 տոկոսն՝ այն «կասկածելի» անվանելով և հավելելով, որ դա ոչ այլ ինչ է, քան պարտավորություններից խուսափելու մի անհաջող պատրվակ:

«...Մեջբերելով այլ աղբյուրներից բերվող տվյալներ, ըստ որոնց, Վանի նահանգում կար 1184000 հայ, 90000 քուրդ, 30000 թուրք, 80000 ասորի, 363 հրեա, էրզրումի նահանգում՝ 215177 հայ, 159000 թուրք, 140000 քուրդ, 4645 ասորի, 3420 հույն, 3627 եզդի, 18000 չերքեզ, 100 պարսիկ, 20 ղպտի, իսկ Մարաշում՝ 164500 հայ, 29000 թուրք, 23000 քուրդ, 100 չերքեզ, 330 պարսիկ, հոդվածի հեղինակը եզրակացնում է, որ հայերը կազմում են կայսրության բնակչության մեկ հինգերորդ մասը, ինչը լիովին բավարար է այնտեղ բարենորոգումներ իրականացնելու համար»²⁸⁶:

«Ալ-Ահրամ»-ի կողմից ստացված նախնական տեղեկատվությունը, որը թերթի բացասական գնահատականին էր արժանացել և բացառվել նրա կողմից, պետք է հիմնավորել 1880 թ. հուլիսի 5-ի Աբեդին փաշայի ծանուցագրով: Խոսքը նրա ներկայացրած հայտնի զեկուցագրի մասին է, որով նա Մեծ Բրիտանիայի դեսպանին հայտնում էր, թե «Վանի, Տիարաֆեքիրի, Պիթլիսի, էրզրումի և Սվազի հայ բնակիչներու

²⁸⁴ «الأهرام», 1880, 12. 05.

²⁸⁵ «الأهرام», 1880, 10.07.

²⁸⁶ Նույն տեղում:

պաշտօնական մարդահամարն հետևեալ արդիւնքը տուած է: Այս վերջիններու թիւը կը բարձրանայ հարիւրին 17-ի, միւս ոչ-մսլիման հասարկութեանցը՝ հարիւրին 4-ի, իսկ մսլիման բնակիչներունը՝ հարիւրին 79-ի»²⁸⁷:

Կայսրութիւնում բարեփոխումների հարցերով զբաղվելու համար ստեղծվել էին հանձնաժողովներ: Դրանք Աբեդին և Բաքիր փաշաների գլխավորությամբ մեկնել էին Արևմտյան Հայաստանի տարբեր նահանգները: Իրականում դրանք ակնկալվող բարեփոխումների փոխարեն, ավելի սրեցին հայ-քրդական հարաբերությունները, հայերի դեմ հրահրեցին քրդական ավազանուն²⁸⁸:

1878 թ. պատրիարքարանը ևս Արևմտյան Հայաստան էր ուղարկել Վահան վարդ. Պարտիզակցուն (Տեր-Մինասյան), Գ. Սրվանձտյանցին և Արիստակես վարդ. Տևկանցին (Տեր-Սարգսյանց)՝ տեղում ավելի ճշգրտված և ամբողջական տվյալներ ստանալու հանձնարարականով, Գ. Սրվանձտյանցը երկրորդ անգամ 1879-ին է մեկնում այնտեղ՝ ուղեկցելով Աբեդին փաշային, որն այդ ժամանակ Սեբաստիայի, Խարբերդի և Դիարբեքի կոմիսար էր նշանակված:

Փաստորեն, «Ալ-Ահրամ»-ը շոշափել է Հայկական հարցի բաղկացուցիչներից թերևս ամենակարևորը՝ հայ ժողովրդի թվաքանակն Օսմանյան կայսրությունում սուլթանական կառավարության կողմից նվազ տվյալներով ներկայացնելու քաղաքականությունը, որը սկսել էր արդեն գործնականում դրսևորվել՝ հանգեցնելով «Հայկական հարցի» ողբերգական բաղադրիչին՝ հայերի թվաքանակի փաստացի նվազեցմանը ջարդերի միջոցով:

Օսմանահպատակ հայերին վերաբերող բոլոր վիճակագրական տվյալները վերապահությամբ պետք է ընդունել, քանի որ չափազանց դժվար է սպառիչ կերպով ճշգրտել Օսմանյան կայսրության բնակչության թիվը և դրանում հայերի քանակը: Թուրքական իշխանությունները հիմնականում փոքր թվեր էին ներկայացնում երկրի բնակչության ընդհանուր թվաքանակն արձանագրելիս, որպեսզի համեմատական կարգով կրճատվեր նաև քրիստոնյաների, մասնավորապես՝ հայերի թիվը:

²⁸⁷ Տե՛ս Լէօ, Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 172:

²⁸⁸ Այս մասին առավել մանրամասն տե՛ս Սրվանձտյանց Գ., երկեր, հ. 2., Երևան, 1982, 479-510, Կոստանդյան Է., Մկրտիչ Խրիմյան, հասարակական-քաղաքական գործունեությունը, Երևան, 2008, էջ 280-281:

Թուրքական հաապատասխան կառույցները հայերի թվաքանակը ներկայացնելիս դիմում էին նաև այլ նենգափոխումների. ընդհանուր թվեր էին ներկայացնում քրիստոնյաների վերաբերյալ՝ հայերին չառանձնացնելով, կամ հայերի թվաքանակը տրոհում էին՝ ըստ դավանանքի: Հաճախ տրվում էր միայն տղամարդկանց քանակը՝ առանց կանանց և երեխաներին ընդգրկելու: Բռնի կերպով մահմեդականացված տասնյակ հազարավոր հայեր ընդհանրապես դուրս էին հանվում հաշվառումներից²⁸⁹:

Կարևոր է նաև, որ թուրքական վիճակագրություններում հաշվարկները ներկայացվում էին միայն Արևմտյան Հայաստանի հայերին նկատի ունենալով, և երբեմն չեն տրվել Արևմտյան Հայաստանի սահմանից դուրս գտնվող գյուղերում և քաղաքներում գտնվող հայերի վերաբերյալ տվյալներ:

Ինչպես երևում է, հայերի թվաքանակի վերաբերյալ խնդիրը տարակուսանքի տեղիք է տվել նաև եգիպտական մամուլին: Այդ մասին են վկայում մի շարք հրապարակումներ: Չնայած խնդրին վերաբերող հարացադրումներն առաջ են քաշվել միանգամայն տարբեր իրադարձությունների հանրագումարում, դրանցում շարժառիթը հաստատապես մեկն է եղել՝ վիճակագրական տվյալների անստուգության գիտակցումը:

«Ալ-Ահրամ»-ը հարցի արժարժումը շարունակում էր «Բեռլինի վեհաժողովի հետևանքները» հոդվածում՝ գրելով, որ տերությունների դեսպանները շարունակում են ճնշել Բ. Դռանը և պահանջում ենթարկվել Եվրոպայի որոշումներին. «...սակայն խնդիրներ են առաջացել հայերի թվաքանակի հետ կապված, առաջարկվել է նույնիսկ նոր մարդահամար անցկացնել. այդուհանդերձ, դա կարող է հետաձգել Բ. Դռան որոշումները»²⁹⁰: Թերթը չէր սխալվում՝ հանգելով այդ եզրակացությանը, քանի որ արդեն իսկ խնդրի լուծման ձգձգումը և խուսանավելը վերածվել էր Բ. Դռան հիմնական քաղաքական գործելակերպին: Իսկ Աբեդին փաշայի ծանուցագրին պատասխանելով՝ Եվրոպական վեց տերությունների դեսպանները իրենց հավաքական ծանուցագրում ևս

²⁸⁹ Կայսրության տարածքում հայերի թվաքանակի Հայոց պատրիարքարանի տվյալները, ինչպես նաև Նուբար փաշայի կողմից նախապատրաստած Բարենորոգումների ծրագիրը տե՛ս Սարուխան, Հայկական խնդիրն եւ Ազգային սահմանադրութիւնը Թիւրքիայում 1860-1910, Ա. հատոր, Թիֆլիս, 1912, էջ 415-448:

²⁹⁰ «الأهرام» 09.09.1880.

կասկած էին հայտնում ներկայացված թվաքանակի վերաբերյալ և ակնկալում «61-րդ յօդուածոյն նշանակած նահանգաց մէջ բնակուող մամէտականաց և քրիստոնէից մերձաւորագոյն թիւը՝ որչափ կարելի է փութով՝ առնել տալ անկողմնակալ մասնախմբի մը ձեռօք»²⁹¹:

Հայերին առնչվող տեղեկություններ կան նաև «Ալ-Մուայյադ» օրաթերթի էջերում, որոնք, սակայն, նույնպես հիմնված են օսմանյան պաշտոնական վիճակագրական տվյալների վրա: Հոդվածի հեղինակն ըստ նահանգների ներկայացնում է հայերի թիվը կայսրության տարածքում՝ այն դիտարկելով մահմեդականների հետ տոկոսային հարաբերակցության մեջ: Ըստ օրաթերթի տվյալների՝ վեց նահանգների հայերի ընդհանուր թվաքանակը 504177 էր, իսկ մահմեդականներինը՝ 2167564, ինչը չէր կարող համապատասխանել իրականությանը²⁹²: Բացի այդ, թերթը նշում է նաև Հալեպի և Ադանայի նահանգները՝ համապատասխանաբար 663416 մահմեդական և 50182 հայ, 3366913 մահմեդական, 31876 հայ բնակչությամբ: Ըստ թերթի հաշվարկների՝ հայերը կազմում էին ողջ բնակչության 15 տոկոսը: Հաշվի չեն առնված այլ համայնքները (նկատի ունի կրոնական համայնքները), որոնք կազմում էին բնակչության հինգ տոկոսը: Հայերի մեծամասնությունն, ըստ թերթի, բնակվում էր Բիթլիսում, որտեղ նրանք կազմում էին 36 տոկոս:

Հակառակ այս տվյալների՝ ժամանակի ինչպես հայկական, այնպես էլ օտար բազում սկզբնաղբյուրների տվյալները միանգամայն այլ պատկեր են վերհանում՝ հայ ազգաբնակչության առավել մեծ թվեր նշելով:

Այսպես. Եվրոպայի գործադրած քաղաքականությանն անդրադառնալով՝ «Արմենիա» պարբերականը քննադատում է սուլթանի այն մոտեցումը, ըստ որի, արևմտահայությունը որևէ տեղ մեծամասնություն չի կազմում, որպեսզի այնտեղ բարենորոգումներ իրականացվեն: Ըստ «Արմենիայի»՝ դա կեղծիք է, քանի որ միայն Վանի և Բաղեշի կուսակալություններում հայերը բացաձակ մեծամասնություն են

²⁹¹ Տե՛ս Լէօ, նշվ. աշխ., էջ 186:

²⁹² Այս իմաստով ուշագրավ է Քիֆորդ Լյոյդի ներկայացրած համեմատական աղյուսակը, որը փաստորեն գրեթե կրկնում էր օսմանյան պաշտոնական տվյալները, ըստ դրա՝ Էրզրում, Վան, Բիթլիս, Դիարբեքիր, Խարբեքի նահանգների ոչ մահմեդական բնակչության թիվը 566.372 էր (տե՛ս Blue Book: Turkey. 1890-1891, No. 1. Correspondence Relating the Condition of the Populations in Asiatic Turkey and the prociidings in the Case of Moussa Bey, London, 1896, p. 38-39):

կազմում, «իսկ ամբողջ Վանայ կուսակալության մէջ միայն 26000 թուրք կայ, 30-35 հազար քիւրտ...Մուշի երկիրը բուն թուրք տարրը աննշան մաս կկազմէ, քիւրտեր են միայն, մեծամասնութիւնը՝ դարձեալ հայ»²⁹³:

Հակասելով վեջինին՝ «Ալ-Մուայյադ»-ը «Հայաստան կոչվող երկրի մասին ընդհանուր տեսություն»²⁹⁴ հոդվածում գրում էր, որ հայերը, բաժանված լինելով երեք պետությունների միջև, ավելի շատ են ենթարկվել մասնատման և տարածվել աշխարհի ծագերով: Այդ պատճառով բուն հայկական նահանգներում հայերն ավելի քիչ են, քան այնտեղ բնակվող ուրիշ ազգերը, ինչպիսիք են քրդերն ու թուրքմենները, ընդ որում, պարբերականն այս մասին խոսելիս, վկայակոչում է հայտնի «Դաիրաթ ալ-մաարիֆ» հանրագիտարանը, որն այդ ժամանակ լույս էր տեսնում Փարիզում: Դա նշանակում է, որ այդ տեղեկատվությունը հանրագիտարանային մակարդակով էր հրամցվում արաբ ընթերցողին: «Ալ- Մուայյադը» այդպիսի սփռվածություն է վերագրում նաև հրեաներին և նրանց հայերի հետ է համեմատում՝ դավանական, քաղաքակրթական մակարդակի տեսանկյունից: Ապա կարևորում է, որ հայերն ավելի բազմաքանակ են Հայաստանից դուրս՝ վկայակոչելով Կ. Պոլիսը, Իզմիրը, Ռուսաստանը (Աստրախան, Ղրիմ), Պարսկաստանը (Սպահան, Թավրիզ), Աֆղանստանը, Կենտրոնական Ասիան, Հնդկաստանը, Եգիպտոսը, Ավստրիան: Չի մոռանում նաև այն վայրերը, որտեղ հայերը ունենին համեմատաբար ավելի փոքր, բայց տնտեսական, քաղաքական, մշակութային առումներով կարևոր գաղթօջախներ՝ Վենետիկը, Փարիզը, Լոնդոնը, Ամստերդամը, ինչպես և Եգիպտոսը նշելով:

Հայերին վերաբերող վիճակագրական տեղեկությունները վկայակոչելով՝ թերթն անդրադարձել է նաև Եգիպտոսի հայերին՝ նշելով մասնավորապես, որ ողջ Աֆրիկայում (ներառյալ Եգիպտոսը) հայերի թվաքանակը հասնում է 5000-ի, այնինչ, օրինակ, Ավստրիայում՝ 16000 է: Եվ ընդգծում է նրանց քաղաքական կարևոր դերակատարությունը Եգիպտոսում՝ ի տարբերություն Ավստրիայի²⁹⁵:

²⁹³ «Արմենիա», 1985, թիւ 64:

²⁹⁴ ”المؤيد” 1895, 14. 11.

²⁹⁵ Նույն տեղում:

Ապա հարցադրում է կատարում, թե ինչու է Եվրոպան շահագրգռված հայերի խնդրով՝ այն դեպքում, երբ հրեաները նույն ձևով սփռված են աշխարհում: Այդ դեպքում նրանց էլ պետք է տալ Երուսաղեմը և Պաղեստինը: Նույն ձևով Ռուսաստանն է հայերին օժանդակում, երբ հայերը, թերթի կարծիքով, օսմանյան պետության կործանման պատճառ են: Իրականում, հարում է նա, կրոնական խտրականությունը փաստորեն Եվրոպան է իրականացնում՝ պաշտպանելով հայերին: Թերթը ստանձնում է թուրքերի անկոչ փաստաբանի դերը՝ պնդելով, որ մութասարիֆիյաթների և վիլայեթների պաշտոնյաների 90 տոկոսը հայերն են զբաղեցնում, որոնք, իբր, իրենց պաշտոնները հավերժ պահում են:

Հոդվածը հագեցած է համիսլամականության և օսմանականության շնչով՝ կրկին կայսրությունում գերակա դերակատարությունը արաբներին վերագրելու ձգտումը ցուցադրելով: Շեշտադրված է հայերի կողմից պետական պաշտոններ զբաղեցնելու խնդիրը, ինչպես և նրանց համեմատության մեջ է դրվում մուսուլմանների հետ՝ կայսրության ազգությունների շարքում առանձնացնելով հրեաներին և հայերին, որոնք արտոնություններ են վայելում: Մասնավորապես շեշտադրվում է նաև, որ հարկավոր էր պաշտոնական լեզու դարձնել արաբերենը, որը ավելի կայուն քերականական կառուցված ունի և ճիշտ կլիներ կայսրության կազմում եղած ժողովուրդներին ավելի հեշտ կառավարել՝ օգտագործելով արաբերենը: Իսկ օսմաներենի ավելի անմշակ լինելու պատճառով հայերը և մյուս ժողովուրդները կարողացել են պահպանել ոչ միայն սեփական դավանանքը, այլև լեզուն, ինչն էլ նրանց ավելի մեծ ինքնությունություն է տալիս:

Գրեթե նույնաբնույթ մի հոդված տարիներ առաջ տպագրել էր իսլամականության հիմնադիր Ջամալ ադ Դին Ալ-Աֆղանիի «Ալ-Ուրուա ալ-Ուսկա» թերթը²⁹⁶, որը Եգիպտոսի ընդհանուր քաղաքական իրավիճակի մասին խոսելիս և Անգլիայի քաղաքականությունը քննադատելիս, մասնավորապես անդրադառնում էր Նուբար

²⁹⁶ Թերթի մասին տե՛ս. 29-17. ص. العطوه. رشيد رضاء، المنار - أنور الجندى، تاريخ الصحافة الإسلامية، 1، المنار - رشيد رضاء، دار العطوه ص. 29-17. للطباعة،

փաշային և բավական կոպիտ արտահայտություններով փնովում էր նրա գործունեությունը՝ վկայակոչելով իր հասկացած *եզիպտական շահերը*²⁹⁷:

Մեկ այլ հրապարակման մեջ, «Ալ-Մուայյադ»-ը կրկին համաձայնում է Բ. Դոան պաշտոնյաների կարծիքին՝ հիմնվելով թղթակցի վերցրած հարցազրույցի տվյալների վրա: Արդեն Մայիսյան բարենորոգումների ծրագիրը մեկնաբանելով՝ հողվածագիրը ժխտողական վերաբերմունք է արտահայտում դրա իրականացման վերաբերյալ՝ կրկին սխալ տվյալների վրա հիմնվելով: Նա փոխանցում է թուրք պաշտոնյաների դժգոհությունն այն մասին, որ հայերը չեն բավարարվում իրականացված բարենորոգումներով և հատուկ իրենց համար նախատեսվող նորանոր արտոնություններ են պահանջում «...չնայած վեց վիլայեթներում նրանց թիվը չի գերազանցում 400 հազարը, իսկ մահմեդականները 4 միլիոնից պակաս չեն»²⁹⁸:

Ակներև է, որ «Ալ-Մուայյադ»-ի տվյալները սխալ են, խիստ նվազեցված և չեն համապատասխանում իրականությանը: Դա միանգամայն բացատրելի է, քանի որ դրանք հիմնված են օսմանյան պաշտոնական աղբյուրների վրա:

Անտարակույս այս թերթը պաշտպանում էր ընդհանուր բարենորոգումների դրույթով մասնակին (Արևմտահայաստանում) բացառելու օսմանյան ուղեգիծը²⁹⁹:

«Ալ-Հիլալ» գիտական պարբերականը ծավալուն հողված է նվիրել խնդրին՝ այն վերնագրելով «Հայկական հարց»³⁰⁰: Այստեղ, ինչպես և «Ալ-Ահրամ»-ի էջերում այն բնորոշվել է որպես Եվրոպային մտահոգող ամենամեծ խնդիրներից մեկը XIX դարի վերջին քառորդին:

Հիմքում «Ալ-Հիլալ»-ն առաջադրում է Եվրոպայից Թուրքիայի վրեժ լուծելու ցանկությունը՝ քրիստոնյաներին բնաջնջելու միջոցով:

Հայկական հարցի սկզբնավորումը պարբերականի կարծիքով համընկնում է Աբդուլ Համիդի գահակալության սկզբին: Նշելով, որ հարցը տարբեր պատմական փուլեր է ունեցել, պարբերականը շեշտադրում է այն հանգամանքը, որ այն միշտ

297 العروة الوثقى. 1884.05.15.

□ 298 المؤيد. 1895, 13. 06.

299 Տե՛ս Ատոմ (Հարություն Շահրիկյան), Բարենորոգումների հարցը, Կ. Պոլիս, 1914:

300 “الجلال”, 24-րդ տարի, էջ 284:

ուղեկցվել է բռնապետական վարչակարգի առկայությամբ և դրա ամենադաժան դրսևորումներով՝ ընդհուպ անմեղ զոհերի՝ կանանց, տղամարդկանց, երեխաների բնաջնջում:

Հայկական հարցն Օսմանյան կայսրության տարածքում առաջացած մնացած «հարցերից (Կրետեի, Մակեդոնիայի և այլն) պարբերականն առանձնացնում է՝ դրա համար հիմք ընդունելով հայերի պետականության բացակայությունը տվյալ պատմական ժամանակահատվածում, որը կապշտպաներ նրանց թուրքական բռնապետությունից: Ըստ «Ալ-Հիլալ»-ի՝ հարցն առանձնահատուկ է նաև Օսմանյան կայսրությունում հայերի ունեցած կարևոր դերակատարությամբ:

Նշենք, որ հետագայում հայերի կոտորածների իրականացման պատճառներից մեկը պարբերականն անվանելու էր հայկական պետականության բացակայությունը՝ գրելով. «Դա էր պատճառը, որ թուրքերը *համարձակվեցին* հեղել հայերի արյունը»³⁰¹:

Եզրակացությունը, կարծում ենք ճիշտ չէր: Հույներն այս ժամանակ և հետագայում՝ 1910-ականներին, ունեին իրենց պետականությունը, որը չխանգարեց թուրքերին կոտորելու նրանց կայսրության սահմաններում:

3.2. Արևմտյան Հայաստանի բարենորոգումների խնդրի լուսաբանումը Հայկական հարց - Եգիպտական հարց զուգահեռներում

1882-ից հետո Եգիպտոսի պարբերական մամուլի վերաբերմունքը հայկական խնդրում և, ընդհանուր առմամբ, ցանկացած քաղաքական իրադարձության նկատմամբ, որակական փոփոխություն է կրում: Երկրում Մեծ Բրիտանիայի հաստատումը ստեղծել էր որոշակի հասարակական վերաբերմունք՝ բրիտանական գաղութարարության դեմ: Ձևավորվել էր մի գաղափարական դաշտ, որը ղեկավարվում էր Եգիպտոսում բրիտանական ներկայությունը չափանիշ ունենալով:

Եգիպտոսի արաբալեզու պարբերականներում Օսմանյան կայսրության հանդեպ տերությունների կողմից տարվող քաղաքականությանն անդրադարձների մի կարևոր

³⁰¹ Նույն տեղում:

մասնաբաժինը զբաղեցնում է Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրականացման խնդրի քննությունը, որն էլ հանդիսանում է լրատվության հայկական ընգդգրկման հիմնական առանցքը:

Հայկական հարցի լուսաբանությունը վերլուծելու ընթացքում ուրվագծվում է մշտական քննության առարկա խնդրում «Ալ-Ահրամ»-ի վերաբերմունքի կերպափոխությունը. 1882-ից հետո նախկինում «չեզոք» հորջորջվող թերթը սկսել էր հարել եգիպտական ազգայնականներին: Ըստ այդմ, երբ հերթը հասնում էր արևմտահայերին առնչվող խնդիրների լուսաբանմանը, այն առավելապես օսմանամետ կեցվածք էր դրսևորում՝ հանդես գալով հակաբրիտանական դիրքերից: Այդ պատճառով նշվող ժամանակահատվածի համարներում թերթի՝ հայերին առնչվող տեղեկատվությունն աչքի է ընկնում օսմանահաճո բովանդակությամբ: Նույնպիսի երանգ ուներ նաև իսլամական «Ալ-Մուայյար»-ի լրատվությունը:

«Ալ-Ահրամ»-ը «Հայաստան» խորագրի ներքո 1895 թ. փետրվարի 4-ի համարում անդրադարձել է ամերիկյան «Նյու Յորք հերալդում» հրապարակված մի հոդվածի, որտեղ մեղադրվում են բրիտանական պարբերականները օսմանյան կառավարությանը բացառապես վատ մտադրություններ վերագրելու մեջ՝ ընթերցողին, իբրև թե, ստիպելով «ավագի հատիկը լեռ, իսկ ջրի կաթիլը՝ ծով պատկերացնել»³⁰²:

«Բեռլինի պայմանագիրը» խորագրի տակ զետեղված հոդվածում հեղինակը վերապահումներով է մոտենում բրիտանական մամուլում հայկական իրադարձությունների շուրջ պտտվող տեղեկատվությանը՝ պատճառաբանելով, որ Մեծ Բրիտանիայում ձևավորվել են հայերի իրավունքների պաշտպանությանը նվիրված կազմակերպություններ: Նա ավելի ողջամիտ է համարում սպասել սուլթանի կողմից նշանակված հանձնաժողովի ներկայացնելիք արդյունքներին: Դրանք, ըստ թերթի, հարկ է, որ լինեն հնարավորին չափ վստահելի՝ հիշված իրադարձությունների մասին մանրամասն ու ճշգրիտ զեկուցում ներկայացնելու սուլթանի պահանջի համաձայն:

Այս հետնախորքի վրա է ներկայացվել նաև բարեփոխումների խնդիրը Արևմտյան Հայաստանում: Նշելով, թե Բ. Դուռը համաձայնել է ստեղծել խառը հանձնաժողով՝

³⁰² Նույն տեղում, 4 փետրվարի, 1895:

միմիայն Եվրոպային հայկական իրադարձությունների չափազանցված ներկայացնելն ապացուցելու և ճշմարտությունը վերհանելու նպատակով, հոդվածագիրը եզրակացնում է. «Սակայն Արմինիայում մուսուլմանները հայերից շատ են, և որևէ ազգի կամ վիլայեթի գերապատվություն տալը բացառված է: Մենք սպասում ենք հայկական կոտորածների և բարենորոգումների իրականացման մասին հյուպատոսների զեկույցների հրապարակմանը, մինչ կհայտնենք մեր անկողմնակալ տեսակետը»³⁰³:

Հեղինակը հոդվածի ավարտին առաջ է քաշում հետևյալ հարցադրումը. «...արդյունքներին սպասելու ընթացքում լավ կլինի խորհենք, թե ինչն է պատճառը, որ անգլիական թերթերն անտեսում են Բեռլինի պայմանագրի այն հոդվածները, որոնք պարզորոշ կերպով սահմանում են Բ. Դռանը տրված իրավունքները, այլ շահագրգռված են միայն Օսմանյան կայսրությանը պարտավորեցնող որոշ պայմաններով՝ անընդմեջ Բ. Դռանը հիշեցնելով կատարել հայերի պահանջները»³⁰⁴:

Այդ ժամանակ արդեն Բ. Դուռը առաջ էր քաշել կայսրության ողջ տարածքում բարեփոխումներ իրականացնելու անհրաժեշտության մասին իր վաղեմի խաղաքարտը, որով կրկին զսպաշապիկ էր հագցնում տերություններին: Իսկ «Ալ-Ահրամ»-ը, հեռանկարում ունենալով Եգիպտոսի ազգային շահերը, սկսել էր խնդրին նայել Եգիպտական հարցի դիտանկյունից:

Հատկանշական է, որ Հռոմի պապական աթոռի հայտնած պաշտոնական կարծիքը Հայկական հարցի վերաբերյալ ևս մեկնաբանություն է գտել «Ալ-Ահրամ»-ում: Ըստ թերթում տեղ գտած հոդվածի՝ Հռոմի պապի տեսակետն այն էր, որ հայերի խնդիրն անհրաժեշտ էր մեկնել երկու տեսանկյունից՝ կրոնական և ազգային: Կրոնական գործոնը նա ժխտել էր՝ վկայակոչելով, որ «արևելքի քրիստոնյաները վայելում են ապահովություն ու անդորր, նրանք շրջապատված են նախանձելի հոգատարությամբ, ինչպես հայտնում են արժանահավատ և վստահելի աղբյուրներ, ուստի և իրավունք չունեն բողոքելու»³⁰⁵: Ազգայինը միակ գործոնն էր. հետևաբար,

³⁰³ "الأهرام" 1895. 26. 12..

³⁰⁴ Նույն տեղում, 26 դեկտեմբերի, 1895:

³⁰⁵ Նույն տեղում, 12 հունվարի, 1895:

Հայկական հարցը միմիայն ազգային խնդիր կարելի էր համարել. «...Սակայն, եթե ազգային գերապատվության խնդիր կա՝ մյուս ազգությունների նկատմամբ առավելություններ և արտոնություններ ունենալու ակնկալիքով, ապա դա արդարացի չի կարող լինել: Եթե նպատակը ընդհանուր բարենորոգումներն են, ապա կասկած չկա, որ սուլթանը կցանկանար և կձգտեր կենսագործել դրանք: Սակայն դրանք հարկ է կատարել ոչ միայն Հայաստանում, այլ կայսրության բոլոր նահիեներում, որտեղ դրանց կարիքը կա»³⁰⁶:

Երկու դեպքերում էլ, ինչպես տեսնում ենք, Վատիկանն անվերապահորեն կրկնում էր թուրքական քարոզչության ստահող պնդումները՝ ճիշտ այնպես, ինչպես «Ալ-Ահրամ»-ը:

Արդեն 1895-ին «Ալ-Ահրամ»-ը ծանրանում էր այն հանգամանքի վրա, որ օսմանցի լինելը բոլորի հավասարության կոչ է, սակայն իրականում հայերին են տրվում առավելություններ: Թերթը հղում է նախորդ համարներում տպագրած Վատիկանի պաշտոնական տեսակետը և ժխտում այն՝ կրկնելով, որ հիմք չի կարելի ընդունել դավանաբանական կամ ազգային դիտանկյունից հարցին նայելը, այլ հարցին անհրաժեշտ է մոտենալ կայսրության ողջ տարածքում բարեփոխումներ կատարելու անհրաժեշտությունը նկատի առնելով³⁰⁷:

Հոդվածի հեղինակին չի գոհացնում նաև այն, որ թեև բոլորն են համարվում օսմանցի, սակայն աշխատավարձերի և պաշտոնների խնդրում իշխանությունները գերադասում են առավելությունները հայերին տալ³⁰⁸:

«Ընդհանուր հայացք» հոդվածում, այս նույն տրամաբանությամբ առաջնորդվելով, հեղինակի կողմից արդեն ժխտվում է հայկական բարենորոգումների իրականացման անհրաժեշտությունը՝ ընթերցողին հուշելով. «..եթե, օսմանցի լինելով հանդերձ, չունենք արտոնություններ աշխատավարձերի և պաշտոնների հարցում, ապա հայերը բացառություն չպետք է լինեն: Մինչդեռ, նրանց են հատկացված ամենաշատ

³⁰⁶ Նույն տեղում:

³⁰⁷ "الأهرام", 12.01.1895:

³⁰⁸ Նույն տեղում, 22 հունվարի:

պաշտոնները... իսկ բարեփոխումներ անհրաժեշտ է իրականացնել բոլոր այն վայրերում, որտեղ դրանց կարիքը կա, ոչ թե միայն Հայաստանում...»³⁰⁹:

Դժվար չէ նկատել, որ հայերի կողմից Եվրոպայի միջամտության ակնկալումը և հայկական բարենորոգումները կայսրության ընդհանուր բարեփոխումների մեջ չքացնելու գաղափարը ջանասիրաբար կրկնվում էր «Ալ-Ահրամ»-ի էջերում:

Այս նույն նկատառումով էր առաջնորդվում նաև «Ալ-Մուայյադ»-ը, երբ, գերմանական պարբերականներին հղելով, հայերին մեղադրում էր հեղափոխական գործողությունների իրականացնելու հարցում, քանի որ նրանք, ըստ թերթի թյուր կարծիքի, «կայսրության ազգություններից միակն են, որ ունեն բացարձակ ազատություն, ունեն հարստություն և պաշտոններ, ինչպես նաև վայելում են սուլթանի բարեհաճ վերաբերմունքը՝ օտարերկրացիների նման»:

Պետք է նկատել, որ թերթը թեև ճիշտ էր՝ գրելով հայերին պաշտոններ շնորհելու մասին, սակայն վրիպում էր՝ չնշելով, որ դա արդեն անցյալում էր մնացել՝ Ռեշիդ, Ալի, Ֆուադ փաշաների կառավարման ժամանակներում: 1880-ականներից սկսած Աբդուլ Համիդը աստիճանաբար պետական պաշտոններից ազատում էր հայերին՝ նրանց փոխարինելով մահմեդականներով³¹⁰: Արաբական հասարակության վերաբերմունքն այս խնդրում ճիշտ մեկնաբանելու համար պետք է նկատի առնել մի նրբություն. նշված պաշտոնները բաշխվում էին ոչ թե մուսուլման արաբներին, այլ առաջնայնություն էր տրվում չերքեզներին, քրդերին և այլոց, քանի որ նրանք, ի տարբերություն արաբների, չէին կարող բարձրաձայնել իսլամի իրական հետևորդներ լինելու, կամ իշխանության մենաշնորհին իրենց ձեռքին պահելու նկրտումների մասին: Այդ հակասությունը լավագույնս դրսևորվում էր սուլթանի կողմից «խալիֆի» տիտղոսը կրելու իրավունքը վիճարկելու հարցում, որոնցով ողողված է ժամանակի արաբական հատկապես իսլամական ուղղվածության մամուլը: Սա այն բնութագրական գծերից է, որ իր կնիքն է դրոշմել եգիպտական հասարակության կարծիքը Հայկական հարցում ձևավորելու

³⁰⁹ Նույն տեղում:

³¹⁰ Azhderian Antranig, *The Turk and the Land of haig of Turkey and Armenia*, New York, 1898, p. 358, Կիրակոսյան Ջ., նշվ. աշխ., էջ 32, Bliss E. M., նշվ. աշխ., էջ 348:

խնդրում՝ պայմանավորված Եգիպտական շահերը տվյալ քաղաքական իրավիճակում բնորոշող հանգամանքներով:

«Ալ-Ահրամ»-ն Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրականացման անհրաժեշտությունը դիտարկում էր դրանք Եգիպտոսում ևս կատարելու անհրաժեշտության գիտակցումից դրդված, և սեփական երկրի խնդիրների մտահոգությամբ՝ առանձնացնում ու պարզ մատուցում է ստեղծված իրավիճակը՝ արտացոլելով կայսրության քաղաքական-տնտեսական ճգնաժամային կացությունը: Այն տարբեր դրսևորումներ էր ստանում՝ կախված կայսրության համապատասխան տարածքների նկատմամբ տերությունների հավակնություններից: Այս առումով բացատրելի է պարբերականի էջերում հայկական բարենորոգումների խնդիրը Եգիպտոսի ազգային շահերին զուգադրելու և համեմատելու միտումը:

Հայկական հարցի և անգլիացիների կողմից Եգիպտոսը նվաճելու միջև եղած փոխկապակցվածությունը շեշտադրված է նաև հայ պատմագետների կողմից ³¹¹: Նախապատրաստվելով Թուրքիային դուրս մղել Եգիպտոսից՝ անգլիական իշխանությունները շահագրգռված էին եվրոպական տերությունների և հասարակության հակակրանքն առաջացնել Թուրքիայի դեմ և դրանով իսկ մեկուսացնել վերջինիս:

1880-ից հետո, երբ Անգլիայի կառավարման ղեկը գտնվում էր 76-ամյա Գլադստոնի ձեռքին, կրկին անգլիական որոշակի ակտիվություն էր ծավալվել այդ ուղղությամբ: Լորդ Գրենվիլը, Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարը, փորձում էր տերությունների դեսպանների ուշադրությունը հրավիրել Հայաստանի ծանր վիճակի վրա, սակայն դա կատարվում էր կրկին Եգիպտոսում ամրանալու նպատակով և թուրքական կառավարության ինքնուրույնությունը սահմանափակելու համար:

1886 թ. ֆրանսիական թերթերը հայտնում էին, թե Կ. Պոլսում անգլիական դեսպանը սուլթանին հայտնել էր, որ Եգիպտոսը ծածուկ ձևով Անգլիային թողնելու

³¹¹ Կիրակոսյան Զ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը 19-րդ դարի 80-ական թթ., Երևան, 1980, էջ 116-117, Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 430, Կիրակոսյան Ա., Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը, Երևան 1999, էջ 57, 119:

դեպքում «Անգլիան էլ փոխարենը ոչ միայն լուրջություն կպահեր Արմենիայի մեջ ներմուծվելիք բարենորոգումների հարցում, այլև իրեն նեցուկ կլիներ եվրոպական խնդիրների մեջ»³¹²:

Եգիպտոսի կորուստը մեծ հարված էր օսմանյան կայսրության համար: Սուլթանը ձգտում էր սանձել Անգլիային՝ Ռուսաստանի հետ հարաբերությունները կարգավորելու սպառնալիքով, իսկ Անգլիան Հայկական հարցի վերաբացումը շահարկելով ձգտում էր զսպել Թուրքիային և ստիպել նրան հաշտվել իր՝ Եգիպտոսում հաստատված լինելու հետ:

«Եգիպտոս» հոդվածում, պարզաբանելով «Գազեթ դը ֆոգ» թերթում Եգիպտական հարցի լուծման հնարավոր տարբերակների մասին քննարկումները, «Ալ-Ահրամ»-ը շեշտում է, որ «Նեղոսի ափերին «Եգիպտոսը եգիպտացիների համար» կոչն է սկսել արձագանքվել, սակայն, խղիվի փորձերը՝ Բրիտանիային զերծ պահել իր երկրի ներքին գործերին միջամտելուց, միմիայն հետաձգում է Եգիպտոսի անկախացումը՝ հաշվի առնելով Բրիտանիայի ձեռքբերումներն այնտեղ ամրապնդվելուց հետո»³¹³:

Գերմանական թերթերի անդրադարձներում «Ալ-Ահրամ»-ը փորձում է խնդիրը զուգադրել Հայկական հարցի հետ. «...լավ կլիներ, եթե տերությունները Եգիպտական հարցն էլ քննարկեին այն նույն միջազգային գազաթնաժողովում, որն Անգլիան պահանջում է գումարել՝ Հայկական հարցը կարգավորելու նպատակով»³¹⁴:

Իսկ մեկ այլ հոդվածում թերթը հայկական բարենորոգումների կատարումն անհավանական է համարում, քանի որ «իշխանության ներկայացուցիչներն այդ հարցում լիովին ողջամիտ են և տերությունների պահանջած բարենորոգումները չեն իրականացվի, մինչև դրանք վերջնականապես չփոփոխվեն, ու նկատի չառնվի կայսրության մնացած մասերում բարենորոգումների իրականացման անհրաժեշտությունը»³¹⁵:

³¹² «Արմենիա», Մարսել, 22, համար 1, 1886, իսկ 1884 թ. թիվ 23-ում Թիֆլիսի «Արձագանքը» գրում էր, որ Անգլիան, «Յուր ցանկացած զիջումն ձեռք բերելուց հետո Թուրքիայից», դարձյալ լռում էր:

³¹³ «ألاهرام» 1895.07.03.

³¹⁴ Նույն տեղում, 7 մարտի:

³¹⁵ Նույն տեղում, 8 հունիսի:

Այսպիսով, «Ալ-Ահրամ»-ն, ըստ ամենայնի, ելնելով մուսուլմանական համերաշխությունից, անում էր այն, ինչի քարոզչությամբ զբաղված էր օսմանյան պաշտոնական գաղափարախոսությունը՝ Բեռլինի վեհաժողովից ի վեր՝ կայսրության ընդհանուր բարեկարգումների գերադասումը մասնակի բարեկարգումներից, անգիտանալով, որ միանում էր նույն՝ մասնակի բարեկարգումների ռազմավարությանը, երբ իր մտահոգության առանցքն էր դարձնում զուտ Եգիպտական խնդիրը: Իսկ սուլթանն այդ ժամանակ արդեն հայտարարել էր եվրոպական դեսպաններին, որ բացառապես Հայաստանում վերանորոգություններ մտցնելու մտադրություն բնավ չունի, այլ պիտի կիրառի ընդհանուր վերանորոգություններ ողջ Փոքր Ասիայում³¹⁶:

Ուշագրավ է «Ալ-Ահրամ»-ի «Հայաստան ու Եգիպտոս» հոդվածը, որտեղ պարբերականը վերլուծում է իռլանդացի հայտնի լրագրող և գիտնական Է. Դիլոնի³¹⁷ կանխատեսումները՝ Բրիտանիայի զավթողական նկրտումների համատեքստում՝ վերլուծելով Եգիպտոսում մնալու նրա մտադրությունները: Նա քննում է Հայկական և Եգիպտական հարցերի շահարկումը մեծ տերությունների կողմից. «Բրիտանիան առաջադրեց Հայկական հարցը՝ մյուս կողմում դնելով Եգիպտականը: Այնուհետև խաղի մեջ մտավ Ռուսաստանը, որին հետևեց Ֆրանսիան, որոնցից յուրաքանչյուրը հետամուտ էր իր շահերին»³¹⁸: Ըստ հրապարակման՝ Հայաստանում կատարվող ավերն ու սպանող լիովին ձեռնտու էին նրա հարևան Ռուսաստանին: Իսկ Եգիպտական հարցով ու Անգլիայի՝ այնտեղից դուրս գալու մտադրությամբ շահագրգռված էր Ֆրանսիան: Հետևաբար՝ եվրոպական համաձայնությունը Հայկական հարցի պատրվակով կառաջարկի նիստ գումարել՝ Հայաստանում բարենորոգումների անցկացումը քննարկելու, ինչից հետո Անգլիայից կպահանջի լքել Եգիպտոսը:

Միանգամայն իրավացի էր թերթի սեփական թղթակիցը Կ. Պոլսից, երբ գրում էր. «Մեր կարծիքով տերությունների այդ նախագիծը չի իրականացվի: Այն կարող է

³¹⁶ Տե՛ս Կիրակոսյան Զ., նշվ. աշխ. էջ 39:

³¹⁷ Էմիլ Դիլոնը «Положение дел в Турецкой Армении» հոդվածում ներկայացրել է Արևմտահայերի կացությունը՝ շեշտադրելով տերությունների ընտրած դիրքորոշման բացասական ազդեցությունը Հայկական հարցում (Տե՛ս Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, էջ 327-373):
³¹⁸ 1895.07.07. "الأهرام"

կատարվել բացառապես թուրքական կողմի մշակած ծրագրի համաձայն: Աստիճանաբար պարզ է դառնում, որ Բրիտանիան Հայկական հարցին և կայսրության մնացած խնդիրներին միջամտելիս առաջնորդվում է կայսրությունից Եգիպտոսը վերջնականապես անջատելու դիտավորությամբ»³¹⁹: Հետագա համարներից մեկում այդ նույն տրամաբանությունը շարունակվում է. «...Իսկ Բ. Դուռը Բրիտանիայի առաջարկած պայմաններն ընդունելու մեջ տեսնում է օսմանյան կառավարության և սուլթանի իրավունքների ոտնահարում: Նրանց կարծիքով, բարենորոգումները հարկավոր է կատարել ամբողջ երկրում, որպեսզի կանխարգելեն եվրոպական միջամտությունը, քանի որ գիտեն, որ իրենց թշնամիները սպասում են հարմար առիթի և նույնիսկ, եթե Հայկական հարցին վերջ դրվի, նրանք կգտնեն մեկ այլ տարածք և էլի կառաջարկեն բարենորոգումներ իրականացնել ... »³²⁰:

Հեղինակը եզրակացնում է նաև, որ Ֆրանսիան և Ռուսաստանը որևէ միջոց չեն ձեռնարկի՝ ստիպելու Բ. Դուռնը՝ իրագործել բարենորոգումներ, քանի, որ շատ լավ տեսնում են, որ Անգլիան դեռևս պատրաստ չէ նպաստելու բարենորոգումների իրականացմանը, մինչև չհաղթահարի Եգիպտոսում իր առջև ծառացած խոչընդոտները: Հետևաբար, խնդիրը առայժմ գոհացուցիչ լուծումներ չունի:

Ընթերցելով «Ալ-Ահրամ»-ի խմբագրի մի հոդվածը, որտեղ ներկայացված են Բրիտանիայի հավակնությունները Եգիպտոսում մնալու և Սուդանում հաստատվելու վերաբերյալ, ակնհայտ է դառնում այն, որ թերթը լավ էր հասկանում Հայկական հարցի՝ որպես երկուստեք զսպող հանգամանքի շահարկումը Օսմանյան կայսրության և Մեծ Բրիտանիայի կողմից. «...Կարիք չկա լսել Ռ. Սուլթերիի վերջին ելույթները Հայկական հարցի մասին: Նա հակասում է ինքն իրեն, խաբում իր ազգակիցներին: Իրականում անգլիացիները՝ ազատամիտ, թե պահպանողական, թշնամաբար են վերաբերվում Բ. Դուռնը՝ վրեժ լուծելով սուլթանից, քանի որ նա հրաժարվում է ճանաչել Եգիպտոսի նվաճումն Անգլիայի կողմից: Այդ թշնամանքը նրանք բացեիբաց դրսևորեցին սկսած այն օրից, երբ տապալվեց նրանց գաղտնի համաձայնությունը:

³¹⁹ Նույն տեղում, 20 հուլիսի:

³²⁰ Նույն տեղում, 21 սեպտեմբերի:

Եթե Անգլիան սուլթանից Սուդանը տնօրինելու համաձայնություն ստանար, ընդմիջտ կմոռանար հայերին ու Հայկական հարցը, և վերջ կտրվեր այդ խառնաշփոթին»³²¹:

Այս ամենն ի մի բերելով կարելի է եզրակացնել, որ Արևմտյան Հայաստանում բարեփոխումների իրականացման խնդիրը մանրամասն քննության է արժանացել Եգիպտական մամուլում: Այն դիտարկված է առավելապես հակաբրիտանական տեսանկյունից:

Եգիպտական մամուլի էջերում խնդիրն արտացոլվել է՝ անցնելով Եգիպտական հարցի կիզակետի միջով, հստակ եզրագծելով Օսմանյան կայսրության նկատմամբ Մեծ Բրիտանիայի վարած քաղաքականության առանցքային շահերը և անուղղակիորեն շաղկապելով Եգիպտոսն Արևմտահայաստանին:

2.3. Տերությունների դիքորոշումը Հայկական հարցում

Հայկական հարցը Մեծ Բրիտանիայի քաղաքականության ոլորտում հայտնվել էր XIX դարի II կեսից՝ Մերձավոր Արևելքում անգլո-ռուսական մրցակցության, ռուս-թուրքական պատերազմներում Ռուսաստանի ունեցած հաջողության և Օսմանյան կայսրության սկսված քայքայման արդյունքում:

Մերձավոր Արևելքում Օսմանյան կայսրությունը որպես եվրոպական հավասարակշռության պահպանման գործոն դիտարկելու պարագայում Մեծ Բրիտանիայի համար Արևմտյան Հայաստանը ձեռք էր բերել կարևոր ռազմավարական նշանակություն՝ Ռուսաստանի՝ Փոքր Ասիայում և Բալկաններում վերահսկողությունը կանխելու ակնկալիքով: Օսմանյան կայսրության ամբողջականությունն ու անկախությունը հարգելու և պահպանելու խնդիրը՝ «ստատուս քվո» անվան տակ, միանգամայն հակասում էր կայսրության քրիստոնյա բնակչության շահերին և ավելի նպաստում պահպանելու Օսմանյան կառավարության կողմից գործադրվող բռնաճնշումները կայսրության քրիստոնյա հպատակների նկատմամբ:

³²¹ ”الأهرام“ 1896.20.02.

Հայկական հարցով Մեծ Բրիտանիան առավել լրջորեն սկսեց զբաղվել 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո: 1878 թ. կնքված Սան-Ստեֆանոյի պայմանագրի բովանդակությունը չէր բավարարում նրա շահերը, և Անգլիայի կառավարությունը մեծ ճնշումներով կարողացավ պարտադրել Ռուսաստանին՝ հրաժարվելու սեփական հաղթանակի պտուղներից:

1870-ականներին բրիտանական քաղաքական գիծը «օժանդակել Թուրքիային՝ մեզ համար և մեր շահերին համապատասխան»³²² ուղեգծով էր առաջնորդվում, որը սկսել էր Բենջամին Դիզրայելին (Լորդ Բիքոնսֆիլդ) (1804-1881):

Անդրադառնալով Դիզրայելի քաղաքականությանը՝ եգիպտական «Ալ-Ահրամ» թերթը «Հայկական հարց» հոդվածում նրա ելույթների շուրջ գրում է. որ հայ ժողովրդի խնդրի նկատմամբ անուշադրություն է հանդես բերվել Բեռլինի վեհաժողովում, և Փոքր Ասիայում բարեփոխումներ անելու նրա կոչը Հայկական հարցի վերաբացման առիթ է, ինչը գուցե օգնի փարատելու հայերին հասցված վիրավորանքը: Միևնույն ժամանակ թերթն ակնարկում է տերությունների մտավախության մասին, թե խնդրի արձարծումը Բիքոնսֆիլդի կողմից Եվրոպայում ներքին հակամարտությունների սրման պատճառ կդառնա³²³:

«Ալ-Ահրամ»-ը չի զլանում հիշելու 1878 թ. մայիսի 25-ի (հունիսի 4-ի) անգլո-թուրքական գաղտնի պայմանագիրը (ստորագրված Թուրքիայում Անգլիայի դեսպան Հ. Լայարդի և Թուրքիայի արտաքին գործերի նախարար Սալֆեթ փաշայի միջև, Կ. Պոլսում), որով Անգլիան Թուրքիային խոստացել էր, որ փոքրասիական տարածքները չեն միացվելու Ռուսաստանին, սակայն նրան էին անցնելու Բաթումը, Կարսը, Արդահանը³²⁴:

Գրեթե բառացի մեջբերելով պայմանագրից՝ հոդվածագիրը գրում է, որ Ռուսաստանը բացի Բաթումից, Կարսից կամ Արդահանից, եթե փորձեր խլել Օսմանյան կայսրության ասիական սահմանակից մասերից որևէ մեկը, ապա

³²² Տե՛ս արգայլսկի, герцог, «Отжестженность Англии в восточном вопросе, факты и воспоминания за сорок лет, 1908.

1879.20.11. ”الأهرام“³²³

³²⁴ Այս նույն ժամանակ սիրիական «Աշ-Շահիբա» թերթը համարում էր, որ Ռուսաստանն այդպիսով «գնեց» Կարսը (Տե՛ս, نورا أريسيان, նշվ. աշխ., էջ 34):

«Բրիտանիան պարտավորվում էր սուլթանի հետ ձեռնարկելու նշված տարածքների զինված պաշտպանությունը»³²⁵: Իսկ սուլթանը դրա դիմաց պարտավորվում էր հիշյալ վայրերում բնակվող քրիստոնյաների և մնացած բնակիչների դրությունը բարելավելու նպատակով անհրաժեշտ բարեփոխումներ իրականացնել, որոնց հետ, սակայն, կհամաձայնեի Մեծ Բրիտանիան:

Այնուհետև իրադարձությունների լրահոսը թերթը փորձում է տեղադրել քաղաքականության խաղատախտակի վրա՝ վկայակոչելով նշված պայմանագիրը և նշելով, որ չնայած Լայարդը օսմանյան կառավարությանը հորդորել էր Էրզրումի նահանգի կառավարչի պաշտոնում նշանակել Բաքիր փաշա անվանյալ մի բրիտանացու, Բ. Դուռը մեկ ուրիշ զորահրամանատարի է նշանակել այնտեղ: Եվ, քանի որ «Ինչպես հայտնի է՝ Էրզրումը Ռուսական Հայաստանի հետ է սահմանակից, Ռուսաստանը չի համակրի Հայաստանում անգլիացի կառավարչի նշանակումը, ինչը կնշանակի այդ տարածքներում Անգլիայի դիրքերի ամրապնդում, քանի որ Ռուսաստանը ևս մեկ միլիոն ու կես հայ հպատակներ ունի: Հատկապես հաշվի առնելով Կիպրոսի խնդրի հետ կապված վերոհիշյալ գաղտնի թուրք-անգլիական պայմանագիրը»³²⁶:

Սուլթանն, ըստ պայմանագրի, համաձայնել էր նաև Մեծ Բրիտանիային հանձնել Կիպրոս կղզին, որով այդ երկիրն իրավունք էր ձեռք բերում վերահսկողություն սահմանել Ասիական Թուրքիայի վրա: Վարչապետ լորդ Բիկոնսֆիլդն առանց սպասելու սուլթանի ֆերմանին, հրամայել էր անհապաղ ռազմակալել կղզին: Այդ պայմանագրով, ակնհայտորեն Մեծ Բրիտանիան դարձել էր Օսմանյան կայսրության դաշնակիցն՝ ընդդեմ Ռուսաստանի, նաև հնարավորություն ստանալով հետագայում հաստատվելու Եգիպտոսում: Դաշնագրում Հայաստանը որպես առանձին երկիր չէր հիշատակվում, իսկ բարենորոգումների հարցը շարունակում էր մնալ Ասիական Թուրքիայի բոլոր քրիստոնյաներին վերաբերող խնդիր: Այդ փաստը, չնայած տարբեր արձագանքներ էր գտել մեծ տերությունների դիվանագետների շրջանում, այնուամենայնիվ, նրանք նախընտրել էին լռելու քաղաքականությունը:

³²⁵ ”الأهرام“, նույն տեղում:

³²⁶ Նույն տեղում:

Ռուս-անգլիական և թուրք-անգլիական դաշնագրերի կնքումից հետո էր միայն Անգլիան համաձայնել մասնակցելու Բեռլինի համաեվրոպական վեհաժողովին³²⁷:

Վեհաժողովում Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածը խմբագրվեց հոգուտ Անգլիայի և տեղ գտավ պայմանագրի 61-րդ հոդվածում, որտեղ արդեն ոչ մի հիշատակություն չկար Ասիական Թուրքիայում, նաև Արևմտյան Հայաստանում ըստ թուրք-անգլիական պայմանագրի Անգլիայի ստանձնած պարտավորությունների վերաբերյալ:

Տերությունների կողմից տարվող քաղաքականությանն առանցքային նշականություն է վերագրում «Ալ-Մուքաթթամը»: «Ներկա իրավիճակը» խորագրով հոդվածաշարում կարդում ենք. «...զարմանալի չէ, որ Եվրոպան դարձել է Արևելքի քննարկման առարկա. քաղաքականության կշեռքը Եվրոպայի ձեռքին է գտնվում: Երբ նա ծանրացնում է խաղաղության նժարը, անվտանգություն ու վստահություն են հաստատվում, իսկ երբ պատերազմի նժարն է ծանրացնում, սարսափ և անհանգստություն է սփռվում»³²⁸: Ապա թերթը խոստանում է եվրոպական քաղաքականությունն աստիճանաբար բացահայտել ընթերցողին՝ հենվելով ստացվող լրատվության վրա: Հոդվածում եվրոպական երկրներն, ըստ իրենց ընտրած մարտավարության, դասվում են երկու տեսակի՝ միայնակ կամ դաշինքներով հանդես եկողներ:

Հայկական հարցում բրիտանական քաղաքական դիրքորոշման գնահատականը ամբողջացել է նաև իսլամական արժեքների քարոզիչ Ալի Յուսուֆի խմբագրությամբ, որը հստակ բնորոշել է այն՝ ճիշտ է, որոշակի կրոնական զգացականության շեշտադրումներով, բայց անգլիական իրական նպատակները ուրվագծող հոդվածներում:

Չէր սխալվում «Ալ-Մուալլադ»-ը, երբ «Անգլիան սպառնալիք է ընդհանուր խաղաղությանը»³²⁹ հոդվածում առանձնացնում էր անգլիական ամենազոր շահի քաղադրիչը նրա քաղաքական կեցվածքը որոշելու խնդրում: Թերթի համոզմամբ՝ Անգլիան երբևէ սեփական թանկագին արյան մի կաթիլն անգամ չի տվել որևէ ազգի

³²⁷ Տե՛ս Սարուխան, նշվ. աշխ., էջ 401-414:

³²⁸ "المقطم" 06.09.1889.

³²⁹ Նույն տեղում, 1896, 14 սեպտեմբեր:

ազատության դիմաց: Հայտնի է, թե ինչ գնով է նա նվաճել իրեն ենթակա տարածքները, որոնք դարձել են իրենց իսկ զավակների գերազման՝ հանուն անգլիական ցածր շահերի: Նրա զոհերից էին հնդիկները, իռլանդացիները... Օսմանյան կայսրության հայերը: Այդ ամենը, ըստ թերթի, բավարար են ապացուցելու այն իրողությունը, որ Անգլիայի համար ամենակարևորը միմիայն իր շահն է: Հայկական հարցը վերաբացելով՝ Անգլիան ձգտում է, ոչ թե հայության անկախացմանը կամ ազատագրմանը, այլ պահը հարմար է համարում «Օսմանյան կայսրության մասնատման և խալիֆի գահի խորտակման համար»³³⁰:

Թերթի էջերում Եգիպտոսի ազգային գործիչ Մուստաֆա Քամիլն արձագանքել է հայերի մասին ՈՒ. Գլադստոնի ելույթներին, երբ հարցադրումներ էր կատարում Եգիպտոսից բրիտանացիների դուրս գալու վերաբերյալ: «Ալ-Մուայյադ»-ի մի հոդվածում մեջբերված է նրա նամակի ամբողջական թարգմանությունը: Դիմելով Գլադստոնին՝ նա խնդրում էր արագացնել Եգիպտոսից դուրս գալու անգլիացիների խոստման իրագործումը: Խնդրում էր հետաքրքրվել նաև մահմեդականների խնդիրներով՝ միայն կայսրության քրիստոնյաներով մտահոգ լինելու փոխարեն: Բրիտանական գործչի հայերի պաշտպանությունը նա գնահատում էր որպես քրիստոնյաների պաշտպանություն: Հոդվածի հեղինակը Գլադստոնի քաղաքականությունը բնութագրում էր որպես «պայքար ոչ թե հանուն քրիստոնյաների, այլ՝ հանուն անգլիականության»³³¹: Մեկ այլ հոդվածում թերթը կրկին շեշտադրում է կատարել միևնույն մտահոգությամբ՝ այս անգամ ելակետ ընդունելով մահմեդականների նկատմամբ անգլիական դիրքորոշումը: Մեղադրական երանգ ունեն հոդվածագրի մտքերը. նրա կարծիքով միանգաման արժեզրկվում են բրիտանական հավաստիացումները, թե մահմեդականների նկատմամբ Անգլիայի կեցվածքը քաղաքակրթություն սերմանելու, համամարդկային արժեքները բարձր պահելու ձգտումներից է բխում: Հայկական հարցում նրա ընտրած դիրքորոշումը

³³⁰ Նույն տեղում:

³³¹ Նույն տեղում:

քննելով՝ ակներև է սեփական քաղաքական շահը հետապնդելու նպատակը, որի համար էլ հրահրվել են ապստամբություններ, բռնություններ ու կոտորածներ³³²:

Այս գնահատականները գրեթե չեն տարբերվում հայկական մամուլի տված գնահատականներից: Անգլիայի գործելակերպի հիմնական լծակները, որոնք քողարկվում էին մարդասիրական ճոռոմաբանությունների և դիվանագիտական սեթևեթանքների հետևում, ժամանակին լավագույնս բացահայտվել էին նրա քաղաքական գործիչների անկեղծ պողոթնումների պահերին, ինչն էլ նկատի ուներ «Մուրճի» խմբագիրը, երբ այն բնութագրում էր՝ մեջբերելով Արգայլի դուքսի բնորոշումը Անգլիայի դիրքորոշման մասին. «մեր նպատակը բնավ Թուրքիան իբրև պետություն պաշտպանելը չէ: Մեր նպատակն է պարտադիր անել Եվրոպայի համար, որ ինչ էլ լինի Թուրքիայի ճակատագիրը և կամ ապագան, այդ ճակատագիրը և այդ ապագան Եվրոպայի ձեռքում գտնվի, այլ ոչ թե Ռուսիայի»³³³:

Ուժեղացող Ռուսական կայսրությունը դեռևս 18-րդ դարում փորձեց հասատատվել Բալկաններում և Անդրկովկասում՝ «տաք ջրեր» ելք ունենալու նպատակով: Այս հարցը դարձել էր ռուս-թուրքական և Ռուսաստանի ու Եվրոպական տերությունների միջև հակամարտությունների սրման առիթ: Օսմանյան կայսրության քրիստոնյա բնակչության շահերը պաշտպանելու պատրվակով Ռուսաստանը ևս իր Եվրոպական հակոտնյաների օրինակով փորձում էր միջամտել կայսրության ներքին գործերին: Դա հիմք էր հանդիսացել ոչ միայն արևելահայերի, այլև արևմտահայերի ռուսամետ դիրքորոշման: 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմում Ռուսաստանի հաղթանակից հետո արևելահայերն ու արևմտահայերը Կ. Պոլսի հայոց պատրիարք Ն. Վարժապետյանի գլխավորությամբ դիմել էին ռուսական արքունիքին՝ հայկական խնդրի կարգավորման հարցում նրանց աջակցությունը ստանալու խնդրանքով: Արդյունքում՝ Սան-Ստեֆանոյի կոնֆերանսում Ռուսաստանը մտցրել էր 16-րդ հոդվածը: Սակայն Բեռլինի վեհաժողովից հետո հայ քաղաքական շրջանակները ստիպված էին շրջվել դեպի Եվրոպական տերությունները:

³³² "المؤيد" 189.10.19.

³³³ «Մուրճ», 1895, թիվ 5, էջ 684, նաև՝ Ներսիսյան Մ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1890 թթ., Երևան, 2002, էջ 272-275:

1880-ականներին Ռուսաստանն արդեն որդեգրել էր Անդրկովկասի ռուսականացման քաղաքականությունը և դեմ էր այնպիսի տարածքի կազմավորմանը, որտեղ հայերը կունենային առավելություններ: Միևնույն ժամանակ նա աչքի առաջ ուներ Բուլղարիայի օրինակը, որը թեև ազատագրվել էր ռուսական զենքի միջոցով, սակայն հրաժարվում էր լինել նրա վասալը: Ցարական դիվանագիտությունն իր արտաքին գործերի նախարար Լոբանով-Ռոստովսկու բերանով հայտարարել էր, որ ինքը թույլ չի տա մի նոր Բուլղարիայի ստեղծում:

Հայկական խնդրին վերաբերող ռուսական դիվանագիտությունը լայնորեն լուսաբանվել է «Ալ-Ահրամ»-ի էջերում: Թերթը կարևորել է ռուս քաղաքագետների հետևյալ տեսակետը. «...ինչ Բրիտանիան է ասում Հայկական հարցի մասին, ուղղված է մեր դեմ՝ խոչընդոտելու մեր քայլերն Ասիայում, քանի որ նա վստահ է, որ Ռուսաստանը երբեք չի հանդուրժի Հայաստանի բաժանումը Թուրքիայից: Հայկական հարցում մենք Թուրքիայի հետ ենք, Բրիտանիային՝ դեմ, այս խնդրում մենք Օսմանյան Թուրքիայի լավագույն դաշնակիցն ենք ...»³³⁴:

«Ալ-Ահրամ»-ը Հայկական խնդրի հիմքում դնում էր Ռուսաստան-Անգլիա հակասությունը: Թերթը տեսնում էր նաև Թուրքիայի ներքին քաղաքականությանը միջամտելու հարցում Ռուսաստանի նշանակությունը ռուս-եվրոպական հակասություններում: Այլընտրանքը լինելու էր «հիվանդ մարդու» ժառանգությունը մասնատելու իրար մեջ բաժանելու տարբերակը:

Պետք է ասել, որ «Ալ-Ահրամ»-ը չէր սխալվում նաև այն պարագայում, երբ Օսմանյան պետության քաղաքականությունն էր դնում նժարի մի կողմում՝ մյուս կողմը ծանրացնելով Ռուսաստանի վրա. «Հայերը բարենորոգումների են սպասում» հրապարակման մեջ Հայկական հարցին անդրադառնալով՝ թերթը մատնանշում էր. «...Ռուսաստանի և Օսմանյան կայսրության փոխհարաբերությունները Հայաստանից են կախված»³³⁵: Ռուսաստանի կողմից հայերին կարևորելն «Ալ-Ահրամ»-ը

02.05.1895. "الأهرام" ³³⁴
11.20.1879 "الأهرام" ³³⁵

պատճառաբանում է նրանց կարևոր դերակատարությունը և՛ Ռուսաստանի, և՛ Օսմանյան կայսրության կյանքում³³⁶:

«Ալ-Ահրամ»-ը հայտարարում էր նաև, որ Բ. Դուռը մերժում է հայերի համար կատարել այն, ինչ նրանք ակնկալում են ըստ Բեռլինի պայմանագրի, այդ պատճառով էլ նրանք ձգտում են դեպի Ռուսաստան: Այս խնդրի լուծման լավագույն տարբերակը, թերթի մոտեցման համաձայն, հայերին ինքնավարություն շնորհելն է, ինչը, ըստ նրա, չէր վնասի կայսրությանը, ընդհակառակը, ըստ հողվածագրի տրամաբանության, դրանով մի պարիսպ կստեղծվեր, որի միջոցով Ասիայի մնացած մասը պաշտպանված կլիներ Ռուսաստանից:

Թերթի կարծիքով, իրական վտանգ կառաջանար այն պարագայում, երբ Օսմանյան կայսրությունը և Եվրոպան ուշադրության չարժանացնեին հայերի խնդիրները: «Այդ դեպքում, անկասկած, նրանք կձգտեն դեպի Ռուսաստան, ինչը հայտնի վտանգներով է լի», - կարծում էր թերթը: Այս դիտարկումը հեռու չէր ճշմարտությունից, որի վկայությունը սուլթանական կառավարության հայահալած քաղաքականությունը դարձավ: Եվ այդ պարագայում Անգլիան հանդես էր գալիս որպես թուրքական բռնատիրական ռեժիմի քննադատ, քաղաքակիրթ հայ ժողովրդի *շահերի պաշտպան*: Եվ եթե Անգլիան իրոք անկեղծ լիներ, իրավացի է հողվածագիրը, որ հայ ժողովուրդը շատ բան կարող էր շահել:

1882 թ. Օ. Բիսմարկը Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի հետ կազմել էր Եռյակ միություն՝ ուղղված ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Անգլիայի դեմ: Իսկ Ֆրանսիան 1871 թ. ֆրանս-պրուսական պատերազմից հետո կորցրել էր Եվրոպայում ունեցած երբեմնի կարևոր դերը: Այդ պարագայում Անգլիային դաշնակից էր հարկավոր՝ Գերմանիայի սպառնալիքներին դիմակայելու համար: Այդպիսի դաշնակից կարող էր լինել Ռուսաստանը, որին սիրաշահելով էլ զբաղված էր Անգլիան, երբ խոստանում էր Օսմանյան կայսրության հաշվին մեծ զիջումներ կատարել նրան՝ այդ թվում՝ նվիրաբերել Արևմտյան Հայաստանը: Ռուսաստանն էլ, իր հերթին, հետևում էր, թե

³³⁶ Նույն տեղում:

ինչով կավարտվեին անգլո-թուրքական հակասությունները, որոնք Եգիպտոսի գրավումից հետո առավել սուր բնույթ էին կրում:

Թերթն ընդհանուր գծերով արտացոլել է նաև Հայկական հարցում բրիտանական դիրքորոշման վերաբերյալ ռուսական (առավելապես թուրքամետ) թերթերի գնահատականը: Մասնավորապես ռուսական «Նովոյե Վրեմյա» թերթի հրապարակումներն են քննարկվում «Հայաստան» հոդվածում՝ մատնանշելով, որ հայկական բարենորոգումների մասին «Ռոյթերի» հայտնած տեղեկություններն ընդառաջում են անգլիական ձգտումներին:

Այս դեպքում ևս «Ալ-Ահրամ»-ը հանդես է գալիս եգիպտական ազգային շահի դիրքերից և հոդվածը եզրափակում նույն ոգով. «...իսկ մենք, հանուն հայրենասիրության և օսմանցիության, սուլթանին կոչ ենք անում բարենորոգումներ իրականացնելու դեպքում խտրականություն չդնել վիլայեթների հարցում, այլ դրանք իրականացնել երկրի բոլոր վիլայեթներում»³³⁷:

Դարձյալ «Նովոյե վրեմյա»-ին է հղում պարբերականը և իրազեկում ընդդեմ հայկական կոտորածների և օսմանյան կառավարության Լոնդոնում տեղի ունեցած հավաքի մասին, որին ի պատասխան, Լոնդոնում բազմաթիվ մուսուլմաններ հանդիպում են կազմակերպել Բ. Դռան նկատմամբ լավ տրամադրված տեղի հայտնի գործիչների հետ՝ ժխտելու տարածված լուրերը թուրքերի կատարած բռնությունների և ոտնձգությունների մասին:

Արդյունքում մահմեդականները հեռագիր են ուղարկել Բ. Դռանը՝ տերությունների առաջարկած բարենորոգումների նախագիծը մերժելու առաջարկով³³⁸:

«Հայաստան»³³⁹ հոդվածում պարբերականը կրկին անդրադարձել է ռուսական քաղաքականությանը՝ եզրակացնելով, որ Ռուսաստանը լավ է տրամադրված բարենորոգումների նախագծի նկատմամբ: Այն լիովին համապատասխանում է երկրի կարիքներին, սակայն չի կարող հանգեցնել Արևմտահայաստանի անկախացմանը, քանի որ վերջինս համահունչ չէ ոչ Օսմանյան կայսրության, ոչ էլ Ռուսաստանի

³³⁷ "الاهرام", 1895.12.05.

³³⁸ Նույն տեղում:

³³⁹ Նույն տեղում, 29 մայիսի:

շահերին: Ռուսաստանին շահավետ է Հայաստանը տեսնել օսմանյան իշխանության տակ և խաղաղ՝ անկախ և ինքնուրույն լինելու փոխարեն, քանի որ ցանկալի չեն խռովություններն ու ապստամբությունները:

«Նովոյե վրեմյա»-ին հղել է նաև «Ալ-Մուայյադ»-ը³⁴⁰: Ռուսական հայտնի թերթը հրապարակել էր հոդված՝ «Իրավիճակն Արևելքում» խորագրով, որտեղ նշվում է, որ եվրոպայում միջազգային իրավիճակը որոշ չափով լավացել է, Եռյակ միությունը փոխել է իր նախկին կառուցվածքը, որը սպառնալիք էր խաղաղության համար, իսկ այժմյան Բեռլինի կառավարության քաղաքականությունը չի սպառնում ոչ մեկին: Անգլիայի դեպքում հակառակն է: Թուրքիայում տեղի ունեցող իրադարձությունները վտանգավոր չեն, քանի որ դրանք անգլիական սադրանքների արդյունքն են, որոնց միջոցով անգլիական կառավարությունը ձգտում է վերադարձնել Օսմանյան կայսրությունում ունեցած իր հզոր ազդեցությունը՝ ընդդեմ ռուսական շահերի³⁴¹:

«Ալ-Ահրամ»-ի «Հայկական հարցը և Ռուսաստանը»³⁴² խորագրի տակ զետեղված է ազդեցիկ «Նովոստի»³⁴³ պարբերականի հրապարակումը, որտեղ վերստին մատնանշվում է Ռուսաստանի որդեգրած քաղաքականությունն ընդդեմ ազատագրական շարժումների. «Ռուսաստանի ակնկալիքները Հայաստանում չափավոր են և օրինական: Նա դրանով ցանկանում է կանխել Բրիտանիայի՝ Հայաստանում անկախ դերակատարության ձեռքբերումը, ինչը կարող է նպաստել օսմանյան տարածքներից Հայաստանի անջատմանը»³⁴⁴:

Հոդվածում նշվում է, որ Ռուսաստանը Հայկական հարցը դիտարկում է որպես միմիայն իրեն և Օսմանյան կայսրությանն առնչվող մի խնդիր, քանի որ Հայաստանը բաժանված է իրենց երկուսի միջև, ուրիշ ոչ մեկն այդտեղ մասն չունի և իրավասու չէ միջամտելու այդ խնդրի լուծմանը:

«Ալ-Մուկատտամ»-ը ևս 1890-ականներին մշտապես հետևել է Հայկական հարցին: Հետաքրքիր է «Տերությունները և Կ. Պոլսի իրադարձությունները» հոդվածը,

³⁴⁰ "المؤيد"، 1896.18.06.

³⁴¹ Նույն տեղում:

³⁴² "الأهرام"، 1896.27.06.

³⁴³ Նույն տեղում:

³⁴⁴ Նույն տեղում, 29 մայիսի:

որտեղ թերթը տարակուսանք և հիասթափություն է հայտնում այն առիթով, որ տերությունները չխոչընդոտեցին հայերի կոտորածների իրականացմանը: Սակայն, լինելով բրիտանական քաղաքականության ջատագով, թերթը դա պատճառաբանում է նրանով, որ եվրոպական երկրները դեմ են Մեծ Բրիտանիայի՝ Արևելքի քրիստոնյաներին աջակցելուն, ինչը, բխելով բրիտանական շահերից, խոչընդոտում է նրանց քաղաքական հաջողություններին³⁴⁵:

Արժեքավոր են պարբերականի հրապարակած նյութերը հատկապես Հայկական հարցում Ֆրանսիայի դիրքորոշման վերբերյալ:

Ֆրանսիայի քաղաքական դիրքորոշումը հայկական խնդրում գրեթե ամբողջությամբ պայմանավորված էր Օսմանյան կայսրության գործերում ֆրանսիական մոնոպոլիստների և դրամատերերի հատուկ շահագրգռվածությամբ: Կայսրության պարտքի 62 տոկոսը, ծխախոտի ձեռնարկությունների կապիտալի կեսը բաժին էր ընկնում Ֆրանսիային: Ֆրանսիական դիվանագիտության այս կամ այն քայլը արևմտահայերի հետ կապված խնդիրներում իր հիմքում ունեցել է ֆինանսական լծակներ: Նրան ձեռնտու էր կայսրության ամողջականության պահպանումը: Պաշտոնական Ֆրանսիան, թեև իր ստորագրությունն էր դնում սուլթանին ներակայացվող նոտաների տակ, սակայն լուռ հետևում էր հայերի նկատմամբ իրականացվող վայրագություններին: Ամենևին հաշվի չէր առնվում Ֆրանսիայի հասարակայնության կարծիքը, որն արտգործնախարարին հորջորջել էր «Հանոտո փաշա»: Եգիպտական խնդրում անգլո-ֆրանսիական հակասությունները³⁴⁶ ևս որոշակի իմաստով կարելի է համարել Հայկական հարցում ֆրանսիական դիրքորոշման պատճառներից մեկը: Չպետք է անտեսել, սակայն, որ ֆրանսիական խորհրդարանում հնչում էին հայերին պաշտպանող ելույթներ, Ֆրանսիային հայկական կոտորածների մեղավորներից մեկն անվանող կոչեր:

«Ալ-Մուկատտամ»-ը, լինելով բրիտանամետ, բավական կոշտ շեշտադրումներով վերհանել է ֆրանսիական դիրքորոշումը: Մի շարք հոդվածներում պարբերականը

³⁴⁶ Կարապետյան Ռ., նշվ. աշխ., էջ 65-67:

³⁴⁵ "المقطم", 24.09.1895.

ներկայացրել է Ֆրանսիայի սենատում Հայկական հարցի քննարկումները՝ հետևելով նշված ուղեգծին և հավաստելով վերը ասվածի իրավացիությունը:

Ինչպես հայտնի է, 1896 թ. նոյեմբերի 3-ին Ֆրանսիայի Ազգային ժողովում առաջին անգամ քննարկվեց Հայկական հարցը: Պատգամավորներ Ժան Ժորեսը, Դենի Կոշենը և Ալբեր դը Մունը խստագույնս դատապարտեցին ֆրանսիական կառավարության և, մասնավորապես, արտաքին գործերի նախարար Գաբրիել Հանոտոյի թուրքամետ քաղաքականությունը, ինչի հետևանքով նախարարության արխիվներում պահվող Հայկական հարցին և 1890-ական թթ. կոտորածներին առնչվող փաստաթղթերը մինչ այդ մնացել էին փակի տակ, ու պահանջեցին դրանք լույս ընծայել³⁴⁷:

«Ալ-Մուկատտամ»-ը կարևորում է Ժան Ժորեսի ելույթը Ֆրանսիայի սենատում, որտեղ նա Հայկական հարցը Եվրոպայի մտահոգության հիմնական առարկան էր անվանել: Նրա կարծիքով, չնայած սուլթանը նախ Սան-Ստեֆանոյի պայմանագրով խոստացել էր հոգալ հայերին քղերից պաշտպանելու մասին, հետո նույնը հաստատել Բեռլինի պայմանագրում, այնուամենայնիվ, կայսրության հայ հպատակների վիճակը վատից վերածվել է վատթարի:

Ըստ պատգամավորի՝ այդ հինավուրց ազգի տառապանքների ավարտը դեռ չէր նշմարվում: Նա սենատին ամենայն մանրամասնությամբ ներկայացրել է Ուրֆայի հայերի կոտորածը՝ այն բնորոշելով որպես ամենասարսափելին և շեշտելով, որ եկեղեցում ապաստանել էին Ուրֆայի բնակիչներից հիմնականում կանայք, երեխաներն ու ծերերը:

Ելույթ ունեցողն ավելացրել է, որ դա տեղի է ունեցել սուլթանի կամքով, իսկ նրա խոսքը շարունակել է մեկ ուրիշ սոցիալիստ պատգամավոր՝ ասելով. «...նաև՝ Եվրոպայի մասնակցությամբ...» ³⁴⁸: Այդ հայտարարությունը սենատում մեծ վիճաբանության տեղիք է տվել:

³⁴⁷ Մանրամասն տե՛ս Պողոսյան Վ., Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ (XIX դարի վերջ - XX դարի սկիզբ), Երևան, 2011, էջ 27- 44:

³⁴⁸ "المقطم"، 14.11.1896 .

Պարբերականի ներկայացմամբ՝ պատգամավորները հաստատել են, որ Ֆրանսիացի ժողովուրդը խորապես ցավում է այդ կոտորածների համար և տարակուսանք են հայտնել այդ խնդրում Եվրոպայի լուռ կեցվածքի կապակցությամբ, այն դեպքում, երբ նա հայերի խաղաղության երաշխավորներից է՝ համաձայն Բեռլինի պայմանագրի:

Քննարկման ավարտին զուգահեռ է անցկացվում Եգիպտոսում և Արևմտյան Հայաստանում հաստատված իրավիճակի վերաբերյալ: Հնչած կարծիքները վերլուծելով՝ պարբերականը մասնավորաբար կարևորում է արված հետևյալ դիտողությունը. «հարկավոր է զգուշանալ Անգլիայից, քանի որ այն Հայաստանն էլ կարող է գրավել, ինչպես դա կատարեց Եգիպտոսի դեպքում»³⁴⁹:

«Ալ-Մուկատտամ»-ը նաև անդրադարձել է Հանոտոյին ուղղված Ժորեսի պատասխանին, ըստ որի, Ֆրանսիան Արևմտյան Հայաստանում հստակ քաղաքականություն չի վարում, նրա քաղաքականությունը նույն Ռուսաստանի քաղաքականությունն է:

Հարկ է շեշտել, որ պարբերականն ուշիուշով հետևում էր Ֆրանսիայի և Ռուսաստանի հարաբերությունների բարելավման ընթացքին և տպագրում էր նրանց փոխհարաբերությունների զարգացմանն առնչվող յուրաքանչյուր շուկ: Ըստ պարբերականի՝ այդ երեքուն քաղաքականությունն է պատճառը, որ, Ֆրանսիան դարձել է հայերի կոտորածներին ծափահարողներից ու դրանց իրականացումը խրախուսողներից մեկը: Սենատի նախագահի զգուշացմանը, որ Ֆրանսիական կառավարության հասցեին նման վիրավորանքներ հնչեցնել չի կարելի, Ժորեսը պատասխանել է, որ ինքը միշտ կարող է հետ վերցնել իր խոսքերը և ջնջել դրանք, սակայն հայկական կոտորածները կմնան պատմության մեջ և նրանց հետքերը երբեք չեն ջնջվի պատմության էջերից³⁵⁰:

Ամբողջացնելով Ֆրանսիական սենատի քննարկումների գնահատականը՝ պարբերականն ընդգծում է, որ եթե Ֆրանսիան որոշի միջամտել սուլթանի ներքին գործերին, դա որևէ ձևով չի վնասի կայսրության ամբողջականությանը և միջազգային

³⁴⁹ Նույն տեղում:

³⁵⁰ Նույն տեղում:

պայմանագրերով հաստատված դրույթներին, քանի որ այն Եվրոպայի հավասարակշռության կարևորագույն պայմաններից մեկն է: Եվրոպական երկրները հավատարիմ են իրենց պարտականություններին և կմտահոգվեն Օսմանյան կայսրության և Արևմտյան Հայաստանի բարենորոգումների իրականացման խնդրով: Հոդվածագիրը նշում է, որ լավ կլիներ, եթե սուլթանն ի վերջո գիտակցեր բարենորոգումների իրականացման անհրաժեշտությունը՝ անկախ հպատակների դավանանքից: Նրաք իրավագույրկ են, և Եվրոպան ցույց կտա սուլթանին այն չարիքը, որ բխում է նրա վարած դատապարտելի քաղաքականությունից, ինչպես և այն ճանապարհը, որ թույլ կտա բարելավել ստեղծված իրավիճակը: Նրա բոլոր հպատակներն ունեն անվտանգության, խաղաղության և կարգուկանոնի իրավունք³⁵¹:

«Ալ-Մուկատտամ»-ը պարզորոշ ուրվագծել է ֆրանսիական պաշտոնական քաղաքականությունը և հասարակական մտքի դիրքորոշումը Հայկական խնդրում՝ մինչ Սենատում խնդրին անդրադառնալը: Ուշագրավ է հատկապես այն, որ պարբերականը «Հայկական հարցը» հոդվածաշարի մի հատվածում, վերստին կարևորելով խնդրի քննարկման իրողությունը, ակնկալում է դրա ավելի վաղ կատարումը, ինչին, սակայն, խոչընդոտել են ֆրանսիական կառավարության ռազմավարությունը Օսմանյան կայսրության, իսկ ֆրանսիական մամուլի՝ օսմանյան սուլթանի հետ ունեցած հաստատուն կապերը³⁵²:

Հայերի կոտորածների լուսաբանման հարցում ֆրանսիական մամուլի դիրքորոշումը հանգում էր կատարյալ անտարբերության, և որը, ինչպես ֆրանսիացի հրապարակախոս Վիկտոր Բերարն է բնութագրել, «լռության դավադրություն» կարելի էր համարել: Թուրքական դեսպանության կողմից. ֆրանսիական 17 թերթ ստանում էին դրամական նպաստներ³⁵³:

Ասվածն ապացուցելու է գալիս նաև «Ալ-Մուկատտամ»-ի հայտնած այն տեղեկությունը, ըստ որի, Կ. Պոլսից հրահանգված էր արգելել կայսրության տարածք բերել այն բոլոր ֆրանսիական թերթերը, որոնք լույս էին տեսել նոյեմբերի 4-ի

³⁵¹ Նույն տեղում:

³⁵² Նույն տեղում:

³⁵³ Այս մասին մանրամասն տե՛ս Պողոսյան Վ., նշվ. աշխ., էջ 61, Կիրակոսյան Զ. Ս., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք առաջին, Երևան, 1982, էջ 23:

առավոտյան: Դրա նախորդ օրը Ֆրանսիայի սենատը քննարկել էր Հայկական հարցը³⁵⁴:

Օսմանյան իշխանությունների կողմից Ֆրանսիայի հասարակական կարծիքը վերահսկելու իրողությունը բացահայտելով՝ պարբերականը գոհունակությամբ արձանագրում է նաև, որ աստիճանաբար Ֆրանսիական հանրությունը փոխում է իր նախկին կեցվածքը, ինչին համահունչ է դարձել նաև ֆրանսիական մամուլի խոսքը³⁵⁵: Այնինչ սուլթանի գործադրած ջանքերը և օսմանյան ֆինանսական ներդրումներն ապարդյուն են անցել:

Ավելորդ չի լինի հիշել, որ այդ նույնը նկատում էր «Մշակը», երբ «Ֆրանսիական մամուլը և եւ թիւրքահայոց հարցը» հոդվածում գրում էր, որ «ֆրանսիական լրագիրները քանի գնում, ավելի մեծ համակրանքով են սկսում վերաբերվել Հայոց հարցին»³⁵⁶՝ հիշատակելով «Figaro», «Justice», «Journal des Debats» առաջնակարգ ամսագրերը:

Վերոհիշյալն առավել ակնառու դարձնելու նպատակով կրկին անդրադառնանք Օսմանյան կառավարության կողմից կայսրության տարածքում եվրոպական լեզուներով հրատարակվող պարբերականների նկատմամբ իրականացված գրաքննությանը, ինչպես նաև բուն եվրոպական երկրներում լուս տեսնող մամուլի նկատմամբ սուլթանի հատուկ ուշադրությանը, որը չէր բացառում կաշառքը և պետական գումարների հատկացումները, որոնք բավական արդյունավետ էին: Արտասահմանի ազատ մամուլի և ոչ համակիր պարբերականների դեմ պայքարելու համար 1884 թ. Աբդուլ Համիդը տպագրական տեսչությունը վերակազմավորել էր ներքին և արտասահմանյան մամուլի տեսչությունների: Դրանց հիմնական գործառույթը ընդդիմադիր մամուլի հրապարակումների վերահսկումն էր: Իր դեսպաններին սուլթանը հանձնարարել էր

³⁵⁴ "المَقْطَعُ", 16.11.1896

³⁵⁵ Նշանավոր ֆրանսիացիների մի խումբ հանրագիր էր ստորագրել ֆրանսիական կառավարության անունով, որի մեջ խնդիր կա միջամտելու հայերի ազատության համար: Ստորագրել էին Ալֆոնս, Դոդե, Հանրի Բաուեր, Պոլ Ադան, Էմիլ Զոլա, Օրելիեն Շոլ, Ֆրանսուա Կոպպե, Անատոլ Ֆրանս, Նաթանսոն, Ալֆրեդ Վալլետ և Կատոլ Մանդես: Ստորագրողները հայտնում են, որ ֆրանսիայի ավանդույթները պարտավորեցնում են նրան օգնելու բոլոր տկար և հարստահարված ազգություններին, մանավանդ՝ ի նկատի ունենալով սուլթանի հրամանով, կամ նրա թելադրանքով կատարվող խմբական կոտորածները (տե՛ս «Մուրճ», 1896, թիվ 12, էջ 1628):

³⁵⁶ «Մշակ», 1895, թիվ 1:

հետևել մամուլի հակաթուրքական ելույթներին և հնարավորինս կանխել դրանք՝ կաշառքի և այլ միջոցներով: Դեսպանների առօրեական պարտականությունների մեջ էր մտնում տեղեկանալ տպագրված անցանկալի հրապարակումների մասին և հայտնել Բ. Դռանը՝ Թուրքիա դրանց մուտքն արգելելու համար³⁵⁷:

«Ալ-Մուայյադ»-ի մեկ այլ հրապարակում ևս գալիս է լրացնելու Ֆրանսիայի արտգործնախարարի ելույթին հաջորդող իրադարձությունների խճանկարը: Պարբերականն արձանագրել է, որ Կ. Պոլսում Ֆրանսիայի դեսպանը 3 ժամ տևողությամբ հանդիպում է ունեցել սուլթանի հետ՝ Հանոտոյի ելույթի հաջորդ օրը: Նրանց հանդիպումից հետո Փարիզ է ուղարկվել հեռագիր, որով տեղեկացվել է, որ վերջին իրադարձության մեջ մեղադրվող հայերին և մահմեդականներին դատելու նպատակով կազմված հատուկ դատարանը լուծարվում է, իսկ հայերի Ազգային ժողովին թույլ էր տրվում հրավիրել հատուկ նիստ՝ նոր պատրիարքի ընտրության նպատակով, ինչպես նաև սուլթանական ֆերման էր հրապարակվելու կայսրության բոլոր ծայրերում բարեփոխումներ իրականացնելու մասին³⁵⁸:

Հիմնվելով Հավասից վերցված տեղեկատվության վրա՝ «Ալ-Մուայյադ»-ն ավելացնում է, որ սուլթանը, տեղեկանալով ֆրանսիական արտաքին գերատեսչության ղեկավարի ելույթի մասին, անմիջապես իր օգնականին ուղարկել էր Ֆրանսիայի դեսպանի մոտ՝ նրան հանդիպման հրավիրելու: Նույն ժամանակ Փարիզում նույնպես Կ. Պոլսի դեսպանը հանդիպում է խնդրել արտգործնախարարից և նրան ներկայացրել սուլթանի ընդունած որոշումները³⁵⁹:

Մերկացնելով Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարի թուրքամետ քաղաքականությունը՝ «Ալ-Մուկատտամ»-ը փաստում է, որ Ֆրանսիայի սենատի անդամները սկսել են պնդել իրականությունը՝ այսինքն ասել ճշմարտությունը հայերի հանդեպ տարվող օսմանյան քայլերի վերաբերյալ՝ խոսելով իրենց կուսակցությունների անունից, մինչդեռ արտգործնախարար Գաբրիել Հանոտոն չի կարողանում սուլթանի

³⁵⁷ Տե՛ս Խառատյան Ա. Ա., Արևմտահայ մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում, էջ 8-9, 364-366:

³⁵⁸ "المقطم"، 16.11.1896.

³⁵⁹ Նույն տեղում:

օգտին որևէ բան ասել՝ նրան արդարացնելու կամ պաշտպանելու համար: Հայկական կոտորածների մասին ճշմարտությունը հաստատելուց բացի, նա այլ տարբերակ չունի:

Ապա թերթն ընդգծում է այն, որ սոցիալիստների առաջնորդը սենատում ելույթ է ունեցել այդ մասին ու բարձրաձայնել այն ճշմարտությունը, որը մինչ այդ ոչ ոք չէր համարձակվում ասել. «*Հայերի կոտորածների հարցում Ֆրանսիայի կառավարությունն ունի մեղքի իր բաժինը*»³⁶⁰:

Գերմանիայի արտաքին քաղաքական ուղղության մեջ Հայկական հարցը երկրորդական տեղ է զբաղեցրել՝ հանդիսանալով սոսկ Արևելյան հարցի բաղկացուցիչ մաս: Նրա քաղաքականությունն Արևելքում բնորոշվում էր զսպվածությամբ, սակայն անգլո-ռուսական դիմակայության պահպանումը մշտապես մնում էր օրակարգում: Գերմանիայի ազդեցությունն Օսմանյան Թուրքիայում սկսում է ավելանալ 1880-ականներին: Այս դեպքում քաղաքական դիրքորոշումը կառուցվում էր Բաղդադի երկաթուղու կառուցման հեռանկարն առանցքում ունենալով: Ընդ որում, Ռուսաստանի համար կենսական նշանակության շահերը բախվում էին գերմանական շահերին: Երկաթուղին ձգվելու էր Թուրքիայի մի ծայրից մյուսը, Ասիան կապելու էր զարգացած Եվրոպային՝ նրա պահանջմունքները բավարարելու, որից բխող առավելություններից օգտվելու էր Գերմանիան՝ մարտահրավեր նետելով Անգլիային, Ռուսաստանին, Ֆրանսիային և մյուս տերություններին:

Թուրքիան Գերմանիայի համար լինելու էր դաշնակից, շահագործման ենթակա կետ՝ նրա գաղութային քաղաքականության համար, և ռազմաքաղաքական հենակետ՝ Ռուսաստանի և Անգլիայի դեմ: Հայաստանի ինքնավարությունը, ինչպես և մնացած ժողովուրդների ազատագրական նկրտումները Գերմանիային բոլորովին օգտակար չէին և այդ առումով նա Թուրքիայի հետ ընդհանրություններ ուներ:

Աբդուլ Համիդն իր հերթին, դժգոհ լինելով Ֆրանսիայից ու Անգլիայից, որոնք ավելի որոշակի էին դրսևորել իրենց զավթողական դիրքորոշումը, միանգամայն բարյացակամ էր տրամադրված դեպի Գերմանիան: Բ. Դուռը Գերմանիայի մեջ էր տեսնում այն ուժը, որը հակակշռելու էր Բոսֆորի վրա Անգլիայի, Ռուսաստանի և

³⁶⁰ Նույն տեղում, 20 նոյեմբերի:

Ֆրանսիայի ազդեցությանը: Նա հատկապես գերմանական սպաների և գեներալների օգնությամբ էր ցանկանում վերակառուցել 1877-1878 թթ. պատերազմում պարտված իր բանակը:

1896-ին վերոհիշյալն արձանագրելու էր եգիպտական «Ալ-Մուկատտամ»-ը. «Սուլթանը նվերներ է ուղարկել Գերմանիայի կայզերին, որպեսզի երկարաձգի նրա լուրջությունը», - գրում էր թերթը, ապա նշում. «Երկրում կատարվող ավերներն ու կոտորածները նրբորեն ծածկվում էին նրանից, սակայն, ինչպես երևում է, դա սկսում էր աստիճանաբար նրա ունկին էլ հասնել, քանի որ օսմանյան բանակում ծառայող գերմանացի սպաներն իրենց ղեկավարներին տեղեկացրել էին այն ամենի մասին, ինչին ականատես էին եղել: Եթե կայզերը չհրաժարվեր Հայկական հարցին միջամտել Անգլիայի, Իտալիայի, Ավստրիայի հետ, ապա հարցը լուծված կլիներ դեռ անցյալ տարի, քանի որ Ֆրանսիան և Ռուսաստանը դրան դեմ չէին»³⁶¹:

Փաստորեն, Գերմանիայի ակտիվացումը ևս մի հանգույց էր ավելացնում Հայկական հարցի խճճված թելերին՝ բարդացնելով եվրոպական տերությունների *հնարավոր* միջամտությունը:

Գերմանիայի քաղաքականությունը որոշակի դեմք էր ստացել 1889-ին, երբ Վիլհելմ 2-ը այցելեց Թուրքիա՝ լրջորեն ցուցադրելով իր դիրքորոշումը: Այցից հետո Թուրքիա էր ուղարկվել գերմանացի սպաների մի խումբ՝ օսմանյան բանակը վերակազմակերպելու նպատակով³⁶²: Այցի արդյունքում Թուրքիայի և Գերմանիայի միջև քաղաքական, տնտեսական և ռազմական ոլորտներում համագործակցության հիմքեր էին դրվել, ինչի մասին պաշտոնապես շեշտել էր Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Ֆոն Բիբերշտեյնը: Իսկ Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան Նելիդովը այն անվանել էր «Չափազանց կարևոր իրադարձություն՝ ամենասուր և ամենամանրակրկիտ ուշադրության արժանի»³⁶³:

Գերմանական կայզերի այցն աչքի էր ընկել իր շքեղությամբ և ընդգծված պերճանքով, այս իմաստով միանգամայն հասկանալի են «Ալ-Մուկատտամ»-ում տեղ

23.08.1896 ”المقطم“³⁶¹

³⁶² St'u Гордлевский В. А., Немцы в Турции, նշվ. աշխ., էջ 86- 87:

³⁶³ Степанян С., Армения в политике империалистической Германии (конец XIX – начало XX века), Е., 1975, с. 17:

գտած տողերը այն մասին, որ կայզերը դժվար թե կարողանար հավատալ իրեն այդքան սիրալիր դիմավորող անձնավորության՝ սուլթանի, այդպիսի դաժանությունների հեղինակը լինելուն³⁶⁴:

1896-ին արդեն, երբ համաշխարհային դիվանագիտության հարթակում սկսեց նվազել հետաքրքրությունը Հայկական հարցում, մի նոր խնդիր էր առաջնահերթ դարձել՝ ի դեմս «Կրետեի խնդրի», որը «եկավ ընդհանուրի ուշադրությունը խլելու հայկական առկախ մնացած խնդրից»³⁶⁵: Եգիպտական մամուլը Կրետեի խնդրին չափազանց մեծ ուշադրություն դարձնելով հանդերձ, դրան զուգահեռ մշտապես Հայկական հարցը ևս շարունակել է արծարծել՝ անկախ խնդրի նկատմամբ իր վերաբերմունքից, սակայն, նվազող միտումով:

Ինչպես ցույց է տալիս ուսումնասիրված նյութը, Եգիպտոսի մամուլը կատարել է իր առջև դրած խնդիրը. այն է՝ հանրությանը ներկայացրել է Հայկական հարցը, դրա շուրջ տարվող եվրոպական երկրների, Ռուսաստանի և Օսմանյան կայսրության քաղաքականությունը: Այս ամենը ներկայացված է՝ մեկնակետ ունենալով Եգիպտոսի ազգային շահերը: Տերությունների քաղաքականությունը Հայկական հարցում ստացել է որոշակի ուրվագծեր, իսկ նրանց դիրքորոշումն արժանացել դիպուկ գնահատականների:

3.4. Հայկական հարցն «Ալ-Մուշիր»-ի երգիծապատկերներում

Ժամանակի կարևորագույն հիմնախնդիրները, այդ թվում՝ արդեն միջազգային դիվանագիտության հիմնախնդիր դարձած Հայկական հարցը, իրենց արձագանքն են գտել նաև երգիծապատկերների միջոցով³⁶⁶:

³⁶⁴ المقطع ” 23.08.1896, Նույն կերպ էր տրամադրված նաև Աբդուլ Համիդը գերմանական կայզեր նկատմամբ (Տե՛ս Եազրճեան Գ., Սուլթան Ապտիվ Համիտ Բ-ի Յուշերն ու մտածումները, Ապտիվ Համիտ Բ. Կարմիր սուլթանը, Պեյրուֆ, 1980, էջ 812, 817, հմմտ՝ «Հորիզոն», Թիֆլիս, 1913, թիվ 41, 42, 43, 44):

³⁶⁵ «Մուրճ», 1896, թիվ 7-8, էջ 1019:

³⁶⁶ Պետք է ասել, որ երգիծանքն արդեն իր հաստատուն տեղն էր գրավել արաբական մամուլում՝ այլ ժանրային արտահայտչամիջոցների կողքին: Առաջին արաբերեն երգիծաթերթը (أبو نظارة الزرقاء) «Կապույտ ակնոցավորը», հիմնադրվել է 1877 թ., Փարիզում, Յակուբ Սաննուի կողմից Տե՛ս. ص 283–284, فيليب دى طرازي

Ինչպես հայտնի է, արյունոտ սուլթանի քաղաքականությունը, նաև մեծ տերությունների դիրքորոշումը Հայկական խնդրում երգիծական արտացոլում են գտել ժամանակի հեղինակավոր ֆրանսիական “Le Rire”, “*L'Assiette au beurre*”, անգլիական “Punch” պարբերականներում: Կոպենհագենում 1903 թ. տպագրվել է Թուրքիայում բնակվող իսլամացած շվեդ գրող Ալի Նուրի Բեյի (Գուստավ Նուրինգ, 1861-1937) «Աբդուլ Համիդը Երգիծանկարներում» գիրքը³⁶⁷, որն ընդգրկում է կարմիր սուլթանին պատկերող երգիծանկարներ ու բանաստեղծություններ, որոնք, ի թիվս այլ երկույթների, դատապարտում են նաև հայոց ջարդերը:

Արաբալեզու մամուլում վերոհիշյալ շարքը լրացրեց «Ալ-Մուշիր»-ը³⁶⁸:

«Ալ-Մուշիր»-ի բազմաթիվ համարների առաջին էջերում երգիծապատկերների տեսքով ներկայացված են Օսմանյան կայսրության դրությունը և եվրոպական երկրներից նրա կախվածությունը³⁶⁹: Դրանց շարքում մեծ տեղ են գրավում Հայկական հարցին վերաբերող պատկերները, որոնց հիմնական հերոսը միշտ սուլթանն է կամ օսմանյան պետությունը՝ եվրոպական դիվանագիտության ճնշումների տակ կքած, իսկ գլխավոր թեման՝ չարչրկված Հայկական հարցը:

Երգիծական ժանրը, հատկապես քաղաքականը, կոչված է իրականության արատավոր ու ստվերոտ կողմերն ավելի տեսանելի և պատկերավոր արտահայտչամիջոցներով ներկայացնելու և դրանով իսկ դրանք մերժելու:

Մեր ունեցած երգիծապատկերներում արատավորն ու դատապարտելին օսմանյան կառավարությունն է և նրա արյունարբու ղեկավարը, ընդ որում, պետք է նշել մի հանգամանք, երգիծապատկերներում գրեթե բացակայում է գրոտեսկը. Աբդուլ Համիդին և նրա քաղաքականությունն արտացոլելու դեպքում դրա

³⁶⁷ Sté u Nouri A., Abdul –Hamid in Karikatur, Intimes aus Yidiz-Kiosk in Word und Bild, Zürich, 1904, p. 78-105, նաև՝ Բախչինյան Ա., Հայությունը սկանդինավյան երկրներում. հայ-սկանդինավյան պատմամշակութային առնչությունները (սկզբից մինչև մեր օրերը), Երևան, 2010, էջ 151:

³⁶⁸ Որոշ երգիծապատկերներ հրապարակվել են նաև «كشف/انتقاب» («Քողազերծում») երգիծաթերթում, որը հիմնադրել էր Ամին Արսլանը: Նա և “المشير”-ի խմբագիրը գաղափարակիցներ էին և սերտորեն համագործակցում էին նաև Փարիզում:

³⁶⁹ Մարթին Հարթմանն «Ալ-Մուշիր»-ը դասում է քաղաքական – առաջադիմական երգիծական պարբերականների շարքը՝ միաժամանակ նշելով Գերմանիայում եղած բացասական վերաբերմունքը պարբերականի նկատմամբ, ինչը պայմանավորված էր Սելիմ Սարգիսի կողմից գերմանական կայզերի հասցեին թերթում գրված վիրավորական արտահայտություններով, որոնց պատճառով նա ազատազրկման էր դատապարտվել (տե՛ս Hartmann M., նշվ. աշխ., p. 41):

անհրաժեշտությունն ամենևին չկար. իրականությունն ինքնին չափազանց ազդու էր: Ինչ վերաբերում է ծաղրանկարների հեղինակներին, ցավոք, նրանց անունները չեն հիշատակված: Արտանկարվածների վրա հղված է իրական աղբյուրը: Հարկ է շեշտադրել, որ երգիծանկարների մեծ մասը տեղադրված են պարբերականի առաջին էջերում, ինչն ակնառու կերպով վկայում է պարբերականի կողմից խնդրին տրված կարևորության մասին:

«Ալ-Մուշիր»-ն, արդարացիորեն, Օսմանյան կայսրությունը ներկայացրել է որպես քաղաքակրթության զարգացմանը խոչընդոտող գործոն³⁷⁰ (նկ. 1)³⁷¹ դրանով կարծես ամփոփելով մյուս պարբերականների հոդվածներում այս կամ այն ձևով հնչած միևնույն գնահատականը:

Պատկերում երևում է քաղաքակրթությունը, որը ցանկանում է երկրագունդը մաքրել աղտեղությունից: Նրան դա գրեթե հաջողվել է, սակայն ամբողջովին սև մի հատված կա (հատկանշական է՝ Աբդուլ Համիդի կերպարանքով, դեմքի խղճուկ արտահայտությամբ - Ն. Ե.), որը համառում է: Հոգնած, վերջին ճիգերը գործադրող քաղաքակրթությունը դժգոհում է՝ ասելով. «Արդեն ուժասպառ եմ երկրագունդը մաքրելով, մնացել է մի տարածք, որը համառորեն դիմադրում է ինձ»: Նրան պատասխանում է երկրագունդը՝ հորդորելով. «պետք չէ զարմանալ, Նորին մեծություն քաղաքակրթություն, չէ՞ որ դա Օսմանյան կայսրությունն է»:

Կայսրության գոյության հիմքում դրված էր բռնապետությունը, երկրում ծագած խնդիրները արյան մեջ խեղդելու քաղաքականությունը, և այն դատապարտված էր հետամնացության, որն իր բացասական ազդեցությունն է թողել նրա կազմում գտնվող ժողովուրդների քաղաքակրթական զարգացման բնականոն ընթացքի վրա³⁷¹:

Ներքին փտախտը, որն սկսվել էր կայսրության կյանքում, «Հիվանդ մարդու» կործանումն էր ահազանգում, որը շատ լավ է երևում մահացող մարդու հետ դրա

³⁷⁰ "المشير", 1895. 17, 07,

³⁷¹ Օսմանյան կայսրության «քաղաքակրթական միսիայի» մասին տե՛ս Ներսիսյան Մ., Պատմության կեղծարարները, հոդվածներ և հաղորդումներ, Երևան, 1998, էջ 7-57:

համեմատության մեջ՝ «Ինչպես է կործանվում երկիրը» վերտառությամբ ծաղրանկարում³⁷² (նկ. 2):

Եվրոպական տերություններին, որոնց քաղաքականությունն առանցքային նշանակություն ուներ աշխարհում խաղաղության և անվտանգության պահպանման տեսանկյունից, այդ կործանվող պետության գոյատևումը դեռևս անհրաժեշտ էր՝ քաղաքական ուժերի հավասարակշռությունը պահպանելու նպատակով, մինչև համաձայնության կգային կայսրությունը մասնատելու հարցում:

«Ալ-Մուշիրում» վերոհիշյալն այլաբանորեն արտացոլված է Օսմանյան կայսրության գլխի տեսքով՝ վերնագրված «Ֆիզիոնոմիկան և Օսմանյան կայսրությունը»³⁷³ (նկ. 3):

Օսմանյան պետության գաղափարական բովանդակությունը երգիծանկարի հեղինակը տեղադրել է թուրքական գլխում՝ մեծ և կենտրոնական մասնաբաժիններ հատկացնելով «Բռնությանը», «Ընչաքաղցությանը», «Արյունահեղությանը», «Լճացմանը», «Բռնատիրությանը», «Ստին», «Ավերածություններին», մինչդեռ «Խիղճը», «Հավասարությունը», «Սերը», «Հայրենասիրությունը», «Խիզախությունը», և բազմաթիվ այլ դրական հասկացություններ փոքր մակերեսներով հազիվհազ տեղավորվել են գլխի եզրագծերի մոտ, կարծես, ուր որ է, դուրս են գալու:

Հեղինակի կարծիքով դա լավագույնս ներկայացնում է Օսմանյան կայսրության գլուխը, իսկ ինչ վերաբերում է մարմնին, ապա նա ձեռնպահ է մնում այն նկարելուց, քանի դեռ եվրոպական տերությունների միջև համաձայնություն գոյություն չունի դրա ձևի շուրջ:

«Երկդեմ Թուրքիա»³⁷⁴ (նկ. 4) վերտառությամբ ծաղրանկարում արդեն երևում է այն Թուրքիան, որը ձգտում էր աշխարհից իր ներքին խնդիրները թաքցնել և ներկայանալ հզորի կերպարանքով:

Օսմանյան Թուրքիայի դեմքն աբդուլհամիդական է՝ սև ու սպիտակ լույսի ներքո: Հեղինակը բացահայտել է նրա դիքորոշումը՝ ասելով, որ Թուրքիան երկու դեմք ունի.

³⁷² “المشير” 26.06.18 («Հիվանդ մարդը» խորագիրը կրող երգիծապատկերների մի շարք է հրատարակել նաև Գուստավ Նուրինգը տե՛ս Nouri A., նշվ. աշխ., էջ 87-90):

³⁷³ “المشير” 1895. 23, 11,

³⁷⁴ Նույն տեղում, 7 դեկտեմբերի:

Եվրոպային նա ներկայանում է սպիտակամաշկ, ձեռքին ձիթենու շյուղ, ինչը խորհրդանշում է խաղաղություն և հաղթանակ: Մյուս դեմքով նրան տեսնում է կայսրության ժողովուրդը՝ սևացած կերպարանքով, ճոճվող սուրը ձեռքին՝ ողողված անմեղ զոհերի արյամբ:

Գաղտնիք չէ, որ սուլթանը ձգտում էր աշխարհից թաքցնել երկրի իրական վիճակը, ապատեղեկատվություն էր տարածում կայսերահպատակ քրիստոնյաների դրության վերաբերյալ՝ զսպաշապիկ հագցնելով ոչ միայն օսմանյան, այլև արտասահմանյան որոշ պարբերականների: Այդպիսի կեղծիքների կարելի է հանդիպել նաև Եգիպտոսի արաբական մամուլի՝ օսմանյան պաշտոնական լրահոսի վրա հիմնվող պարբերականներում: Դրանցում թերհավատություն է արտահայտվում երկրում տիրող խռովությունների, կոտորածների վերաբերյալ շրջանառվող լուրերի իսկության մասին: Իսլամական «Ալ-Մուայյադ»-ի հոդվածներից մեկում նշվում է, որ Կ.Պոլիսը հանդարտ բազմել է Բոսֆորի ափին, այն ապրում է իր սովորական առօրյայով, և դժվար է հավատալ պտտվող «անհիմն» լուրերին³⁷⁵: Թերթն ակնհայտորեն սխալվում էր մայրաքաղաքը որպես չափանիշ ընդունելու իր տեսակետում, քանի որ երկրի խոշոր քաղաքներում իրավիճակը հիմնականում ավելի խաղաղ և ապահով էր, հայերը նույնպես այդ քաղաքներում անհամեմատ ավելի ապահով դրության մեջ էին, քան բուն հայկական մասերում:

Արդեն հիշատակված «Մեծ վախ»³⁷⁶ հոդվածը՝ երկրի խորքն օտարերկրացի լրագրողների մուտքն արգելելու մասին, վերհանում է ասվածի ապացույցը: Թերթում այս առիթով ասվում էր, որ ակնհայտ է թուրքական խորամանկությունն՝ այդ միջոցով ճշմարտությունը կոծկելու գործում:

Օսմանյան կայսրության կործանման իրական ակունքներն առաջին հերթին դրա հետադիմական քաղաքականության մեջ էին: Ուժի ու բռնության սպառնալիքը երբևէ խաղաղության երաշխիք չէր դառնալու: Հոգեվարքի մեջ գտնվող պետությունը փրկելու վերջին ճիգերը՝ Սահմանադրական շարժումը, դրան ուղղորդող նոր օսմանների, ապա երիտթուրքերի քաղաքական հայեցակարգերը ի զորու չեղան շոշափելի

1896. 13.07. "المؤيد"³⁷⁵
, 1895. 07, 02. "المشير"³⁷⁶

բարեփոխումներ կատարելու, քանի որ դրանց իրական նպատակը կայսրության միասնության պահպանումն էր ու համիսլամականության ամրապնդումը, հետագայում՝ թուրքականացումը, որոնք հակասում էին և անհամատեղելի էին երկրի կազմում գտնվող ժողովուրդների շահերին: Այդ ամենը որևէ կերպ չէր փոխում ազգային փոքրամասնությունների նկատմամբ կիրառվող հարստահարություններն ու իրավական, հարկային քաղաքականությունը:

Առաջին հերթին հանդես գալով ի դեմս Մեծ Բրիտանիայի՝ եվրոպական երկրները Օսմանյան կայսրությանը սկսել էին վերաբերվել ոչ թե որպես առաջադիմության արգելակի, այլ ուժերի հավասարակշռություն պահպանելու անհրաժեշտ գործոնի, ուստի շեշտադրում էին ոչ թե այն քայքայելու, այլ բարեփոխման ուղիներ գտնելու միտումները: Օսմանյան կառավարությունը, ի դեմս արյունարբու սուլթանի, ճիշտ կարողացավ գնահատել հայերի դերակատարությունը մեծ քաղաքականության մեջ և տերությունների բարդ փոխհարաբերությունները ուղղորդելու տեսանկյունից: Նա սկսեց վարպետորեն խուսափել՝ համապատասխան կողմը թեքելով հավասարակշռության նժարներից իր իսկ ցանկացածը:

Դա երևում է «Ալ-Մուշիր»-ի հերթական երգիծապատկերում (նկ. 5): Անգլիան խաղում է մի կողմում, Ռուսաստանը և Ֆրանսիան՝ մյուս, սուլթանն անսասան վայելում է կենտրոնական դիրքը, մինչև հորիզոնում Հայաստանի երևալը՝ սև հագուստով աղջկա կերպարանքով, որը ողբում էր ու պատմում հեղափոխությունների, մեծ խնդիրների մասին: Անգլիան թողնում է իր խաղը՝ ընդառաջ գնալով բռնության ենթարկված օրիորդին: Դրանից խախտվում է հավասարակշռությունը և սուլթանը հզոր անկում է ապրում՝ վայր ընկնելով իր կենտրոնական դիրքից³⁷⁷:

«Ալ-Մուշիրն» իր երգիծանկարներում ցույց է տվել, որ խնդրի ակունքները սկիզբ էին առնում «Արևելյան հարցից», որը ձևավորվել էր Օսմանյան կայսրության հետ եվրոպական տերությունների և Ռուսաստանի դիվանագիտական հարաբերությունների արդյունքում: Մեծ տերությունները ձգտում էին օգտագործել թուրքական տիրապետության դեմ ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարը և

³⁷⁷ Նույն տեղում, 21 օգոստոսի:

ռազմաքաղաքական ու տնտեսական առավելությունների հասնել: Իսկ շարժառիթը կայսրության բռնապետական բնույթը, նրա տիրապետության տակ դարեր շարունակ ճնշված և կեղեքված ժողովուրդների ազատագրական մաքառումներն էին: Եվրոպական դիվանագիտությունը կառչել էր այդ պայքարից՝ թուրքահպատակ քրիստոնյաներին օգնելու պատրվակով փլուզում ապրող կայսրությունում արտոնյալ դիրքեր նվաճելու համար:

Ինչպես երևում է երգիծանկարում³⁷⁸ (նկ. 6) եվրոպական տերությունները ջանքեր են գործադրում հավասարակշռության մեջ պահել սուլթանի գահը (պետք է նկատել, որ դա կատարում են սրերի միջոցով), իսկ ներքևում քրիստոնյա ազգերը փորձում են վառել ռումբի պատրույգը, որն Արևելյան հարցն է ներկայացնում: Նույնաբնույթ մեկ այլ դեպքում (նկ. 7) շեշտադրվում են ազգային-ազատագրական շարժումները: Այս դեպքում սուլթանն ավելի վատ վիճակում է և առավել դժվար է դարձել նրան օժանդակելը:

Այն վերնագրված է «Թուրքիան և Եվրոպան»³⁷⁹: Սուլթանը, որը չափազանց շատ է ծանրացել, ստիպված է հաղթահարել կայսրության նահանգներում ծագած ապստամբությունների փորձությունը: Նա միայնակ չի կարողանում դա անել, Եվրոպան է նրան փորձում անցկացնել՝ իր ուսերի վրա տանելով: Եթե սուլթանը վայր ընկնի, կխոցվի ներքևում սպառնացող թրերով, որոնց վրա գրված են ազգային-ազատագրական պայքարի ելած երկրների անունները, դրանց թվում՝ նաև Հայաստանը:

Օսմանյան Թուրքիայի ներքին քաղաքականությանը միջամտելու արտաքին ձգտումների հարցում Ռուսաստանի գործոնը որոշիչ էր: Բոսֆորին տիրելու և դեպի Դարդանեյլ անցնելու ռուսական հավակնություններն արգելելուն էր ուղղված եվրոպական դիվանագիտությունը:

Մեծ Բրիտանիայի կողմից Մերձավոր Արևելքում Օսմանյան կայսրությունը որպես եվրոպական հավասարակշռության պահպանման գործոն դիտարկելու պարագայում Արևմտյան Հայաստանը ձեռք էր բերել կարևոր ռազմավարական նշանակություն՝

³⁷⁸ Նույն տեղում, 1897, 8 մայիսի:

³⁷⁹ Նույն տեղում, 10, հունիսի:

Փոքր Ասիայում և Բալկաններում Ռուսաստանի վերահսկողություն հաստատելը կանխելու ակնկալիքով:

Տերությունների դիվանագիտությունն օսմանյան Թուրքիայի նկատմամբ պատկերվել է նաև հետևյալ ձևով. (նկ. 8):

Երեք տերությունները կախաղանի օղակն անցկացրել են Աբդուլ Համիդի պարանոցին և սպառնում են նրան մահապատժով: Որոշիչ դերակատարությունը ստանձնել է Անգլիան, որը բռնել է պարանը՝ մյուս ձեռքին պահելով մկրատը, որով կարող է զանկացած պահի կտրել այն և կյանք պարգևել օսմանյան Թուրքիային: Պարանի ծայրը Ֆրանսիայի ձեռքին է, որն Անգլիայի կողքին է կանգնած և դիտում է, սակայն նրա մյուս ձեռքին գավազան է դրված: Այս երեքին սաստում է ետևում կանգնած Ռուսաստանը, որն ուշիուշով հետևում է նրանց՝ իր գավազանը ձեռքին³⁸⁰:

Թերթը չի մեղանշել ճշմարտության առաջ՝ Օսմանյան կայսրության նկատմամբ տերությունների քաղաքականությունը դիտարկելով որպես առևտրային բանակցություններ: Լավագույնս արտահայտված է անգլո-ռուսական մրցակցությունը՝ Հայկական հարցի շահարկումով կայսրությունից նոր զիջումներ կորզելու ակնկալիքով: Երբ երկու քաղաքական հսկաները հայտարարում էին կայսրության քրիստոնյա բնակչության շահերի պաշտպանը լինելու մասին, նրանք միևնույն ժամանակ շոշափելի արդյունքների էին հասնում իրենց ամբողջատիրական ձգտումներում: Քրիստոնյա բնակչությունը շարունակում էր հալածանքների ու կոտորածների ենթարկվել, իսկ տերությունները ստանում էին իրենց ցանկացածը կայսրությունից, ճիշտ այնպես, ինչպես ներկայացված է թերթում (նկ. 9):

Թուրքիան տիրապետում էր որոշակի ապրանքների՝ տարածքների տեսքով: Դրանց պահանջարկն աստիճանաբար ավելանում էր, իսկ արժեքը նվազում՝ վերածվելով պարզ ապրանքափոխանակության: Անգլիան Եգիպտոսն էր քաշում, Ռուսաստանը՝ Ասիական մասերը, Հունաստանը՝ Կրետեն, Ֆրանսիան ձգտում է մոտենալ Թունիսի կողմից: Հատկանշական է, որ Հայաստանը գտնվում է Անգլիայի և

³⁸⁰ Նույն տեղում, 1895, 16 հոկտեմբերի:

Ռուսաստանի թիկունքում, փաստորեն ամրապնդելով վերջինների դիրքերը Փոքր Ասիայում և Եգիպտոսում:

Տարածքային զոհողությունների գնով ձեռք բերած հարաբերական ազատությունը սուլթանն օգտագործում էր իր տարբերակով՝ գործադրելով խնդրահարույց ժողովրդին բնաջնջելու ծրագիրը.

Դա լավ է երևում «Գահին բազմել է մարդասպանը»³⁸¹ (նկ. 10)՝ Գլադսթոնի տված հայտնի բնորոշմամբ³⁸² վերնագրված պատկերում (նկ. 14): Թուրքական յաթաղանի հարվածից տապալվել է հայ կինը, յաթաղանի շեղբին գրված է «բռնություն», իսկ մյուս ձեռքին՝ «ինձանից հետո՝ թեկուզ ջրհեղեղ»: Նկարի հեղինակը նշել է, որ այդպես է պատասխանել Գլադսթոնը «Հայաստանը և նրա տառապանքները» աշխատության հեղինակ Ու. Ուինթլին³⁸³:

Տերությունների վարած քաղաքականության բացասական ազդեցությունը հայերի կոտորածների խնդրում պարբերականն այսպես է պատկերացնում.

Մահը պատրաստվում է մտնել Հայաստան այն դռան միջով, որի բանալիները Եվրոպան է առաջարկում նրան (նկ. 11):

Մեկնաբանված է այսպես. «Մահվան գույքը շարժվեց, երբ տեսավ, թե ինչ սպանդի և բռնությունների են ենթարկվում հայերը: Նա Եվրոպային հորդորում է բացել հայերին դեպի հանգստություն և խաղաղություն տանող դուռը, այլապես իր հետ կտանի հայերին, քանի որ մահը նույնպես խաղաղություն է նշանակում»³⁸⁴:

1882 թվականից, երբ Եգիպտոսում հաստատվեց բրիտանական գաղութարարությունը Եգիպտոսի պարբերական մամուլի վերաբերմունքը հայկական խնդրում և ընդհանրապես ցանակացած քաղաքական իրադարձության նկատմամբ որակապես փոխվեց:

Ձևավորվող ազգային գաղափարների ազդեցությունը կրող եգիպտական հասարակությանը մտահոգում էր բրիտանական ներկայությունը, և այն հանդես էր գալիս երկիրը բրիտանական զորքերից ազատելու պահանջով:

³⁸¹المشیر, 1896, 26.09.

³⁸² The New York Times, 12.09.1896:

³⁸³ Wintle W. J., Armenia and its Sorrows, London, 1896, p. 119.

³⁸⁴المشیر, 1896, 10, 02:

Սակայն Մեծ Բրիտանիան հապաղում էր դուրս գալ Եգիպտոսից և ձգտում էր երկարաձգել իր մնալու ժամանակը: Այդ խնդրով իր հերթին մտահոգված էր նաև Ֆրանսիան:

Ծաղրանկարը, որը արտատպված է «Քաշֆ ան-Նիկար» թերթից, ցայտուն ձևով է պատկերել հակամարտությունը (նկ. 12):

Եգիպտական բուրգերի հետնախորքի վրա պատկերված անգլիացի զինվորի ոտքերից արմատներ են աճել հողի մեջ, նրան դիմում է ֆրանսիացին՝ ասելով, որ Անգլիան պարտավոր է հեռանալ Եգիպտոսից: Վերջինս պատասխանում է. «Ինչպե՞ս դա անեմ, եթե իմ երկու ոտքերն ել արդեն արմատակալել են Եգիպտոսի հողում»³⁸⁵:

Եգիպտոսի կորուստը մեծ հարված էր Օսմանյան կայսրության համար: Սուլթանը ձգտում էր սանձել Անգլիային՝ Ռուսաստանի հետ հարաբերությունները կարգավորելու սպառնալիքով, իսկ Անգլիան, Հայկական հարցի վերաբացումը շահարկելով, ձգտում էր զսպել Թուրքիային և ստիպել նրան հաշտվել իր՝ Եգիպտոսում հաստատված լինելու հետ: Անգլիան Ռուսաստանին սիրաշահելով էր զբաղված, երբ խոստանում էր Թուրքիայի հաշվին մեծ զիջումների (այդ թվում՝ Հայաստանը նվիրաբերել) գնալ: Իսկ Ռուսաստանն իր հերթին հետևում էր, թե ինչով կավարտվեին Եգիպտոսի գրավումից հետո առավել սուր բնույթ ձեռք բերած անգլո-թուրքական հակասությունները:

1890-ականներին արդեն, չնայած Անգլիան շարունակում էր սպառնալ Աբդուլ Համիդին այնուամենայնիվ անգլիական կառավարության բողոքներն ու սպառնալիքները, հանրային կարծիքի ընդվզումները չկարողացան կանխել հայ բնակչության կոտորածները:

Մայիսյան բարենորոգումների ծրագիրը, որ երեք տերությունների կողմից ներկայացվել էր Աբդուլ Համիդին, կարելի էր բնութագրել որպես քաղաքական ճնշումների գագաթնակետ:

Արդյունքում, երբ միակարծիք հանդես եկան երեք տերությունները, Աբդուլ Համիդի ոչ միայն պարանոցը, այլ նաև ոտքերն էին հայտնվել կապանքների մեջ (նկ. 13):

³⁸⁵ "المشير", 5, 10, 1896:

Ռուսաստանը, Անգլիան և Ֆրանսիան ձգտում էին սուլթանին «Բարենորոգումների ճանապարհով» հասցնել մինչև «Արդարության», «Հավասարության», «Արդարացիության» հանգրվան³⁸⁶:

Պարբերականը ուշիուշով հետևել է Մեծ Բրիտանիայի քաղաքական գործիչների կողմից Հայկական հարցի արծարծմանը: Ներկայացնելով Ռոբերտ Սոլսբերիի և Ուիլյամ Գլադստոնի գործունեությունը՝ ընդգծում է, որ հարկ եղած ուշադրությունը չի հատկացվում Հայկական խնդրին:

Մեծ Բրիտանիայի հանդուրժող դիրքորոշումը օսմանյան սուլթանի նկատմամբ պարբերականի էջերում արտացոլված է աստիճանաբար աճող զարմանքի և հուսախաբության տոնայնությամբ. «...թեև Մեծ Բրիտանիան կարող է միջամտել Հայկական խնդրին, սակայն դա չի իրականացնում, չնայած Սոլսբերիի խոսքերին, թե «...այս լճացած պետությունը բարենորոգումներ չի իրականացնի, մինչև նրան երկաթե ձեռքով չստիպենք դա կատարել»³⁸⁷:

Սուլթանի մերժողական կեցվածքը և երկար ձգձգելուց հետո միայն բարեփոխման կատարելուն համաձայնելն, արժանացել են «Ալ-Մուշիր»-ի բացասական գնահատականին՝ ոչ միայն երգիծանկարներում, այլև բազմաթիվ հոդվածներում: Պարբերականի կարծիքով Բրիտանիան մեղմ էր վարվում սուլթանի հետ՝ «միայն Թուրքիայի քիթը տրորելով»³⁸⁸:

«Ճնշումը փոքր-ինչ ավելացնելու դեպքում Թուրքիան շունչը կփչի»³⁸⁹ վերնագրված պատկերում (նկ. 14), ինչպես երևում է, հավասարակշռությունը կշեռքի վրա կարող է պահպանվել միայն Հայաստանի խնդիրը լուծելով, իսկ կշռաքարերից ամենկարևորն Անգլիան է: Աբդուլ Համիդը գրեթե շնչահեղձ է լինում ծանրության տակ: Հեղինակը, որպես հետգրություն, տեղեկացնում է, որ «Ալ-Մուշիր»-ի այս համարի տպագրումից առաջ Հավասից հեռագիր է ստացվել սուլթանի կողմից տերությունների առաջարկած պայմաններն ընդունելու մասին:

³⁸⁷ Նույն տեղում:

³⁸⁸ Նույն տեղում, 7 փետրվարի:

³⁸⁶ “المشير” 1895.19.10.

³⁸⁹ “المشير” 1895.09.04.

Սուլթանը, սակայն, ձևականորեն ընդունելով պայմանները, չէր հրաժարվել իր ընտրած քաղաքական գծից. մի կողմից նա հայտարարում էր բարենորոգումներ իրականացնելու մասին, մյուս կողմից՝ շարունակում բարեփոխումների անհրաժեշտությունը զգացող հայ բնակչության կոտորածները (նկ. 15):

Աբդուլ Համիդը նստած է կենտրոնում, հագուստին նկարված են գանգեր, ոսկորներ, ձախ ձեռքով հեռագիր է ուղարկում Սուլթերին՝ եվրոպական տերություններին բարեփոխումներ խոստանալով, միևնույն ժամանակ աջ ձեռքով հեռագիր է ուղարկում դեպի վիլայեթներ՝ քրդերին և թուրք զինվորներին հրամայելով բնակչությանը կոտորել: Այս երգիծանկարում հստակ պատկերված է նաև այն, որ իրականում օսմանյան պետությունն ընթանում էր միայն Աբդուլ Համիդի հրամաններով: Հայտնի է, որ նա հատկապես հայերին առնչվող հարցերում անմիջականորեն ինքն էր հեռագրերի միջոցով հրահանգներ արձակում նահանգների տեղական կառավարիչներին՝ շրջանցելով կառավարությանը³⁹⁰:

«Ալ-Մուշիրն» իր գլխավոր խնդիրն էր համարում հասարակությանն առավել սպառիչ և հասկանալի ձևով ներկայացնել կայսրությունում տիրող իրավիճակը, ինչը պետք է հաջողված համարել, քանի որ թերթը երգիծապատկերների միջոցով կարողացել է արտացոլել իրականությունը, ինչն իականացրել էր նաև իր բազմաթիվ հոդվածներում:

Հայկական հարցը դիտարկվել է Եգիպտական հարցի հետ միևնույն հարթության վրա՝ արժանանալով թերթի չմարող հետաքրքրությանը: «Ալ-Մուշիր»-ն իր ծաղրանկարներում ճշմարիտ պատմական հենքի վրա կարողացել է ներկայացնել այնպիսի իրողություններ, ինչպիսիք են.

Օսմանյան կայսրության գոյությունը որպես իր կազմում գտնվող ժողովուրդների քաղաքակրթական զարգացմանը խոչընդոտող գործոն:

Օսմանյան կայսրության քաղաքական դրությունը XIX դարի վերջին՝ ընդգծելով կայսրությունը դեպի կործանում տանող ներքին և արտաքին պատճառները:

³⁹⁰ Հայոց պատմություն, հ. III, գիրք I, էջ 507:

Հայկական հարցը և Արևմտյան Հայաստանում բարեփոխումների իրականացման խնդիրը Եվրոպական տերությունների և օսմանյան կայսրության քաղաքական առճակատումներում:

Եվրոպական տերությունների վարած քաղաքականությունն Օսմանյան կայսրության նկատմամբ Հայկական հարցի շահարկման միջոցով նրանից հնարավոր քաղաքական զիջումներ կորզելու ակնկալիքով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

19-րդ դարի վերջին քառորդին Եգիպտոսի գաղափարական դաշտը ձևավորող հիմնական պարբերականներում Հայկական հարցը լուսաբանող հրապարակումների ուսումնասիրությունը, դրանց քննությունը ինչպես հայ և միջազգային պարբերական մամուլի, այնպես էլ ժամանակի այլ կարևոր սկզբնաղբյուրների հետնախորքում, թույլ է տալիս հանգելու հետևյալ եզրակացությունների.

- Ուսումնասիրվող ժամանակահատվածում պատմական զարգացման յուրահատուկ փուլ թևակոխած Եգիպտոսի արաբալեզու մամուլը, գտնվելով խոսքի ազատությանը նպաստող համեմատաբար տանելի իրադրությունում, մեծ տեղ է հատկացրել հայկական հիմնախնդիրների լուսաբանությանը: Այդ է վկայում ինչպես եգիպտական տարբեր հասարակական հոսանքների խոսափող հանդիսացող լրատվական թերթերում, այնպես էլ գիտական հեղինակավոր հրատարակություններում խնդրին առնչվող պատկառելի նյութի առկայությունը:
- Եգիպտոսի արաբալեզու պարբերական մամուլը, մեկնարկելով Եգիպտոսի ազգային շահերի ելակետից, գործուն Երկխոսության մեջ գտնվելով մի կողմից միջազգային պարբերական մամուլի, մյուս կողմից՝ օսմանյան պաշտոնական մամուլի հետ, բազմաթիվ հրապարակումներում արտացոլել է Հայկական հարցը՝ XIX դարավերջի իր հիմնական զարգացումներով: Դրա վերաբերյալ արձանագրել է սեփական գնահատականները և իր ընթերցողին իրազեկել այդ մասին՝ խնդրի շուրջ ձևավորելով Եգիպտոսի հանրության կարծիքը:
- Խնդրո առարկա պարբերականները ժամանակի համաշխարհային մամուլի անքակտելի մասն են, և միանգամայն արդարացված է, որ դրանց էջերում տեղ գտած հրապարակումներն առավելապես շոշափել են միևնույն թեմատիկան, արտատպումներ կատարել, հղել կամ քննարկել ժամանակի ամերիկյան, եվրոպական, ռուսական հեղինակավոր թերթերի և լրատվական գործակալությունների կողմից արձարծված նյութերը: Թվարկվածների

շարքում, հասկանալի դրդապատճառներով, գերակշռող են բրիտանական և օսմանյան պաշտոնական լրատվամիջոցները:

- Արևմտահայ իրականության իմացության աստիճանը եգիպտական հանրության շրջանում հնարավոր է հստակ վերարտադրել՝ ելնելով մամուլի էջերում հիմնախնդիրը ներկայացնող հասկացությունների և բովանդակային կաղապարների առատությունից: Այսպես. Եգիպտոսի ընթերցողի ունկին սովորական էին ու ինքնին հասկանալի իրողություններ «Հայկական հարցը», «Հայկական խնդիրը», «Հայերի դրությունը», «Հայերի կոտորածները», «Վայրագությունները Հայաստանում» «Հայկական դեպքերը», «Հայերը և Եվրոպան», «Հայկական ճգնաժամը» և արևմտահայ իրականությունը բնորոշող բազմաթիվ այլ կապակցություններ: Դրանք ամենօրյա իրազեկման բաղկացուցիչներ էին, որ ձևավորում էին եգիպտացի ընթերցողի վերաբերմունքը հայկական իրողությունների հանդեպ՝ աշխարհընկալման, բովանդակային, զգայական նաև՝ իմացական մակարդակներում:
- Արևտյան Հայաստանի դրությունը և արևմտահայությանը հուզող խնդիրները համապատասխան արձագանք են գտել Եգիպտոսի մամուլում՝ առավելապես ժամանակի իրականությունը բնութագրող հրապարակումներով: Առաջին հերթին ընդգծված են այնպիսի ճշմարտություններ, ինչպիսիք են Արևմտյան Հայաստանի՝ աշխարհագրական առումով Օսմանյան կայսրության համար ռազմավարական կարևորություն ունենալը և արևմտահայերի բարձր քաղաքակրթական մակարդակը, դրա կողքին նաև՝ օսմանյան պետության հետադիմական բնույթը և քաղաքակրթական արժեքները մերժելու հանգամանքը:
- Արևմտյան Հայաստանի դրությունը ներկայացնող հրապարակումները մերկացրել են Օսմանյան կայսրության կողմից հայերի նկատմամբ իրականացվող ցեղասպանական քաղաքականության հետևյալ դրսևորումները. հայերի թվաքանակը դիտավորյալ նվազեցնելուն միտված քայլերը, վիճակագրական գործընթացներում դրա մտածված նվազ

ներկայացնելը, քրդերին հայերի դեմ սադրելը, դաժան հարկային քաղաքականությունը, կրոնական խտրականությունը, հայերի իրավազրկությունը, սովը, մտավորականության և հոգևոր դասի նկատմամբ հալածանքների սաստկացումը:

- Լայն մեկնաբանության է արժանացել Հայկական հարցի բովանդակային կողմի քննությունը: Այս ամենը հիմնականում արտացոլվել է ճշմարտությանը համապատասխան և անաչառ: Օսմանյան լրահոսի վրա հիմնվող պարբերականների վերաբերմունքը զգալի չափով տարբեր է, սակայն թուրքական հայտնի ձեռագիրն իսկույն թույլ է տալիս բնութագրելու հրապարակված նյութերի ծագումը: Սրա առկայությունն ինքնին նկատելի է դարձնում վերջինների և եգիպտական մամուլի այլ օրգանների միջև Հայկական հարցի վերաբերյալ առկա ընկալումների ու մեկնաբանությունների հակասությունները:
- 1894-1896 թթ. հայերի կոտորածների մասին միջազգային մամուլում տպագրվող կցկտուր հրապարակումների շարքը լրացնելու են կոչված դրանք լուսաբանող բազմաթիվ հոդվածները Եգիպտոսի արաբալեզու մամուլի էջերում: Այստեղ տեղ են գտել կոտորածների ամենադաժան նկարագրությունները. արժեքավոր են հատկապես Սասունի, Ուրֆայի, Կ. Պոլսի կոտորածներին վերաբերող հրապարակումները՝ հիմնված ականատեսների նամակների, քաղաքական գործիչների, լրագրողների տեղեկատվության վրա:
- Ուրվագծված են հայ ազգային-ազատագրական շարժման զարգացման միտումները՝ հատկապես Զեյթունի ինքնապաշտպանության, Օսմանյան բանկի վրա կատարված հարձակման և Գում Գափուի ցույցի իրողություններով: Ընդ որում, երբ խոսքը գնում է հայերի նկատմամբ օսմանյան կառավարության ցեղասպան դիրքորոշման մասին, բազմաթիվ հոդվածներում շեշտադրված է այն հիմնական դրույթը, որ կայսրության վարած քաղաքական ուղղությունն է հանգեցրել հայերի շրջանում քաղաքական կուսակցությունների ձևավորմանը,

ինչպես և այն, որ ստեղծված անելանելի իրավիճակն է հայերին դրդել՝ ապավինելու տերությունների աջակցությանը:

- Հայերի կոտորածների իրականացման հեղինակները խնդրո առարկա մամուլում անժխտելի կերպով համարվում են սուլթանը և օսմանյան կառավարությունը, իսկ կատարողը՝ օսմանյան կանոնավոր բանակը՝ օժանդակ համիդետական խմբերի և այլ խաժամուժի հետ: Շեշտադրված է կոտորածները դիտավորյալ կերպով, կանխամտածված իրականացնելու հանգամանքը:
- Արևմտյան Հայաստանում բարեփոխումների իրականացման խնդրի քննությունը հատուկ տեղ ունի խնդրո առարկա մամուլում: Դա պայմանավորված է հատկապես տվյալ շրջանում կայսրության կողմից առաջադրված ընդհանրական բարեփոխումների ծրագրի շահարկումով: Ձևավորվող ազգային գաղափարների պայմաններում նկատելի է արաբներին կայսրության մյուս ժողովուրդներից գերադասելու միտումը, իսկ բարեփոխումների իրականացումը նախընտրելի է համարվում կայսրության ամբողջ տարածքում: Այս միտքը շրջանառվել է ինչպես օսմանյան լրատվությանը հետևող թերթերում, այնպես էլ Եգիպտոսի ազգայնական և երիտթուրքական թերթերում, քանի որ դրանք միաձայն կերպով դեմ էին միայն հայկական նահանգներում բարեփոխումների իրականացմանը:
- Մեծ տերությունների քաղաքականությունն Օսմանյան կայսրության նկատմամբ խնդրո առարկա թերթերի մշտական քննության նյութն է: Հասկանալի դրդապատճառներով Մեծ Բրիտանիայի քաղաքականությունն առաջնակարգ ոլորտ է համարվել և համապատասխան լուսաբանության արժանացել: Հայկական հարցի շահարկումը Բրիտանիայի հավերժական շահերի համար՝ մինչ նրա Եգիպտոսում հաստատվելը, այնուհետ՝ այնտեղ իր ներկայությունն ամրապնդելու նպատակով, լավագույնս ուրվագծված է եգիպտական մամուլում: Հստակ զուգահեռներ կան Հայկական հարցի և Եգիպտական հարցի միջև: Սրանով պայմանավորված՝ կտրուկ գնահատականներ են հնչում բրիտանական քաղաքականության նկատմամբ՝ այն մասնավորեցնելով նաև

Հայկական հարցում: Այդ հետնախորքի վրա ընդգծված է Ռուսաստանի որոշիչ դերակատարությունը, կատարված են դիպուկ եզրահանգումներ՝ Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանմանը հետամուտ և Հայկական խնդրում տերությունների կեղծ քաղաքականության վերաբերյալ: Այս խնդրում Եգիպտոսի արաբալեզու պարբերականների գնահատականներն ունեն քննադատական ուղղվածություն:

- Կարևոր է ընդգծել, որ չնայած XIX դարավերջին Եգիպտոսում նոր էին ծնավորվում ազգայնական շարժումը, քաղաքական կուսակցությունները, այնուամենայնիվ, գաղափարական ոլորտում դրանք մի հայտնի չափով ազդեցություն ունեին Եգիպտական հանրության վրա: Նշված իրողություններն ամրապնդելու առաքելությունը գլխավորապես դրված էր պարբերական հրատարակությունների ուսերին, ուստի, կարծում ենք՝ հնարավոր է անվերապահ կերպով փաստել, որ Եգիպտոսի ազգային շահը միավորող գործոն էր մամուլի գրեթե բոլոր օրգանների համար: Ստեղծված էր յուրահատուկ *ազգային* հայելի, որի միջով էր գնահատվում իրականությունը: Սա նկատելի է մամուլի գրեթե բոլոր հրատարակություններում: Հայկական հարցի նկատմամբ հետաքրքրությունը, դրա ընկալման և լուսաբանության առանձնահատկությունները նույնպես մեծապես կրում են նշվածի ազդեցությունը:

1.Արխիվային սկզբնաղբյուրներ

ա) Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ)

1.1. Ֆ. 56, ց. 17, գգ. 55, 58, 59:

բ) Մ. Մաշտոցի անվան Մատենադարան

1.1. Անձնական դիվան կաթողիկոս Իզմիրլյանի, 1835-1910 թթ., թղթ. 34, վավ. 10-14:

2.Հրատարակված սկզբնաղբյուրներ

ա) հայերեն

2.1. Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, 1878-1880, Կ.Պոլիս, 518 էջ:

2.2. Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, 1890-1896, Կ.Պոլիս, 142, 152, 42 էջ:

2.3. Լէօ, Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915, 440 էջ:

2.4. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Զ. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, Հայաստան, 1972, 810 էջ:

2.5. Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմողներ՝ Մ. Գ. Ներսիսյան, Ռ. Գ. Սահակյան, Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Երևան, Հայաստան, 1991, 758 էջ:

2.6. Մարաշի Տէր Ղեւոնդ քահանայի Յուշերը, կազմեց Վ. Տեր-Ղևոնդյանը, Երևան, Անտարես, 2013, 464 էջ:

2.7. Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան (1873-1910 թթ.), գիրք Ը, կազմող և առաջաբանի հեղինակ Սանդրո Բէիբուդեան, Երեւան, Հայաստան, 2001, 972 էջ:

ա) քուերեր

- 2.8. Братская помощь пострадавшим в Турции армянам, факсимильное воспроизведение издания 1898 года, Ереван, Лусабац, 2014, 959 с.
- 2.9. Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, Москва, Разсвѣтъ, 1896, 448 с.

գ) անգլերեր

- 2.10. «Armenians at the twilight of the Ottoman Era, News Reports From The International Press, V. I, The New York Times, 1890-1914, compiled and edited by Vosgan Mekhitarian, rev. Vahan Ohanian, Published By Genocide Documentation and Research Center, 2011, 1669 p.
- 2.11. Bliss Edwin Munsell, Turkish cruelties upon the Armenian Christians, a reign of terror, Chas., B. aver company publishers, Des moines Iowa, 1896, 593 էջ:
- 2.12. Blue Book: Turkey. No. 1. 1890-1891 (Correspondence respecting the condition of the Populations in Asiatic Turkey and the proceedings in the Case of Moussa Bey), London, 1891, 101 p.
- 2.13. Blue Book: Turkey. No. 3 (Correspondence Relating to the Asiatic Provinces of Turkey and events in Constantinople), London, 1897, 132 p.
- 2.14. Cromer, Modern Egypt, vol. II, London, 1908, The Macmillan company, 1908, 632 p.
- 2.15. Harris R. J. and Harris H. B., Letters from the Scenes of The Recent Massacres in Armenia, London, 1897.
- 2.16. MacCol Malcolm M. A., England's responsibility towards Armenia, London and New York, 1895, 72 p.
- 2.17. MacCol Malcolm M. A., The Sultan and The powers, London New York and Bombay, Longmans, Green and Go, 1896, 366 p.
- 2.18. Pears E., Life of Abdul Hamid, Chapter XIV, Estimate of the Character of Abdul Hamid, London, 1917, Constable and Company, 389 p.

- 2.19. Sadik Shahid Bey, Islam, Turkey, and Armenia, and how they happend, 1898, press of C. B., Woodward company, ST. Louis, 236 p.
- 2.20. Wintle W. J., Armenia and its Sorrows, London, 1896, Andrew Melrose, 16 Pilgrim street, E. C., 1896, 130 p.

դ) արաբերեն

- 2.21. ولي الدين يكن، أملوم والمجهول الجزء الأول، مصر، 1909، مطبعة الشعب.
- 2.22. ولي الدين يكن، أملوم والمجهول الجزء الثاني، مصر، 1909، مطبعة الشعب.

4. Ուսումնասիրություններ

ա) հայերեն

- 3.1. Ա-Դօ, Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայեթները, Երեւան, Կուլտուրա, 1912, 406 էջ:
- 3.2. Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ. Բ, Գահիրէ, Կեսարիոյ և շրջակայից Հարենակցական միութեան Գահիրէի վարչութեան հրատ., 1937, 2480 էջ:
- 3.3. Աղասի, Զէյթուն եւ իր շրջակաները, Պէյրութ, Հաննէսեան եղբ., 1968, 415 էջ:
- 3.4. Աճառյան Հ., Հայ գաղթականության պատմություն, Երևան, 2002:
- 3.5. Ատոմ (Հարություն Շահիրիկյան), Բարենորոգումներու հարցը, Կ. Պոլիս, «Լուսաղբյուր», 1914, 144 էջ:
- 3.6. Բախչինյան Ա., Հայությունը սկանդինավյան երկրներում. հայ-սկանդինավյան պատմամշակութային առնչությունները (սկզբից մինչև մեր օրերը), Երևան, Պատմ. ինստիտուտ, 2010, 280 էջ:
- 3.7. Բայբուրդյան Վ., Քրդերը, Հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո, Երևան, Հեղինակային հրատ., 2008, 420 էջ:
- 3.8. Բայբուրդյան Վ., Օսմանյան կայսրության պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2011, 718 էջ:

- 3.9. Գալոյան Գ., Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917 թ.), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2004, 822 էջ:
- 3.10. Գասպարյան Ռ., Կիլիկիահայության կոտորածները և ինքնապաշտպանական մարտերը 1894-1896 թթ., Հոդվածների և հրապարակումների ժողովածու, Երևան, Պատմության ինստիտուտ, 2013.
- 3.11. Գևորգյան Լ., «Մուրճ» ամսագիրը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982, 313 էջ:
- 3.12. Եազըճեան Գ., Ապտիւ Համիտ Բ. Կարմիր սուլթանը, Պեյրութ, 1980, Տպ., Սեւան, 871+38 էջ:
- 3.13. Եսոյան Մ., Հայկական հարցը Սիրիայի արաբալեզու մամուլում 1908-1914 թվականներին, Երևան, Պատմության ինստիտուտ, 2015, 162 էջ:
- 3.14. Թովուզյան Հ., Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն (1805-1952), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1978, 358 էջ:
- 3.15. Լեւոն Վարդան, Խտրականութիւնը Օսմանեան կայսրութեան մէջ, Հայկազեան Հայագիտական հանդէս, Պեյրութ, 1970, էջ 9-46:
- 3.16. Խառատյան Ա., Օսմանյան գրաքննությունը և արևմտահայ մամուլը 1858-1896, Երևան, 1984, 70 էջ:
- 3.17. Խառատյան Ա., Արևմտահայ մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում (1857-1908), Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1989, 380 էջ:
- 3.18. Խուդինյան Գ., ՀՅ Դաշնակցության քննական պատմություն, ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը, Երևան, ՀՅԴ հրատ., 2006, 440 էջ:
- 3.19. Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Երևան, Հեղինակային հրատ., 2003, 408 էջ:
- 3.20. Կիրակոսյան Ա., Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը (19-րդ դարի 30-ական թթ. – 1914 թ.), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999, 509 էջ:
- 3.21. Կիրակոսյան Զ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (19-րդ դարի 80-ական թթ.), Երևան, «Հայաստան», 1980, 456 էջ:

- 3.22. Կիրակոսյան Զ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (19-րդ դարի 90-ական թթ. – 1914 թ.), Երևան, Հայաստան, 1982, 360 էջ:
- 3.23. Կոստանդյան Է., Մկրտիչ Խրիմյան, հասարակական-քաղաքական գործունեությունը, Երևան, ՀՀ ԳԱԱ ՊԻ, 2008, 459 էջ:
- 3.24. Կոստանդյան Է., Գում Գափուի ցույցը (100-ամյակի առթիվ, Լրաբեր հասարակական գիտությունների 1990, թիվ 8, էջ 67-68:
- 3.25. Հայոց պատմություն, հ. III, գիրք I. Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ), Երևան, Զանգակ-97, 2010, 704 էջ:
- 3.26. Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն հ. 2, Օսմանյան տիրապետությունն շրջան. 1516-1918 թթ., Երևան, Զանգակ-97, 2004, 680 էջ:
- 3.27. Հովհաննիսյան Ն., Հայոց ցեղասպանությունը արաբական պատմագիտության քննական լույսի ներքո, Երևան, Զանգակ-97, 2004, 208 էջ:
- 3.28. Հովհաննիսյան Ն., Սուլթան Աբդուլ Համիդ Երկրորդի հակահայկական քաղաքականությունն արաբական ժամանակակից պատմագրության գնահատմամբ, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 1987, 1 (116), էջ 75-88:
- 3.29. Մանուկեան Ա., Հայրենիքի ազատագրութեան բանակին համոզուած զինուորները, Ժընեւ, 2014, 160 էջ:
- 3.30. Մատթէոս եպս. Իզմիրլեան, Հայրապետութիւն Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոց եւ Սիս ու Աղթամար, աշխատասիրությամբ Աւագ Յարութիւնեանի, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2008, 432 էջ:
- 3.31. Նաջարյան Ե. Հ., Արաբական ազգային-մշակութային զարթոնքը, Երևան, ՍՍՀ ԳԱ հրատ, 1988, 499 էջ:
- 3.32. Ներսիսյան Մ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1890 թթ., Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 2002, 492 էջ:
- 3.33. Ներսիսյան Մ., Պատմության կեղծարարները, հողվածներ և հաղորդումներ, Ե., 1998:
- 3.34. Պայրամեան Ս. Ն., Հայ մամուլը Եգիպտոսի մէջ, մատենագիտական ցուցակ, Գահիրէ, 2005

- 3.35. Պէրդրան Է., Նուպար փաշա. 1825-1899, նիշք եւ տպաւորութիւնք, Կ. Պոլիս, Պ. Պալենց գրատուն, 1910, 86 էջ:
- 3.36. Պողոսյան Վ., Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական պատմագրության և հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ (XIX դարի վերջ – XX դարի սկիզբ), Երևան, ԵՊՀ հրատ., 2011, 354 էջ:
- 3.37. Սասունի Կ., Քյուրտ ազգային շարժումները և հայ-քրտական յարաբերությունները (ԺԵ դարեն մինչև մեր օրերը), Պէյրութ, 1969,
- 3.38. Սարուխան, Հայկական խնդիրը եւ Ազգային սահմանադրութիւնը Թիւրքիայում 1860-1910, Ա. Հատոր, Թիֆլիս, Էպոխա, 1912, 480+106 էջ:
- 3.39. Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն, ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Երևան, «Լուսակն» հրատ., 2009, 248 էջ:
- 3.40. Սաֆրաստյան Ռ. Ա., Հայոց ցեղասպանության պետական ծրագրերը թուրքական երեք փաստաթղթերի համեմատական վերլուծություն, «ՎԷՄ» համահայկական հանդես, Երևան., 2009, թիվ 1 (26):
- 3.41. Սեյլան, Սասուն, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Մադոյանի, Երևան, ԵՊՀ հրատ., 1990, 270 էջ:
- 3.42. Սրվանձոյանց Գ., Երկեր , հ. 2., Երևան, 1982, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 564 էջ:
- 3.43. Վարանդեան Մ., Հ. Յ. Դաշնակցության պատմություն, Պէյրութ, 2009, 504 էջ:
- 3.44. Տասնապետեան Հ., Պատմութիւն Հայ Յեղափոխական Շարժման և Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Լիբանան, 2009, 504 էջ:
- 3.45. Օտեան Ե., Պողոս Նուպար փաշա (կենսագրական նիւթեր), Կ. Պոլիս, 1913,

բ) ռուսերեն

- 3.46. Абд ар-Рахман аль-Джабарти, Удивительная история прошлого в жизнеописаниях и хронике событий, 1798-1801.
- 3.47. Бартольд В., Сочинения, т. 6, Турция, ислам, христианство, Москва, 1966, 580 с.
- 3.48. Гордлевский В., Избранные сочинения, том III, Москва, Изд. восточной литературы, 1962, 588 с.

- 3.49. Желтяков А., Печать в общественно-политической и культурной жизни Турции, Москва, 1972, 320 с.
- 3.50. Киракосян А., Ближневосточный кризис 1895-97 гг., Армения и политика США, “Вопросы востоковедения”, Вып. 1-2, Ереван, 1983, с. 212-221.
- 3.51. Киракосян А., Армянский вопрос на страницах журналов Великобритании (Середина 90-х гг. 19 века), Ереван, 1980.
- 3.52. Котлов Л. Н., Становление национально-освободительного движения на Арабском Востоке, Москва, 1975.
- 3.53. Крачковский И., Мустафа - Кямилъ и Жюльетта Адан, к истории национальной движения в Египте, Ленинград, 1928, 39 с.
- 3.54. Левин З. И., Ислам и национализм в странах Зарубежного Востока, Москва, Наука, 1988, 222 с.
- 3.55. Левин З. И., Развитие основных течений общественно-политической мысли в Сирии и в Египте (Новое время, Москва, Наука), 1972, 266 с.
- 3.56. Луцкий В.Б., Новая история арабских стран, Москва., 1965, 280 с.
- 3.57. Новые Османы и борьба за конституцию 1876 г. в Турции, Москва, Изд. вост. лит., 1958, 156 с.
- 3.58. Петросян Ю. А., Младотурецкое движение, Москва, 1971, 328 с.
- 3.59. Петросян Ю. А., Османская империя, Могущество и гибель, Москва, “Наука”, 1990, 280 с.
- 3.60. Степанян С., Армения в политике империалистической Германии (конец XIX – начало XX века), Ереван., изд. “Айастан”, 1975, 243 с.
- 3.61. Фадеева И. Л., Османская империя и англо-турецкие отношения в середине 19-ого в, Москва, “Наука”, 1982, 159 с.
- 3.62. Фадеева И. Л., Официальные доктрины в идеологии и политике Османской империи (Османизм-пантуркизм), XIX – начало XX в., Москва, “Наука”, 1985, 270 с.

գ) անգլերեն

- 3.63. Adams Ch. G., Islam and Modernism in Egypt, New York, Russel, 1968, 231 p.
- 3.64. Ahmed J. M., The Intellectual Origins of Egyptian Nationalism, London-New York Toronto, 1960, 135 p.
- 3.65. Armajani Jon, Modern Islamic movements, History, 2012, UK, Wiley-Blackwell, A Jon Wiley and Sons LTD publication, 2012,
- 3.66. Ayalon Amy, The Press in the Arab Middle East, New York, Oxford, published by Oxford University Press, 1995, 315 p.
- 3.67. Azhderian Antranig, The Turk and the Land of haig of Turkey and Armenia, New York, 1898, The Mershon company, 428 p.
- 3.68. Colvin A., The Making of Modern Egypt, London, Seeley and CO. Limited, 1906, 428+16 p.
- 3.69. Harris C. p., Nationalism and Revolution in Egypt, Mouton and Co, The Hauge, London, Paris, 1964, 276 p.
- 3.70. Hartmann Martin, The arabic press of Egypt, London, Luzac and go publishers, 1899, 110 p.
- 3.71. Hunter R. F., Egypt under the Khedives, 1805-1879, from Houshold Government to the Modern Bureaucracy, The American University in Cairo Press, Egypt, Gairo, 1999, 300 p.
- 3.72. Argyll J. D., The Eastern question from the Treaty of Paris 1856 to the Treaty of Berlin 1878, and to the Second Afghan War, vol. 1, London, Strahan and Company Limited, 468 p.
- 3.73. The Cambridge history of Egypt, vol. 2, Modern Egypt from 1517 to the and of the twentieth century, Cambridge University Press, 2008, 460 p.
- 3.74. The Encyclopaedia of Islam, vol. V., Leiden, E.J. Brill, 1986.

դ) ֆրանսերեն

3.75. Moussa Prince, Un genocide impuni: l'Armenocide, Beirut, 1975, 582 p.

Ե) գերմաներեն

3.76. Nuri A., Abdul-Hamid in Karikatur, intimes aus yidiz-Kiosk in word und Bild, Zürich, Verlag von Caesar Schmidt, 1904, 119 s.

զ) արաբերեն

3.77. إبراهيم عبده، اعلام الصحافة العربية، 1981-1798، <http://shamela.ws/browse.php/book-11754/page-357#page>

3.78. إبراهيم عبده، تاريخ الوقائع المصرية 1942-1828، <http://shamela.ws/browse.php/book-11754/page-357#page>

3.79. إبراهيم عبده، تطوّر الصحافة المصرية 1951-1898.

3.80. إبراهيم عبده، جريدة الأهرام – تاريخ مصر في 75 سنة، 1951 القاهرة، دار

المعاريف. <http://shamela.ws/browse.php/book-11754/page>

3.81. أحمد حمروش، قصّة الصحافة في مصر، القاهرة، 1989، دالر المستقبل العربي، ""ص.ص.

3.82. احمد زكي بدوي، تاريخ مصر الاجتماعي، <http://shamela.ws/browse.php/book-11754/page>

3.83. أنور الجندي، تاريخ الصحافة الإسلامية، 1، المنار - رشيد رضاء، دار العطوة للطباعة، 296 ص.

3.84. جرجي زيدان، تراجم مشاهير الشرق في القرن 19، ج. 2، مطبعة الهلال، 1922، ""ص.ص.

3.85. رمزي ميخائيل، الصحافة المصرية والحركة الوطنية من الاحتلال الى الاستقلال 1922-1882، القاهرة، 1996، 186 ص.

3.86. سامي عزيز، الصحافة المصرية وموقفها من الاحتلال الانجليزي، القاهرة، 1968، 378 ص.

3.87. صالح زهر الدين، سياسة الحكومة العثمانية في أرمينيا الغربية وموقف القوى الدولية منها، انطلياس 2010، 597 ص.

3.88. عبد الرحمن بن حسن الجبرتي، عجائب الآثار في التراجم والأخبار، الجزء الثالث، 1998، القاهرة، دار الكتب المصري، 514 ص.

3.89. عبد الطيف حمزة أدب المقالة الصحافية، ج. 4، علي يوسف- <http://shamela.ws/browse.php/book-11754/page>

3.90. عبد اللطيف احمد حمزة، الصحافة المصرية في مائة عام، www.al-mustafa.com.pdf

- 3.91. عبد اللطيف همزة، الصحافة العربية في مصر منذ نشأتها إلى منتصف القرن التاسع عشر، دار الفكر العربية، 1985، 229ص.
- 3.92. عطا درغام، فايز الغصين، شهادات عن مذابح الأرمن،
<http://www.ahewar.org/debat/show.art.asp?aid=435014>
- 3.93. فاروق ابو زيد، الصحافة المتخصصة، القاهرة، 1986، 229 ص."
- 3.94. الفيكت فيليب دى طرازى، تاريخ الصحافة العربية، الجزء الاول والثاني، بيروت، 1913
dar.bibalex.org/webpages/mainpage.jsf?PID=DAF-Job:186018&q
- 3.95. " محمد رفعة الامام القضية الأرمنية في المصادر العربية <http://ancnews.info/?p=1132>
- 3.96. محمد رفعة الامام الأرمن في مصر، القرن التاسع عشر، القاهرة، 1995
- 3.97. محمد رفعة الامام، الأرمن في مصر 1896-1961، القاهرة 2003، دار نوبار للطباعة، 736 ص.
- 3.98. محمد رفعة الامام ، الارمن في مصر، أَلقرن" التاسع عشر، مصر- القاهرة، 1995، دار نوبار للطباعة. 506 ص.
- 3.99. محمد رفعة الامام ، الأهرام المضرية والقضية الأرمنية، 1923-18978، القاهرة 2006، 38 ص.
- 3.100. محمد رفعة الامام ، أَلقضية الارمنية في الدولة العثمانية 1878-1923، القاهرة 2002 دار نوبار للطباعة، 192 ص.
- 3.101. نورا أريسيان الأباداة الأرمنية في صحافة المهجر السورية، هايكازيان- مجلة الدراسات الأرمنية، بيروت، 2010.
- 3.102. نورا أريسيان، أصداء الإبادة الأرمنية في الصحافة السورية (1877-1930)، لبنان، بيروت، 2004.
<http://ancnews.info/?p=1132>
- 3.103. " عبد العليم القباني، نشأة الصحافة في الإسكندرية، 1873-1882، مصر، 1933، 133 ص.

4. Պարբերական մամուլ

ա) հայերեն

- 4.1. «Արձագանք», Թիֆլիս, 23, 1884:
- 4.2. «Արմենիա», Մարսել, 1889, 22, թիւ 46, 1985, թիւ 64, 1897, թիւ 56:
- 4.3. «Հորիզոն», Թիֆլիս, թիւ 41, 42, 43:
- 4.4. «Մշակ», 1895, թիւ 1:
- 4.5. «Մուրճ» 1893, թիւ 11, 1894, թիւ 11-12, 1895, թիւ 8, 1896, թիւ 7-8:

բ) ռուսերեն

- 4.6. «Вестник Европы», Санкт-Петербург, 1878, т. 5, кн. 5-10.

գ) անգլերեն

4.7. 4.7. «The New York Times», 12.09.1896

գ) արաբերեն

4.8. "الأهرام" 1897-1878

4.9. "المقطم" 1897 – 1889

4.10. "المؤيد" 1897-1890, <http://zefys.staatsbibliothek-berlin.de/list/title/zdb/26687665/>

4.11. "المشير" 1898-1895

4.12. "الهلال" 1903-1915

4.13. "المقتطف" 1915.

4.14. "العروة الوثقى" 1884

4.15. "مصر" 1896

4.16. "لسان العرب", 1896

4.17. "الرأي العام" 1896